

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերջագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material





825  
S-90

130 MAY 2017

CA 394-7  
51

Պ Ա Ս Ա Ն Ե Կ Ա Ա Ն Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն  
Հ Ա Մ Ա Շ Ե Ա Ր Հ Ա Յ Ի Ն Կ Լ Ա Ս Ի Կ Ն Ե Ր

Մ Ա Ր Կ Տ Վ Ե Ն

Թ Ո Մ Ս Ո Յ Ե Ր Ի  
Ա Ր Կ Ա Ծ Ն Ե Ր Ը

Թարգմ. ԱՍՏ. ՉԱՐՅԱՆ

483  
//



26838.00

24 JUL 2013

1083

Գեոհրատիտագրա  
Գլավլիտ № 6571  
Պատվեր № 3668  
Հրատ. № 1728  
Տիր. 5000



56898.66

### ԹՈՄ ՍՈՅԵՐԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

I.



— Թոմ:

Պատասխան չկա:

— Թոմ:

Պատասխան չկա:

— Ի՞նչ պատահեց այս տղին: Թոմ:

Պառաջն աղնոցն իջեցրեց թիթն ի վար և աղնոցի վերևից նայեց ամբողջ սենյակը. հետո աղնոցը բարձրացրեց ճակատը ու նայեց աղնոցի տակից: Նա չերբեք կամ գրեթե չերբեք աղնոցի միջով չեր նայում վորևե փոքրիկ բան փնտռելիս, — ինչպես որինակ, տղան — վորովհետև այդ աղնոցը նա դնում եր գեղեցկության համար, ու վոչ թե կարիքից ստիպված: Մի ըստե նա իրեն կորցրեց, հետո ասաց վոչ այնքան բարկացած, բայց այնքան բարձր, վոր կան կաշապիները կարող եյին նրան լսել:

— Թե մի ձեռս կընկնես, քեզ ցույց կտամ...

Նա խոսքը չվերջացրեց, վորովհետև շունչը կտրում եր. այդ խոսքերն ասելով՝ նա հատակը սրբելու շորը իր փայտով տարավ-բերեց մանձակալի տակ: Բայց այնտեղից վոչինչ չկարողացավ հանել, բացի կատուից:

— Այ քեզ անպիտան տղա: Կյանքումս դրա պեսին չեմ տեսել:

Նա մոտեցավ բակի դռան ու կանգնեց շեմքին, նայելով թե Թոմը պարտիզում չէ արդյոք, վայրի խոտերի

ու պամիրորի կանաչների արանքում: Թոմը չկար: Այդ  
ժամանակ նա ձայնն ավելի բարձրացրեց,

— Թոմ...

Յետևը ինչ-վոր բան խշրտաց: Պառավը լեռ նայեց  
ու բռնեց տղայի ձեռքը, նա ուզում էր փախչել:

— Դե, Լհարկե, պետք է այս պուճախը նայել: Ի՞նչ  
էլիր անում այդտեղ:

— Վոչինչ:

— Վոչինչ: Մի հլա ձեռներդ նայի, բերանիդ նայի:  
Այդ ի՞նչ էս քսել պուճներդ:



Նկ. 1. Մի տես, մորաքույր, այդ  
ինչ է յեանդ:

քի զալ ապա կամացուկ ծիծաղեց:

— Ախ, անպիտան տղա... Բա յես սկի չպիտի խրատ-

— Չգիտեմ, մորաքույր:

— Չգիտեմ: Մուրաբա  
է—այ թե ինչ: Բառսուն  
անգամ ասել եմ, վոր յեթե  
այդ մուրաբեն հանդիստ չը-  
թողնես, յես քեզ ճիպտով  
կծեծեն: Ծիպոտը տուր այս-  
տեղ:

Ծիպոտը շառաչեց ողում:  
Վտանգն անխուսափելի չեր:

— Այ: Մի տես, մորա-  
քույր, մի տես, այդ ինչ է յե-  
տեղ:

Պառավը վախեցած շուռ  
յեկավ կրնկի վրա, շրջա-  
դառնալով հավաքելով, իսկ տը-  
ղան թռավ մի կողմ, բարձրա-  
ցավ տախտակե բարձր ցան-  
կապատը, ու հայտն: Մո-  
րաքույր Պուլին մի բույե  
զարմանքից չկարողացավ ուշ-

վեմ: Թե քիչ ուլիններ է սարքել նա իմ գլխին: Լավ են  
ասել, թե գիլի գլխին ավետարան կարդա: Ախր նրա ոյ-  
իններն էլ իրար նման չեն. մին էլ տեսար մի այնպես  
բան արավ, վոր մտքովդ սկի չի անցնի: Ծիպոտդ ձեռք  
առնես ձեծելու, բավական է մի բույե ուշքս տանի կամ  
ինձ ծիծաղեցնի,—բարկությունս իսկույն անցնում է, և  
յես մատ էլ չեմ դիպցնում նրան: Գիտեմ, վոր գլուխը  
լիքն է հիմարություններով,—բայց ի՞նչ կարող եմ անել:  
Չե վոր հանգուցյալ խեղճ քրոջս վորդին է, սիրաս չի  
տալիս մի լավ ձեծեմ: Ամեն անգամ, յերբ թողնում եմ  
պատժից խուսափի—խիղճս այնպես է տանջում ինձ, վոր  
էլ ասել չեմ կարող, իսկ յերբ պատժում եմ—սիրտս ցա-  
վից կտոր-կտոր է լինում: Ե՛հ, հերիք է: Թող հիմա գնա  
ման գա, եզուց կպատժեմ, գործի կգնեմ: Անխիղճ բան  
է՝ ստիպել կիրակի որերն աշխատի, յերբ ուրիշ յերեխա-  
ներ տոնում են, բայց ինչ արած. ամեն բանից ավելի նա  
ատում է աշխատանքը, իսկ յես պետք է վոր մի կերպ  
իմ պարտքը կատարեմ նրա հանդեպ, թե չե կկործանեմ  
այդ տղին:

Թոմն իսկապես պարապ-սարապ ման յեկավ ամբողջ  
որը, անգամ դպրոց չգնաց և իր համար լավ ժամանակ  
անցրեց: Նա վերադարձավ և ոգնեց իրենց սպասավոր  
նեզր-տղին՝ փայտ կտորելու և նրան իր արկածները  
պատմելու: Թոմի փոքր յեղբայրը՝ Սիդը (վոչ թե հարա-  
զաս յեղբայրը, այլ խորթ), այդ ժամանակ արդեն վեր-  
ջացնում էր իր աշխատանքը. նրան հրամայված էր հա-  
վաքել տաշեղները: Դա մի խելոք համեստ, տղա չեր:

Մինչև Թոմը խփշտում էր ընթրիքը և ոգտվում ա-  
մեն մի հարմար առիթից՝ մի կտոր շաքար թուցնելու,  
Պուլի մորաքույրը խորամանկ հարցեր էր տալիս նրան,  
հույս ունենալով, թե նա բերանից բան կթոցնի և, այդ-  
պիսով՝ կմատնի իրեն: Շատ պարզամիտ մարդկանց նը-

ման՝ նա կարծում էր թե ինքի՛ ոժտված է մեծ խորամանկությամբ և իր միամիտ մտքերը համարում էր խորամանկության հրաշքներ: Այդպես էլ այժմ նա իր խոսքն սկսեց հեռվից:

— Հը, թո՛մ, այսօր դպրոցում, ով գիտի, շատ շոգ էր, այնպես չի:

— Այո, մորաքույր, բավական շոգ էր:

— Շատ շոգ էր:

— Այո, մորաքույր:

— Յե՛վ սիրտդ լողանա՞լ էր ուզում, թո՛մ:

Թո՛մը հանկարծ իրեն մի տեսակ գատ զգաց. նրա մտքում ծագեց մի անհաճո կասկած: Ուշադիր նայեց մորաքրոջ դեմքին, — բայց նրա դեմքը վռչինչ չե՛ր արտահայտում: Յե՛վ պատասխանեց.

— Չե, մորաքույր, այնքան էլ չե:

Պառա՛վը ձեռը մեկնեց և շոշափեց թո՛մի շապիկը:

— Բայց հիմի հո չես շոգում: Դու սկի չես քրտնել:

Յե՛վ նա հպարտությամբ մտածեց՝ թե ինչ ճարպիկությամբ կարողացավ համոզվել, վոր շատիկը չոր է, ու մեկի մտքով չանցավ, թե ինչ կա իր մտքում: Թո՛մը, սակայն, իսկուհի գլխի ընկավ, թե քամին ո՛ւր է փչում: Ու կանխեց հետագա հարց ու փորձը:

— Մեր տղերքը գլուխները դրին ծորակի տակ — թարմանալու: Մագերս դեռ թաց են, տեսնո՞ւմ ես:

Պոլլի մորաքույրը ափսոսաց, վոր բաց թողեց մի այդպիսի կարևոր հանգամանք: Բայց իսկուհի էլ մի փայլուն միտք լեկավ գլուխը.

— Թո՛մ, չե վոր գլուխդ թրջելու ժամանակ դու ըստիպված չպիտի լինելի՛ր յետ նայելու շապիկիդ ոճիքի այն տեղը, վոր լես թելով կպցրել եմ: Հապա կոճակներդ մի բաց արա:

Անհանգստության ստվերը չքացավ թո՛մի դեմքից.

Նա բաճկոնի կոճակները բաց արավ: Շապիկի ոճիքն ամուր կարված էր:

— Դե լավ, լավ: Կեցցես: Իսկ լես հաստատ համոզված ելի, վոր դու պարազ ման ես լեկել ու լողացել: Բայց այս անգամ սխալվեցի: Յես կարծում եմ, դու իսկապես ավելի լավ ես, քան թվում ես:

Պոլլի մորաքույրը վշտացավ, վոր իր խորամանկությունը նպատակին չհասավ, և միևնույն ժամանակ ուրախ էր, վոր այսուհետև թո՛մը ճամբի լե չ'էկել, խելոքացել է: Բայց Սիդն ասաց.

— Վորքան հիշում եմ՝ դու նրա ոճիքը կարել էիր ճերմակ թելով, իսկ այդտեղ սև թել է:

— Դե, իճարկե, ճերմակ թելով էլի կարել... Թո՛մ... Բայց թո՛մն էլ չսպասեց շարունակությանը և, դուրս նետվելով, կանչեց.

— Դու դրա համար կստանաս, անպիտան տղա:

Ապահով տեղ թագնավելով՝ թո՛մը նայեց լերկու մեծ ասեղին, վոր խրված էին ոճիքի ծալի տակ ու թելերով փաթաթված: Մի ասեղի վրա սև թել էր, մյուսի վրա — ճերմակ:

— Մորաքույրն իսկի չե՛ր նկատի, լեթե Սիդը չլիներ: Գրողը տանի՛՝ նա միշտ տարբեր թելերով է կարում. մեկ սև, մեկ ճերմակ — էլ վոնց հիշես Յեթե մի տեսակ թելով կարեր... Բայց և այնպես լես Սիդին մի լավ կըդնգսեմ դրա համար:

Յերկու ըուպե անց, — նույնիսկ ավելի շուտ, — նա մոռացավ իր ձախորդությունները:

Բանն այն էր, վոր նա մի նեզրից սովորել էր սուլել և այժմ առանց գեթաբուժյան կարողանում էր մարզվել այդ արվեստի մեջ: Նեզրը նմանեցնում էր թռչունների սուլոցին, սուլոցն ընդհատում էր կղզոցով, վորի համար հարկավոր էր ժամանակ առ ժամանակ լեզուն դիպցնել քիմքին: Ընթերցողը, հավանորեն, հիշում է, թե

ինչպես և այդ արվում, յեթե միայն նա չերբեկցե տղա յե յեղեր: Ուշադրության և շանասիրության շնորհիվ թոմը իսկույն հասկացավ թե ինչու՞ն է զրա գաղտնիքը, և ուրախ-ուրախ քայլում եր փողոցով:

Ամառվա յերեկոները յերկար են: Դեռ յույս եր: Հանկարծ թոմն ընդհատեց սուրցը: Նրա առջև կանգնած եր մի ոտար անծանոթ տղա, իրենից քիչ մեծ: Նրա յերեկալը այդպիսի մի փոքրիկ քաղաքում, բնականորեն, հարուցեց լարված հետաքրքրութուն: Բացի դրանից սըղան լավ ել հագնված եր, — այն ել լի որը: Դա ուղղակի զարմանալի յեր: Գլխին կար մի շատ լավ գլխարկ. կապույտ մահուղե բաճկոնը, վոր պինդ գրկել եր մարմինը, բոլորովին նոր եր և մաքուր, միշտ այնպես, ինչպես և վարտիկը: Կոշիկներ եր հագել. թեև որն սկի տոն չեր: Վզին կար մի վառ ժապավեն — փողկապ: Ընդհանրապես, նրա տեսքը քաղաքի պճնամոյի տեսք եր, վոր թոմին վիրավորում եր մինչև հոգու խորքը: Վորքան շատ եր նայում թոմը այդ զարմանալի տղին, նա այնքան ավելի յերցցում քիթը, ցույց տալով, թե բանի տեղ չի դնում իր այդ հագուստները և, այդպիսով, իբր թե նրանք իրեն ազքատիկ են թվում: Յերկու տղան ել վոչ մի խոսք չասին: Բաց բավական եր մեկը քայլը փոխեր, քայլը փոխում եր և մյուսը — մի կողմ, մի շրջագծով: Այդպիսով նրանք բոլոր ժամանակ կանգնած ելին դեմ առ դեմ և նայում ելին իրար: Վերջապես, թոմը սասց.

— Յես կարող եմ քեզ ծեծել.

— Փորձիր տեսնենք.

— Ի՞նչ կա վոր, կծեծեմ.

— Չես կարող, ուժդ չի պատի.

— Չե՛, կարող եմ.

— Չե՛, չես կարող:

Անհարմար լուսթյուն տիրեց: Վերջապես, թոմը ասաց.

— Անունդ ի՞նչ է,

— Քո բանը չի.

— Այ տես ուխդ կջարդեմ:

— Բա ինչի՞ յես սպա-

սում:

— Հլա մի յերկու խոսք ել ասա...

— Յերկու խոսք... յերկու խոսք... յերկու խոսք... Ա՛ռ քեզ... հը՞:

— Ինչ ճարպիկն էս: Յես կարող ելի, յեթե ուղեի մի ձեռով դնգսել քեզ, մյուսը մեջքիս կապելով:

— Բա ինչու չես դրնգսում, յեթե կարող ես:

— Իհարկե, կարող եմ: Կդնգսեմ, յեթե շատ խոսես:

— Այ, այ, այ: Տեսել եմ քեզպեսներին:

— Լոպպազ: Զուգվել ես, կարծում ես՝ մեծ բան ես:

Սրա գլխարկին հայեք:

— Հլա մի փորձի ձեռ տալ, այն ժամանակ կտեսնես...

— Չայնդ կարի:

— Դու ձայնդ կարի:

— Լոպպազ ստախոս:

— Հերիք է, կորի:

— Ե՛յ, լսիր, յեթե այդպես շարունակես — գլուխդ կկտրեմ:

— Վճնց չի:

— Կկարեմ:



Նկ. 2. Այ տես ուխդ կջարդեմ:



— Ել ինչի՞ լես սպասում: Ի՞նչ ես սպանում եմ ուրան չես անում, — ուրեմն վախենում ես:

— Մտքովս ել չի անցնում:

— Չե, վախենում ես:

— Չե, չեմ վախենում:

Վախենում ես:

Նորից լուռ լուռ, և նորից տղաները պատվում են ու նայում իրար: Վերջապես մոտեցան ու կանգնեցին կողք-կողքի:

Կորիք ալտանդից — հայտարարեց թոմը:

— Ինքզ կորիք:

— Չեմ ուզում:

— Յես ել չեմ ուզում:

Յերկուսն ել սկսեցին բռնցքակռիվ, ատելութամբ լցված իրար դեմ: Բայց վոչ մեկն ել չկարողացավ հաղթել մյուսին: Յերբ վերջապես յերկուսն ել շնչասպառ կարմրեցին, նրանց կռվի թավին իջավ մի քիչ, և թոմը հայտարարեց.

— Կու վախկոտ ես և լակոտ: Մսասիր, մեծ լեղբորս դրկեմ քեզ վրա. նա մի ձկուլթով կարող ե գետին գլորել քեզ, և լես կստիպեմ նրան այդ անելու:

— Շատ մի վախենում եմ քո մեծ լեղբորից: Յես ինքս ել լեղբայր ունիմ՝ քոնից մեծ, վոր լեղբորդ կշարտի ցանկապատի այն կողմը: Դա ավելի լավ կլինի: (Յերկուսի լեղբայրն ել տղաների լերևակայության պտուղն եր):

— Դա սուտ ե:

— Ել ինչեր չես ասի:

Թոմը վոտի բուրթ մատով գիծ քաշեց փոշու վրա և ասաց.

— Արգելում ամ քեզ այս գիծը անցնել, թե չե այնպես կջարդեմ՝ ել վեր չես կենա:

Ոտար տղան շտապեց կանգնել գծի վրա, ասելով,

— Դե տեսնենք վոնց ես ջարդում:

— Չեոք քաշի: Ավելի լավ ե՛ ձեոք քաշի, ասում եմ:

— Բայց պարծենում ելիր թե կջարդես. ինչու չես խփում:

— Յեվ կխփեմ: Կարծում ես՝ չեմ խփի: Յերկու կուպեկի կխփեմ: Անպես կխփեմ՝ քեֆդ դա:

Ոտար տղան գրուանից յերկու պղնձադրամ հանեց և հեզնանքով մեկնեց թոմին:

Թոմը հակառակորդի ձեռին խփելով՝ փողերը գցեց գետին:

Մի ակնթարթ — և տղաներն արդեն թավալում ելին ցեխի մեջ, իրար փաթաթված, ինչպես կատուներ: Քաշում ելին իրար մագեր, ականջ, քիթ և անխնա պատում — պոկում ելին իրար հագուստ, — ծածկվելով փոշով ու փառքով: Վերջապես կռվի փոշու մեջ գծագրվեց թոմի կերպարանքը՝ հակառակորդին հեծած: Նա բռունցքներով խփում եր նրա մեջքին ու ասում.

— Առ քեզ, սլարծենկոտ: Հը՞: Հերիք ե:

Տղան իզուր եր աշխատում ազատվել, և բարձր գոռում եր, ավելի շուտ անդոր կատաղությունից:

— Հը՞. կերտը: Առ քեզ, առ քեզ! Թոմը շարունակում եր իր բռունցքների գործը: — Թողություն խնդրիր, անպիտան:

Վերջապես, ոտար տղայի բերանից դուրս լեկավ՝ «Թո՛ղ», և թոմը թողեց նրան, ասելով.

— Սա քեզ խրատ: Մյուս անգամ մարդդ ճանաչիր:

Ոտար տղան գնաց իր ճամբան, շորերի փոշին թափ տալով, հեկեկալով, ժամանակ առ ժամանակ լետ դառնալով, գլուխն որորելով և թոմին սպանալով. «Թող հլա մի անգամ ել պատահի»: Թոմը պատասխանեց հեզնանքով և աուն գնաց, իր հաղթանակով հոյարտ: Բայց հազիվ եր թիկունքը շուռ տվել, յերբ ոտաք տղան մի քար նետեց և խփեց նրա թիակների մեջտեղը, իսկ ինքը փախավ լեզնիկի պես: Թոմը վազեց հակառակորդի հետևից մինչև

տուն և այսպիսով իմացավ, թե վորտեղ և ապրում: Նա մի քիչ կանգնեց բակի դռան առաջ, թշնամուն կովի կանչելով. Բայց հակառակորդը միայն ծամածուծություններ եր անում, և դուրս գալ չեր ցանկանում: Վերջապես, յերկաց հակառակորդի մայրը, Թոմին անվանեց փշացած, զգվելի փողոցային տղա և հրամայեց կորչել: Թոմը հեռացավ. հավատացնելով, թե հեռանում է միայն այն պատճառով, վոր չի ցանկանում ձեռները կեղտոտել նրա զգվելի տղային զիպչելով:

Նա տուն յեկավ ուշ գիշերին և զգուշությամբ լուսամուտից մտավ ներս, աշխատելով աղմուկ չհանել. բայց լուսամուտի յետև նրան սպասում եր մորաքույրը: Յեվ լերբ մորաքույրը տեսավ նրա բաձկոնի ու վարաիկի դրությունը, — վճռեց՝ կիրակի որը մի ծանր աշխատանքի լծել նրան:

Յեկավ շաբաթ առավոտը:

Թոմը կրով լիքը դուլը և յերկար պոչով վրձինը ձեռին քայլում եր տախտակե ցանկապատի յերկարությամբ: Նա նայեց պարսպին, և շրջապատն անմիջապես խավարեց նրա համար, ու խորին վհատություն տիրեց նրա հոգուն: Յերեսուն մետր լայն պարիսպ՝ իննը վոտնաչափ բարձրությամբ: Կյանքը նրան թվում եր անմիտ, հիմար բան և ծանր բեռ: Հառաչանքով վրձինը թաթախեց կրի մեջ, քսեց վերին տախտակին, կրկնեց դա մի յերկու անգամ ու կանգ առավ. ո՛ր, ինչքան քիչ է արել և ինչքան շատ բան է մնում: Տխրությամբ նստեց նստարանին: Ծուլուծուլ լինելով՝ դարպասից դուրս յեկավ սպասավոր Ջիմը՝ թիթեղե դուլը ձեռին, յերգելով: Քաղաքային ջրհորից ջուր բերելը Թոմի համար միշտ ել ատելի աշխատանք եր, բայց այժմ նա ուրախությամբ կկատարեր այդ աշխատանքը: Նա հիշեց, վոր ջրհորի մոտ միշտ շատ ժողովուրդ է հավաքվում: Նեղրեր, մուլաթներ, սպիտակներ, տղաներ ու աղջիկներ, իրենց հերթին սպասելով, հանգրստանում են, վիճաբանում, խաղալիքների փոխանակություն են կատարում, կովում են, յերգում՝ արտուտների պես: Նա հիշեց նույնպես, վոր թեև մինչև ջրհորը հարյուր հիսուն քայլից ավելի չէ, Ջիմը յերբեք մի ժամից շուտ չեր վերադառնում, այն ել պետք եր գնալ կանչելու:

— Լսիր, Ջիմ ուզո՞ւմ ես դու սպիտակացրու մի բիչ, յես բո՞ տեղը գնամ ջրի:

Ջիմը գլուխն սրորեց:

— Զե՛ս կարող, պարոն Թոմ: Տիրուհին հրամայել է, վոր ուղիղ ջր՛ գնամ և ճամբին չկանգնեմ սրա նրա հետ խոսելու: Նա ասաց. «գիտե՛մ Թոմը քեզ կկանչի պատը սպիտակեցնելու, նրան չլսես, գնա գործիդ»: Նա ասաց՝ «յես ինքս կերթամ տեսնելու, թե նա ինչպես է սպիտակեցնում»:

— Դատարկ բան է: Շատ ել նա շատ բան է ասում Ջիմ: Նա միշտ այդպես է ասում: Դուրը տուր այստեղ — րոպեյապես կերթամ: Նա չի լել իմանա:

Ո՛ր, վախում եմ ուստա Թոմ. վախում եմ տիրուհուց: Գլուխս կպոկի,— հավատա կպոկի:

Նա: Նա վոչ մեկին մատով չի դիպչում, մենակ մատնոցը թխկացնում է մարդու գլխի,— դա ինչ մեծ բան է վոր: Ո՞վ է դրան ուշադրութուն դարձնում: Ճիշտ է, նա սարսափելի բաներ է ասում, բայց խոսքերը ցավ չեն պատճառում, միայն թե նա լաց չլինի: Ջիմ յես քեզ մարմարե գնդակ կտամ... Յես իմ սպիտակ կեզլին քեզ կտամ:

Ջիմը տատանվել սկսեց:

— Սպիտակ կեզլի, Ջիմ, մի լավ սպիտակ կեզլի:

— Այդպես է, ճիշտ է, լավ բան է: Բայց ելի, յես պարոն, յես տիրուհուց շատ եմ վախենում:

Դայթակղվելով Ջիմը դուրը դրեց գեանին, բայց անմիջապես ելի վերջրեց այն և շրխկացնելով՝ վազեց փողոցով: Թոմն սկսեց լեռանդով սպիտակեցնել ցանկապատը, իսկ Պոլլի մորաքույրը առֆլին ձեռին ու հազթական հայացքով հեռացավ կովի դաշտից:

Բայց Թոմի լեռանդը կարճ տեվեց: Նա սկսեց մտածել այն մասին, թե ինչպես ուզում էր ուրախ անցնել այդ որը, բայց ավելի ծանր լեզավ: Այսոր բոլոր տղաները զբոսնում են: Նրանք հիմի գանազան ուրախ խաղեր են սկսել. նրանք կգան իրեն կանչելու, — և կսկսեն ծիծաղել

վրան, վոր ստիպված է այսպիսի ծանր աշխատանք կատարել: Այդ միտքը կրակի պես այրում էր նրան: Նա հանեց իր բոլոր գանձերը և սկսեց դիտել. այստեղ կա ինչ կոտրոված խաղալիքներ, մարմարե գնդակներ և ամեն տեսակի իրեր, — այդ բոլորն անպետք է կես ժամով ազատութուն գնելու համար: Նա իր հարստութունը դրեց գրպանը և հրաժարվեց ընկերներին կաշառելու փորձ անելու մտքից: Այդ ծանր և անհուսալի րոպեյին հանկարծ նրան տիրեց մի վողկորութուն — իսկապես վողկորութուն, մի հանձարեղ, փայլուն միտք: Նա վրձինը ձեռն առավ և սկսեց նանգիստ աշխատել: Հեռվում չերևաց Բեն — Ռոջերսը, վորի ծաղրանքներից Թոմն վախենում էր ամեն բանից ավելի: Բենը վոչ թե քայլում, այլ թռչկոտում էր, — և դա նշանակում էր, վոր նա իրեն լավ է զգում և լավ բաների նույս ունի այդ որը: Նա խնձոր էր ուտում և ժամանակ առ ժամանակ գիլ մելոգիկ սուրոց արձակում, յերբեմն փոխարինելով ավելի ցած նոտաներով — դիս — գոն գոն, դին — գոն — գոն, — վորովհետև նա իրեն ներկայացրնում էր շոգենավ: Մոտենալով նա քայլերը դանդաղեցրեց, կանգնեց փողոցի մեջտեղը և սկսեց դանդաղորեն շուռ գալ, զգուշությամբ, նկատելի մի ձիգով, վորովհետև նա իրեն ներկայացնում էր «Մեծ Միսուրին»՝ ինը վոտնաչափ ջրի մեջ նստած: Նա նավ էր, նավապետ և նավաստիներ միաժամանակ, այնպես վոր նա իրեն չերևակայում էր սեփական տախտակամածի վրա կանգնած, վոր հրամաններ էր տալիս իրեն և կատարում այդ հրամանները:

Կանգ ա՛ռ: Դին — դիլին, — դին դիլին — դին, — նա հետզետե հեռացավ ճամբի մեջտեղից և մոտեցավ յեզերքին — Յետ: Դիլին — դիլին — դին: Նա ձգվեց ինչպես իշխանավորի առաջ, ձեռները վարտիկն ի վար մեկնելով: — Շարժիր, դեպի աջ, Չ՛՛՛ — շ՛՛՛ — շ՛՛՛, — նրա աջ ձեռն ահագին շրջան էր գծում — այժմ նա ներկայացնում էր քա-

ռասուն փոսնաչափ շրջագիծ ունեցող անիվ: Չախ կողքը  
թեքի: Դիլին-դիլին-դին: Չռռ—չռռ—չռռ՝:

Այժմ նա շրջաններ եր գծում ձախ ձեռքով:

— Կանգ առ: Դիլին—դին—դին: Կամաց: Շուռ արիւ-  
րիթը դեպի աջ: Պարանը քցիր: Ի՞նչ ես կանգնել: Բրու-  
նիւր պարանը: Ողակը քցիր այն ցցին: Քաշիր: Թո՞ղ: Մե-  
քենան կանգնեց, սերս Դիլին-դին-դին: Լ՛շտ, ը՛շտ, ը՛շտ  
(նմանեցնում է սառչող շոգու ձայնին, շոգու, վոր դուրս  
է գալիս ծորակներից):

Թո՞մը շատուճակում եր տախտակները սպիտակեցը-  
նել, ու չգարձներով շոգենավին: Բենը գարմանքով նա-  
լեց նրան, հետո, ասաց.

— Հի-հի, աջառին լծել են հա՛:

Թո՞մը չպատասխանեց: Նա, վորպես իսկական նկա-  
րիչ, հիանում եր իր վերջին գծերով, հետո ելի մի թե-  
թե քսեց ու հետ գնաց՝ ավելի լավ նայելու: Բենը իր նա-  
վը մոտեցրեց և կանգնեց նրա հետ կողք-կողքի: Թո՞մի  
բերանի շուրը գնաց նրա ձեռի խնձորը տեսնելով, բայց  
ձևացրեց, թե նրան չի տեսնում, ու լեռանդով աշխատեց:

Վերջապես Բենն ասաց՝

— Հը, մեր տղա, գործի լեն դրել հա՛:

— Ա՛յ, այդ դ՞ճ յես, Բեն: Չնկատեցի:

Հսիք, լես գնում եմ լողանալու, կարծում եմ դու  
ել կողեցիր չե՛: Բայց դու պետք է աշխատես, այն  
պէս չի:

Թո՞մը նայեց նրան ու ասաց.

— Դու ի՞նչն ես աշխատանք համարում:

— Բա սա մի՞թե աշխատանդ չի:

— Թո՞մը նորից շարունակեց վրձինը քսել տախտակ-  
ներիին և ասաց անփուլթ.

— Յե՛վ այո և վոչ: Համենայն դեպս սա իմ սրտին  
մոտ բան է:

— Թող, խնդրեմ. Չե՛ մի. կասե՛ս, վոր այս դբադ-  
մունքը բեզ դուր է գալիս

Վրձինն սկսեց արագությամբ գործել:

— Դ՞ուր է գալիս: Իսկ ինչ՞ու դուր չգա վոր: Ամեն  
որ տղաներին հո չի հա-  
շողվում ցանկապատ  
սպիտակեցնել:

Բանը պատկերացավ  
այլ լույսով: Բենը դա-  
դարեց խնձոր կրծելուց:  
Թո՞մը թեթևորեն վրձինը  
քսում եր աջ ու ձախ,  
լետ գնում, վոր հիանա  
իր նկարչությամբ, այս-  
տեղ այնտեղ բիծ եր ա-  
վելացնում և կրկին քրն-  
նադատաբար դիտում ա-  
րածը, իսկ Բենը հետե-  
վում եր նրա յուրաքան-  
չուր շարժումին, ավելի  
հետաքրքրվելով ու հմայ-  
վելով. Վերջապես նա խնդրեց.

— Հսիք, Թո՞մ, տուր մի քիչ ել լես քսեմ:

Թո՞մը մտածեց և ցույց ավեց, թե պատրաստ է հա-  
մաձայնելու, բայց հետո այլ բան վորոչեց.

— Չե, չե Բեն, չի կարելի: Գիտես, մորաքույրս  
շատ պահանջկոտ է. ցանկապատը փողոցին է նայում. լե-  
թե բակում լիներ—ուրիշ բան եր: Բայց սրա համար նա  
շատ խիստ է—պետք է խնամքով սպիտակեցնել լես այն-  
պես եմ կարծում, վոր հազար անգամ լերկու հազար  
տղայից հազիվ գտնվի մեկը, վոր կարողանա, ինչպես  
վոր հարկն է, սպիտակեցնել:



Բա սա մի՞թե աշխատանք չի:

56898-66  
99-86899

Հանրապետական գրադարան  
ՀՍՍՌ-Արմ ՀՍՐ  
Կ. Ա. ՄԱՇԿԻՅԱՆԻ ԱՄԱՆԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՄԱՆԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՄԱՆԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՄԱՆԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ

Թո՞մ Սոյերի արկած.

— Միթե: Հերիք ե: Թող մի փորձեմ մի քիչ: Յես քո տեղը լինելի՛ քեզ կթողնելի, հ՞ը, Թոմ:

— Բեն, ուրախությամբ կթողնելի, բայց մորաքույր Պոլլին... Ա, Ջիմս ել եր ուզում, բայց մորաքույրս չթողեց, Միգն ել խնդրեց, ելի չթողեց: Հիմի հասկանում լես, թե վորքան դժվար ե այս աշխատանքը վստահել քեզ: Յեթե սկսես սպիտակեցնել, հանկարծ մի բան այնպես չլինի...

Չե, չե: Չգուշ կլինեմ: Դե, սուր փորձեմ: Լսիր մի կտոր խնձոր կտամ դրա համար:

— Լավ, սուր: Ասենք, չե, Բեն, հարկավոր չի — վախենում եմ...

— Ամբողջ խնձորը կտամ:

Թոմը վրձինը հանձնեց նրան արտաքուստ ակամա, բայց ներքուստ շատ ուրախ: Յեվ մինչ նախկին «Մեծ Միսուրի» շոգենավը աշխատում ու քրանում եր, արևի տակ հանգստացող նկարիչը նստել եր տակառի ստվերում, խնձորը ծամում եր և նոր անմեղ գոհերի համար ցանց տարածում: Յեվ գոհի պակասութունն չկար. շարունակ տղաներ ելին լերևում ցանկապատի մոտ. մոտենում ելին շարութուններ անելու, բայց մնում ելին ցանկապատն սպիտակեցնելու: Այն աժամանակ, լերբ Բենը հոգնեց, Թոմը լերկրորդ հերթը տվեց Բիլլի Ֆիշերին՝ թրդթից շինած ոձի համար. իսկ լերբ Ֆիշերն ել հոգնեց, նրան փոխարինեց Ջոննի Միլլերը, վճարելով մի սատկած մուկ ու մի պարան, վոր մկան պոչը կապեն և տարուբերեն. և ալդպես շարունակ մի քանի ժամ: Թոմը, վոր առավոտյան խղճալի աղքատ եր, կեսորին հարստացավ: Բացի վերոհիշյալ գանձերից, նա ձեռք բերեց տասներկու մարմարե գնդակներ, սուլիչ, կապույտ շշի մի կրտոր, փայտե թնդանոթ, մի կտոր կավիճ, շրամանի ապակե խցան, լերկու շերեփուկ, մի բաշբանի կտավի ձագ, զրոան պղնձե բռնակ, շան վզկապ, — միայն շուն չկար, —

դանակի կոթ, չորս նարինջի կեղև և տանիքի լուսամուտի մի կտորած շրջանակ: Նա վոչինչ չանելով, շատ լավ ժամանակ անցրեց, իսկ ցանկապատին քսվեց լերբը շերտ կիր: Յեթե նա կիր շատ ունենար — քաղաքի բոլոր լերեխաներին կանանկացներ:

Մորաքույր Պոլլին նստած էր բաց լուսամուտի մոտ, յերբ թոմը կանգնեց նրա առաջ.

- Մորաքույր, կարելի՞ յե գնամ խաղալու:
- Ի՛նչպես. արդե՞ն: Ինչքան ես սպիտակացրել:
- Բոլորը, մորաքույր:
- Թոմ մի ստիբ:
- Չեմ ստում, մորաքույր. պատրաստ ե:

Մորաքույր Պոլլին այնուամենայնիվ չհավատաց: Նա գնաց տեսնելու և ուրախ կլիներ յեթե թոմի առածը քսան տոկոսով ճիշտ դուրս գար: Յերբ նա համոզվեց, վոր ամբողջ ցանկապատը սպետակեցված է, և սպիտակեցված է թանձր, մի քանի շերտ ու մինչև անդամ ցանկապատի յերկարութամբ սպիտակ գիծ է տարված,— զարմանքը տարավ նրան:

— Այ, տեսնում ես, յերբեք մտքովս չեյի անցնի... Չե, թոմ դու կարող ես լավ աշխատել, յեթե ուղենաս: Բայց աշխատել քիչ չես ուղում... Դե, գնա խաղա, միայն թե տես— ժամանակին տուն արի, թե չե ես քեզ...

Նա այնքան հիացած էր թոմի աշխատանքով, վոր հրան տարավ մառան, ընտրեց ամենալավ խնձորը և տրվեց նրան, յերկար խոսելով այն մասին, թե բարեխիղճ աշխատանքից հետո խնձորն ավելի համեղ է թվում: Թոմը մինչ այդ կարողացավ մի շաքարահաց թուցնել:

Թոմը դուրս յեկավ բակը և տեսավ Միգը բարձրունում և սանդուղով, վորը տանում էր վերին հարկի յետևի սենյակները: Մի ակնթարթում ո՞ղը լցվեց սպտակներով:

չրեկոցով, վոր իջնում էին Միգի դեմքին, գլխին. մինչև Պոլլի մորաքույրն ոգնության կհասներ — վեց-յոթ հարված արդեն հասավ իր նպատակին, և թոմը փախավ ցանկապատի տակով: Այժմ, յերբ վրեժխնդիր յեղավ Միգին՝ սեթելը Պոլլի մորաքրոջը ցույց տալու համար, — նրա սիրտը հանգստացավ:

Թոմը տան յետևով անցավ և դուրս յեկավ մի կեղտոտ ճանապարհ, վոր գնում էր ախոռի մոտով: Այստեղ նա վախենալու բան չուներ, թե կբռնեն կպատեն իրեն. նա կատարյալ ապահովության մեջ էր: Ուստի գնաց դե-




Ճակատամարտից հետո:

պի գլուղական շուկայի հրապարակը, ուր, ըստ նախապես արված պայմանի, կովի համար հավաքվել էին տղաների յերկու «զինվորական» վաշա: Բանակներից մեկի հրամանատարը թոմն էր, մյուսինը, — նրա մտերիմ բարեկամ Ջո Հարպերը: Յերկու մեծագուշն զորավարն էլ իրենց պահում էին և թույլ չեյին տալիս՝ անձամբ կովե-

լու (դա սագում եր ավելի փոքր յերեխաներին), բայց ղեկավարում էին ճակատամարտի ընթացքը, իրար կողքի թմբին նստած, և հրամանները տալիս էին թիկնապահների միջոցով: Յերկար ու դժվարին կովից հետո թոմբ բանակը հաղթանակը տարավ: Այս բանակները հաշվեցին սպանվածներին, փոխանակվեցին գերիներով, համաձայնության յեկան հետևյալ որվա վճռական ճակատամարտի պայմանների և որվա մասին. հետո՝ շարք կանգնեցին և ցերեմոնյալ մարշով հեռացան: Թոմբ տուն գնաց մենակ:

Անցնելով այն տան մոտից, ուր ապրում եր Ջեֆ Տեչերը, թոմբ պարտիզում տեսավ մի անծանոթ աղջիկ—մի սքանչելի, կապուտաշյա ելակ, գեղին մազերը յերկու յերկար հյուս արած, ամառային ճերմակ շորերով և ասղագործ վարտիկով:

Նա գաղտուկ հիանում եր այդ նոր հրեշտակով, մինչև վոր նկատեց, թե «հրեշտակն» իր հերթով տեսել է իրեն: Այդ ժամանակ նա ձևացավ, թե չի նկատում աղջկա ներկայութունը, և սկսեց իր ճարպիկութունը ցույց տալ անելով զանազան անհեթեթ բաներ, ինչպես այդ հատուկ է փոքրիկ տղաներին, յերբ նրանք ուզում են դուր գալ: Այդպես շարունակվեց մի առ ժամանակ. հետո մի ինչվոր դժվարին մարզական խաղի կիսին նա նայեց աղջկա կողմը և նկատեց, վոր աղջիկը շուտ յեկած գնում է դեպի տուն: Թոմբ ընկճված մտեցավ ցանկա-



պատին: Նա հույս ուներ, վոր աղջիկը մի քիչ էլ կմնա պարտիզում: Աղջիկն իսկապես, մի վարկյան կանգ առավ պարտեզի գուան մոտ, հետո գնաց դեպի տուն: Թոմբ ծանր հառաչեց, յերբ աղջիկը վտար դրեց շեմքը, բայց հանկարծ նրա դեմքը փալկեց հիացմունքից.— նախքան ներս մտնելը՝ աղջիկը յետ նայեց և ցանկապատի վրայից մի ծաղիկ նետեց տղային: Տղան վրա վագեց, կանգ առավ ծաղիկից յերկու քալ հեռու, ձեռի ավեր դրեց ճակատին և սկսեց ուշադիր նայել փոզոցին, կարծես ինչվոր առանձին հետաքրքրական բան յերևաց այնտեղ: Հետո վերցրեց մի ծղնոտ ու դրեց քթին, աշխատելով հավասարակշիռ պահել այն, վորի համար և թեքվում եր այս ու այն կողմ, գլուխը յետ գցած: Մոմովելով նա կամացկամաց մոտեցավ ծաղիկին. վերջապես բոբիկ վտար դրեց նրա վրա, վերցրեց ձկուն մատներով, վազեց մի վտավ, տանելով իր գանձը, և շուտով թագնվեց անկյունի յետև: Բայց յերկար չե,— այնքան ժամանակ միայն, վորքան հարկավոր եր բաճկոնը բանալ և ծաղիկը թագցնել կրթքին՝ սրտի մոտ, կամ, թերևս, փորի մոտ, վորովհետև թոմբ այնքան էլ ուժեղ չեր անատոմիայից:

Հետո նա վերադարձավ և մինչև յերեկո գանազան խաղեր եր անում ցանկապատի մոտ. բայց աղջիկը չերեկաց, թեև թոմբ մխիթարում եր իրեն այն հույսով, թե նա անպատճառ հիմա մի վորևե տեղից—լուսամուտից նայում է, թե ինչպես է ինքը իր հունարները ցույց տալիս: Ի վերջո, նա ակամա գնաց տուն, գլուխը ցնորքներով լիքը:

Ընթրիքի ժամանակ նա այնքան հուզված տեսք ուներ, վոր մորաբուրբը գարմանում եր միայն.— «ինչ է պատահել այս յերեխային»: Նրան մի լավ հայտնեցին Սիդին ծեծելու համար, բայց նա, ըստ յերևույթին, բնավ չնեղացավ: Նա փորձեց մի կտոր շաքար թուցնել մորաբու-

ընչ քթի տակից և դրա համար ձեռք հարված կերպով, բայց և այնպես դարձյալ չնեղացավ և ասաց միայն.

— Մորաքույր, ապա ինչո՞ւ Սիդին չես ծեծում, չե՞րբ նա շաքար է թոցնում:

— Սիդը քեզ պես մարդ չի տանջում: Յեթե յես չըլինեմ՝ ձեռք շաքարամանից չես հանի:

Մորաքույրը գնաց խոհանոց, և Սիդը, բախտավոր եր, վոր իրեն չպատժեցին, իսկույն ձեռք մեկնեց դեպի շաքարամանը, կարծես թո՞մին ծաղրելու համար. դա ուղղակի անհանդուրժելի յեր... Բայց շաքարամանն ընկավ Սիդի ձեռքից. ընկավ հատակին ու փշրվեց: Թո՞մը հրճվանքի մեջ երբայց գսպեց իրեն ու լսեց: Նա վորոշեց վոչ մի խոսք չասել, անգամ չեթե մորաքույրը ներս մտներ. վորոշեց հանգիստ նստել, մինչև նա չհարցներ, թե ո՞վ է կոտրել և միայն այդ ժամանակ կասեր: Թո՞մը նախապես ուրախանում եր, վոր մորաքույրն իր «անուշիկին» մի լավ կուտեցնի: Պառավը վերադարձավ և, կոտրված շաքարամանը տեսնելով, ձեռները խփեց իրար և ակնոցի վերեից շանթ ու կրակ թափեց աչքերից: Թո՞մն ասաց իրեն. «Հրեա սկսվում է»: Բայց մի ակնթարթ—և նա չերկար ու մեկ պառկած եր գետնին: Պատժող ձեռքն արդեն բարձրացել եր նոր հարվածի համար, չե՞րբ թո՞մը լացախառն բացականչեց,

Սպասիր: Սպասիր: Ինչո՞ւ յես ծեծում ինձ: Չե՞ վոր Սիդն է կոտրել շաքարամանը:

— Մորաքրոջ ձեռք փայտացա՞յ ողում: Թո՞մն սպասում եր խղճահարուժյան ու գղջումի խոսքերի, բայց պառավը գսպեց իրեն և ասաց միայն.

— Հը՛մ: Բայց և այնպես կարծում եմ այս բանն իզուր չե՞ր քեզ:

Ի՞նչ յե՛լ յերևի շարուժյունն ես արել իմ բացակայությամբ:

Սիդը տանջում եր պառավին, նա շատ եր ուզում

մի յերկու սիրալիր խոսք ասել աղալին, շոյել նրան: Թո՞մը գիտեր, վոր մորաքույրը սրտի խորքում պատրաստ է համբուրել իր վոտները, և այդ գիտակցությունը բավականությունն եր պատճառում նրան: Նա վորոշեց հաշտվելու վոչ մի քայլ չանել և չնկատել նրա գղջումի արտահայտությունները: Թո՞մը գիտեր, վոր մորաքույրը ժամանակ առ ժամանակ նայում է իրեն արցունքից մշուշված կարեկից հայացքով, բայց չե՞ր ուզում նկատել այդ: Նա իրեն պատկերացնում եր հիվանդ պառկած, մահամերձ, իսկ մորաքույրն իր վրա կոսցած՝ սպասում եր թողության գեթ մի խոսք. բայց ինքը չերեսը շուռ է տալիս դեպի պատը և մեռնում առանց այդ խոսքն ասելու: Այն ժամանակ ինչպես կզգա իրեն մորաքույրը: Նա պատկերացնում եր, թե ինչպես են իրեն մեռած, ջրահեղձ բերում տուն, մագերթ թրջված են, ձեռները կրճքին ծալած հանգստանում են ընդմիջ, ինչպես և իր հիվանդ սիրտը: Ինչպես այդ ժամանակ մորաքույրը կընկնի իր դիակի վրա և լաց կլինի ու կազոթի աստծուն, վոր կենդանացնի իր աղալին, և ել յերբե՛ք, յերբե՛ք իզուր տեղը չի նեղացնի իրեն: Իսկ ինչը թո՞մը կպառկի գուհատ, առանց կենդանության վորևե նշանի,—նրա տանջանքները վերջացել են ընդմիջ... Նա իրեն այնքան հուզեց այդ հուզիչ պատկերներով, վոր բոլոր ժամանակ աչքերը լցվում էյին արցունքով և կաթում քիթն ի վար: Իր վիշտը փայփայելն այնպիսի բավականությունն եր պատճառում նրան, վոր ուրախ դեմք ու ծիծաղ չե՞ր կարողանում տանել: Այդ եր պատճառը, վոր յերբ պարելով սենյակ ընկավ իր ազգականուհի Մերին, բերելով իր հեռ յերգ և ուրախություն — թո՞մը տխուր ու մուսլ դուրս յեկավ տնից: Նա թափառեց ընկերներից հեռու, վորոնելով առանձնացած տեղեր, նույնպես տխուր, ինչպես իր սիրտն եր:



Կիրակի առավոտ եր, պարզ. արևը փալլում եր պայծառ: Նախաճաշից հետո՝ Մերին նվիրեց թումին մի նոր, հենց այդ որը գնած դանակ, վոր արժեք տասյերկու ու կես ցենս\*, և թումի ուրախութեանը չափ չկար: Ազգականուհու բարութունը մինչև սրտի խորքը հուզեց նրան: Ճիշտ ե, դանակը «անվաճակ» եր. նրանով վոչինչ չեք կարելի կտրել, բայց թումը հունարը ցույց տվեց բուֆետ-պահարանի վրա և ուզեց զրասեղանն ել տաշել, յերբ կանչեցին հագնվել՝ կիրակնորյա դպրոցը գնալու:

Մերին տվեց նրան թիթեղե կոնքը և մի կտոր սապոն. նա դուրս յեկավ բակը, կոնքը դրեց փոքրիկ նստարանի վրա, հետո սապոնը թրջեց ջրով ու դրեց տեղը, թևերը քշտեց, զգուշութեամբ ջուրը թափեց գետին, մըտավ խոհանոց և սկսեց յերեսը սրբել սրբելով: Բայց Մերին սրբելը խլեց նրա ձեռքից, ասելով:

— Ինչպես չես ամաչում, թում: Չի կարելի այդքան անկարգ լինել. Քեզ ինչ կլինի, յեթե լվացվես.

Թումը ամաչեց մի քիչ: Կոնքը նորից ջրով լցրին: Այս անգամ թումը մի առ ժամանակ մնաց կոնքի վրա հակած: Կարծես իրեն վճռականութուն ներշնչելու, վերջապես հռոչեց և սկսեց լվացվել: Յերբ յերկրորդ անգամ խոհանոց մտավ փակ աչքերով, ձեռով շոշափեց սրբելը, ջուրն ու սապնափրփուրը, վոր թափվում ելին նրա յերեսից, սնկասկած ելին դարձնում նրա բարեխղ-

\* Այսինքն 25 կոպեկ:

ճութունը: Բայց և այնպես, յերբ նա յերեսը հանեց սրբելի տակից, յերևաց, վոր գեմքին այնքան ել բավարար տեսք չունի, յերեսի մի մասը լվացված եր, մյուս մասը՝ ճակատից վեր և կրակից ցած՝ չոր, իսկ վզին կար մի մութ բիծ: Մերին ինքը լվաց նրան, և զրանից հետո նա ստացավ մի քաջարի տեսք. մազերը հարդարված ելին, կարճ խոպոպները գեղեցկորեն ու համաչափ դասավորված: Նա ինքը միշտ խնամքով հարթում եր մազերը այնպես, վոր տափակ պսակեն. նա զսնում եր, վոր խոպոպներն իրեն աղջկա նմանութուն ելին տալիս: Այնուհետև Մերին պատուհանից հանեց նրա տոնական զգեստները, վոր յերկու տարի միայն կիրակի որերն եր հագնում: Յերբ հագնվեց, Մերին «ուղղեց» նրան, բաձկոնը կոճկեց, շապկի լախն ոձիքը ծալեց գեպի ուսերը, հագուստեղենը խոզանակեց և վորջապես ծղոտե զլխարկը դրեց գլխին:

Այս բոլորն անչափ գեղեցկացրեց նրան. բայց նա շրփոթված տեսք ուներ և իրեն շատ անհարմար եր զգում. սովոր չեք լվացված ու մաքուր լինել, և դա նեղում եր նրան: Նա հույս ուներ, թե Մերին մոռացութեան կտար կոշիկները, բայց այդ հույսը չարդարացավ: Մերին ճարպ քսեց նրանց և բերեց, վոր հագնի: Այստեղ թումի համբերութունը հատավ, և նա սկսեց զանգատվել, թե իրեն միշտ հարկադրում են անել այն, ինչ ինքը չի ուզում: Բայց Մերին ասաց համոզիչ:

— Դե, խնդրեմ, թում, խելքդ գլուխդ հավաքիր:

Յե՛վ նա, թոնթորալով, կոշիկները վտանները քաշեց: Մերին նույնպես շուտով հագնվեց, և յերեսը միասին գնացին կիրակնորյա դպրոցը, վորը թումն ատում եր ամբողջ հոգով, իսկ Միզն ու Մերին սրբում ելին:

Պարապմունքը դպրոցում տևեց իննից մինչև տաս և կեսը. ապա սկսեց ժամերգութունը: Մերին ու Միզը միշտ ինքնակամ մնում ելին քահանայի քարոզը լսելու, թումը նույնպես մնաց—հակառակ կամքի:

Տաս և կեսին փոքրիկ յեկեղեցու գանգը տվին, և ժողովուրդը իսկույն և եթ հավաքվեց առավոտյան քարոզը լսելու: Կիրակնորյա դպրոցի աշակերտները տեղավորվեցին յեկեղեցու տարբեր անկյուններում, նստելով նույն նստարանների վրա, ուր նստում ելին նրանց ծնողները, փորպետի բոլոր ժամանակ հսկողության տակ լինեն: Պոլի մորաքրոջ կողքին նստեցին Թոմը, Սիդը և Մերին: Թոմին նստեցրին բաց լուսամուտից հեռու, այսինքն՝ ամառային գայթակղիչ տեսարաններից ու պատկերներից մի կողմ: Յեկեղեցին հեռոկհեռոկ լցվեց: Յեկավ ձերուների աղքատ-պոստապետը, վոր մի ժամանակ շատ լավ որեր եր սեսել. յեկավ քաղաքագլուխը՝ կնոջ հետ և հաշտարար դատավորը, և այլի Դուգլասը՝ քառասունի մոտ մի բարի, գեղեցիկ ու առատաձեռն կին—բլրի վրա գտնվող նրա տունը վոչ թե տուն եր, այլ պալատ, միակ պալատը փոքրիկ քաղաքում. դա միաժամանակ հյուրընկալ պալատ եր, ուր կազմակերպվում ելին ամենաշքեղ տոնահանդեսները: Յեկավ փաստաբան Ռիվերսոնը՝ շրջանի նոր արխատուկրատը. հայտնվեց տեղական գեղեցկուհին. վերջապես, վորպես վերջին այցելու, յեկավ որինակելի փոքրիկ տղա Վիլլի ՄակՖերսոնը, վորն այնպիսի հոգատարութուն եր ցույց տալիս մորը, վոր նա կարծես բյուրեղից լիներ: Նա միշտ մորն իր հետ աանում եր յեկեղեցի, և բոլոր մայրերը նրան վորպես որինակ ելին ցույց տալիս իրենց վորդիներին: Իսկ տղաները—բոլորը ատում ելին նրան, վոր այդքան լավն ե, և գլխավորապես նրա համար, վոր նրան միշտ իրենց յերեսովն ելին տալիս: Նրա գրպանից, իբր թե պատահաբար, յերևում եր թաշկինակի ծայրը: Թոմը քթի թաշկինակ չուներ բնավ և այն տղաները, վորոնք ունենում ելին այդ արդուզարդի պարագան, նրանց համարում եր փոքրիկ ճեմաներ:

Քահանան սկսեց հիմնից—որհներգութունից, վորը նա կարգաց վորբազին ձայնով: Սկսեց միջին նոտաներով

և ձայնը հեռոկհեռոկ բարձրացրեց: Աղոթքի կեսին Թոմի ուշադրութունը դրավեց մի ձանձ, վոր նստել եր իր առջևի նստարանի թիկունքին: Այդ ձանձն ուղղակի տանջեց նրան. նա փոքրիկ վոտիկները այնպես հանգստորեն եր քսում իրար, դրանցով այնպես յեռանդուն եր բռնում—հարթում գլուխը, վոր գլուխը կարծես բաժանվում եր մարմնից, ու յերևում եր վզի բարալիկ թեյը. ապա յետևի վոտիկներով մաքրում, հարթում եր թևերը. ինչպես Ֆուսկի փեշեր, վոր վրան ավելի լավ նստեն. ու բոլոր իր արդուզարդը կատարում եր առանց շտապելու, հանգիստ ու վստահ, կարծես գիտեր, վոր իրեն վոչինչ չի սպառնում: Յեվ իսկապես, նրան վոչինչ չեր սպառնում, վորովհետև թեև Թոմի ձեռները քոր ելին գալիս նրան բռնելու, բայց նա չեր համարձակվում անել այդ աղոթքի ժամանակ: Բայց հենց վոր քահանան վերջին աղոթքն սկսեց, այդ ձեռն ինքնաբերաբար առաջ գնաց. իսկ յերբ լավից «ամենը», ձանձը բռնվեց: Բայց մորաքույրը նկատեց այդ և Թոմին ստիպեց՝ ձանձը թողնել:

Քահանան միորինակ ձայնով սկսեց քարոզը, այն ատիճան ձանձրալի, վոր շուտով շատերն սկսեցին ննջել, չնայած այն բանին, վոր քարոզիչն սպառնում եր մեղավորներին կպրե կարասով, իսկ ընտրյալներին թիվը, վորոնց նա խոստանում եր հավիտենական յերանութուն, հասցրեց մի այնպիսի սահմանափակ թվի, վոր դուրս եր գալիս, թե այդպիսի մի բուռն արդարներին, թերևս չարժի ցի վրկել:

Թոմի տանջանքները վերսկսվեցին: Հանկարծ հիշեց, թե ինչ գանձ կա գրպանումը և շտապեց հանել այն: Դա մի խոշոր սև բզեզ եր՝ ուժեղ ծնոտներով—«կծան» բզեզ, ինչպես անվանում եր նրան Թոմը: Բզեզը թագգրել եր տուփի մեջ: Յերբ Թոմը տուփը բաց արավ, բզեզն առաջին հերթին կծեց նրա մատը: Հասկանալի բան ե. տղան մատով չրթացնելով՝ նետեց նրան մի կողմ և կծված մատը կոխեց բերանը: Բզեզն ընկավ մեջքի վրա և թափա-


հարուժ եր իրեն, չկարողանալով շուռ գալ: Թո՛ւր նայում եր նրան և ուզում եր լետ վերցնել, բայց բզեզը անհասանելի հեռու եր արդեն: Սակայն նա գվարձության առարկա դարձավ շատերի համար, վոր չելին կարողացել հետաքրքրվել քարոզով և այժմ հետևում էին ըզեղի՝ նորից վտտի կանգնելու ճիգերին:

Բայց անա պատահաբար յեկեղեցի մտավ ամառվա շոգից տանջված մի տխուր շուն. փակ տեղը նստելուց ձանձրանալով՝ նա ցանկանում եր գվարձութուն և նոր ապավորութուններ: Յերբ աչքն ընկավ բզեզին՝ նրա կախ ընկած պոչն իսկույն բարձրացավ ու շարժվեց: Նա յերկար ուսումնասիրութ եր վորսը, պտտվում եր նրա շուրջը, հեռվից հոտոտում եր նրան. հետո համարձակութուն ստացավ և ավելի մոտեցավ. ապա բերանը բանալով՝ ուզեց բռնել բզեզը—վրիպեց. փորձը կրկնեց, դարձյալ ու նորից. ըստ յերևույթին—այդ նրան դուր չեկավ. նա պառկեց փորի վրա, այնպես վոր բզեզը մնաց նրա վտտների արանքում, և շարունակեց իր փորձերը: Վերջապես, դա ձանձրացրեց նրան—նա դարձավ անտարբեր ու ցրված, և սկսեց ննջել. կամաց-կամաց նրա գլուխն իջավ և ծնուտը զիպավ բզեզին, վորն շտապեց կծել նրան: Շունը կլանչ-կլանչեց, գլուխը թափահարեց, բզեզը թռավ յերկու քայլ հեռու և կրկին ընկավ մեջքի վրա: Մոտիկ նստողներն ու այդ տեսնողները ցնցվեցին անձայն ծիծաղից. շատերը զեմքերը ծածկեցին հովհարներով ու թաշկինակներով, և Թո՛ւր միանգամայն յերջանիկ եր:

Շունը տխմար տեսք ուներ—հավանորեն նա ինքն ել զգուժ եր, վոր հիմար դրության մեջ ընկավ, բայց միևնույն ժամանակ նրա շնական սիրտը ճնշում եր վիրավորանքն ու վրեժխնդրության ծարավը: Այդ պատճառով նա մոտեցավ բզեզին և զգուշությամբ վերսկսեց հարձակումները. ամեն կողմից նետվում եր դեպի բզեզը, առաջին վտտները նրան չդիպցրած, շրխկացնում եր ատամները ու

գլուխը թափահարում այնպես, վոր ականջները շարժվում էին: Բայց, վերջիվերջո այդ ել ձանձրացրեց նրան. նա փորձեց գվարձանալ ձանձով. բայց դա բավականաչափ գրավիչ չթվաց. քայլ առ քայլ հետևեց մըջունին, դունչը հատակին մոտեցրած, բայց այստեղ ել ձանձրացավ, շուտով հորանջեց, հառաչեց, բուրբովին մոռացավ բզեզը ու նստեց նրա վրա: Բայց ի՞նչ պատահեց: Շունը սարսափելի կլանչեց ու դես ու դեն ընկավ յեկեղեցում. բեմի առջևից անցավ մյուս կողմը, նետի պես սլացավ դեպի դուռը, դռնից լետ յեկավ, շարունակելով հաջել ու կլանչել, վորովհետև բզեզը, նրա փորին կաշելով, ծնոտները չեր բանում. շունը վորքան շատ եր դես ու դեն ընկնում, ցավն ավելի յեր սաստկանում, և, վերջապես, նա փոփվեց-գարձավ մի բրդոտ գիսավոր՝ անասելի արագությամբ իր շառավիղի շուրջը պտտվոյ: Բանը վերջացավ նրանով, վոր խենթացած շունը նետվեց մի կողմ և թռավ իր տիրոջ ծնկները, բայց տերը շարժեց նրան լուսամուտից դուրս, և նրա վողբագին վոռնոցը հետզհետե մարեց հեռվում:

Բոլորը նստել էին կարմրած, ծիծաղից շնչասպառ. հազիվ էին զսպում իրենց, վոր բարձրաձայն չծիծաղեն:



Այ ինչ և նշանակում յեկեղեցում խաղ անել:

Անգամ քարոզիչը կորցրեց մտքի թելը ու թեև անմիջապես վերսկսեց ճառը, բայց այժմ այլևս հարթ չեր խո-

տում, զգալով, վոր տպավորութիւն թողնելու հնարավորութիւնը կորած է. վորովհետև նրա ամենաազգու խոսքերին ունկնդիրները, նստարանների թիկունքի յետև թազնվելով, արձագանգում ելին խուլ ծիծաղով, կարծես քարոզիչը ասել էր մի ինչ-վոր զվարճալի շատ բան:

Բոլորը թեթևացած շունչ քաշեցին, չերբ այդ տանջանքը վերջացավ, և քահանան «ամեն» ասաց:

Թոմ Սոյերը տուն գնաց ուրախ, ինքն իրեն ասելով, թե ժամերգութիւնն էլ չերբեմն կարող է այնքան ձանձրալի չլինել, յետե միայն նրա մեջ մտցվի վորոշ բազմազանութիւն: Մի բան միայն մթազնում էր նրա ուրախութիւնը. նա գեմ չեր, վոր շունը խաղոյց բզեզի հետ — բայց ինչո՞ւ հետը տարավ: Դա արդեն անբարեխղճութիւն էր:

V

Յերկուշաբթի առավոտը Թոմ Սոյերը արթնացավ բոլորովին դժբախտ: Յերկուշաբթի որերն այդ բանը միշտ պատահում էր նրան, վորովհետև դպրոցական նոր տանջանքների շաբաթն այդ որովն էր սկսվում: Նա նույնիսկ ափսոսում էր, վոր չերեկ տոն էր, վորովհետև ազատութիւնից հետո գերութեան մեջ ընկնելն ավելի ծանր էր:

Թոմը պառկած մտածում էր: Հանկարծ նրա մեջ ցանկութիւն գարթեց՝ հիվանդանալ, վոր տանը մնա և դըպրոց չգնա: Իսկապես, չէ՞ կարելի չէ մի վորեէ բանով հիվանդանալ: Նա ուսումնասիրեց իրեն. վոչ մի տեղը չեր ցավում. շոշափեց իրեն մի անգամ ևս:

Այս անգամ նրան թվաց թե վորը ցավել է սկսում, և ուրախացավ, հույս ունենալով, թե ցավը կսաստկանա: Բայց ցավը, ընդհակառակը, շուտով թուլացավ և կամաց-կամաց չքացավ: Թոմը նորից սկսեց չերեակայել և հանկարծ հիշեց, վոր ատամը շարժվում է: Դա արդեն լավ էր. նա ուզում էր «շան պես վռոնալ», բայց հանկարծ մտածեց, վոր չերբ խոսք բանա ատամի մասին՝ մորաքույրն առանց այլևայլի ատամը կքաշի, իսկ դա ցավ կպատճառեր: Այդ պատճառով նա վորոշեց, վոր ավելի լավ է ատամը թողնի վորպես պահեստի ցավ և մի ուրիշ բան փնտռի: Մի առ ժամանակ բան չեր գտնվում. հետո նա հիշեց, թե ինչպես բժիշկը պատմում էր մի հիվանդութեան մասին, վոր մեկին անկողին էր զցել չերեք շաբթով և մատի կորուստ էր սպառնում նրան: Թոմը ըշ-

տապ վերմակի տակից հանեց մեծ մատր և սկսեց ուսում-  
նասիրել: Բայց չզիտեր այդ հիվանդութեան նշանները  
վորոնք են: Սակայն այնուամենայնիվ արժեր փորձել և  
նա սկսեց տնքտնքալ:

Բայց Սիդը չզարթեց:

Թոմը հեծեծեց ավելի բարձր ձայնով, և նրան թվաց,  
թե մատն իրոք ցավում է:

Սիդը ձայն չհանեց:

Թոմի շունչը կտրեց շատ ջանք գործ դնելուց: Նա  
հանգստացավ մի քիչ, ոգ հավաքեց թոքերի մեջ և հոյա-  
կապ տնքոցներ արձակեց:

Սիդը խոժփում էր միայն:

Դա զրգռեց Թոմին: Նա կանչեց. « Սիդ, Սիդ », ու  
խփեց լեզբոր ուսին: Դա ազդեց, և Թոմը դարձյալ տնք-  
տնքաց: Սիդը հորանջեց, բարձրացավ արմունկի վրա և  
աչքերը հառեց Թոմին: Սա շարունակում էր տնքալ: Սի-  
դը ձայն տվեց.

— Թոմ: Լսիր, Թոմ:

Պատասխան չեղավ:

— Լսում ես, Թոմ: Թոմ: Ի՞նչ է պատահել քեզ, Թոմ:  
Յե՛վ Սիդն իր հերթին խփեց լեզբորը, վախեցած նա-  
յելով նրա դեմքին:

Թոմը տնքաց վողբազին:

— Թո՛ղ, Սիդ: Հանգիստ թող ինձ:

— Ախր ի՞նչ է պատահել քեզ, Թոմ: Մորաբրոջը  
կանչեմ:

— Չե՛, հարկավոր չի: Գուցե անցնի: Վո՛չ մեկին  
էլ մի կանչի: Հարկավոր չի:

— Բան ասաց: Իհարկե կկանչեմ: Դե՛, մի տնքա  
այդպես: Սարսափելի լե՛: Վաղո՛ւց է ցավում:

— Մի քանի ժամ: Ո՛յ: Ի սեր աստծո, Սիդ, ձեռ  
մի տա ինձ: Կսպանես:

— Ի՞նչու ինձ շուտ չզարթեցրիր: Թոմ, սիրելիս:

այդպես մի տաքանա. մարմինս փշաքաղվում է: Ի՞նչ է  
ցավում:

— Յես ամեն ինչ ներում եմ քեզ, Սիդ (տնքոց)...

Ամեն բան, ինչ վոր արել ես ինձ: Յերբ ել չեմ լինի...

— Վա՛յ, Թոմ, մի՛թե մեռնում ես: Թոմ, սիրելիս, մի  
մեռնի: հարկավոր չի: Գուցե...

— Յես բոլորին ել ներում եմ, Սիդ, (տնքոց):

Այս բանը ասա նրանց: Իսկ իմ լուսամուտի շրջանակը և  
մի աչքանի կատուն սուր այն աղջկան, վոր նորերս յե-  
կել է քաղաք, և ասա նրան...

Բայց Սիդը հագուստները վերցրեց ու հայտն: Այժմ  
Թոմը իսկապես հիվանդ էր, այնպես բուռն էր աշխա-  
տում նրա լեռնակալութունը, և տնքոցները դուրս ելին  
զայլիս սխանգամայն բնական:

Սիդը սանդուղից նետվեց ցած ու գոռաց.

— Մորաբույր, շուտ այստեղ արի: Թոմը մեռնում է:

— Մեռնում է:

— Այո: Ել ի՞նչ ես կանգել: Ծուռ, արի:

— Հիմարութուն է: Չեմ հավատում:

Բայց և այնպես նա արդեն վազում վեր, Սիդն ու  
Մերին ել նրա յետևից: Մորաբրոջ դեմքը բոլորովին գու-  
նատվել էր, շրթունքները դողում էին: Վազեվազ Թոմի  
անկողնին մոտենալով՝ նա հագիվ կարողացավ արասա-  
նել:

— Թո՛մ, սիրելիս, ի՞նչ է պատահել քեզ:

— Ո՛հ, մորաբույր, լես...

— Ի՞նչ է պատահել, ի՞նչ է պատահել քեզ, տղաս:

Ո՛հ, մորաբույր, մատս կարմիր քամի յե լեզել:

Պառափն ընկավ աթոռին ու ծիծաղեց, հետո լաց լե-  
ղավ, նորից ծիծաղեց ու նորից լաց լեղավ: Դա հանգըս-  
տացրեց նրան, և նա ասաց.

— Այ վախեցրիր հա: Դե՛ ել հերիք ե. թող հիմա-  
րութուններդ ու վեր կաց:

Տնքոցները դադարեցին, և մատի ցամախ իսկուհն կրտրեց: Թոմը, փոքր ինչ ամոթահար, բացատրեց.

— Մորաքույր, ինձ թվաց, թե մատս բոլորովին փայտացել է, այնպես եր ցավում, վոր բոլորովին ատամիս ցավը մոռացա:

— Ասա խնդրեմ: Ի՞նչ է պատահել ատամիդ:

— Ատամիս մեկը շարժվում է և սարսափելի ցավում ուղղակի անտանելի չէ:

— Ի՞նչ հերիք է հերիք, թե չե նորից կսկսես տրնքանքալ: Բերանդ բաց արա տեսնեմ: Այո, ատամդ իրոք շարժվում է, բայց դրանից չեն մեռնում: Մերի, բեր մետաքսի թելը և խոհանոցից ել մի խանձող:

— Մորաքույր, հարկավոր չի, ել չի ցավում: Ել չեմ տնքա, չեթե նորից ցավի չել: Խնդրում եմ, մորաքույր, ել հարկավոր չի: Չեմ ուզում տանը նստել, չես ուզում եմ գնալ դպրոց:

— Ուրեմն այդպես: Այս ամբողջ պատմութունը սարքել ելիր միայն նրա համար, վոր դպրոց չգնաս, և դրա փոխարեն փողես ձուկ բռնելու: Ախ, Թոմ, Թոմ. չես քեզ այնպես եմ սիրում, իսկ դու, կարծես դիտմամբ ամեն տեսակ վատութուններ ես անում և սիրտս շուտ բերում:

Այլ միջոցին բերին ատամ քաշելու գործիքները: Մորաքույր Պոլլին մետաքսե թելի ծայրը ողակ արավ, հազցրեց հիվանդ ատամին ու պինդ ձգեց, իսկ թելի մյուս ծայրը կապեց մահճակալի վտաին. ապա վերջրեց բոցավառ խանձողը և մոտեցրեց Թոմի դեմքին: Մի ակնթարթ—և ատամը թելի ծայրին կախվեց մահճակալից:

Բայց բոլոր փորձութունները այս կամ այն կերպ վարձարվում են: Յերբ Թոմը, նախաճաշելով, դպրոց չեկավ, բոլոր ընկերները նախանձեցին նրան, վորովհետև այն փոսը, վոր գոյացել էր վերին ատամնաշարի արանքում, թույլ էր տալիս բոլորովին նոր և անսովոր ձևով թքելու:

Նրա յետևից քայլում էր տղաների մի ամբողջ խումբ՝ այդ նոր յերևույթով հեռաբրբրված. մի տղա, վոր մատը կտրել էր և մինչև այժմ ընդհանուր ուշադրության և հարգանքի առարկան էր, անմիջապես զրկվեց իր համակիրներից, և նրա փառքը խավարեց: Իրանից նա շատ վշտացավ և արհամարհանքով հայտարարեց, թե Թոմ Սոյերի նման թքելը մի մեծ բան չի. բայց մի ուրիշ տղա պատասխանեց դրան. «խաղողը խակ է» և տղան հեռացավ, ինչպես փառքից ընկած հերոս:



Մորաքույրը ատամնաքույր:

Շուտով, այդ բանից հետո, Թոմը հանդիպեց Հեկլբերի Ֆիննին՝ քաղաքում հայտնի հարբեցողի տղին: Քաղաքի բոլոր մայրերը ատում ելին Հեկլբերին և միաժամանակ վախենում նրանից, վորովհետև նա ծուլ, անձուռնի, անկիրթ տղա չէր և վոչ մի որևեք չէր ճանաչում. Թոմը «կարգի» ընտանիքներին պատկանող մյուս տղաների նման, նախանձում էր ատելի Հեկլբերին, վորը կարող էր ամբողջ ուրը վոչինչ չանել: Թոմին նույնպես արգելված էր խաղալ այդ գրչոտի հետ: Ի հարկե, Թոմը հենց դրա համար առիթը բաց չէր թողնում նրա հետ խաղալու. Հեկլբերին սրա-նրա հներն էր հաղնում. նրա հագուստը միշտ խոռոնացած էր լինում ու պատառուտված: Նրա գլխարկը շարդ ու փշուր յեղած բան էր. չեղրից կիսալուսնի չափ մի կտոր էր կախված. բաձկոնը մինչև

կրօննէն եր համուսմ. լայն վարտիկը ծեծում եր վտախ երեսը. Հեկլբերին թռչունի պես ազատ եր. ման եր գալիս սիրտն ուզած տեղը. լավ յեղանակին գիշերում եր մի վորևե տեղ՝ ոտար գոնեքի մօտ, խոնավ յեղանակին— գատարկ տակառներում: Նրան չելին ստիպում գարոց ու



Հեկն իր բնակարանում:

մանալի հաշոյտնքներ գիտեր: Մի խոսքով՝ այդ տղան սժտված եր այն բոլորով, ինչ արժեք է տալիս կյանքին: Այդպես եյին մտածում քաղաքի բոլոր «լավ դատարարակված», «լավ տների» կաշկանդված տղաները: Թո՞՞մը կանչեց իր սիրելի շրջաօլիկին.

- Ե՛յ, Հեկլբերի, արի այստեղ:
- Ինքդ արի, յեթե ուզում ես:
- Այդ ի՞նչ է ձեռիդ:
- Սատկած կատու:
- Մի տուր տեսնեմ: Տես ե, իսկապես սատկած ե՞ր Վոթրեղ ես գտել:

յեկեղեցի գնալու. նա իր գլխին հրամայող անբշուներ: Նա կարող եր ձուկ բռնել կամ լողալ, յերբ և ձուկ ուղեհար: Վոչ-վոք չեր արգելում նրան կովելու: Պառկում եր, յեր ուզում եր, թեկուզ կես գիշերին: Գարնանը տղաների մեջ առաջինը նա յեր բոբիկ ման գալիս և աշնանը ամենից ուշ նա յեր կոշիկներ հագնում: Նա կարիք չեր զգում վոչ լվացվելու, վոչ մաքուր շորեր հագնելու, և գար-

Ասել եմ մի տղալից:

— Ի՞նչ տվիր:

— Մի կապուշտ տոմս և սպանդանոցում գտած յեզան փուչիկ:

— Իսկ կապուշտ տոմսը վո՞րտեղից գտար:

— Յերկու շաբաթ առաջ Բեն Ռոշերսից առա:

— Լսիր, Հեկ, սատկած կատուն ինչի յե պետք:

— Ինչի՞ յե պետք: Խալեր է վոչնչացնում:

— Հա՛. Մի՞թե: Յես անվելի լավ միջոց գիտեմ:

— Գրագ կգամ, վոր չղիտես: Վոթրն է դա:

— Հոտած ջուրը:

— Հոտած ջուր: Վոչինչ բան է քո հոտած ջուրը:

— Վոչինչ բան է: Իսկ դու փորձել ես նրանով խալեր վոչնչացնել:

— Ձե, չեմ փորձել:

Բայց Բոբ Տեները փորձել է:

— Վոթրեղից գիտես:

— Նա ինքն է ասել

Ձե՞ Տեչերին, իսկ Ձե՞ֆն

էլ ասել է Ձոննի Բեկերին,

իսկ Ձոննին— Ձի՞մ Խորմսին,

իսկ Ձի՞մը— Բեն Ռոշերսին,

իսկ Բենը մի նեգրի, իսկ

նեգրը ինձ: Դրանից ել գիտեմ:

— Ե, հետո ի՞նչ: Նրանք

բոլորն ել ստում են: Հա-

մենայն զեպս բոլորը, բացի նեգրից, Յես նրան չեմ ճա-

նաչում, բայց չեմ տեսել մի նեգր, վոր չստի: Դատարկ

բան է... Հիմի ասա տեսնեմ, Հեկ, Բոբ Տաններն ի՞նչպես

վոչնչացրեց իր խալերը:



Հեկլբերի Ֆիննը:

— Մատը թաթախել է փշակում հավաքված անձրե-  
փաշրի մեջ:

— Որը ցերեկով:

— Ի հարկե:

— Յերեսը դեպի ծառի բունը:

— Այո: Գոնե այդպես եմ հիշում:

— Նա մի բան ասաց այդ ժամանակ:

— Այդ չգիտեմ:

— Այ տեսար: Ել ինչպես կարող ես հոտած ջրով  
խալերդ փոշնչացնել. վեր բանի կարգը չգիտես: Այդպի-  
սի հիմարութուններքց, ի հարկե, բան չի դուրս գա: Պետք  
է գնալ անտառ, նշան անել մի տեղ, ուր այդպիսի փշակ  
կա անձրևաջրով, և ուղիդ կես գիշերին, մեջքդ փշակին  
արած, ձեռդ պիտի կոխես ջրի մեջ ու ասես,

Յորեն-զարի, ցորեն-զարի, ալյուր դառ,

Հոտած ջուր, հոտած ջուր, խալս առ:

Հետո արագ-արագ լեռ գնա տասուձեկ քալլ, աշ-  
քերդ փակած, յերեք անգամ շուռ արի տեղդ և գնա  
տուն, առանց մեկի հետ խոսելու: Յեթե մի խոսք ել ա-  
սես — ամբողջ կախարդանքը կկորչի:

— Այո, դա նման է ճշմարտության: Բայց Բոր  
Տեներն այդպես չի արել:

— Այո, յերևում է այդպես չի արել: Բաղաքի տը-  
ղաների մեջ նա ամենախալոտն է, Իսկ յեթե իմանար թե  
ինչպես են հոտած ջրով խալերը փոշնչացնում — նա վոչ  
մի խալ չէր ունենա: Յես ինքս այդ ձևով հազարներն  
եմ փոշնչացրել Հեկ: Բայց հիմի դու ասա, թե սառկած  
կատվով ինչպես են փոշնչացնում:

— Այ ինչպես: Կատուն վերցրու և գնա գերեզմա-  
նատուն, գեռ կես գիշեր շեղած, գնա այնպիսի տեղ, ուր  
թաղված է վորևե չար մարդ. կես գիշերին մի սատանա  
կերևա, գուցե և յերկուսը, յերեքը, բայց դու նրանց չես  
տեսնի, միայն կլսես, թե ինչպես են իրար հետ խոսում:

Յերբ նրանք մեռելին քաշ տան, դու կատուն շարտի նը-  
րանց լետեից ու ասա. «Թող գնա սատանան մեռելի յե-  
տեից, կատուն՝ սատանի, խալը՝ կատուի — ու ամեն ինչ  
վերջանա, և դուք ել ինձ պետքը չեք»: Դրանից հետո  
ամեն տեսակ խալ կվոշնչանա:

— Ինչպես յերևում է: Դու յերբեիցե փորձել ես,  
Հեկ:

— Չե, ինձ մորաքույր Հոպկինսն է պատմել:

— Դե, ուրեմն դա ճիշտ է. ասում են՝ նա կախարդ է.

— Ասում են: Յես հաստատ գիտեմ, վոր նա կա-  
խարդ է: Հորս նա յե փչացրել: Հերս ինքն է ասում: Մի  
անգամ հերս գնում է տեսնում, վոր մորաքույրս ուզում  
է ցավ գցել իր վրա. քարը վերցնում է ու շարտում — պա-  
ռավը հազիվ ազատվում է քարի հարվածից: Յեվ ինչ ես  
կարծում. հենց այդ գիշեր հերս, վոր հարբած քնած է  
լինում ծածկի վրա, ընկնում է ծածկից ու ձեռը կտա-  
րում:

— Տես ե: Բայց ինչպես եր հերդ իմացել, թե նա  
ցավ է ուզում գցել իր վրա:

— Այ քեզ բան: Հերս ասում է — դա հեշտ բան է:  
Նա ասում է՝ յեթե մի մարդ ուշադիր նայում է քեզ, ու  
դրա հետ միասին վնթփնթում է ինքն իրեն — անպայ-  
ման ցավ է ուզում գցի: Դրա համար ել, յեթե կախարդը  
քրթմնջում է ինքն իրեն, դա նշանակում — նա թարս ա-  
ղոթք է կարգում:

— Լսիր, Հեկ, յերբ պիտի կատուն փորձես դրա հա-  
մար:

— Այս գիշեր: Յես այնպես եմ կարծում, վոր սա-  
տանաներն անպայման գալու յեն ձեր Վիլյամսի յետեից:

— Բայց չե վոր նրան գեռ շաբաթ որն են թաղել,  
Չեկ: Հենց շաբաթ գիշերն արդեն տարած կլինեն:

— Ինչեք ես ասում: Ինչպես կարող եյին տանել մինչև  
կեսգիշեր: Իսկ կես գիշերից արդեն կիրակի յեր: Դեռ չեմ



լսել, վոր կիրակի որերը սատանաներն ազատ ման գան դեանի յերեսին:

— Դա հեշտ է: Յես այդ մասին չեմ մտածել: Հեկ ինձ կվերցնես հետդ:

— Ի հարկե, յեթե չես վախենում:

— Վախենում. վճնց չե: Դու կատվի նման կմյավես:

— Այո, յեթե կարող ես դուրս գալ, դու չել մլավիր պատասխանի փոխարեն, թե չե անցյալ անգամ դուր տեղն այնքան մնացի կանգնած: Այնքան մլավեցի, սլառավ Հեյան սկսեց քարեր գցել վրաս ու կրկնել. «գրող տանի այս կատուլին»: Դրա փոխարեն չես նրա լուսամուտը ջարդեցի աղյուսով—միայն մարդու բան չասես:

— Լավ. այդ գիշերը չես չկարողացա մլավել. մորաքույրս բոլոր ժամանակ հետևում եր ինձ: Բայց այս անգամ անպատճառ կմլավեմ: Լսիր Հեկ, այդ ի՞նչ բան է:

— Առանձին վոչնիչ—խեցեմորթի յե:

— Վճրտեղ ես գտել:

— Անտառում:

— Ի՞նչով կծախես:

— Չգիտեմ: Ծախելու ցանկություն չունեմ:

— Դու գիտես: Շատ ել փոքր է:

— Վոչինչ: Ինձ համար լավ է:

— Անտառում խեցեմորթը լիքն է: Հազար հատ կը հավաքեյի, յեթե ուզենայի:

— Բա չել ի՞նչու չես սպասում: Ինչո՞ւ չես գնում: Հը, լավ գիտես, վոր գտնել չես կարող: Բայց այս խեցեմորթին առաջինն է, վոր գտել եմ այս տարի:

— Լսիր, Հեկ, ատամս կտամ դրա փոխարեն:

— Տուր տեսնեմ:

Թոմը մի թուղթ հանեց և զգուշությամբ բաց արավ Հեկլբերին ուշադիր նայեց ատամը: Գայթակղությունը մեծ էր: Վերջապես, նա հարցրեց.

— Սա իսկական է:

Թոմը վերին շուրթը բարձրացրեց և ցույց տվեց ատամի տեղը:

— Դե լավ-տուր:

Թոմը խեցեմորթին դրեց այն առփի մեջ, ուր առաջ բանտարկված էր բզեզը, և տղաները բաժանվեցին, յուրաքանչյուրն իրեն առաջվանից ավելի հարուստ զգալով:

Հասնելով փոքրիկ տանը, ուր տեղավորված էր զբարոցը, Թոմը արագ ներս մտավ, շտապող բարեխիղճ աշակերտի պես, գլխարկը կախեց մեխից և գործնական արագությամբ ընկավ նստարանի վրա: Ուսուցիչը՝ բազկաթուռում նստած՝ խաղաղ ննջում էր՝ դաս սերտող աշակերտների խուլ մուսուցի որորի տակ: Ընդմիջումն արթնացրեց նրան.

— Թոմաս Սոյեր:

Թոմը գիտեր, վոր յերբ ուսուցիչը իր անունը տալիս էր լրիվ, դա լավ բան չէր գուշակում:

— Սեր (պարոն):

— Արի այստեղ: Հը, սեր, ինչո՞ւ այսօր նորից բարեհաճեցիք ուշանալ:

Թոմը հեշտ կարող էս դուրս պրծնել: Կարող էր մի վորևե սուտ ասել, բայց ուսուցիչը նրան հանկարծակի բերեց, և նա, առանց մտածելու, պատասխանեց.

— Կանգնեցի Հեկլբերի Ֆիննի հետ մի քիչ խոսելու: Ուսուցչի շունը բռնվեց. նա շփոթված շուրջը նայեց: Չայները լեցին. դպրոցականները հարց ելին տալիս իրենց-հո չի՞ խենթացել այս տղան: Ուսուցիչը հարցրեց.

— Դու... ի՞նչ եյիր անում:

— Կանգնեցի Հեկլբերի Ֆիննի հետ խոսելու:

Այդ խոսքերի նշանակութունը սխալ հասկանալը անկարելի չէր:

Թոմաս Սոյեր, դա ամենագարմանալի խոստովանությունն է, վոր լսել եմ կյանքումս: Այսպիսի անպատկառության համար քանոնը քիչ է: Բաճկոնդ հանիր:

Ուսուցչի ձեռքը այնքան աշխատեց, վոր հոգնեց: Ճիպտաների կապուկը զգալի չափով պակասեց: Այնուհետև թոմին կարգազրվեց:


— Հիմի զնա նստիր աղջիկների մոտ: Յեվ թող սա քեզ խրատ լինի:

Դասարանում բարձրացած հոնոցը ամոթահար արավ տղալին, և նա անմիջապես նստեց այն անձանոթ աղջկա կողքին, վորի առաջ այնքան «խաղեր» արավ շաբաթ ուր-աղջիկը զլուխը թափ ավեց ու մի կողմ քաշվեց: Թոմը նստել էր հանգիստ, արմուճկները լերկար, ցած սեղանին հենած, և, ըստ յերևույթին կարգում էր: Նա կամաց-կամաց դադարեց ուշադրության առարկա լինելուց, և դասարանը նորից լցվեց սովորական գալրոցական խոլ մոմոցով: Այդ ժամանակ Թոմն սկսեց գոգունի նայել հարևանուհուն: Աղջիկը նկատեց այդ, դեմքը ծամածուեց և մի ըուպելի չափ ծոծրակը նրան դարձրեց: Յերբ զգուշությամբ դեմքը նորից Թոմին արավ, առջևը տեսավ մի գեղձ: Աղջիկը հրեց այն: Թոմը դարձյալ մոտեցրեց կամաց. աղջիկը նորից հրեց, բայց արդեն վոչ այնքան թշնամանքով: Թոմը համբերությամբ դեղձը նորից դրեց տեղը, և աղջիկը էլ ձեռք չտվեց: Թոմը փոքրիկ դրատախտակի վրա դրեց. «խնդրե՛մ վերցրե՛ք, յես ելի ունեմ: աղջիկը նայեց դրատախտակին ու բան չասաց: Թոմը նորից սկսեց ինչ-վոր գրոտել, գրածը ձախ ձեռով աղջկանից ծածկելով: Աղջիկը սկզբում այնպես էր ցուլց տալիս, թե ուշ չի գարձնում, բայց հետո մարդկային բնածին հետաքրքրութունն սկսեց ըստ յերևույթին արթնանալ նրա մեջ: Տղան շարունակեց գրոտել, իբր չնկատելով այդ: Աղջիկը փորձ արավ նայելու, թե ինչ է գրում, բայց այնպես, վոր իրեն շատ չմատնի: Թոմն էլի ցուլց ավեց, թե չի նկատում նրա հետաքրքրութունը: Վերջապես նա անձնատուր յեղավ և շնջաց անվճռական:

— Տվեք մի նայե՛մ:

Թոմը բաց արավ ծաղրանկարի նմուշ պատկերը, վորը ներկայացնում էր թեք տանիքով մի տուն. ծխնելույզից դուրս էր գալիս ծուխը, վորը հիշեցնում էր խցահան: Աղջիկը կամաց-կամաց հետաքրքրվեց նրա աշխատանքով և ամեն ինչ մոռացավ: Յերբ Թոմը վերջացրեց, մի ըուպե նայեց, հետո շնջաց:

Ա. իս ինչ հիանալի յես: Հիմի լեւ մարդ նկարեցե՛ք:



Նկարիչը տան առաջ նկարեց մի մարդ, վոր նման էր ծանրություններ բարձրացնող գործիքի, և այնքան բարձրահասակ, վոր կարող էր լոք տալ տան գլխով-բայց աղջիկը խիստ քննադատներից չէր. նա հավանեց այդ հրեչին և շնջաց:

— Ի՞նչ գեղեցիկ է: Հիմա ինձ նկարեցե՛ք դրա կողքին: Թոմը նկարեց ավազի ժամացուլց, վերևը լիալուսին, ծղոտե ձեռներ ու վոտներ, և չուած մատների մեջ դրեց մի ահագին հովհար: Աղջիկը պսաց:

— Սա լեւ լավ է: Կուզելի յես ել նկարել իմանայի: Դա դժվար չէ, շնջաց Թոմը: Յես ձեզ կսովորեցնեմ:

— Իսկապես: Յերբ:

— Մեծ գասամիջոցին: Դուք տուն ճաշելու յեք գնալու:

— Գուցե՛ չգնամ:

— Լավ: Ձեր անունն ինչ է:

— Բեկկի Տեչեր: Իսկ ձերը: Ասենք՝ գիտեմ թո՞մաս Սոյեր:

— Ինձ այդպես անվանում են պատժվելուց առաջ: Յերբ ինձ լավ եմ պահում՝ ուղղակի թո՞մ են ասում: Դուք ել ինձ թո՞մ կասեք, այդպես չի՞:

— Այո:

Թո՞մն ելի սկսեց ինչ-վոր գրոտել գրատախտակի վրա, գրածն աղջկանից թագցնելով: Բայց այժմ աղջիկն ել մի կողմ չեր քաշվում, այլ խնդրում էր ցույց տալ: Թո՞մը հրաժարվում էր:

— Վոչինչ ել չկա:

— Վոչ, կա:

— Ձե, չկա. նայել անգամ չեք ուզի:

— Վոչ, ուզում եմ, ճիշտ, ուզում եմ: Խնդրեմ ցույց տվեք:

— Մարդու բան չասեք:

— Ձեմ ասի, ազնիվ խոսք, չեմ ասի:

Վոչ մեկին, վոչ մի կենդանի մարդու: Քանի վոչ չեք:

— Ձեմ ասի վոչ մեկին: Դե, ցույց տվեք:

— Բայց ախր նայելու բան չի ...

— Յեթե այդքան համառես, թո՞մ, լես միևնույն ե կըտեսնես:

Յեվ նա իր ձեռը դրեց թո՞մի ձեռի վրա: Սկսվեց թեթեմ պալքար: Թո՞մը ցույց եր տալիս, թե լուրջ դիմադրում է, բայց կամաց-կամաց ձեռքը լես քաշեց, և վերջապես լերեվացին այս խոսքերը. «Յես ձեզ սիրում եմ»:

— Ախ ինչ զգվելի լեք, — և աղջիկը բավական պինդ խփեց նրա ձեռքին, բայց և այնպես՝ կարմրեց և շոյված թվաց:

Այդ նույն վայրկյանին թո՞մն զգաց, վոր պատժող

ձեռքն իր ականջից պինդ բռնած՝ բարձրացնում է նստարանից: Այս ձևով նա սենյակի միջով տարվեց դասարանի մյուս կողմը և ելի, ամբողջ դարոցի հռնուցի ներքո, նստեցրվեց իր սեփական տեղը: Մի քանի անավոր վաղ կյան ուսուցիչը կանգնեց նրա գլխավերև առանց խոսք ասելու, ապա նույնպես անխոս շարժվեց դեպի իր գահը:

Յերբ դասարանը հանգստացավ, թո՞մը բարեխղճությամբ ճիգ գործ դրեց պարապելու, բայց շափագանց հուզված էր այդ անելու համար: Ընթերցման ժամանակ խոսքերը շփոթեց, աշխարհագրության դասի լիճերը դարձրեց լեռներ, լեռները գետեր, իսկ գետերը վեղածեց ցամաքներ, այնպես վոր ստացվեց աշխարհի ստեղծագործության նախորդող քառուր: Թելադրության մեջ անթիվ սխալներ արավ, — մի խոսքով դարձավ ամենավերջին աշակերտը և ստիպված յեղավ ուրիշին զիջել այն թիթեղե մեղալը, վոր մի քանի ամիս էր ինչ հպարտությամբ կըրում էր իր կրծքին:

Վորքան շատ եր աշխատում թոմը ուշադրութիւնը կենտրոնացնել զբքի վրա, նրա մտքերն այնքան ավելի ելին ցրվում, այնպես վոր, վերջապես, տնքալով ու հառաչելով, թողեց ընթերցումը: Նրան թվում էր, թե մեծ դասամիջոցը չէր բերէ չի դալու: Ոգում մեռելային լուսթյուն կար, վոչ մի ձայն, վոչ մի շունչ: Բոլոր քնաբեր որերից դա ամենաքնաբերն էր: Դասերը կրկնող քսանուհինգ դպրոցականների ջրթմնջուներ որոր եր ասում մարդու, նման մեղունների կախարդական բվոցին:

Թոմն ամբողջ սրտով ցանկանում եր ազատվել դասարանի շորս պատերից և կամ մի վորև է հետաքրքրական բան գտնել՝ ժամանակն սպանելու, վոր այնքան ձանձրալի յեր անցնում: Նա ձեռը խոթեց զրպանը, և նրա դեմքը հանկարծ պայծառացավ: Ծածուկ զրպանից դուրս քաշեց սուփը, սուփից հանեց խեցեմորթին և դրեց յերկար, տափակ սեղանին: Խեցեմորթին, ամենայն հավանությամբ, այդ ըոպելին լցվեց շնորհակալությամբ. բայց դա նրա կողմից վաղաժամ եր, քանի վոր հենց մտադրվեց հեռանալ, Թոմն ասեղով շուռ սվեց նրան յետ և ստիպեց ուրիշ ուղղութիւն ընտրել:

Թոմի կողքին նստած եր նրա մտերիմ բարեկամը, վոր նրանից պակաս չեր ձանձրանում. նա շատ ուրախացավ այդ տեսնելով և ամիջապես հետաքրքրվեց խեցեմորթով: Մտերիմ բարեկամին կոչում ելին Ջո Հարպեր: Տղաներն ամբողջ շաբաթ անբաժան ելին, իսկ տոն որերը

կովում ելին ի .ար դեմ, յերկու թշնամի բանակների գրլուխն անցած: Ջոն նույնպես մի քորոց հանեց և սկսեց ընկերոջն՝ ոգնել խեցեմորթուն քշելու: Քանի գնաց՝ նրանք ավելի տարվեցին այդ զբաղմունքով: Վերջապես թոմը հայտարարեց, թե նրանք իրար խանգարում են միայն, և վոչ մեկն էլ լրիվ բավականութիւն չի ստանում: Նա ընկերոջ զբաղմունքով զրեց սեղանին և մեջտեղով՝ վերից վար մի գիծ քաշեց:

— Լսիր, պայմա-ավորվենք. քանի խեցեմորթին քո կողմը լինի, դու կարող ես քշել նրան ուր ուզում ես, յես ձեռ չեմ տա. բայց յեթե թողիր նրան և նա յեկավ ինձ մոտ, այն ժամանակ դու յել ձեռք չտաս, մինչև քո կողմը չանցնի: Լսիվ:

— Լսիվ: Դե սկսիր:

Խեցեմորթին շուտով հեռացավ թոմից և կտրեց-անցավ գիծը: Ջոն յերկար խաղում եր նրա հետ. ապա խեցեմորթին նրանից ել հեռացավ և ելի յետ յեկավ: Այդ անցումները կրկնվեցին շատ անգամ: Մինչ տղաներից մեկը քշում եր խեցեմորթուն, ամբողջովին տարված այդ հետաքրքրական զբաղմունքով, մյուսը վոչ պակաս հետաքրքրությամբ հետևում եր նրան: Յերկուսն ել գլուխները կախել ելին գրատախտակի վրա և ել վոչինչ չեցին լսում, չեցին տեսնում: Վերջում բախտն, ըստ յերևութին, վերջնականապես սնցավ Ջոյի կողմը: Խեցեմորթին, տղաներից վոչ պակաս զրգոված ու հուզված, նետվում եր այս ու այն կողմը, բայց ամեն անգամ, յերբ հաղթանակը, թվում եր, թոմինն է արդեն և նրա ձեռները քոր ելին գալիս խաղն սկսելու, Ջոն քորոցի ոգնությամբ ճարպկորեն դարձնում եր միջատին իր կողմը: Թոմի համբերութիւնը հատավ, վերջապես: Գայթակղութիւնը չափազանց մեծ եր: Նա ձեռը մեկնեց և իր քորոցով խեցեմորթու առաջը կտրեց: Ջոն իսկույն բռնեց:

— Թոմ, չհամարձակվես ձեռ տալ:

- Ուզում եմ մի քիչ քշել, Ջո:
- Դա անազնվութիւնն է, սեր: Թող սրան հանգիստ:
- Ե, դու չեղ-չերկար հո չեմ պահելու:
- Հանգիստ թող խեցեմորթուն, ասում եմ:
- Չեմ ուզում:
- Չհամարձակվես ձեռ տալ. նա իմ կողմն է:
- Խեցեմորթին իմը չի:
- Ինձ համար միևնույն է, թե ումն է, նա իմ կողմն է, և դու իրավունն չունես նրան ձեռ տալու:
- Ի՞նչպես թե չունեմ: Խեցեմորթին իմն է, և յես ինչ ուզենա՞, այն էլ կանեմ:
- Այդ վայրկանին Թոմը ուժեղ հարված ստացավ մեջքին. մի այգալիսի հարված ստացավ և Ջոն, ու յերկու ըսպե շարունակ ուսուցիչը յեռանդով թափահարում էր նրանց բաճկոնների փոշին, իսկ ամբողջ դպրոցը հըռհոռում էր: Տղաները չափազանց տարված ելին խաղով և չնկատեցին, թե ինչպես մինչ այդ հանկարծ լուռթյուն տիրեց: Բանը նրանում էր, վոր ուսուցիչը վտտի ծայրի վրա մոտեցել էր նրանց և բավական չերկար, նրանց յետևը կանգնած, հետվում էր խաղին, մինչև վոր նրա մեջ մտքրեց իր բաժին բազմազանությունը:
- Յերբ, վերջապես, տասյերկուսը խփեց, և յեկավ մեծ դասամիջոցը, Թոմը դուրս յեկավ դպրոցից աշակերտների մի խմբի հետ, Բեկկին՝ մի ուրիշ խմբի: Փորբ անց՝ նրանք հանդիպեցին մարգագետնի ծայրում և, դպրոց վերադանալով, այն բոլորովին դատարկ գտան: Նրանք նստեցին իրար կողքի, գրատախտակն իրար կողքի դնելով: Թոմը Բեկկին քարեզրիչ տվեց և, նրա ձեռը ղեկավարելով, նկարեց մի ուրիշ, զարմանալի ճարտարապետությամբ տուն: Յերբ արվեստի հետաքրքրությունն ըսպառվեց՝ նրանք սկսեցին զրուցել:
- Թոմը հարցրեց.
- Դու մկներ սիրում ես:

- Յու. զգվում եմ:
- Ասենք՝ յես էլ եմ զգվում կենդանի մկներից: Բայց յես խոսում եմ սատկած մկների մասին. նրա վզից կարելի չե թոկ կապել և պտտել թոկի շուրջը:
- Չե, յես մկներին առհասարակ չեմ սիրում: Յես շատ եմ սիրում ուտին ծամել:
- Ափսոս վոր ուտին չունեմ:
- Իսկապէս. դու չեղ սիրում ես: Յես մի քիչ ունեմ: Պատա՛ ծամիր, միայն թե հետո վերադարձրու:
- Դա հաճելի չեր. նրանք սկսեցին հերթով ուտինը ծամել և բավականությունից վտաքերին թափահարել.
- Դու ցիրկում յեղել ես յերբեիցե:
- Այո, հաջրիկս խոստացել է մի անգամ էլ տանի, յեթե խելոք մնամ:
- Յես յերեք-չորս անգամ—շատ անգամ եմ յեղել ցիրկում: Անտեղ միշտ մի վորևէ նոր բան են ներկայացնում: Յերբ մեծանամ՝ ցիրկի ծաղրածունն եմ դառնալու:
- Ճիշտ: Ա՛յ լավ է: Նրանք այնքան լավ են, նախշուն:
- Այո, և շատ էլ փող են հավաքում... Բենն ասում է՝ որական մի դուլար (յերկու ուրբլի): Լսիր, Բեկկի, դու յերբեիցե նշանված յեղել ես:
- Դա ինչ է նշանակում:
- Նշանված էլի, մարդու գնալու համար:
- Չե:
- Բայց կուզեցիր:
- Չգիտեմ: Այդ ի՞նչ ձևով:
- Ի՞նչ ձևով: Վոչ մի ձև էլ չկա: Դու տղին ուղղապի ասում ես, թե յերբեք վոչ-վոքի չես առնի, բայց իրենից հասկանում ես, յերբեք. — հետո համբուրում ես նրան, ու վերջացավ: Այդ ամեն մեկն էլ կարող է անել:
- Համբուրել: Ինչո՞ւ համբուրել:

— Նրա համար վոր... Նրա համար վոր — այդպես է ընդունված... Բոլորն այդպես են անում:

— Բոլորը:

— Այո, բոլոր սիրահարվածները: Հիշում ես ինչ ելի գրել լես գրատախտակի վրա:

— Հիշում եմ:

— Յեվ ինչ:

— Չեմ ասի:

— Կարող ես ասել:

— Լավ... մի ուրիշ անգամ:

— Չե, հիմա:

— Չե, հարկավոր չե, ավելի լավ ե վաղը:

— Չե, չե, Բեկկի: Յես կամաց ականջիդ կասեմ:

Տեսնելով, վոր Բեկկին տատանվում ե, Թոմը նրա լուսթյունը համարեց համաձայնութուն, շուրթերը մոտեցրեց նրա ականջին և կրկնեց այդ խոսքերը: Հետո ասաց:

— Հիմա դու նույնն ասա իմ ականջիս:

Բեկկին յերկար չեք ուզում, հետո խնդրեց.

— Շուռ արի, վոր ինձ չտեսնես-այն ժամանակ կասեմ: Միայն թե մարդու բան չասես, լսում ես Թոմ. վոչ մեկին: Լավ:

— Չե, չե, վոչ մեկին չեմ ասի. Հանգիստ լեղիր, դե, Բեկկի:

Նա յերեսը շուռ տվեց, և աղջիկն ամաչկոտ շնչաց:

— Յես... ձեզ. սիրում եմ:

Հետո վեր թռավ ու սկսեց վազվզել նստարաների շուրջը, Թոմից փախչելով, վոր վազում եր նրա չեռերից. ապա կանգնեց անկյունում և յերեսը ծածկեց գոգնոցով:

— Դե, Բեկկի, հայտարարեց Թոմը, հիմա ամեն ինչ վերջացած ե, պետք ե միայն համբուրվել:

Ու քաշում եր նա աղջկա գոգնոցից ու ձեռներէց: Կամաց-կամաց Բեկկին անձնատուր լեղավ և ձեռ-

ներն իջեցրեց. իսկ Թոմը համբուրեց նրա շրթունքները ասելով:

Ահա և բոլորը, Բեկկի, Հիմի դու լել վոչ մեկին չպիտի սիրես բացի ինձանից, և վոչ-վոքի հետ չես կարող ամուսնանալ, բացի ինձանից, յերբեք և հավիտյան. խոստանում ես:

— Այո, վոչ մեկին չեմ սիրի, Թոմ, բացի քեզանից և վոչ վոքի հետ չեմ ամուսնանա: Իսկ դու, տես, ուրիշի չառնես, բացի ինձանից:

— Դա հասկանալի չե, ի հարկե,-մեր պայմանը հենց այդ ե: Յեվ յերբ դպրոց գնալու լինենք, — յերբ մեծ տղաները մոտիկ չլինեն. խաղի մեջ ել ինձ ընկերացիր. լես եր ընկեր կվերցնեմ քեզ: Նշանվածները միշտ այդպես են անում:

— Յերբեք չեմ լսել այդ մասին: Ի՞նչ լավ ե:

— Շատ ուրախ բան ե: Յես ու Եմմա Լորենսը...

Լաֆն բացված պայծառ աչքերը Թոմին ասին, վոր ասալ թույլ տվեց, և նա կանգնեց շփոթված:

— Թոմ, ուրեմն լես առաջինը չեմ, վորի հետ նշանվել ես:

Աղջիկը լաց չեղավ:

— Մի լար, Բեկկի: Յես նրան ել չեմ սիրում:

— Չե, սիրում ես: Ախ, Թոմ, դու գիտես, վոր սիրում ես:

Թոմը փորձեց գրկել նրան, բայց աղջիկը հրեց, յերեսը դարձրեց դեպի պատն ու շարունակեց լալ: Թոմն սկսեց փաղաքշական խոսքերով համոզել նրան, և կրկնեց իր փորձը, բայց Բեկկին կրկին հրեց նրան. Այդ ժամանակ Թոմի մեջ զարթնեց հպարտութուն: Նա վերավորվեց ու գնաց:

Փողոցում կանգնեց մի քիչ, անհանգիստ մի վոտից հենվեց մյուսին, ժամանակ առ ժամանակ դռանը նայելով այն հույսով, թե Բեկկին կփոշմանի և կգա իր չեռե-

վից: Բայց չեկավ: Թոմն իրեն վատ զգաց. թերև, հենց միայն ինքն եր մեղավոր: Նա շատ դժվարանում եր հաշ-



տվելու առաջին քայլն ինքըն անել. բայց հպարտութունն ընկճեց ու ներամտավ:

Բեկկին՝ դեռ անկյունում կանգնած՝ լալիս եր, չերեսը պատին դարձրած: Թոմի սիրտը տրոփեց: Նա մոտեցավ աղջկան և կանգնեց մի փոքր, չիմանալով ինչից սկսել, ապա գրպանից հանեց իր ամենաթանգարժեք ապրանքը — փոքրիկ թիթեղե գնդակը և աղջկա աչքերի առաջից տանել-բերելով, ասաց:

Թոմը ներողութուն է խնդրում:

— Խնդրում եմ, Բեկկի,

կի, լաց մի լինի: Ուզում ես — սա կնվիրեմ քեզ:

Բեկկին ձեռները թափահարելով հրաժարվեց: Գնդակը թռավ-ընկավ հատակի վրա:

Այդ ժամանակ Թոմը դուրս լեկավ փողոց և վորոշեց քնալ հեռու՝ բլուրների աջն կողմը, վորպեսզի այդ որն ալևս դպրոց չվերադառնա: Բեկկին հանկարծ ինչ-վոր բան գուշակեց: Վազեց դեպի դուռը — Թոմը չկար: Նա վազելով անցավ տան շուրջը, հույս ունենալով, թե կզբտնի նրան խաղի հրապարակում, բայց Թոմն այնտեղ եր չկար: Այդ ժամանակ Բեկկին սկսեց կանչել.

— Թոմ, Թոմ, դարձիր:

Նա ուշադիր ախանջ դրեց, պատասխան չեղավ: Շուրջը լուռ եր և դատարկ: Բեկկին նստեց և նորից լաց յե-

ղավ. խիղճը տանջում եր նրան: Մինչ այդ աշակերտներն սկսեցին հավաքվել. պետք է հիմա վիշտը թաղցնի և հանգիստ նստի չերկար, ձանձրալի դասերը լսելու: Բեկկին ոտար տղաների մեջ բարեկամ չուներ, վորին կարողանար էր վիշտը պատմել:

Թոմը կեռ ու մեռ զնուժ եր դաշտերի միջով, թեք-վելով մերթ դեպի աջ, մերթ դեպի ձախ, մինչև վոր բո-լորովին չհեռացավ աշն ճամբից, վորով սովորաբար տուն էլին դառնում դպրոցականները: Կես ժամ անց Թոմն ար-դեն Դուզլասի ամրոցի մոտ եր՝ բլրի գագաթին, վորտե-ղից դպրոցի շենքն հագիվ եր յերևում ներքևում, հովտում: Թոմը մտավ խիտ անտառի մեջ, արահետով գնաց մինչև մի կաղնի և նստեց նրա տակ հանգստանալու: Յերկար նստած եր նա՝ արմուռնկները ծնկներին հենած և կզակը ձեռներին դրած, ու մտածում եր: Նա մտածում եր այն մասին, թե վորքան լավ ե պառկել գեյեզմանում ու քնել և հավիտենաբար յերագել, յերբ քամին կշշնջա ծառերի ճղներին մեջ. կորոթի գերեզմանի խոտերն ու ծաղիկները, և չվտանալ վոչ մի բանից, ու յերբեք, յերբեք չտխրել վոչ մի բանի համար: Վերցնենք հենց այս աղջկան... Ե, ինքն ինչ արավ նրան: Վոչինչ, Բայց նա իրեն շան պես քշեց — ուղղակի շան պես: Կզղջա յերբեկից — յերբ, գու-ցե, չափազանց ուշ լինի: Ախ, յեթե կարելի լինի ժա-մանակին մեռնել:

Ի՞նչ կլինի, յեթե հենց հիմա գնա սուր աչքը կտրում ե, խորհրդավոր կերպով չքանա բոլորի համար: Ի՞նչ կլի-նի, յեթե գնա հեռանա, ծովերից դենը, անհայտ յերկրներ, վորպեսզի ել յերբեք չվերադառնա: Ի՞նչ կլինի իր վի-ճակն այն ժամանակ... Թոմը հիշեց, թե ինչպես պատ-րաստվում եր ծաղրածու դառնալու, բայց այժմ այդ միտ-

քըն ատելի չեր նրան: Վոչ, նա զինվոր կելթա և տուն կվերադառնա շատ տարիներ հետո՝ վերջերով ու փառքով ծածկված: Կամ ավելի լավ — կիրթա հնդկներին մոտ, նրանց հետ գոմեշներ կվորստ, լեռնային արահետ-ներով կբարձրանա անմատչելի ժայռերի կատարը, կթա-փառի հեռավոր արևմուտքի դաշտերում, ուր վոչ մի ա-րահետ չկա բոլորովին, և յերբեք, վոչ այնքան շուտ, տուն կդառնա, վորպես մեծ առաջնորդ՝ փետուրներով զարգար-ված, սարսափելի տեսքով, և կհարձակվի ուղղակի կիրակ-նորյա դպրոցի վրա, ամառային մի խաղաղ ուր, ու ուզ-մական այնպիսի կանչով, վորից արյունը կսառչի մարդ-կանց յերակներում: Այ կզարմանան ընկերները հա: Այ թե կնախանձելին իրեն:

Բայց չե, կան ավելի լավ բաներ: Նա կդառնա ծո-վային ավազակ: Այ թե ինչ: Այժմ նա պարզ պատկերա-ցնում եր իր ապագան՝ անասելի փառքով լուսավորված: Նրա փառքը կթնդա ամբողջ աշխարհովը մեկ. ժողովուրդ-ները կդողան նրա անուռից: Ի՞նչպիսի հպարտությամբ կանցնի նա փոթորկալից ծովերով, կճեղքի ալիքները իր սև յերկար «Փոթորկի վոզի» նավով, վորի կայմի վրա կծա-ծանի սև դրոշակը: Յեվ, փառքի գագաթնակետին հասնե-լով, նա հանկարծ անսպասելի կհայտնվի հայրենի քաղա-քում, յեկեղեցում, սև, այրված ու քամահար, սև թավշյա կավզով և նուշնալիսի վարտիկով, կարմիր ժապավենը ուսովը գցած. ատրճանակները դոտին խրած, դաշույնը գոտուց կախ, մի դաշույն՝ թափած արյունից ժանգոտած. դլխին փափուկ մի գլխարկ՝ ծածանվող փետուրներով, ձեռքին սև դրոշակ՝ վրան գանգ ու խաչաձև վոսկորներ նկարած: Յեվ բոլորը զմայլած կշշնջան. «Թոմ Սոյերն ե, նկարած: Յեվ բոլորը զմայլած կշշնջան»: Այո, ծովային ավազակը, սպանական ծովերի վրիժառու: Այո, վճոված բան ե: Ճամբան վորոշ ե: Վազն և եթ անից վճոված բան ե: Դուավոտը պատրաստ լինելու համար՝ անհրա-վիախի: Լուսավորը պատրաստ լինելու տեսնել: Տեսնենք ժեշտ ե հենց այժմ պատրաստութուն տեսնել: Տեսնենք



նա ինչ ունի: Ի՞նչ հեռու ծառի մի փթռակ բուն կար-



Թոմ Սոյերի յերազերը:

թոմը մոտեցավ և սկսեց նրա կողքը քանդել դանակով: Շուտով ձայնից հասկացավ, վոր կեղևի տակը փուչ է: Ձեռք կոխեց այնտեղ, հանդիսավոր կերպով կախարդանքի խոսքեր արտասանելով.

— Ինչ չկա այստեղ — հայտնվիր: Ինչ կա — մնա:

Թոմը այդ գաղտնաբանից հանեց մի մաքուր շամի տուփ՝ մեջը մարմարե գնդակ: Թոմի գարմանքին չափ չկար: Նա վիզը քորեց տարակուսանքով ու ասաց.

— Սա ինչ է: Սա ուղղակի անհասկանալի բան է:

Նա զայրացած դեն գցեց գնդակը և սկսեց մտածել: Բանն այն է, վոր նրան խաբել էր հավատալիքը, վորը նրա և ընկերների կողմից համարվում էր անխախտ ճշմարտութուն: Այդ հավատալիքն ասում էր, վոր յեթե դուք գնդակ թաղեք, հայտնի հմայքի խոսքերը արտասանելով, ու յեթե լերկու շարաթ ձեռ չտաք նրան, և

հետո այդ գաղտնարանը բանաք այնպիսի խոսքերով, վորպիսին ասաց Թոմը, այդ դեպքում մի գնդակի փոխարեն՝ դուք կգտնեք այն բոլոր գնդակները, վոր յերբևիցե կորցրել էք, վորքան ել դրանք իրարից հեռու ընկած լինելին առաջ: Բայց փորձն անպայման անաջող անցավ, և Թոմի հավատը խորապես խորտակվեց: Նա շատ անգամ էր լսել այդպիսի հաջող փորձերի մասին, բայց անհաջողների մասին — յերբեք: Նա մոռացել էր, վոր ինքն ել մի քանի անգամ փորձել էր այդ բայց հետո յերբեք չէր կարողացել գտնել այն տեղերը, ուր գնդակ էր պահել: Նա յերկար մտածեց և, վերջապես, վորոշեց, վոր դա վորևե կախարդի գործ կլինի, վոր իրեն՝ Թոմի ջգրու խափանել է կախարդանքը: Բայց նա ուզում էր վերջնականապես համոզվել այդ բանում, և, գտնելով մի մաքուր ավազոտ տեղ, վոր ձագարի նման փոս ուներ մեջտեղը, նա շուրթերը մոտեցրեց այդ ձագարին ու սկսեց:

Արի, արի, մարդագել, մարդագել:

Ճշմարտությունն ասա, մարդագել...

Ավազը շարժվեց. փոսից դուրս յեկավ մի փոքրիկ սեբեզ ու իսկույն թագնվեց վախեցած:

— Նա չի, լզուս ասել: Լերեմն՝ կախարդն է արել: Այդպես ել գիտելի:

Թոմը լավ գիտեր, վոր կախարդների հետ չափվել դժվար է, ու վհատեց: Հետո նա մտածեց, վոր վատ չի լինի փնտռի գոնե այն գնդակը, վոր դեն գցեց, և նա վերադարձավ իր գաղտնարանի մոտ և տուփը զգուշութամբ դրեց տեղը, ապա վեր կացավ հենց այնպես, ինչպես կանգնել էր, յերբ գնդակը գցեց. գրպանից հանեց մի ուրիշ գնդակ և նետեց նույն ուղղութամբ, ասելով.

— Յեղբայր, գնա գտիր քո յեղբորը:

Նա նկատեց ուր ընկավ գնդակը, և սկսեց վորոնել այնտեղ Բայց, յերևի, յերկրորդ գնդակը հեռու յեր ընկել կամ տեղ չէր հասել, և նա վոչինչ չգտավ: Փորձեց

մի անգամ ել, յերկրորդ, յերրորդ անգամը և, վերջապես հաջողվեց. յերկու գնդակն ել ընկած էյին իրարից մի վրանաչափ հեռու:

Այդ ընդմիջին կանաչ թավուտում լսվեց թիթեղե խաղալիք-փողի ձայն: Թո՛մն արագ հանեց-զցեց բաձկոնն ու վարտիկը, ուսկապը գոտի արավ, քրքրեց ցախի կիտուկը, հանեց աչքստեղից կոպիտ շինված նետ ու աղեղ, փայտե մի սուր և թիթեղե փող. մի ակնթարթում սպառազինվեց, և բորիկ ու շապկանց գնաց թշնամու գեմ: Կանգ սուս մի մեծ թեղու տակ, փողը փչեց պատասխան ազդանշանը և, հրաման տալով յերևակայական վաշտին. (— Կանգնեցեք, տղերք, թագնվեցեք, մինչև փող փչելը)՝ սկսեց սպասել, խրոխտաբար շուրջը նայելով: Յերևաց Ջո Հարպերը նույնպես թեթև հագնված և նույնպիսի զենքերով սպառազինված: Թո՛մը ձայն տվեց նրան.

— Կանգնիր: Ո՞վ ե համարձակվում, առանց իմ թուլտվութան, շրջել Երրվուղի անտառում:

— Գյու Հիսբորնը կարիք չունի վոչ-վոքի թուլտվութան: Ո՞վ ես դու, վոր...

— «Վոր համարձակվում ես այդպես խոսել ինձ հետ», — շտապով թելադրեց Թո՛մը, վորովհետև նրանք խոսում էին հիշողութամբ, «գրքի խոսքերով»:

— Ո՞վ ես դու, վոր համարձակվում ես այդպես խոսել ինձ հետ:

— Ո՞վ ե՞մ լես: Յես — Ռոբին Հուզն<sup>1)</sup> եմ, ինչպես շուտով կհամոզվի ջո ստոր դիակը:

— Ուրեմն դ՛ն յես այդ նշանավոր ավազակը: Պատրաստ եմ վիճել քեզ հետ, թե ո՞վ ե այս անտառի տերը: Դո՛ւրս արի:

Նրանք մերկացրին իրենց փայտե սրերը, մյուս գեն-

<sup>1)</sup> Ռոբին Հուզը անգլիացի քաջ ավազակ էր, վոր հարուստ-ներին թալանում էր և նրանց ինչքը բաժանում էր աղքատներին:

քերը զցեցին գետին, կավողի դիւք ընդունեցին ու մենամարտն սկսվեց: Վերջապես, Թո՛մն ասաց.

— Դե վոր բանը հասավ կովի — կովե՛ք: Սկսիր:

Յե՛վ նրանք սկսեցին փայտե սրերով կովել. այնքան բուռն, վոր շուտով յերկուսն ել հոգնեցին ու քրտնեցին.

— Դե, ընկիր ե, — գոռաց Թո՛մը: — Ինչո՞ւ չես ընկնում:

— Ինչո՞ւ լես ընկնում: Դու ընկի, — չե վոր քու դրուժունն ավելի վատ ե լինում:

— Հետո ինչ: Դա վոչինչ չի նշանակում: Յես չեմ կարող ընկնել: Գրքում այդպես բան չկա. — այնտեղ ասված ե. «Յե՛վ նա մեջքին հասցրած մի ճարպիկ հարվածով գետին գլորեց Գյու Հիսբորնին»: Դու պետք ե թողնես մեջքիդ խփեմ:

Այդպիսի հեղինակու-

թյան դեմ առարկել չեք կարելի: Ջոն շուռ լեկավ, հարվածն ստացավ և ընկավ:

— Դե, — ասաց Ջոն վոտի կանգնելով, — հիմի թող լես քեզ սպանեմ. դա խղճով բան կլինի:

— Բաց այդ չի կարելի. այդ բանը գրքում չկա:

— Ա՛խ, դու անամոթ. Դա ի՞մ կարծիքով ստորուրութուն ե:

— Դե, հերիք ե, Ջո, — չե վոր դու կարող ես լինել

Տեռուկ արեղան և փայտով խփել իմ գլխին. կամ, ուզում



Ռոբին Հուզն ու նրա թշնամին:

ես, յես կլինես նոտինգեմցի շերիֆը, դու՝ Ռոբին Հուզը,  
և կսպանես ինձ:

Իսա Հարպերին դուր յեկավ, և խաղը նորից սկսվեց:  
Ապա թոմը նորից դարձավ Ռոբին Հուզ և արյունաքամ  
չեղավ, շնորհիվ դավաճան կուլսի, վոր վատ եր խնամում  
վերքը, վորից հետո Ջոն, ներկայացնելով իրենից մի  
խումբ լացող ավազակներ, տխուրթյամբ քաշեց նրան մի  
կողմ, աղեղը տվեց նրա թուլացող ձեռը, և թոմն ասաց.  
«Ուր կընկնի այս նետը, այնտեղ ել թաղեցեք խեղճ Ռո-  
բին Հուզին, կանաչ ծառերի տակ»: Ապա արձակեց նետը,  
յետ ընկավ ու պիտի մեռներ, բայց յեղինջը կծեց վիզը և  
նա վեր թռավ մեռելին չսազող փոթկատությամբ:

Տղաները հագնվեցին, թագցրին իրենց զենքերը ծա-  
ծուկ տեղեր ու միասին ճամբա ընկան, ցավելով, վոր  
հիմա յել ավազակներ չկան: Յերկուսն ել հավատա-  
ցնում ելին, թե ավելի լավ կհամարելին ավազակ լինել  
Շիրվուզի անտառում, քան Միացյալ Նահանգների նախա-  
գահ՝ իրենց ամբողջ կյանքում:

VIII

Այդ յերեկո թոմն ու Սիզը, ինչպես միշտ, ժամը  
լինն անց կեսին գնացին քնելու: Սիզը շուտով քնեց, բայց  
թոմը չքնեց. սպասելով ազդանշանին: հուզմունքից չեր  
հանգստանում. նրան թվում եր, թե լուսաբացը մոտ է  
արդեն, բայց այդ ըրպելին լսեց, թե ինչպես խփեց տաս-  
երորդ ժամը: Միայն տասն ե: Արժեք դրա համար հու-  
սահատվել, նա չկարողացավ անգամ շուռ գալ տեղում և  
վոտները թափ ու թափ անել, ինչ վոր պահանջում ելին  
նրա գրգռված շղերը, վորովհետև վախենում եր Սիզին  
արթնացնել: Այդ պատճառով բաց աչքերով հանգիստ պառ-  
կեց մթան մեջ: Շուրջը ծանր լուռություն եր. կամաց-կա-  
մաց լավեցին հազիվ լսելի տարբեր հնչյուններ: Ամենից  
առաջ — ժամացույցի թիթ-թափը, ապա հին գերանների  
խորհրդավոր ճոխնչը, սանդուղի աստիճանների թուլլ ճռո-  
ճոցը: Ով գիտի, տանը վողիներ ելին շրջում: Մորաքրոջ  
տենյակից լավեց նրա հանգիստ համաչափ խումփոցը: Այ-  
նուհետև սկսվեց ճպուռների անտանելի ճռճոցը, վորոնց  
մարդկային վոչ մի հնարագիտություն չի կարող դուրս  
անել բնակելի շենքերից, և բզեզի շարագուշակ տիկ-տիկը  
պատի մեջ՝ մահճակալի գլխավերև: Թոմը ցնցվեց. դա  
նշանակում եր, վոր մեկը մեռնելու յե: Ապա ինչ-վոր հե-  
ռու տեղ մի շուն վոռնաց, ավելի հեռվից նրան պատաս-  
խանեց մի ուրիշ շուն: Թոմը տանջալից ըրպեներ եր ապ-  
րում: Վերջիվերջո նա համոզվեց, վիթ ժամանակը վեր-  
ջացավ և սկսվեց հավիտենությունը, և հակառակ իր կամ-

քի սկսեց ննջել: Հնչեց տասնուներկ ժամը, բայց նա չստացաւ: Հանկարծ քի մեջ լսեց կատվի տխուր մլավոց: Մտտիկ ինչ-վոր տեղում լուսամուտ թխկաց և մի ձայն կանչեց. «Կորի, ա՛նիծջալ», ու գնգոցով պատին դիպավ մի դատարկ շիշ: Թո՛ւր պեր թռավ ցնցվածի պես, իսկույն հագնվեց, դուրս յեկավ լուսամուտով և չորեքթաթ սողաց տանիքի վրայով, մի յերկու անգամ կամացուկ մլավեց ի պատասխան, հետո ցատկեց սարայի կտուրը և այնտեղից



թռավ-իջավ գետին: Հեկլբերի Ֆիննը սպասում էր նրան՝ սատկած կատուն ձեռին: Տղաները շուտով աներևութացան խավարում: Կես ժամ անց՝ նրանք արդեն քայլում էին գերեզմանատան բարձր խոտերի միջով:

Գերեզմանատունը հին էր և, ինչպես հնումն ընդունված էր Արևմուտքում, տարածված էր բլրի վրա, գլուղից բավական հեռու: Նա շրջապատված էր տախ-

ձանապարհորդություն տանիքի վրայով: տակե ցանկապատով, տեղ-տեղ ներս, տեղ-տեղ դուրս ընկած, բայց վոչ մի տեղն ուղիղ: Սմբողջ գերեզմանատունը ծածկված էր վայրի խոտերով, վորոնց մեջ գերեզմանները չէին լերևում: Այնտեղ չկար վոչ մի արձան: Գերեզմանները վրա բարձրանում էին փթած, վերին մասը կլորացրած, ճիճուակեր և գեպի հողը թերված հին տախտակներ: Բոլոր այդ տախտակների վրա մի ժամանակ զրված էին

յեղել հանգուցյալների անունները. բայց տառերն այնպես էին ջնջվել, վոր լույսով անգամ կարգալ չէր կարելի:

Քամին վողբադին նվում էր ծառերի կատարների մեջ, և Թո՛ւր սարսափ էր զգում: Նրան թվում էր, վոր մեռելների հոգիները դանդաղում են, թե ինչու մարդիկ վրդովում են իրենց հանդիսար: Տղաները բիշ էին խոսում իրար հետ և այն էլ շշուկով. տեղն ու ժամանակը, միջավայրի հանդիսավորութունը և շրջապատի լուսթյունը ճնշող ազդեցութուն էին անում նրանց վրա: Գտան նրանք մի թարմ հողաթուժք, վորը և վորոնում էին, ու կանգնեցին յերեք մեծ թեղու կողքին, գերեզմանից յերկու քալ հեռու:

Այգպես կանգնեցին ու սպասեցին, ինչպես նրանց թվաց, բավական յերկար: Հեռվում վայում էր մի բուռ, և դա միակ ձայնն էր, վոր խանդարում էր մեռելային լուսթյունը: Թո՛ւրի մտքերն այնպես էին ճնշում նրան, վոր նա կարիք զգաց խոսակցելու:

— Ուրեմն, Հեկ, դու կարծում ես, — սկսեց նա շրջուկով, — մեռելները չեն բարկանա մեզ վրա այստեղ գալու համար:

Հեկլբերին շնչաց ի պատասխան.  
— Ով է իմանում, չգիտեմ: Սարսափելի տեղ է, Հե:

— Ի հարկե:  
Տիրեց յերկար լուսթյուն. յերկունս էլ մտածում եցին միևնույն բանի մասին: Թո՛ւր շնչաց.

— Լսիր, Հեկ, ի՞նչ ես կարծում— Վիլյամսը լսում է, ինչ խոսում ենք:

— Ի հարկե, լսում է: Գոնե նրա հոգին լսում է: Նորից լուսթյուն:

— Ափսոս, վոր լես նրան ուղղակի Վիլյամս ասի, և վոչ թե միտտեր Վիլյամս: Բայց լես չեյի ուզում նրան վիրավորել: Բոլորը նրան այգպես էին կանչում:

— Մեռելները մասին խոսելիս պետք է զգուշ լինել, թո՛ւմ:

Այս նկատողութիւնը խորտակեց թո՛ւմի ցանկութեանը՝ խոսակցութեանը շարունակելու: Բայց հանկարծ նա բռնեց ընկերոջ թեւը:

— Սո՛ւ...

— Այն ի՞նչ է:

Յերկուսն ել պինդ իրար կպան ու սպասեցին, թե ինչ է լինելու:

— Մոտ. այ ելիւ Լսո՞ւմ ես:

— Յես...

— Ընդ. դ՞ու յիլ լսեցիր:

— Թո՛ւմ, նրանք գալիս են: Նրանք են: Ի՞նչ անենք:

— Չգիտեմ: Դու կարծում ես նրանք մեզ կտեսնեն:

— Այո, թո՛ւմ, նրանք միման մեջ կառավի պես տեսնում են: Ինչու յեկա յե:

— Դու մի վախի. Յես կարծում եմ նրանք մեզ ձեռ չեն տա: Մենք վատ բան հո չենք անում: Յեթե թագնավենք, գոյցե, մեզ բոլորովին չնկատեն ել:

— Փորձենք: Բայց, ո՛յ, ինչ սարսափելի յե: Յես դողում եմ:

— Մոտ. ահանջ զիր:

Տղաները, շունչները կտրած, կպան իրար: Գերեզմանատան մշուս ծայրից խուլ ձայներ ելին գալիս:

— Նայիր: Տեսնո՞ւմ ես, — շնշաց թո՛ւմը:

— Այդ ի՞նչ բան է: Դժոխսալին կրակ է: Ո՛, թո՛ւմ, ինչ սարսափելի յե:

Խաղաղից դուրս յեկան ինչ վոր մուլթ կերպարանքներ. նրանց առջև որորվում եր մի հին թիթեղե լապտեր, վոր լույսի անսամար կայծեր եր թափում գետնին:

— Այդ յերեի սատանաներ են, — ցնցվելով շնշաց շեկերին: — Յերերն են: Կորա:

— Մի վախի, նրանք մեզ ձեռ չեն տա:

— Մոտ:

— Ի՞նչ է, չեկ:

— Մարդիկ են: Գոնե նրանցից մեկը: Դա ծեր Մեք Պոտտերն է: Չայնից ճանաչեցի:

— Միթե: Չի կարող պատահել:

— Յերգլում եմ, ճանաչեցի: Դու թագնավիր, մի շնչի: Նա մեզ չի տեսնի: Ծերուկն, ով գիտի, հարբած է, ինչպես միշտ:

— Կով, կթագնավիմ: Տես, կանգնեցին: Ինչպես յերում է, բան են վորոնում: Այ, ելի գալիս են դեսը: Տես, վոնց են վազում: Հիմա ով գիտի այստեղ են գալիս: Լսիր, չեկ, յես մշուս ձայնն ել ճանաչեցի. հնդիկ Չոն է:

— Դե, իհարկե, անիծյալ մեախոն\*) ե: Ավելի լավեր սատանաներ լինելին: Դրանք ի՞նչ ունեն այստեղ:

Բայց այստեղ տղաներն իրենց շունչն ել զաղարեցրին, վորովհետե յերեր կերպարանքն ել մոտեցան զերեզմանին ու կանգնեցին քիչ հեռու աջն տեղից, ուր թագնաված էլին մեր հետոները:

— Այստեղ է, — ասաց յերրորդը, և լապտերը բար-

\*) Մեախո կոչվում են այն մարդիկ, վորոնք առաջ են գալիս սպիտակամորթների և կարծրամորթների խառն ամուսնութեաններից, սպիտակները ու նեգրերը և այլն:



Նայիր, տեսնում ես:

ձրացրեց անպես, վոր լուսն ընկավ դեմքին. տղաները ճանաչեցին յերիտասարգ գորտոր Ռորինդոնին:

Պոտտերն ու հնդիկ Ջոն թողերով կապած մի պատգարակ ելին բերում՝ վրան չերկու բան: Նրանք իրենց բեռը գրին ցած ու սկսեցին գերեզմանը փորել:

Բժիշկը լապտերը դրեց գերեզմանի գլխին, իսկ ինքը նստեց գեանին, մեջքը թեզիներից մեկին հենած:

Նա անջան մոտ եր, վոր տղաները կարող ելին ձեռ գրպանել նրան:

— Շնտ արեք, յեղբայրներ, — ասաց նա կամաց, — չուրաքան յուր ընդե լուսինը կարող ե գուրս գալ:

Նրանք ինչ վոր թոնթորացին ի պատասխան և շարունակեցին քանդել: Մի առ ժամանակ վոչինչ չեր լավում, բացի բահերի միահամուռ աշխատանքից, վոր հողի կոշտերը գցում ելին մի կողմ: Այդ ձայնը հնչում եր իր միորինակութամբ: Վերջապես, լավեց փայտին գրպանը մի խուլ հարված. բանը գրպավ դադաղին, ու մի քանի րոպեից հետո բանդոնները գուրս հանեցին ան: Նույն բահերով նրանք բարձրացրին կափարիչը, մեռելին հանեցին և կոպտորեն զցեցին հողի վրա: Այդ րոպեին լուսինը գուրս սանեց ամպերի տակից և լուսավորեց մեռելի կապուտկած, սարսափելի դեմքը:

Նրան դրին նախապես պատրաստած պատգարակը, ծածկեցին վերմակով և կապկպեցին թուկով: Պոտտերը հանեց ծալովի դանակը, կտրեց թուկի կախ ընկած ծալը և ասաց.

— Դե, ձեր անիծյալ գործը պատրաստ ե: Հիմի տրվեք հինգ վոսկի լել, թե չե սրան այստեղ ել կթողնենք:

— Խելոք խոսքեր լսելը գուրեկան ե, — հավանութուն տվեց հնդիկ Ջոն:

— Թույլ տվեք: Սա ինչ ե նշանակում, — ասաց բրժիշկը: — Չե՞ վոր գուք փողն սկզբից պահանջեցիք և չես վճարեցի:

— Այո, գուք ուրիշ բան ել եք արել, — ասաց Ջոն, մոտենալով բժշկին, վորը փոտի կանգնեց: — Հինգ տարի առաջ գուք ինձ գուրս արիք ձեր հոր խոհանոցից, ուր մտել ելի ուտելու բան խնդրելու. գուք ասիք, վոր չես վատ նպատակով եմ յեկել. իսկ յերբ յես յերգվեցի հատուցել ձեզ դրա փոխարեն, թեկուզ հարյուր տարի հետո, ձեր հայրն ինձ բանա նստեցրեց, իբրև ավարայի: Կարծում եք այդ բանը մոռացել եմ: Ի գուր չե հնդիկ արջունս: Հիմի գուք իմ ձեռքին եք, ու մենք ձեզ հետ հաշիվ կտեսնենք, այդպես ել իմացեք:

Նա սպառնաց բժշկին, բուռնցքը լերեսին մոտեցնելով: Բժիշկը հանկարծ ձեռը տարավ-բերեց ու մի հարվածով կոպտախոսին գետին գլորեց: Պոտտերը դարմանքից դանակը զցեց ցած ու բացականչեց.

— Ե՛յ, սա ինչ բան ե: Յես թույլ չեմ տա ընկերուջրս խփելու:

Յեվ նա հարձակվեց բժշկի վրա: Մի ակնթարթ և նրանք կպան իրար ու կովեցին, կանաչները տրորելով և կրունկներով փխրուն հողը քանդելով: Հնդիկը վոտի կանգնեց. նրա աչքերը վառվում ելին ատելութամբ. նա վերցրեց Պոտտերի ձեռից ընկած դանակը. և կատվի պես գոչունի ու կուզեկուզ, սկսեց պտտել կովոյների շուրջը, հարմար առիթի սպասելով: Հանկարծ բժիշկը ազատվելով հակառակորդի ձեռներից, վերցրեց Վիլյամսի գերեզմանի ծանր տախտակը ու նրանով գետին գլորեց Պոտտերին: Նույն վարկյանին մետախը, դրանից ոգտվելով, դանակը մինչև կոթը խրեց յերիտասարգի կուրծքը. Բրժիշկը յերերաց ու ընկավ Պոտտերի վրա, վոտղելով նրան իր արջունով: Այդ րոպեին վերահաս ամպերը ակամա ականատեսների աչքից ծածկեց այդ ոտարսափելի տեսարանը, և վախեցած տղաները թողին ու փախան, առանց յետ նայելու:

Յերբ լուսինը նորից գուրս յեկավ ամպերի տակից,

հնդիկ Ջոն կանգնած եր գետնին փռված մարդու գլխա-  
վերեր: Բժիշկն ինչ-վոր անհասկանալի բաներ շնչաց-  
լերկու անշամ անքայ ու լռեց:

— Ե, գրողը քեզ տանի, —ասաց մետիսը, — մեր հա-  
շիվը վերջացավ:

Յեվ նա կողոպտեց սպանվածին, հետո շարաքաստիկ  
դանակը դրեց Պոտտերի աջ ձեռքի մեջ ու նստեց շուռ-  
տված դագաղի վրա: Անցավ լերեր, չորս, հինգ րոպե...  
Պոտտերը շարժվեց ու անքայ: Նա դանակը սեղմեց, մո-  
տեցրեց լերեսին: ցնցվեց ու ձեռից զցեց: Հետո բար-  
ձրացավ ու նստեց, դեն հրելով բժշկի մեռած մարմինը,  
դիտեց նրան, ապա պղտոր հայացքով շուրջը նայեց և  
հանդիպեց մետիսի հայացքին:

— Սա ինչ է: Այս փոնց պատահեց, Ջո:

— Հեչ, դատարկ բան է, —ասաց Ջոն, տուսնց տե-  
ղից շարժվելու: — Դու ինչու աչքովես արիք դրան...

— Յես: Մտքովս ել չեր անցնում:

— Լավ, պատվիր: Դրանով անցածը հետ չես բերի:  
Պոտտերը գունատվեց. նա ամբողջովին դողում էր:

— Կարծում եյի հարբածության հետևանքը անցել է:  
Յերեկոյան սկի չեմ խմել: Բայց մինչև հիմա յեղ դուրսս  
դրմբում է, ավելի վատ է, քան եստեղ գալիս... Ամեն  
ինչ մի սեռակ խառնվել է. վոչինչ չեմ կարողանում հի-  
շել: Ասա մի, Ջո, անկեղծ ասա, մի՞թե յես խեղդեցի սը-  
րան: Յես ախր սրան չեյի ուզում սպանել, մտքովս ել  
չեր անցնում, — լերգվում եմ պատվովս: Ջո: Ասա, այս  
վոնց պատահեց: Ո՛ֆ, սարսափելի յե. — նա այնքան ջա-  
հել ու ընդունակ էր:

— Վոնց պատահեց: Հայտնի բան է. դուք սկսեցիք  
կովել, նա տախաակով խփեց քո գլխին. դու ընկար, ա-  
պա վեր կացար լերերովելով, դանակն առար ու խրեցիք  
նրա կուրծքը հենց այն րոպեին, յերբ նա նորից ուզում  
էր քեզ բռնի: Ու դրանից հետո՝ ինչպիսի ընկար, այնպես  
եղ մնացիր մինչև հիմա՝ փետի պես պառկած:

— Ո՛ֆ, ինքս ել չեմ իմացել ինչ եմ ասում: Գետին  
մտնեմ, թե սուտ եմ ասում: Դա բոլորը ողուց է — հար-  
բած եմ յեղել — բարկությունս թափել եմ նրա գլխին — քո  
պատճառով... Յես հո դանակ բռնել չեմ իմանում: Կովել  
պատահել է, ճիշտ է, բայց առանց դանակի, բուռնցքով:  
Դա բոլորին հայտնի յե: Ջո, թե ախպեր տղա յես, չմա-  
նես: Խոսք տուր, վոր չես մասնի, Ջո: Յես միշտ սիրել  
եմ քեզ, պաշտպանել եմ քեզ: Ինքդ զիտես... Մարդու  
բան չես ասի, չե՞, Ջո:

Յեվ դժբախտ Պոտտերը չոքեց գարշելի մարդասպա-  
նի առաջ ու պաղատանքով ձեռները մեկնեց նրան:



Դժբախտ Պոտտերը չոքեց:

— Լավ, Մեֆ Պոտտեր, դու ինձ հետ միշտ պատ-  
վով ու խղճով ես վարվել, փոխարենը կանեմ նույնը:  
Հանգիստ յեղիր, հաստատ խոսք եմ տալիս: Ել խոսե՛ն  
ավելորդ է:

— Զո, դու հրեշտակ ես: Կորհնեմ քեզ մինչև վերջին շունչս:

Յե՛վ Պոտտերը լաց յեղավ:

— Դե, լավ, հերիք ե: Լաց լինելու ժամանակ չի: Գնա ալ այդ ճամբով, շնու: Իսկ յես կերթամ այս ճամբով: Այ տես, յետևիցդ հետքեր չթողնես:

Պոտտերը վազեց, սկզբում կամաց, հետո ամբողջ թափով: Մետիսը կանգնել ու նայում եր նրա յետևից, քրթմնջալով:

— Յեթե իսկապես նա շնեւ ե հարվածից ու խմելուց, ինչպես յերևում ե դեմքից, ուրեմն դանակը չի հիշի: Իսկ յեթե հիշի լեւ, հեռու փախչելով՝ կփախենա վերադառնալ այստեղ, — վախկոտ, հավի սիրտ ունի:

Մի քանի րոպե անց՝ սպանվածին, վերմակի մեջ փաթաթած դիակին, անկափարիչ դագաղին և բաց գերեզմանին նայում եր միայն լուսինը: Շուրջը դարձյալ լուսթյուն եր տիրում:

IX

Տղամների լեզուն կապվեց սարսափից: Առանց կանգ առնելու, վազեցին դեպի քաղաք: Յերբեմն անհանգիստ յետ ելին նայում, կարծես հետապնդումից փախենալով: Ճամբին պատահող ամեն մի ծառի բուն, կոճղ՝ սարսափելի թշնամի յեր թվում, ու քիչ եր մնում շունչները կտրի: Յերբ անցնում ելին քաղաքից հեռու գանվող ադարակի մոտից, շները զարթնելով՝ հաշեցին, և նրանք նորից կարծես թևեր առան:

— Կաշվի գործարանին հասնենք, քանի շունչներս չի կտրել, — շնջաց թոմը, հազիվ շունչ քաշելով: — Յես, թվում ե, ել չեմ կարող վազել:

Հեկլերին միայն փնջացնում եր. տղաները լարեցին վերջին ուժերը: Վերջապես, հասան գործարան, և բաց դռնից ներս խուժելով, վայր ընկան բոլորովին հալից ընկած: Նրանց զարկերակը կամաց-կամաց կանոնավորվեց, և թոմը շնջաց:

— Հեկ, ի՞նչ ես կարծում, սրանից ի՞նչ դուրս կգա:

— Յեթե բժիշկ Ռոբինզոնը մեռնի, յես կարծում եմ, կախաղան:

— Ի՞նչ ես ասում:

— Հաստատ:

Թոմը մտածեց, հետո ասաց.

— Ո՞վ ե հայտնելու Մե՞նք:

— Ի՞նչ ես խոսում: Զառանցում ես Յերեակայի, չոր բանը հանկարծ փոխվեց հոգուտ հնգիկ Զոյի, կամ նա



փախալ ու նրան չկախեցին— այն ժամանակ չե վոր մեզ  
կսպանի: Այն ժամանակ ել մահից չենք ազատվի:

— Յես ել այդպես եմ կարծում, Հեկ:

— Յեթե մեկը այդ մասին հայտնելու յե, թող Մեֆ  
Պոտտերը հայտնի. նա այդ հիմարությունը կարող ե անել:  
Չե վոր միշտ հարբած ե լինում:

Թոմը վոչինչ չասաց— նա մտածում եր. հետո  
չնշաց.

— Հեկ, չե վոր Մեֆ Պոտտերը չգիտի.— նա ինչպես  
կարող ե հայտնել:

— Այսինքն վոնց թե չգիտի:

— Իհարկե, չգիտի: Չե վոր այն բազմիկն, յերը բը-  
ժիշկը խփեց նրա գլխին, հնդիկ Ջոն դանակը խրեց բը-  
ժշկի կուրծքը: Ել վոնց կարող եր տեսնել:

— Այդ ել ճիշտ ե:

— Բացի դրանից, ով գիտի, նա այդ հարվածից  
խելքը կորցրել ե:

— Չե, Թոմ, հազիվ թե: Նա ուղղակի հարբած եր:  
Յես այդ նկատեցի: Նա միշտ ել հարբած ե: Յերը հերո  
հարբած ե լինում, թեկուզ գերան գցի գլխին— բան չի  
լինի: Նա ինքն ե ասում: Նույնն ե և Մեֆ Պոտտերը:  
Այ թե լուրջ լինեք, այդ հարվածից, գուցե խելքը թը-  
ցընեք:

Թոմը նորից մտածմունքի մեջ ընկավ:

— Հեկ, դու համոզված ես, վոր բերաններիցս բան  
չենք թոցնի:

— Ուզես չուզես՝ պետք ե լեզուդ ատամներիդ տակ  
պահես: Ինքդ հասկանում ես... Այդ գրողի տարած մե-  
տիսը մեզ կատուի ձագի պես կխեղդի. յեթե մեր բերա-  
նից մի բան դուրս գա, և նրան չկախեն— կորած ենք:  
Լաիր, Թոմ: Քանի վոր մենք ուզենք չուզենք պիտի լուենք,  
արի խոսք տանք իրար, յերդվենք, վոր մարդու բան չենք  
ասի:

— Յես պատրաստ եմ, Հեկ: Դա ամենալավ բանը  
կլինի: Դե, ձեռք տուր...

— Ո՛, չե, այդ հեչ: Չեո տալը լավ ե սովորական  
բաների մեջ, մանավանդ աղջիկների հետ, վորովհետև նը-  
բանք, վերջիվերջո, միևնույն ե դուրս են պրծնելու և  
խոսելու, յեթե չարացան, բայց այսպիսի գործի մեջ  
պետք ե վոր պայմանը լինի գրավոր և անպայման աբ-  
յունով գրած:

Թոմն ամբողջ սրտով հավանություն ավեց այդ մըա-  
քին: Դա խորհրդավոր, մապ ու սարսափելի յեր: Նա  
լուսնի լուսով դտավ մի տաշեղ, գրպանից հանեց կար-  
միր ներկի մի կտոր, նստեց այնպես, վոր լուսնն ընկնի  
տաշեղին՝ ու գժվարությամբ գրեց հեռույալ սողերը, ս-  
մեն մի բառի վրա լեզուն արաքացնելով.

«Հեկ Ֆին և Թոմ Սոյեր

մենք յերկուսս ել յերբվում ենք,

վոր լեզուներս մեզ կքաշենք այդ գործի մասին  
և թող մեռնենք տեղն ու տեղը

յեթե մի խոսք ասենք»...

Հեկլբերին հիացավ Թոմի արագ գրելու և բարձր վո-  
ճի վրա: Նա թեքի ծալից հանեց մի քորոց և ուզում եր  
մատը ծակել, քայց Թոմը չթողեց:

— Սպասիր, մի անի. դա պղնձի էրոց ե, վրան  
ժանգառ կլինի:

— Ժանգառ: Դա ի՞նչ բան ե:

— Թույն ե այդ տեսակ: Փորձիր մի կուլ տալ— կը-  
տեսնես:

Թոմը հանեց իր ասեղներից մեկը և նրանք հերթով  
ծակեցին իրենց մատները և արյուն կաթեցրին:

Հանելով մի քանի կաթիլ արյուն և ձկուլթը գրեչ  
դարձնելով Թոմը գրեց իր անվան սկզբնատառերը, հետո  
սովորեցրեց Հեկլբերին՝ ինչպես գրել Հ. Ֆ. տառերը, ու  
պայմանագիրն ստորագրվեց: Նրանք հանդիսավոր ձեռ-

կանուխամբ տաշեղը թաղեցին պատի մոտ, համարելով վոր իրենց լեզուները կապվեցին արգեն:

Կիսավեր շենքի մյուս ծալրից ներս մտավ մարդկային մի կերպարանք, բայց տղաներն այդ չտեսան:

— Թոմ, շնջաց Հեկլբերին, — դու համոզված ես, վոր այդ մասին յերբեք չենք խոսի:

— Իհարկե, համոզված եմ: Ինչ ել լինի — ձայն չենք հանելու: Չե՞ վոր տեղն ու տեղը կմեռնենք, յեթե խոսենք: Մի՞թե մոռացել ես:

— Այո, այդպես...

Նրանք շարունակեցին փսփսալ: Հանկարծ քիչ հեռու բնդամենը մի տասը քայլի վրա, լավեց շան վողբազին, զիլ վոռնոց: Տղաները վախեցած իրար կպան:

— Դա վորի՞ս վրա յե վոռնում, — շնչակաուր շընջաց Հեկլբերին:

— Չգիտեմ, ծակից նայիր հլա: Ծնու:

— Չե, դու նայիր:

— Չեմ կարող, յես չեմ կարող, Հեկ:

— Խնդրեմ: Թոմ: Այ ելի...

— Ո՛, վորքան ուրախ եմ, — շնջաց Թոմը, — այդ հաջոցը ճանաչում եմ. դա Հարբիզոնի շունն է:

— Ե, փառք աստծու: Գիտես, յես սարսափելի վախեցա. կարծեցի անտեր շունն է:

Այդ ժամանակ շունը նորից վոռնաց: Տղաների սիրար նորից ջուր դառավ:

— Ո, չե: Դա Հարբիզոնի շունը չի, — շնջաց Հեկլբերին, — նորից մի նայիր, Թոմ:

Թոմը, սարսափից դողահար, աչքը նորից մոտեցրեց ծակին ու հաղիվ լսելի ձայնով ասաց.

— Հեկ, դա անտեր, թափառող շունն է:

— Տես հլա, Թոմ, տես սե՛ս վրա յե հաչում:

— Ով գիտի մեզ յերկուսիս վրա: Չե՞ վոր իրար կող-

քի յենք: Ո՛, Թոմ, կորանք: Գիտեմ ուր եմ ընկնելու: Յես այնքան մեղքեր ունեմ...

— Իսկ յես շարունակ խաղում եմ, փոխանակ սովորելու. անում եմ հենց այն, ինչ արգելում են ինձ... Յես կարող ելի Սիդի պես լավ, հնազանդ լինել, յերբ աշխատելի, բայց, իհարկե, չեյի ուզում: Բայց յեթե այս անգամ ազատվեցի, այնպես պիտի սովորեմ կիրակնորյա դպրոցում:

Թոմը կամացուկ հեկեկաց:

— Դու մեղավոր ես. — և Հեկլբերին նույնպես սկսեց հեկեկալ, — դու ի՞նչ մեղք ունես վոր-դու իսկական հրեշտակ ես ինձ հետ համեմատած:

Թոմն արցունքները կուլ տվեց և ասաց:

— Տես, Հեկ, տես. նա քամակը մեզ է արել:

Հեկն ուրախացած մոտեցավ ծակին:

— Ճիշտ վոր... առաջ ել այդպես եր կանգնած:

— Այո, իսկ յես հիմարս ուշ չդարձրի: Այ լավ է: Բայց սե՛ս վրա կարող եր հաջա:

Շունը վոռնոցը դադարեցրեց: Թոմն տկանջ դրեց:

Սո՛ւս: Սա ի՞նչ բան է:

— Կարծես... կարծես խոզ է խոնչում: Չե, կարծես մեկը խումփացնում է, Թոմ:

— Խումփացնում: Վորտե՞ղ է խումփացնում, Հեկ:

— Յերևի՛ սարալի են ծալրում: Խումփոցը կարծես այնտեղից է գալիս: Հայրս այտեղ յերբեմն գիշերում եր խոզերի հետ, բայց այնպես եր խումփացնում, վոր ել սլըր-ծար — վախից լեղիդ կճաքեր: Բայց նա, կարծում եմ, ել յերբեք այս քաղաքը չի վերադառնա:

Չե՞նե՞րեցյության վողին զարթնեց տղաների մեջ:

— Հեկ, դու կզամս այնտեղ, յեթե քեզ տանեմ:

— Ցանկուլթյուն չունեմ, Թոմ: Հանկարծ հնդիկ Չոն այնտեղ լինի:

Թոմը աստանվեց: Գայթակղությունն այնքան մեծ

եր, վոր աղաները վորոշեցին գնալ նայելու, պայմանա-  
վորվելով իսկույն վերադառնալ, չեթե միայն խոմփոցը  
գազարի: Նրանք, մեկը մյուսի չեակից, վառի ծայրերի  
վրա գնացին գեպի քնածը: Հագիվ մի լերկու քայլ ելին  
արել, Թոմը վտար գրեց մի փայտի վրա, վորը ճրթալով  
կոտրվեց: Քնած մարդը անքայց, շուտ լեկավ կողքի վրա-  
յուսնի լուսն ընկավ նրա գեմքին: Դա Մեֆ Պոտտերն եր:  
Տղաների թուրք ցամաքեց, և նրանք տեղներում քարա-  
ցան, յերբ քնածը շարժվեց: Նրանք վտաների ծայրերի  
վրա մոտեցան պատի մեջ լեզած անցքին. դուրս լեկան և  
սկսեցին հրաժեշտ առ յիրար. բայց այդ բոլորին լավեց  
մի չարագուշակ ու զիլ վտանոց: Յերկուսը միանգամից լեա  
դարձան և տեսան մի շուն, վոր կանգնած եր պառկած  
Պոտտերից լերկու քայլ հեռու, լերեսը գեպի նա ու քիթը  
վեր ցցած:

— Ուրեմն նրա վրա չե վտանում, — բացականչեցին  
աղաները միաձայն:

— Բայց գիտես ի՞նչ: Ասում են Ձոնի Մելլերի տան  
մոտ՝ մի անգամ, կես գիշերին — սրանից մի շաքաթ ա-  
ռաջ — մի անտեր շուն և վտանացել, իսկ գիշերահավը նույն  
գիշերը լերգել և նրա պատի վրա. բայց մի՞նչ և հիմա նրա  
տանը մարդ չի մեռել:

— Գիտեմ: Բայց միթե դրանից հետո Գրեսի Մելլե-  
րը չընկավ վառարանը ու չվառվեց:

— Այո, բայց նա չմեռավ: Նա մի՞նչ և անգամ լա-  
վանում է:

— Լավ, սպասիր, կատեսնես ի՞նչ կլինի: Նա ել չի  
լավանում: Նրա բանը, միևնույն է, վերջացած է, ինչպես  
և Մեֆ Պոտտերինը: Այդպես են նեղրերը ասում, իսկ նը-  
րանք գիտեն արդեն, չեկ:

Ու աղաները բաժանվեցին.

Յերբ Թոմը լուսամուտով մտավ նորից ննջարան՝ գի-  
շերն անցել եր գրեթե: Նա սուտ ու վուս հանվեց և ան-

միջապես քնեց, ուրախանալով, վոր վոշ-վոք չի խմացիլ  
իր գիշերային ճանապարհորդութունը: Նա հսկասեց, վոր  
խոմփացող Սիդը իրոք քնած չեր և զարթնել եր մի ժամ  
սուաջ:

Յերբ Թոմն աչքերը բաց արավ Սիդը վազուց հագնը-  
վել եր և գնացել: Լուսից և ամեն ինչից չերևում եր,  
վոր արդեն ուշ է: Թոմը զարմացավ: Ինչու իրեն չեն  
դարթնեցրել, չեն ստիպել, վոր վեր կենա, ինչպես ար-  
վում եր սովորաբար: Նրա սիրան ան ընկավ. վատ նա-  
խազգացումը պաշարեց նրան: Հինգ բոլորին մեջ հագնվեց  
ու իջավ ցած, թեև քունը տանում եր: Ամբողջ ընտանի-  
քը հավաքված-նստած եր սեղանի շուրջը, բայց նախա-  
ճաշը վերջացել եր արդեն: Վոշ մեկը վոշինչ շատավ Թո-  
մին, չհանդիմանեց նրան, բայց մորաքրոջ աչքերից նկա-  
տեց, վոր նա բան գիտի: Բոլորը լուս ելին, և բոլորն ել  
աջնալիսի հանդիսավոր տեսք ունեին, վոր հանցավորը սա-  
ռավ սարսափից: Թոմը նստեց և աշխատեց ուրախ լերևալ  
իդներ աշխատանք: Վոշ-վոք չժպտաց անգամ նրա կա-  
ռավների վրա, և նա ինքն ել լուսեց, զգալով, վոր անը  
պատում է սիրար:

Նախաճաշից հետո մորաքույրը սարավ նրան մի կողմ,  
և Թոմը գրեթե ուրախացավ, հույս ունենալով, վոր բանը  
ձեռով կվերջանա. բայց այդպես չեղավ: Մորաքույրը լաց  
լեղավ, հարցնելով, թե այդ ինչպես սիրա արավ իրեն  
այդպես վշտացնելու, ավելացրեց, թե նա հիմա կարող է  
անել, ինչ ուզում է. կկործանի իրեն և կխայտառակի մո-  
րաքրոջն ու գերեզման կտանի — ուստի և նրան ուղղելն  
անողուտ է, ինքն աչիս փորձ անգամ չի անի:

Դա ամեն տեսակի ձեռից վատ եր, և Թոմի սիրան  
այժմ ավելի չեր ցավում, քան նրա հոգնած մարմինը: Նա  
ինչն ել լաց լեղավ, ներողութուն խնդրեց, խոք տվեց  
ուղղվել և, վերջապես, թողութուն ստացավ, բայց զգաց,  
վոր մորաքրոջ ներումը լրիվ չեր, և նա շատ քիչ է վստա-

հուն իրեն: Նա տնից դուրս չեկավ և անպես դժբախտ եր համարում իրեն, վոր փորձ անգամ չարավ վրեժխնդիր լինել Սիդից, վոր մատնել եր իրեն, ուստի և Սիդն իզուր փախավ նրանից սան յետին դռնով: Թոմը զպրոց չեկավ ընկճված ու մռայլ և Պո Հարպերի հետ միասին կրեց ան պատիժը, վոր տվին յերեկ վոսկրախաղի համար:

Նա այդ պատիժը տարավ մի մարդու պես, վորի հոգին վշտահար է և մանրունքին անզգա: Իր տեղը վերադառնալով, նա ձեռները դրեց սեղանին, գլուխը ձեռքների վրա և, ձեռքը կծելով, տանջալից հայացք ուղղեց պատին: Նրա արմունկը դեմ եր առել ինչ վոր ծանր առարկայի, վորից նա ցավ եր զգում:

Բայց շուտով դիրքը փոխեց, հառաչեց ու վերցրեց այդ առարկան, վոր փաթաթված եր թղթի մեջ: Թոմը բաց արավ այն: Մի խոր, յերկար ու տանջալից հառաչանք թրուով նրա կրծքից, ու նրա սիրտը կտոր-կտոր յեղավ:

Դա պղնձե գնդակն եր:

Վերջին շուրջը կտարեց ուղտի մեջքը:

Կես որին սարսափելի լուրը տարածվեց հանկարծ փոքրիկ քաղաքում: Կարիք ել չկար հեռագրի, վորի մասին այդ ժամանակ չէին ել մտածում, — լուրը արագութեամբ՝ բերնե-բերան անցավ անե-տուն: Ի հարկե, աշակերտներին այդ որն արձակեցին զպրոցից. ամբողջ քաղաքը կզարմանար, չեթե ուսուցիչը շնասկանար այդ բանը: Սպանվածի կողքին գտան մի արյունոտ դանակ և, ինչպես պատմում էին, գտել էին, վոր դա Մեֆ Պոտտերինն է: Սոսում էին նույնպես, վոր զիշերը, ժամը յերկուսին մոտ, ուշ մնացած քաղաքացիներից մեկը, տուն դառնալիս, հանդիպել եր Պոտտերին՝ յերեսը առվում լվալիս, և վոր Պոտտերը, նրան տեսնելով, իսկուհն չբացել եր — կասկածելի հանգամանք, մանավանդ լվացվելը. դա սովորական բան չեր Պոտտերի համար: Սոսում էին նունպես, թե վոստիկանութունը խուզարկել ե ամբողջ քաղաքը՝ մարդասպանին գտնելու, բայց վոչ մի տեղ չեն կարողացել գտնել. թե բոլոր կողմերի վրա ձիավորներ են ուղարկված և շերիճը հավատացած ե թե վոճրագործին կբռնեն մինչ յերեկո:

Ամբողջ քաղաքը գնաց գերեզմանատուն: Թոմը մուռացավ իր տխրութունը և միացավ մյուսներին — վոչ թե նրա համար, վոր ուզում եր. նա գերադաս կհամարեր հազար մոտն հեռու լինել այդ տեղից, բայց նրան գեպի այնտեղ քաշում եր մի անբացատրելի ուժ: Գալով գերեզմանատուն, նա արանքը ձեղքելով առաջ գնաց և նորից

տեսավ սարսափելի պատկերը: Նրան թվում էր, թե իր աչտեղ լինելուց հետո ամբողջ հավիտենութուն է անցել: Մեկը կամ թից նրա ձեռք: Նա յետ դարձավ. կողքին կանգնած էր Հեկլերին: Նրանք աչքով արին իրար, հարցնելով, թե մեկը հո առանձին բան չնկատեց իրենց հայացքներում. բայց բոլորը տարված էին սարսափելի տեսարանով:

Խեղճ մարդ: Այս խրատ դիակ գողացողներին: Պոտտերին հո կկախեն, յեթե բռնեն: Ել կախազանից չի պլրծնի: Այս էր ընդհանուրի կարծիքը:

Թոմը վտտից գլուխ դողաց, տեսնելով հնդիկ Չոչի մոռյլ դեմքը մարդկանց բազմության մեջ: Այդ ժամանակ բազմութունը յետ-յետ գնաց և ձայներ լսվեցին:

- Նա յե, նա յե: Նա ինքը գալիս է:
- Ո՞վ, ո՞վ, — հարցրեցին քսան ձայն միասին:
- Մեֆ Պոտտերը:
- Տեսեք, կանգ առավ: Ա՛յ, յետ է դառնում: Բռնեցեք, թե չե կփախչի:

Ծառերին բարձրացած ավարա մարդիկ հայտնեցին, թե նա մտադիր էլ չի հեռանա, այլ շփոթված է և չգիտի ինչ անի:

— Ինչ անամոթութունն է, — նկատեց մեկը բազմության միջից. — յեկել է իր շարագործության վրա հիանալու, և չի կարծել, թե այս տեղ մարդիկ կլինեն:

Բազմութունը ձամբա բացեց, և հանդիսավոր կերպով գերեզմանին մոտեցավ շերիֆը՝ (գատավորը) Պոտտերի ձեռքից բռնած: Խեղճի վրա դեմք չկար, աչքերը լիքն էին սարսափով Սպանվածին տեսնելով՝ նա ամբողջ մարմնով դողաց յերեսը ձեռքով ծածկեց ու հեկեկաց:

Յես չեմ սպանել սրան, բարեկամներ, — ասաց նա հեկեկալով, — ազնիվ խոսք եմ ասում, յես չեմ սպանել:

— Իսկ քեզ ո՞վ է մեղադրում, — թնդաց մի ձայն: Նեաը դիպավ նշանին: Պոտտերը գլուխը բարձրա-


ցրեց և շուրջը նայեց հուզիչ հուսահատությամբ: Չոչին տեսնելով՝ նա բացականչեց:

— Ո՛, Չո: դու ինձ խոստացար, վոր չերբեր...

— Սա ձեր դանակն է, — ընդհատեց նրան շերիֆը, սպանության գործիքը նրա դեմքին մոտեցնելով:

Պոտտերը կրնկներ, յեթե շրոնելին ու կամացուկ չնստեցնելին գետին: Հետո նա ասաց.

— Սիրոս ասում էր, վոր յեթե չզնամ այնտեղ, և — չգտնեմ... — Նա ցնցվեց և, ձեռը հուսահատ շարժելով, ասաց: — Չո, պատմիր սրանց, — հիմի ել ինչ...



Հնդիկ Չոչի յերկու դռները:

Հեկլերին ու Թոմը, վախից լեզուները կպած, նայեցին մարդասպանին, իսկ այդ փորձված ստախոսը, առանց քաշվելու, պատմեց իր հնարած սպանության մասին: Տղաները յուրաքանչյուրը բռպե սպասում էլին, թե անա ուր վոր է պարզ յերկնքից կաջձակ կտրաքի և կսպանի:

մարդասպանին, ու դարձանուսմ իշին, թե ինչն է ու շանուսմ  
ասածու պատիժը:

Իսկ չերբ նա, պատմութիւնը վերջացնելուց հետո լեզ  
մնաց վողջ ու անփնաս, նրանց մեջ զարթնած՝ լերդուժը  
խախտելու և անմեղ Պոտտերին փրկելու ցանկութիւնն  
անցավ:

Մեկը հարցրեց Պոտտերից.

— Իսկ դու ինչն է չփախար ու չթագնվեցիր. ինչն է  
չեկար այտեղ:

— Չեյի կարող ուրիշ կերպ, չեյի կարող,— հեկեկաց  
Պոտտերը:— Ուզում եյի փախչել, բայց վոտներս բերի՛ր  
այտեղ:

Յե՛վ նորից հեկեկաց:

Հնդիկ Ջոն նույն պես հանգիստ ու անվրդով կրկնեց  
իր ցուցմունքը մի քանի ըոպե անց՝ հարցաքննութիւն  
ժամանակ, յերդուժով, և տղաները, տեսնելով, վոր չերե-  
կնային շանթը այնուամենայնիվ չխորտակեց նրան, համոզ-  
վեցին վերջնականապես, վոր մետիսը հոգին ծախել է սա-  
տանային: Նրանք սարսափելի վախենում եյին նրանից,  
բայց միևնույն ժամանակ նա այժմ նրանց համար ամե-  
նահետաքրքրական մարդն էր ամբողջ աշխարհում, և նր-  
բանք չեյին կարողանում իրենց կախարդված հայացքը կը-  
տրել նրանից:

Սարսափելի գաղտնիքը ու խղճի խայթը շաբաթից  
ավելի թոմին հանգիստ չեյին տալիս. գիշերները չեր կա-  
րողանում քնել, ու մի անգամ առավոտյան, նախաճաշին  
Սիդն ասաց:

— Թոմ, դու այնպես ես շուռ ու մուռ գալիս և քնի  
մեջ խոսում, վոր չես թողնում քնեմ. այսոր գիշերվա կի-  
սից չեմ քնել:

Թոմը գունատվեց և աչքերը ցած գցեց:

— Դա վատ նշան է,— լրջորեն ասաց մորաքույրը:—  
Ի՛նչ ունես, Թոմ:

— Վոչինչ, վոչինչ:

Սակայն նրա ձեռները այնպես դողացին, վոր սուր-  
ճը թափվեց:

— Ու այնպէս հիմար բաներ ես խոսում,— շարու-  
նակեց Սիդը:— Անցած գիշեր ասում եյիր. «Սա արյուն է,  
արյուն, այ թե ինչ է», ու շարունակ միևնույն բանն ես  
կրկնում: Հետո ասում ես. «Ինձ այդպես մի տանջեք—  
կասեմ»: Ի՛նչ կասես:

Ամեն ինչ պատվեց ու սահեց թոմի աչքերի առաջ:  
Դժվար է ասել ինչ կարող էր պատահել, բայց բարեբախ-  
տաբար, այդ ըոպելին մորաքրոջ գեմքից չքացավ  
անհանգստութիւն արտահայտութիւնը և նա, ինքն էլ չի-  
մանալով այդ, ոգնութիւն հասավ թոմին:

— Այդ բոլորը այն սարսափելի սպանութիւնից է:  
Յես ել եմ համարյա ամեն գիշեր չերագում տեսնում:  
Յերբեմն չերագումս այնպես եմ տեսնում, թե բժշկին յես  
եմ սպանել:

Մերին ասաց, վոր իրեն էլ հույնն է պատահում, և  
Սիդը, ըստ յերևույթիս բավարարվեց այդ բացատրու-  
թիւնը:

Թոմն շտապեց հեռանալ տնից առաջին իսկ հարմար  
առիթին և գրանից հետո մի շաբաթ շարունակ, ատամի ցավից  
գանգատվելով, գիշերները ծնոտները կապում էր թաշկինա-  
կով վոր քնի մեջ չխոսի: Նա չգիտեր, վոր Սիդը գիտամբ գի-  
շերները չի քնում և, չերբեմն, նրա թաշկինակի կապը թուլա-  
ցնելով և արմունկին հենվելով, ահանջ եր դնում չեղբոր խոս-  
քերին և հետո կսպն էլի ամրացնում: Թոմի խղճի խայ-  
թոցները և զրգուված վիճակը կամաց-կամաց մեղմացան.  
ատամի ցավից գանգատվելը ձանձրացրեց նրան և նա  
գլուխն այլևս չեր կապում գիշերը: Յեթե Սիդն էլ մի  
վորեւ բան չեղրակացնում էր չեղբոր քնի մեջ ասածնե-  
րից—վոչ-վոքի չեր ասում:

Այդ ծանր պահին Թոմն ամեն որ, կամ որ ու մեջ

հարմար բոլոր գանելով, մոտենում եր բանախի փոքրիկ վանդակավոր լուսամուտին և բանտարկված «մարդասպանին» ծածուկ քաղցր ուտելիքներ եր տալիս, ինչ կարողանում եր ձեռք բերել: Բանախի շենքը փոքր եր. շինված եր աղյուսից, ճահճի վրա, քաղաքի ծայրում: Բանտը պահապան չուներ, և քաղաքացիներ ել շատ քիչ ելին լինում: Այդ փոքրիկ նվերները զգալի կերպով հանգստացրին Թոմի լրիզը: Քաղաքացիները շատ ելին ուզում պատժել հնդիկ Ջոյին՝ դիակներ գողանալու համար. ուզում ելին նրա մարմինը կուպր բսել, փետուրներով պատել և այլպես քաղաքից դուրս քշել: Բայց նա այնպիսի սարսափ եր ազդում, վոր չեր գտնվում մեկը՝ այդ համարձակ քայլ անի, ուտախ այդ մտադրությունը մնաց: Հարցաքննության ժամանակ մետիսը յերկու անգամն ել իր պատմությունն սկսեց ուղղակի կովից, չհիշելով գերեզմանը սրբապղծելու և դիակը գողանալու մասին. այդ պատճառով ավելի լավ համարվեց առաջիմ դատարանում չբարձրացնել այդ խնդիրը:

XI


Թոմի վշտի վրա մի նոր վիշտ ել ավելացավ.— Բեկկի Տեչերը դադարեց դպրոց գալուց: Մի քանի որ Թոմն աշխատում եր իր վիշտը մոռացության տալ, բայց այդ նրան չաջողվեց: Նա սկսեց գիշերները պտտվել նրա տան շուրջը, և իրեն շատ դժբախտ եր զգում: Բեկկին հիվանդ եր: Յեթե հանկարծ մեռնի: Այդ միտքը հուսահատություն եր հասցնում նրան: Նա ել չեր հետաքրքրվում վոչ կովով, վոչ ծովային ավազակությունը: Կյանքի ամբողջ հմայքը չքացավ, մնաց միայն տխուր անհրաժեշտությունը: Նա թողեց մինչև անգամ խաղի շրջանակն ու փայտը. դրանք ել չելին ուրախացնում նրան:

Մորաքույրը, նրա առողջությունը մտահոգված, սկսեց նրան բժշկել, փորձելով նրա վրա ամեն տեսակ միջոցներ: Մորաքույր Պոլլին այն մարդկանցից եր, վորոնք հափըռտակվում են ամեն կարգի պատենտ ունեցող դեղերով ու նոր հնարած դեղորայքով, ու անդադար փորձեր եր առնում: Լենց վոր այդ ասպարիզում հայտնվում եր վորևե նոր բան, շտապում եր փորձել այդ նորը — վոչ թե իր վրա, վորովհետև ինքը չերբեր չեր հիվանդանում, այլ առաջին պատահողի վրա:

Այդ ժամանակ շրաբուժությունը նոր եր սկսվել: Մորաքույրը դեռ լույսը չբացված գարթեցնում եր Թոմին, սանում ցախատուն և մեծ քանակությունը սառը շուրթափում վրան և, քերիչի պես կոշտ սրբիչով այնքան եր սրբում, վոր մարմինը կարմրում եր. հետո փաթաթում եր

թաց սավանի մեջ և տաք վերմակներով ծածկում, վոր լավ քրտնի, և խեղճն այնքան եր քրտնում, վոր իր ասելով, «հոգու կեղտերը դուրս ելին գալիս մարմնի ծակոտիներով»:

Չնայած այդ բոլորին՝ տղան առաջվա պես դունատ-վում եր ու նիհարում, և շատ խղճալի տեսք ուներ: Մորաքույրը առաջինին միացրեց և տաք վանձաներ ու լողանք: Թոմն ելի մնում եր ընկճված ու տխուր: Մորաքույրն սկսեց ջրի մեջ գանազան դեղեր լցնել:



Մորաքույրը կարդում է բժշկական գրքեր:

Թողեց ջրարուժութիւնը և իր ամբողջ հուշը դրեց այդ նոր դեղի վրա: Թեյի ամբողջ գդալը լցնելով տվեց Թոմին խմելու և սրտատրոփ սպասեց հետևանքին: Նրա անհանգստութիւնն անցավ վայրկենապես և սիրտը հանգստացավ, վորովհետև Թոմի անտարբերութիւնը իսկուհն չքացավ: Յեթե Թոմին նստեցնելին կրակի վրա, նա չեր կարող

դրանից ավելի բուռն, կենդանի վերաբերմունք ցույց տալ դեպի փորձը:

Թոմն զգաց, թե ժամանակ ե իսկապես ուշքի գալու: Նա սկսեց գանազան միջոցներ խորհել իր վրան կատար-վող հետագա փորձերից ազատվելու և, վերջապես, վորո-շեց այնպես ցույց տալ, թե «ցավ կտրողը» իրեն ոգնեց: Ու այնքան շուտ շուտ եր խնդրում այդ դեղը, վոր մորա-քրոջը ձանձրացրեց, և նա կարգադրեց, վոր Թոմն ինքն ընդունի դեղը, չերբ ուզում ե, ու այլևս չեր նեղացնում նրան: Յեթե դա Սիզը լիներ, մորաքրոջ անխառն ուրա-խութեան մեջ անհանգստութիւն չեր լինի, բայց վորով-հետև բանը վերաբերում եր Թոմին, նա ծածուկ հետևում եր դեղի շին: Դեղն, իրոք, պակասում եր, բայց մորա-քույրը մտածեց, վոր Թոմն իր փոխարեն բժշկում ե հյուրասենյակի հատակի ճեղքը:

Մի անգամ, չերբ նա այդպես դեղը ճեղքն եր լցնում, մոտեցավ նրան մորաքրոջ դեղին կատուն, մլավելով ու ազահուլթյամբ գդալին նայելով, կարծես խնդրում եր հա-մը տեսնելու:

— Ո, Պիտ, մի խնդրի, քեզ համար անպետք բան ե: Բայց Պիտը հասկացնել տվեց, թե դա իրեն պետք ե:  
 — Տես, չսխալվես, — կփոշմանես...  
 Պիտը վստահեցրեց, թե չի փոշմանի:  
 — Դե վոր այդքան խնդրում ես — կտամ. չես ազահ չեմ. բայց տես, յեթե դուր չեկավ — մեղավորը դու չես: Պիտը համաձայնեց: Թոմը նրա բերանը բաց արավ և մի գդալ «ցավ կտրող» լցրեց մեջը: Պիտը ծուլ յեղավ մի գազ, մի սուր ճղավոց արձակեց ու դես ու դեն ընկավ սենյակում, դիպչելով կարասիներին: Ծաղկամանները գլորեց ու սարսափելի աղմուկ գցեց: Ապա սկսեց մոլե-դին ուրախութեամբ պարել յետին վոտների վրա, գլուխը յետ պցելով, և տնովը մեկ իր անասելի յերջանկութեան մասին վոռնալով, հետո նորից սկսեց դես ու դեն ընկնել,



քառս ու ավերածութիւնն տարածելով իր ճամբին: Մորաքույր Պոլլին ներս մտավ հենց այն բոլեյին, յերբ նա, մի քանի վերջին գլխկոնծին տալով, կատաղի մլալոցով դուրս թռավ բաց լուսամուտից, գցելով իր լեակից վողջ մնացած ծաղկամանները: Պառավը քարացավ դարմանքից, ակնոցի վերևից այդ տեսարանին նայելով, իսկ թոմը թավալվում էր հատակին ու ծիծաղում փորը բռնած:

— Թոմ, ասա խնդրեմ, ի՞նչ է պատահել մեր կատուին:

— Չգիտեմ, մորաքույր, — հագիվ շնչաց թոմը:

— Կյանքումս այդպես բան չեմ տեսել: Ինչո՞ւ չես այդպես անում:

— Իսկապես չգիտեմ, մորաքույր: Յերևի, կատունները միշտ այդպես պարում են, յերբ շատ գոհ, ուրախ են լինում:

— Մի՞թե այդպես է:

Մորաքրոջ ձայնի մեջ կար մի տեսակ բան, վորից թոմն զգաստացավ:

— Այո, մորաքույր: Այսինքն չես այդպես եմ կարծում:

— Կարծում ես:

— Այո, մորաքույր:


Պառավը կռացավ: Թոմը հետաքրքրությամբ ու տագնապով հետևում էր նրա շարժումներին, բայց չափազանց ուշ գլխի ընկավ, թե ի՞նչ է մորաքրոջ միտքը: Մահճակալի ծածկոցի տակից լերևում էր թեյի գդալը: Մորաքույրը վերցրեց այն և մոտեցրեց թոմի ջրին: Թոմն աչքերը ցած գցեց ու լեռ-լեռ դնաց: Մորաքույրը սովորական ձևով, բարձրացրեց նրան ու մասնոցով պինդ խփեց գլխին:

— Դե հապա, սիրելիս, բացատրիր, թե ինչո՞ւ լեռ տանջում այդպես անլեզու անասունին:

— Յես, նրան խղճալով դեղ տվի, վորովհետև նա չէ՞ վոր մորաքույր չունի:

— Մորաքույր չունի: Ինչե՞ր ես դուրս տալի, հիմար: Դա ի՞նչ կապ ունի քո արած հիմարության հետ:

— Մեծ կապ: Յե՞թե մորաքույր ունենար, մորաքույ-



Ընդհանուր սրբախուժում:

րը կհոգար նրա մասին: Առանց խղճահարվելու կվառեր նրա ներքը՝ ինչպես մարդու:

Մորաքույր Պոլլին հանկարծ թղձի խայթ գցաց իր բժշկութունը նրան պատկերացավ նոր լույսով, այն, ինչ վոր դաժան բան է կատուի համար, դաժան կարող է լինել և լերելսայի համար: Նա մեղմացավ ու խղճաց թոմին. աչքերում, նույնիսկ արցունք լերևաց և նա, տղոյի գլուխը շոյելով, ասաց սիրալիբ.

— Յես քո ոգտի համար եմ արել, թոմ: Յե՛վ դա քեզ իրոք վոր ոգնեց:

Թոմը լրջորեն նայեց մորաքրոջը:

— Գիտեմ, մորաքույր, վոր դուք իմ լավն ելիք ցանկանում, լես ել ախր Պիտի լավն եյի ուզում: Այդ հույն-

պես ոգուտ բերեց նրան: Յես դեռ յերբեք նրան այդպես ուրախ չեմ տեսել...

— Լավ, հերիք ե, Թոմ, հերիք ե, ինձ մի վշտացնի: Քեզ կարգին պահիր, խելոք մնա և ել դեղ ընդունելու կարիք չի լինի:

Թոմը դպրոց չեկավ դասից առաջ: Ուսուցիչը նկատեց, վոր այդպիսի անսովոր դեպքեր վերջերս կրկնվում են գրեթե ամեն օր: Այտոր ել, ինչպես միշտ վերջին ժամանակներս, փոխանակ ընկերների հետ խաղալու, Թոմը թրև եր գալիս բակում ու դարպասի մոտ: Նա հրաժարվեց խաղից, ասելով թե անառողջ ե, և տեսքն, իսկապես, բանի նման չեր: Նա այնպես եր ձևանում, թե նայում ե այս ու այն կողմ, բայց թուր ժամանակ իրոք նայում եր ճամբին: Հենց վոր հեռվում յերևում եր Ջեֆ Տեչերը, Թոմն ուրախանում եր, բայց մի ըոպե անգամ Ջեֆից չեր հեռանում, աշխատելով ամեն կերպ խոսեցնել նրան քրոջ մասին, բայց Ջեֆը բռն թողա յեր, նրա ակնարկները չեր հասկանում: Թոմը շարունակ սպասում ու սպասում եր, և աշխուժով եր լցվում ամեն անգամ, յերբ հեռվում մի պայծառ զգեստ եր տեսնում, և սկսում եր ատել նրան, ով հագած եր լինում այդ շորը, հենց վոր համոզվում եր, թե նա այն չե, ում սպասում եր: Վերջապես, ել շորեր չերևացին, և Թոմը վհատեց վերջնականապես: Տխուր ու մտազբաղ մտավ դատարկ դասարանը, նստեց իր տեղը՝ յերագելու և տանջվելու: Այդ ժամանակ դարպասի մոտ յերևաց ևս մի կանացի զգեստ, և Թոմի սիրտը արպպաց: Մի ակնթարթ—և նա բակումն եր արդեն, հնդիկի պես մոլեգնած. նա ձչում եր, բրբջում, վագում եր ընկերների յեռևից, վտանգավոր թռիչքներ եր գործում ցանկապատի վրայից, ման եր գալիս գլխի վրա—մի խոսքով ամեն տեսակ կատակներ ու հերոսական խաղեր եր անում, բոլոր ժամանակ աչքը Բեկկի կողմը, թե նա նայում ե արդյոք: Բայց Բեկկին, ըստ յերևույթին, վոչինչ չեր նկատում և նրա կողմն անգամ

չեր նայում: Միթե Բեկկին իրեն չի չել նայում: Նա իր խաղերի ասպարեզը տեղափոխեց Բեկկի մոտ, պատվեց նրա շուրջը մարտական կանչով, վերցրեց մի տղայի գլխարկ նետեց կտուրը, խուժելով մտավ տղաների բազմության մեջ, շարտեց նրանց այս ու այն կողմ և ինքը փովեց գետնին՝ Բեկկի քթի տակ, ու քիչ մնաց գետին գլորի նրան: Բեկկին շուռ չեկավ, քիթը բարձրացնելով, և Թոմը յսեց, թե ինչպես նա ասաց ընկերուհուն:

— Մի քանի տղաներ յերևակայում են, թե իրենք զարմանալի ճարտիկ են... բայց դատարկ պարծենկոտներ են...

Թոմը վեր կացավ կարմրած դեմքով և, գլուխը կախ գցելով, խորտակված սրտով գնաց դպրոց:

Թոմն ընկճված էր ու մռայլ: Նա ասում էր իրեն, թե ինքը մենակ է, բոլորից մոռացված և թե վոչ-վոք իրեն չի սիրում... Հետո, չերբ իմանան, թե ինչ տեղն են հասցրել իրեն, գուցե և խղճան... Նա ուզում էր լավ վարվել, բայց իրեն խաճագարում ելին... Յեթե ուզում են անպայման իրենից ազատվել—թող այդպես լինի: Նա կհեռանա, և թող վորքան ուզում են հայհոյեն... Ինչո՞ւ չհայհոյեն վոր: Մի՞թե մենակ, ամենքից մոռացված տղան իրավունք ունի դժգոհելու: Այո, նրան, վերջապես ստիպեցին վոժրագործ դառնալու... Այլ ընտրություն չկա... Այս մտքերով Թոմը հասել էր մարգագետնի ծայրը, չերբ նրա աղանջին դիպավ դպրոցի գանգի ձայնը, վոր աշակերտներին կանչում էր հեռձաշյա պարապմունքի: Թոմը լաց յեղավ մտածելով, վոր ել չերբեք-չերբեք չի լսելու այդ ծանոթ, գուրեկան ձայնը: Դժվար էր հաշտվել այդ հանգամանքի հետ, բայց անհրաժեշտ էր Գանի վոր նրան հրում, թողնում են բախտի քմահաճույթին, պետք է հնազանդել. բայց ինքը ներում է նրանց:

Թոմը հեկեկաց:

Հենց այդ րոպեին նա հանդիպեց իր մտերիմ բարեկամին՝ Ջո Հարպերին: Նա չել մռայլ էր և տրտում, ըստ յերևույթին, մի դառն վճիռ կար: Անկասկած, նրանց յերկուսի սիրտն էլ ճնշում էր միևնույն վիշտը: Թոմը թեքով սրբեց աչքերը և հայտնեց ընկերոջը, թե վորոշել է հեռանալ տնից, ուր իր հետ այնպես վատ են վարվում և

են կարծում: Ե, թողեք այդ: Չեմ ուզում ձեզ վշտացնել,—դուք բարեկամի պես եք վարվել ինձ հետ: Միայն այս կուզեյի ասել. —յեթե չեք ուզում բանտ ընկնել, մի խմեք, տղերք. խմած մարդն ինքն իր գլխի տերը չի: Մի քիչ մի կողմի վրա կանգնեցեք, այդպես. չերբ մարդ այսպես փորձանքի մեջ է, միխթարվում է բարեկամի յերես տեսնելով. իսկ ինձ մոտ, այստեղ վոչ-վոք չի գալիս, բացի ձեզանից: Դուք լավ տղաներ եք: Բարձրացեք մեկդ մյուսիդ մեջքի վրա, վոր կարողանամ շոշափել ձեզ: Այ այսպես: Դե հիմա ձեռք տուր. քոնը կմտնի վանդակից ներս, իսկ իմը շատ հաստ է: Փոքրիկ թույլ ձեռներ, բայց սրանք Մեֆ Պոտտերին շատ են ոգնել և ավելի կոզնեն, յեթե կարողանան:

Թոմը տուն գնաց բոլորովին դժբախտ և ամբողջ գիշեր սարսափելի յերագներ տեսավ: Յերկրորդ և յերրորդ որը նա առավոտից մինչև յերեկո պտտվում էր դատարանի



առաջ, ուզում եր ներս մտնել, բայց զսպում եր իրեն: Նույնն եր կատարվում Հեկի հետ: Նրանք ուղղակի խուսափում էին մեկը մյուսից: Յերկուսն էլ յերբեմն հեռանում էին, բայց անհասկանալի մի ուժ նորից յեռ եր մղում նրանց: Յերբ մեկը դուրս եր դալիս գատարանի դահլիճից և պատմում, թե ինչ է կատարվում այնտեղ, թո՛մն ազահուժյամբ վորսում եր յուրաքանչյուր խոսքը. բայց քանի գնում անմխիթար լուրեր էին դալիս. խեղճ Պոտտերն ավելի ու ավելի յեր խճճվում: Յերկորդ որը յերեկոյան քաղաքում: բոլորն այն կարծիքին էին, թե հնդիկ Ջոյի ցուցմունքը չի հերքված, և կասկածել անգամ չի կարելի, թե ինչ վճիռ կկտրեն յերգվայները:

Այդ գիշեր թո՛հե ուշ վերադարձավ տուն և, ինչպես կարգն է, ներս մտավ լուսամուտից: Նա սաստիկ հուզված եր և յերկար չկարողացավ քնել: Մյուս որն ամբողջ քաղաքը խմբվել եր գատարանի առաջ, վորովհետև դա մեծագույն՝ որ եր: Դատարանի դահլիճը լեփ-լեցուն եր: Յերկար սպասումից հետո՝ յերգվայները ներս յեկան և գրավեցին իրենց տեղերը: Քիչ հետո ներս բերին Պոտտերեն՝ գունատված, նիհար, շփոթված ու շղթայակապ, և նստեցրին գատապարտյալի նստարանին, վորտեղից տեսնելի յեր բոլորին: Աչքի ընկնող մի տեղ նստել եր հնդիկ Ջոն՝ հանգիստ, ինչպես միշտ: Նորից լուսվումն տիրեց, ապա ներս մտան գատավորները, և նախագահը նիստը հայտարարեց բացված: Փաստաբանները փոփոսցին իրար հետ. գրագիրները խշխշացրին թղթերը: Այդ բոլորն ստեղծեց հուզված, լարված սպասողականության մթնոլորտ: Առաջինը կանչվեց այն վկան, վորը Մեֆ Պոտտերին տեսել եր ձեռները առվի մեջ լվալիս այն որը, յերբ սպանությունը յերևան հանվեց: Նա վկայեց, թե իրեն տեսնելով, Մեֆ Պոտտերը թողել եր փախել: Մի քանի հարց ևս տալով՝ գատախազն ասաց պաշտպանին.

— Այժմ հերթը ձերն է:

Մեղադրյալը աչքերը բարձրացրեց, նայեց նրան, բայց խսկուն էլ իջեցրեց, յերբ պաշտպանը ասաց:

— Յես հարցնելու բան չունեմ:

Հետվյալ վկան ասաց, թե ինքը դանակը գտել եր սպանվածի դիակի մոտ: Յեվ գատախազի հարցին պաշտպանն էլի պատասխանեց.

— Յես վոչ մի հարց չունեմ:

Յերրորդ վկան յերգվեց, թե այդ դանակը հաճախ տեսել է Պոտտերի ձեռքը: Յև պաշտպանն էլի հրաժարվեց նրան հարցեր տալուց:

Ներկաների դեմքին դժգոհությունն յերևաց: Մա ինչ անսակ պաշտպան է: Միթե իր պաշտպանյալին ազատելու փորձ չի անելու:

Մի քանի վկաներ ապին, թե Պոտտերը, սպանության վայրը տարվելով, իրեն հանցավորի պես եր պահում: Փաստաբանը դրանց էլ թողեց, չառաջարկելով և վոչ մի հարց:

Դատախազը յելավ տեղից և ասաց.

— Միանգամայն բարեհուշս վկաները յերդումով հաստատեցին այն փաստը, վոր այդ սարսափելի վոճրագործությունը կատարել է վոչ այլ վոք. քան մեղադրյալի նստարանին նստած թշվառը: Ավելացնելու վոչինչ չունեմ այլևս:

Խեղճ Պոտտերը հառաչեց և յերեսը ծածկեց ձեռքերով, կամացուկ որորվելով: Դատարանի դահլիճում ճնշող լուսվումն տիրեց: Շատ տղամարդիկ հուզվեցին. կանայք լալիս էին խղճահարությունից:

Այդ ժամանակ վեր կացավ պաշտպանը:

— Նիստի սկզբում յես դիմամբ ուզեցի, — ինչպես և զգացնել ավի այդ, — ցույց տալ, թե իմ պաշտպանյալը այդ սարսափելի վոճիրը կատարել է խելքը գլխին չեղած ժամանակ, դառանցանքի մեջ, հարբած դրությամբ: Բայց

յես փոխել եմ իմ մտադրութիւնը և չեմ դիմելու յերդրվ-  
յալներէ ներողամտութիւն:

Յե՛վ նա դառնալով դատական պրիստավին, առաց.

— Ներս բերեք թո՛ւմ Սոյերին:

Բոլորի, գրանց թվում և Պոտտերի, դեմքը զարմանք  
պատեց: Ամենքը իրենց հալացքները հառեցին թո՛ւմին:  
Տղան բոլորովին շփոթված տեսք ունեւ: Նա սաստիկ  
դողում եր:

— Թո՛ւմա Սոյեր, դուք վորտե՞ղ ելիք հունիսի տա-  
լոթին, գիշերվա մեկ ժամին:

Թո՛ւմը նայեց— հնդիկ Ջոյի յերկաթյա դեմքին և նրա  
եզուն կպավ: Ունկնդիրները շունչները պահել էին,  
բայց վկան լուծ եր: Սակայն մի քանի ակնթարթից հե-  
տո՛ւ տղան այնպես տիրեց իրեն, վոր բոլորը լսեցին նրա  
հանդարտ պատասխանը:

— Գերեզմանատանը:

— Խնդրեմ, մի քիչ բարձր խոսեք: Մի վախե՛ք:  
Ուրեմն դուք գտնվում ելիք...

— Գերեզմանատանը:

Արհամարհանքի մի ժպիտ յերևաց հնդիկ Ջոյի դեմ-  
քին:

— Արդո՞ք դուք Հորս Վիլյամսի գերեզմանի մո-  
տերքը չելի՞ք գտնվում:

— Այո, սեր:

— Խնդրեմ, բարձր, վորքան մոտ ելիք գտնվում:

— Յերկու քայլի վրա, ինչպես այժմ դուք ինձանից:

— Դուք թագնվամ՞ ելիք, թե՞ կանգնած ելիք բաց-ար-

ձակ:

— Թագնված ելի:

— Վորտե՞ղ:

— Թղենիների յեռև, վոր գերեզմանի մոտ են:

Հնդիկ Ջոն հազիվ նկատելի ցնցվեց:

— Քեզ հետ ուրի՞շն ել կար:

— Այո, սեր, յես գնացի այնտեղ...

— Կանգնեցեք, սպասեք մի փոքր: Կարիք չկա այժմ  
ձեր ընկերո՞ջ անունը տալու: Ժամանակը զա՛ նրան ել  
կհարցնենք: Դուք ձեզ հետ մի բան տարե՞լ ելիք գերեզ-  
մանատուն:

Թո՛ւմը տատանվեց, բայց, ըստ յերևույթին, ամոթա-  
հար եր:

— Խոսեք, մի վախեք, ճշմարտութիւնը միշտ հար-  
գելի յե: Ի՞նչ ելիք տարել ձեզ հետ:

— Միայն... միայն սատկած կատու:

Դահլիճով ծիծաղ անցավ: Նախագահը զանգահարեց:

— Մենք վորպես ապացույց կներկայացնենք այդ  
կատուի կմախքը: Իսկ այժմ, բարեկամս, պատմեցեք բո-  
լորը, ինչ տեսել եք, բոլորը — ինչպես յեղել ե, առանց  
թագնելու, և վո՞չ մի բանից մի վախեք:

Թո՛ւմն սկսեց, սկզբում անվճռական, հետո հետզհետե  
վողկորվեց. խոսեց կենդանի ու սահուն. շուտով դահլի-  
ճում լսվում եր միայն նրա ձայնը, հասարակութիւնը  
բերանբաց, շունչը պահած, վորտում եր նրա լուրաքան-  
չուր խոսքը, չնկատելով ժամանակը, այնքան նա հափըշ-  
տակված ու ցնցված եր այդ պատմութեամբ: Ընդհանուր  
հուզումն իր գագաթնակետին հասավ, յերբ Թո՛ւմը հասավ  
սպանութիւն նկարագրութիւն. «Իսկ յերբ բժիշկը տախ-  
տակով խփեց Մեֆ Պոտտերին և նա ընկավ, հնդիկ Ջոն-  
դանակը ձեռքին հարձակվեց նրա վրա և...»:

Թրճիկ: Հնդիկ Ջոն՝ կայծակի արագութեամբ՝ նետ-  
վեց դեպի լուսամուտը, յետ շարտեց բռնել ցանկացողնե-  
րին ու չքացավ:

Թոմը մի անգամ ևս դարձավ հուշակավոր հերոս, հասակավորների սիրելին; Չահեղների նախանձի առարկան: Մինչև անգամ անմահության հասավ—անունը մամուլ ընկավ. տեղական թերթը հուշակեց նրան: Կալին մարդիկ, վոր կարծում էլին, թե նա անպատճառ նախագահ կգառնա, յեթե միայն առաջուց չկախեն նրան:

Բոլորը փայփայում էլին Մեֆ Պոտտերին և Չերմապես շնորհավորում, վոր կախաղանից փրկվեց:

Ցերեկը Թոմին շրջապատում էլին փառքն ու ցնծությունը, բայց գիշերները նա տանջվում էր խելահեղ սարսափներից: Շարունակ յերազում տեսնում էր հնգիկ Ջոյին՝ վրեժը հայացքում: Մութն ընկնելուց հետո վոչ մի զրավիչ բանով Թոմին չէր կարելի դուրս բերել տնից: Նույն վիճակի մեջ գտնվում էր և խեղճ Հեկը, վորովհետև ևս արժանահիշատակ դատի նախորդակին Թոմն ամբողջ պատմությունն արել էր փաստաբանին, և Հեկը սաստիկ վախենում էր՝ վոր իր մասնակցությունն այդ գործին հայտնի դառնա, թեև հնդիկի փախուստը ազատում էր նրան դատարանում ցուցմունք տալու տանջանքից: Ճիշտ է, փաստաբանը խոսք էր տվել լուելու, բայց դրանից ինչ: Նրանից հետո, յերբ խիղճը Թոմին գիշերը քշեց փաստաբանի տուն ու հարկադրեց սարսափելի յերգումով փակված շուրթերը բանալ և պատմել վոճիրի մասին, Հեկն այդ որվանից զրեթե կորցրեց հավատը դեպի մարդկությունն առհասարակ: Ցերեկը, լսելով Պոտտերի շնորհա

կալության գեղումները, Թոմն ուրախ էր, վոր գաղտնիքը բացել է. իսկ գիշերը ցավում էր, վոր չկարողացավ լեզուն բնումը պահել: Նա մերթ վախենում էր, թե հնգիկ Ջոյին յերբեք չեն բռնի, մերթ վախենում էր, թե կբռնեն: Նա հավատացած էր, թե ազատ շունչ կքաշի այն ժամանակ միայն, յերբ իր սեփական աչքերով այդ մարդուն կտեսնի մեռած:

Վորոնեցին, փնտռեցին ամբողջ շրջանում, պարզե առաջարկեցին հնդիկին բռնելու համար, բայց չգտան: Սեն-Լուից բերել տվին հրաշք-խուզարկուին: Նա դես ընկավ, դեն ընկավ, հոտոտեց, գլուխն որորեց և հասավ նույնպիսի գարմանալի հաջողության, ինչպես սովորաբար իր արհեստի մարդիկ, այն է՝ խորամանկ դեմքով հայտարարեց, թե «հետքը գտել է»: Բայց չէ վոր «հետքը» չի կարելի սպանության համար կախել, ուստի և խուզարկուի գնալուց հետո՝ Թոմն առաջվա պես իրեն զգում էր սարսափելի վտանգի մեջ:

Որերն անցնում էլին դանդաղ, բայց և այնպես ժամանակն անցնում էր, և Թոմին ճնշող տագնապը թեթևանում էր որեցոր:

Յուրաքանչյուր նորմալ աղայի կյանք ունենում է մի շրջան, յերբ նա անդիմադրելի ցանկություն է զգում հող փորել, նրա մեջ թաղնված գանձերը փնտռելու: Մի գեղեցիկ որ, այդպիսի ցանկություն ունեցավ և թոմը: Նա գնաց Ջո Հարպերին վորոնելու, բայց չգտավ: Հետո վորոնեց Բեն Ռոջերսին, բայց նա յեւ ձուկ եր բռնում: Վերջապես հանդիպեց Հեկ Փիննին: Հեկը—ահա ամենահարմար ընկերը: Թոմը նրան տարավ մի այնպիսի տեղ, ուր վոչ-վոք չեր լսել, և այնտեղ ամեն ինչ խոստովանեց: Հեկը հա մաձայնեց: Հեկը միշտ ել համաձայն եր մասնակցել ամեն մի նախաձեռնության, վորը խոստանում եր գվարձալի լինել և մեծ ծախս չեր պահանջում, վորովհետև նա այնքան ժամանակ ուներ, վոր չգիտեր ինչ անի, և իհարկե, իր մասին ել չեր կարող ասել, թե իր ժամանակը—վտակի չե:

— Վորտեղ պիտի քանդենք:

— Չանազան տեղեր:

— Միթե ամեն տեղ ել գանձեր են լինում թագնված:

— Իհարկե, չե, Հեկ: Գանձերը թաղում են հատուկ տեղեր—կղզիներում, կամ ճիճուակեր անդուկներում, մի վորեւե փթած ծառի տակ, հենց այն տեղում, ուր սավերն ընկնում է կես գիշերին. բայց ամենից շատ տների հատակի տակ, ուր ուրվականներ են լինում:

— Ո՞վ է թաղում:

— Իհարկե, ավազակները: Իսկ դու կարծում եյիր՝ ո՞վ—դարոցի վերակացունե՞րը:

— Չգիտեմ: Այդ գանձն իմը լինե՞ր՝ հողի մեջ չեյի թաղի,— փողը կծախսելի ու քեֆ կանելի:

— Յես ել: Բայց ավազակներն այդպես չեն անում. նրանք իրենց փողը միշտ թաղում են և այնտեղ թողնում:

— Յեվ հետո ել չեն վերադառնում վերցնելու:

— Չե, նրանք մտադիր են լինում վերադառնալ, բայց հետո, սովորաբար, նշանները մոռանում են կամ մեռնում, առանց գանձը վերցնելու: Ու գանձն այդպես ել մնում է ու ժանգոտում. հետո մեկը գտնում է մի գեղնած թուղթ, վորը ցույց է տալիս, թե ինչ նշաններով պիտի վորոնել. այդ թուղթն ել դեռ մի ամբողջ շաբաթ, յեթե վոչ ավելի, պետք է կարգասահականաս, վորովհետև բոլորն անհասկանալի նշաններ են լինում:

— Դո՞ւ յեւ այդպիսի թուղթ ունես, թո՞մ:

— Չե:

— Բա ինչպես ես իմանում նշանները:

— Ինձ նշաններ պետք չեն: Գանձերը միշտ թաղում են այնպիսի տան մեջ, ուր ուրվականներ են լինում, կամ կղզում, կամ ցցաչոր ծառի տակ, վորի մի ճյուղը դուրս ընկած է լինում: Մենք, հիշում ես, փորձեցինք Ջեկսոնի կղզում փորել և նորից կարող ենք փորձել. գետի այն կողմը կա մի հին տուն. ուր ուրվականներ են ապրում, և հենց այնտեղ ել մի խումբ չորացած ծառեր կան:

— Յեվ դրանց բոլորի տակ ել գանձ կա:

— Իհարկե, չե:

— Բա ինչպես ես իմանում, թե վորի տակ պիտի փորել:

— Բոլորի տակն ել կփորենք:

— Ե, թո՞մ, այդպես հո ստիպված կլինենք ամբողջ ամառը փնտռել:

— Ի՞նչ կա վոր: Բայց դրա փոխարեն, յերևակայիր,

կգտնենք մի պղինձ և նրա մեջ հարյուր դոլլար, կամ ճիճուակներ մի սնդուկ՝ գոհարներով լիքը: Այն ժամանակ քնչ կասես:

Հեկի աչքերը փայլեցին:

— Այ լավ ե: Ինձ համար—շատ լավ ե: Այն ժամանակ հարյուր դոլլարը կտաս ինձ, գոհարները կվերցնես քեզ—ինձ հարկավոր չեն:

— Շատ լավ: Իսկ յես գոհարները դեն չեմ գցի, կարող ես վստահ լինել: Դրանցից մի քանիսը արժեն՝ հատը քսան դոլլար, և չկա մեկը, վոր մի դոլլար չարժենա:

— Մի՞թե:

— Իհարկե. ում ուզում ես հարցրու: Դու մի՞թե գոհար չես տեսել, Հեկ:

— Վորքան հիշում եմ, չե: Բայց ինչ տեղ պիտի սկսենք փորել:

— Չգիտեմ: Չսկսե՞նք գետի այն կողմի չոր ծառի մոտից:

— Լավ:

Նրանք վերցրին բանն ու քլունդը և գնացին. մի քանի վերստ ճանապարհ պիտի կտրելին: Տեղ հասան կարմրած, հոգնած և պառկեցին մի թթենու տակ հանգստանալու և ծխելու:

— Ինձ այս դուր ե գալիս,—ասաց Թոմը:

— Ինձ ել,

— Լսիր, Հեկ, յեթե մենք այստեղ գանձ գտնենք, դու քնչ կանես քո բաժինը:

— Յես: Ամեն որ շաքարահաց կուտեմ և սողաջուր կխմեմ, իսկ յերբ ցիրկը գա, ամեն որ ցիրկ կերթամ: Յես սիրում եմ ուրախ ապրել:

— Մի՞թե մի բան չես պահի իբրև պաշար:

— Պահել: Ինչո՞ւ համար:

— Ի՞նչպես թե ինչու: Վորպեսզի հետո մի բանով ապրես:

— Ե, դա անոգուտ ե: Յեթե յես չշտապեմ այդ փողերը ծախսել, մի գեղեցիկ որ հայրս կվերադառնա և թաթը կդնի վրան: Ել դրանից հետո ապրուստ չի լինի: Հանգիստ կաց,—ամեն ինչ կմաքրագարդի: Իսկ դու քնչ կանես քո բաժինը, Թոմ:

— Յես մի նոր թմբուկ կանեմ, մի լավ սուր, կարմիր փողկապ, մի շան լակոտ-բուլ՝գոգ և կամուսնանամ:

— Կամուսնանամ:

— Այո:

— Թոմ, դու... խելքդ կորցրել ես:

— Համբերես՝ կտեսնես:

— Բայց դու հիմարություն ես ասում, Թոմ: Դրանից ավելի հիմար բան չեյիր կարող մտածել: Վերցրու իմ հորն ու մորը. առավոտից իրիկուն կուվում եյին: Շատ լավ հիշում եմ:

— Դա վոչինչ չի նշանակում. նա, վորի հետ կամուսնանամ, չի կուլի:

— Իսկ իմ կարծիքով, կանաչ բոլորը մեկ են: Չե, Թոմ, մի լավ մտածիր, ճիշտ եմ ասում—մտածիր: Աղջկա անունն քնչ ե:

— Կասեմ յերբեկցե, հիմա չե:

— Լավ, ինչպես գիտես: Միայն թե, յերբ ամուսնանաս, յես ավելի մենակ կմնամ, քան հիմա:

— Չե, Հեկ, դու կապրես մեզ հետ միասին: Դե, հերիք ե վորքան հանգստացանք,—արի փորենք:

Նրանք կես ժամի չափ քանդեցին, անգամ քրտնեցին, բայց վոչինչ չգտան. աշխատեցին ելի մի կես ժամ և դարձյալ անաշող: Վերջապես, Հեկն ասաց.

— Մի՞թե գանձերը միշտ այսպես խորն են թաղում:

— Յերբեմն, բայց վոչ միշտ: Մենք, յերևի այնպես չենք քանդում:

Նրանք ընտրեցին մի այլ տեղ և նորից սկսեցին փորել: Այժմ աշխատանքն այնքան արագ չեր կատարվում,



բայց ելի առաջ եր գնում: Քիչ հետո Հեկը դադարեցրեց աշխատանքը, հենվեց բահին, թևքով սրբեց ճակատի քրտինքը և ասաց.

— Հետո վերադառնալու ենք քանդելու, լերբ սա վերջացնենք:

— Յես կարծում եմ՝ չփորձենք արդյոք այլու տան յետևը գտնվող չոր ծառի տակ:

— Յես ել կարծում եմ, վոր այդ տեղը հարմար է: Բայց ինչ ես կարծում, այլին գանձը չի խլի մեր ձեռքից: Ձե վոր իր հողն է:

— Գանձը խլի մեզանից: Թող մի փորձի: Ձե, գանձըն աջակետ բան է, ով գտնի—նրան ել կպատկանի: Իսկ թե ում հողի վրա յե գտնված—մեկ է:

— Դա միսթարական էր: Նրանք շարունակեցին քանդել, բայց քիչ հետո Հեկն ասաց.

— Ձե, ինչպես յերևում է, մենք իսկական տեղը չենք քանդում: Ի՞նչ ես կարծում:

— Սա տարրինակ է, Հեկ, շատ տարրինակ, չեմ հասկանում: Գուցե կախարդներն են խանգարում: Այդ յերբեմն պատահում է:

— Վոնց չե: Կախարդները ցերեկը վոչինչ չեն կարող անել. ցերեկը նրանք ուժ չունեն:

— Ճիշտ է, ճիշտ. յես այդ մասին չեյի մտածել: Ո՞ր հիմա յեմ հասկանում, թե բանն ինչու՞ն է: Ի՞նչ հիմարն ենք յեղել: Ձե վոր առաջ պիտի գտնենք այն տեղը, ուր ծառի ճյուղքի շվաքն ընկնում է կես գիշերին, ու այնտեղ քանդենք:

— Ե՛, գու յել: Ուրեմն բոլոր ժամանակ իզուր աշխատեցինք: Հիմի ստիպված ենք մի անգամ ել գիշերը գալ այստեղ: Շատ հեռու յե... Ի՞նչ կարող ես անից դուրս գալ:

— Կարող եմ: Յեվ հետո այս բոլորը պիտի անել

վոչ-վոք չի համակրում իրեն. նա յել յերբեք չի վերադառնա: Ի վերջո, նա հույս հալածեց, թե Ձոն, յերևի, իրեն չի մոռանա:

Բայց պարզվեց, վոր Ձոն հենց հիմա ուզում երևույնը խնդրել թոմից և փնտռում եր նրան նույն նպատակով: Մայրը նրան ձեռնել է, նրա համար, վոր իբր սերուցք է կերել, այն ինչ ինքը չի յել փորձել և յերեսը յերբեք չի տեսել: Նա, հավանորեն, ձանձրացրել է մորը և նա ուզում է իրենից ազատվել: Յեթե այդպես է, նրան ել վոչինչ չի մնում, քան կատարել նրա ցանկությունը. նա հույս ունի, վոր մայրը յերջանիկ կլինի և յերբեք չի դղա, վոր իր տղային թողեց անտարբեր մարդկանց սառն աշխարհը, ուր նա տանջվելու յե և մեռնելու:

Տղաները տխրությամբ քայլեցին առաջ, խոսք տվին իրար, պաշտպանել միմյանց, ինչպես յեղբայրներ, և յերբեք չբաժանվել, մինչև վոր մահը կփրկի իրենց տանջանքից: Ապա սկսեցին ծրագրեր կազմել: Ձոն ուզում եր ձգնավոր դառնալ ապրել քարանձավում, սնվել չոր կեղևներով, և մեռնել ցրտից, կարիքից ու վշտից, բայց, թոմին յսելով համաձայնեց, վոր հանցագործ կլանքն ավելի ձեռնաու յե, և վորոչեց դառնալ ծովահեն՝ ծովային ավազակ:

Քաղաքից յերբեք մղոն հեռու, այստեղ, ուր Միստիպի գետը մղոնից ավելի լախություն է ստանում, կա մի յերկար ու նեղ անտառոտ կղզի՝ ավազոտ ծանծաղուտով — հիանալի մի տեղ ավազականոցի համար: Կղզին գատարկ է, անմարդաբնակ և ընկած հակառակ ավին մոտ, վորը ծածկված է խիտ, գրեթե կուսական անտառով: Լավ կշռադատելով՝ մեր հերոսները վորոչեցին այդ կղզին դարձնել իրենց բնակատեղին: Նրանք չեյին ել մտածում, թե ում դեմ են ուղղվու իրենց արշավանքները: Ապա փնտրուցին նրանք Հեկլբերի Ֆիննին և նա սիրով համաձայնեց միանալ նրանց. նրա համար միևնույն եր, թե ինչ

գործ կընտրի, միանգամայն անտարբեր եր: Նրանք բա-  
ժանվեցին, պայմանավորվելով հանդիպել գետի ափին, մի-  
տոանձնացած տեղ, գյուղից յերկու վերստ վերև, սիրած  
ժամին, այսինքն՝ կես դիշերին: Այնտեղ կար մի փոքրիկ  
փայտե լաստ. վորոշեցին գրավել: Պայմանավորվեցին, վոր  
լուրբքանչուրը վերցնի կեռեր ու կառթեր, նույնպես և  
կենսամթերք, ինչ վոր կարող են ձեռք բերել,—հնարա-  
վորութեան չափ՝ մութ ու խորհրդավոր ձևով, ինչպես վա-  
յել ե ավազակներին. և գեռ կես որ չեղած ամեն մեկը  
կարողացավ տարածել ընկերների շրջանում, թե շուտով  
«մի բան կլսվի» քաղաքում: Ու այն բոլորին, սև սավում  
եր այդ մութ ակնարկը, խնդրում ելին գաղտնի պահել և  
սպասել:

Կես դիշերին մոտ՝ Թոմը լեկավ պայմանավորված տե-  
ղը՝ խողի ապուխտ և ինչ-վոր մթերքներ բերելով. դրեց  
կանաչների մեջ, այն բլրի վրա, վորտեղից յերևում եր  
տեսակցութեան վայրը: Գիշերն աստղալից եր ու խաղաղ:  
Հսկա գետը հանդիստ եր, ինչպես քնած ովկիանոս: Թոմն  
ականջ դրեց—վնչ մի ձայն: Այդ ժամանակ նա սուրբ կա-  
մացուկ, յերկար: Նրան պատասխանեցին անտառից՝ նույն-  
պես սուրցով: Թոմը սուրբ ևս յերկու անգամ, նրան  
պատասխանեցին դարձյալ նույն կերպ: Այդ ժամանակ մի  
փոխված ձայն հարցրեց.

— Ո՞վ ե յեկողը:

— Թոմ Սոյերը, Սև Վրիժառուն: Տվեք ձեր անունը:

— Հեկ Ֆին—Կարմիր Ձեռք և Ջո Հարպեր—Ծովերի

Սարսափը:

Այդ անունները Թոմը վերցրել եր սիրած վեպերից:

— Լավ, ասացեք, պայմանական խոսքը:

Գիշերվա լուսթյան մեջ լսվեց միաժամանակ յերկու  
խոսքոտ շշուկ.

— «Արյուն»:

Թոմը բլրից ցած գցեց իր ապուխտը ու ինքը գլոր-

վեց նրա յետևից. փոքր ինչ վնասվեցին շորերը և ապուխ-  
տի կաշին: Բլրից կարելի չեր ափն իջնել մի լավ, հարմար  
արահետով, բայց նա, վորպես իսկական ավազակ, դերա-  
դասեց վտանգավոր ու դժվարին ճամբան:

Ծովերի Սարսափը նույնպես խոզապուխտ եր բերել  
և հաղիվ կարողացավ տեղ հասցնել: Ֆինը—Կարմիր Ձեռքը  
ինչ վոր տեղից մի փոքրիկ կաթսա չեր թուցրել և մի կա-  
պուկ կիսաշոր ծխախոտի տերև, նաև սիմինդի մի քանի  
ցողուն՝ ծխամորձ շինելու համար, թեև վոչ մի ծովահեն  
ծխախոտ չեր ծխում ու չեր ծամում, նրանից բացի: Սև  
Վրիժառուն հաշտարարեց, թե վոչ մի դեպքում չի կարելի  
առանց կրակի ճամբա ընկնել: Դա լավ միտք եր. լուց-  
կին այն ժամանակ շատ քիչ եր հայտնի: Տղաները հեռ-  
վում՝ յերկու հարյուր քայլ վերև կրակ նկատեցին մի լաստի  
վրա, ծածուկ գնացին այնտեղ և մի խանձող թուցրին:  
Նրանից նրանք մի ամբողջ արկած-պատմություն սարքե-  
ցին. շուտ-շուտ «հնչ» ելին անում իրար և ձեռները շրթե-  
րին դնում, լուսթյան հրավիրելով, բռնում ելին յերևա-  
կայական դաշույնների կոթը և շարագուշակ շշուկով մի-  
մյանց հրամայում, «թե հենց վոր «թշնամին» շարժվի,  
«դանակը մինչև կոթը խրել նրանց կուրծքը», վորովհետև  
«մեռելը չի կարող մատնել»: Նրանք շատ լավ գիտելին,  
վոր լաստավորները գյուղում քեֆ են անում, բայց և  
այնպես նրանք պարտավոր ելին իրենց ավազակավարի  
պահել:

Այնուհետև ճամբա ընկան: Թոմը կարգադրություն-  
ներ եր անում: Հեկը թիավարում եր քթի մոտ, Ջոն—գեկի:  
Թոմը ձևանում եր նավապետ. հոնքերը կիտելով, բարկա-  
ցած, ձեռքը կրծքին խաչած, կարգադրություններն եր  
անում խիստ, դաժան շշուկով:

— Քամու ուղղութեամբ:

— Լսում ենք, սեր:

— Ուղիղ, ուղիղ:

— Լսում ենք, սեր:

Բայց վորովհետև լաստը լողում էր գետի մեջտեղով, այդ բոլոր հրամանները արվում էին միայն ձևի համար և իրոք վոչինչ էլ չէին նշանակում:

— Վոր առագաստներն են բարձրացված:

— Ներքին, սեր:

— Բոլորը դուրս գան տախտակաձած: Շուտ: Վեց հոգի վերև: Շարժվեցեք:

— Լսում ենք, սեր:

— Բաց թողնել մեծ առագաստը: Շարժվեցեք, տղերք:


— Լսում ենք, սեր:

— Քամու ուղղությամբ: Մի կողմի վրա պահեցեք, — տեսնում եք դիմացից նավ ե գալիս: Չախ, դեպի ձախ: Դե, տղերք լեռանդով, միասին:

— Լսում ենք, սեր:

Լաստը մտավ գետի ուղիղ մեջտեղը, տղաները թողին նրան հոսանքով գնալու և թիակները ցած դրին: Հետևյալ ամբողջ ժամի ընթացքում նրանք դրեթե չխոսեցին իրարու հետ: Լաստը լողաց անցավ այն քաղաքի կողմից, ու նրանք ծնվել-մեծացել էին: Փոքրիկ քաղաքը հանգիստ քնած էր. այս ու այն կողմ լույսեր էին փայլում, բեկվելով ջրի մեջ, վորոնց խորքում ազամանդի պես պսպղում էին աստղերը: Բոլոր քաղաքացիները հանգրտանում էին, կասկած չտանելով անգամ, թե ինչ մեծ դեպք է կատարվում այդ բոպեյին: Սև Վրիժառուն դեկանդնած էր լաստի մեջտեղը, նայում էր վերջին անգամ այն տեղերին, ուր այնպես լավ էր ապրում առաջներում և վոր այնքան տանջվեց վերջին ժամանակներն, և ցանկանում էր, վոր բոլորը տեսնեն այժմ, թե ինչպես է նա լողում փոթորկալից ծովի միջով և անվախ նայում մահվան դեմքին: Յերևակայության մի փոքրիկ միզ, և Չեկսոնի կղզին հեռացավ անսահման: Յեվ Թոմը «վերջին անգամ» նայեց հայրենի քաղաքին կոտրած որտով, բայց

գոհ: Նրա ընկերները նույնպես նայեցին վերջին անգամ և ախքան լերկար՝ վոր քիչ մնաց կղզին անցնելին: Բայց ժամանակին նկատեցին վտանգը և զգուշացան: Գիշերվա ժամը լերկուսին լաստը ծանծաղուտ հանեցին՝ լերկու



Ծովահենները լաստի վրա:

հարյուր քայլ հեռու այն տեղից, ուր վորոշել էին բնակութուն հաստատել, և լերկար գնացին ու լեկան, մինչև վոր իրենց ամբողջ ապրանքը կրեցին այնտեղ: Իմիջի ալլոց՝ լաստից վերցրին հին առագաստը և անտառի մի խուլ անկյունում նրանով վրանի պես բան շինեցին, վոր կենսամթերքը ծածկեն, իրենք էլ վորոշեցին, լավ յեղանակին քնել բաց լերկնքի տակ, ինչպես վայել է ավազակներին:

Անտառի պոնկից քսան քայլ հեռու կրակ արին, ընթրիքի համար մի քիչ խոզի միս տապակեցին հետները վերցրած ամանով և կերան հացի հետ՝ միասին: Զարմանալի հետաքրքրական էր ընթրել «այդպես» ազատության մեջ,

կուսական անտառում, անբնակ կղզում, մարդկային բնակություններից հեռու. և տղաները խոսում ելին, վոր ալբա չեն վերադառնա դեպի կուլտուրական կյանքը: Կրքակի բոցը լուսավորում էր նրանց դեմքերը, կարմրավուն շողքեր էր գցում ծառերի հաստ բներին և խաղողի վորթի փայլուն կանաչներին: Յերբ կերվավ մսի վերջին կտորը և սպիտակ հացի վերջին թիքան — տղաները բավականությամբ մեկնվեցին կանաչի վրա: Նրանք կարող ելին գտնել ավելի զով տեղ, բայց չեին ուզում իրենց զրկել մի այնպիսի տեսարանից, ինչպիսին խարուկին էր:

— Հը, տղերք, միթե այսպես լավ չի, — ասաց Ջոն:

— Շատ լավ է, — պատասխանեց Թոմը:

— Ինչ կասեցին մյուս տղերքը, յեթե տեսնեյին:

— Ինչ: Նախանձից կմեռնեյին ուղղակի: Այնպես չի՞ չեկ:

— Իհարկե, — ասաց Հեկլբերին: Չգիտեմ, դուք ինչպես, յես վոր գոհ եմ: Սրանից ավելի լավը ինձ հարկավոր էլ չի: Յես սովորաբար իսկի կուշտ չեմ էլ ուտում... Յև հետո այստեղ վոչ-վոք էլ չի գա և իզուր տեղը մարդու չի ծեծի:

— Իմ ուզածը հենց այս տեսակ կյանք է, — հայտարարեց Թոմը: — Ել կարիք չկա վաղ վեր կենալ, դպրոց գնալ, ըվացվել և զանազան հիմարություններ անել — ել պրծավ...

— Իսկ ինչ են անում ծովահենները, — հարցրեց Հեկլ Ֆիննը:

— Ո՛ր, նրանք շատ ուրախ կյանք են վարում, նավեր են գերի վերցնում ու վառում, փողը թաղցնում են իրենց կղզու հողում, մի վորևե սարսափելի տեղ, ուր պահպանություն են անում ուրվականներ, կախարդուհիներ և ամեն տեսակ սատանաներ: Իսկ նավաստիներին ու ձամբորդներին սպանում են և ջուրը գցում:

— Իսկ կանանց տանում են իրենց մոտ՝ կղզին, — ավելացրեց Ջոն, — կանանց չեն սպանում:

— Այո, — հաստատեց Թոմը, — կանանց չեն սպանում: Նրանք չափազանց ազնիվ մարդիկ են: Յեվ կանայք միշտ պեղեցկուհիներ են լինում:

— Յեվ ինչ շքեղ հագուստներ են ունենում, — բոլորը վոսկով, արծաթով, գոհարով զարդարված, — բացականչեց Ջոն հիացմունքով:

— Ո՛վքեր, — հարցրեց Հեկլը:

— Ծովահենները:

Հեկլ Ֆիննը շփոթված նայեց իր սեփական հանդերձներին:

— Իմ շորերն սկի ավազակի շորեր չեն, — տխրությամբ ասաց նա, — բայց յես ուրիշ էլ չունեմ:

Տղաները մխիթարեցին նրան, ասելով թե շուտով և պեղեցիկ շորեր կունենա. հենց վոր իրենց արշավանքներն սկսեն, նրանք կունենան և՛ վոսկի, և՛ հագուստ, և՛ ամեն ինչ: Իսկ սկզբում ցնցոտիներն էլ պետք կզան, թեև սովորաբար հարուստ ավազակները, իրենց արկածներն սկսելով, նախապես վերցնում են համապատասխան հագուստներ:

Հետո հետե գրույցն ընդհատվեց. փոքրիկ փախստականների աչքերն սկսեցին «կուլ գնալ» և նինչը հաղթահարեց նրանց: Ծխամորձը դուրս բնկավ կարմիր Ձեռի մատներից, և նա քնեց վաստակած արդարի քնով: Ծովերի Սարսափն ու Սև Վրիժառուն այնքան շուտ քնեցին: Նրանք արդեն բոլորովին պատրաստ էլին քնելու, բայց ինչ-վոր մի բան չեր հանգստանում նրանց սրտում: Թիղձը տանջում էր նրանց: Նրանք սկսեցին մութ կերպով գիտակցել, վոր լավ չարին փախան, հետո գողացած միսը հիշելով՝ սկսվեց նրանց իսկական տանջանքը: Ամեն մեկն աշխատում էր հանգստացնել իր թիղձը, նրան հիշեցնելով թե իրենք պատահել է, առաջ էլ տասն անգամ կարկան-

գակ ու խնձոր են թուցրել մառանից, բայց խիղճը այդ պատճառաբանութիւնները համարում եր շատ թույլ ու չեր հանգստանում: Վերջում նրանք համոզվեցին, վոր կարկանդակ կամ խնձոր թուցնելը—գա կարևոր բան չի, բայց վերջնել ուրիշի ապուխտը, խոզի կողը, առհասարակ թանգարժեք մի բան—գա արդեն գողութիւնն է:

Ռեստի նրանք վորոշեցին իրենց սրտի խորքում: Թե քանի ծովահեն կմնան, նրանք իրենց ավագակալին պնտիվը չեն արատավորի ստոր հանցանքով—գողութիւնմբ: Այս պայմանով խիղճը համաձայնեց զինադադար կնքել, ու մեր ավագակները քնեցին խաղաղ:

### XIII

Առավոտը զարթելով թումը միանգամից գլխի չընկավ, թե վորտեղ է:

Նա նստեց, դիտեց շուրջը, աչքերը տրորեց և այդ ժամանակ միայն հասկացավ: Զով, գորշ առավոտ եր. լուսանում եր. անտառի անդորրն ու լուսթիւնը մարդու համակում եյին հանգստի քանչեի գգացումով: Վոչ մի տերև չեր շարժվում, վոչ մի հնչյուն չեր վրդովում քնութեան մեծագոյն խոհերը: Տերևների ու խոտերի վրա մարգարտանման ցող կար: Կրակը չեր կռում մոխրի սպիտակ շերտի տակ, և միայն կապույտ բարակ ծխի մի յերից եր բարձրանում ողում:

Զոն ու Հեկը դեռ քնած եյին: Անտառի հեռու խորքում մի թռչուն ճչաց, նրան պատասխանեց մի ուրիշը, փայտփորիկը թխկացրեց ինչ-վոր տեղ: Քանի պարզվում եր առավոտյան շունդաղը, ձայներն այնքան շատանում, ավելանում եյին,—կյանքն արթնանում եր ամենուրեք: Բնութիւնը, վոր թոթափում եր իրենից քունը և սկսում աշխատանքը, իր հրաշքներն եր ծավալում մտանոգ յերեխայի աչքերի առջև:

Հանկարծ, չգիտես վորտեղից, յերևաց մրջյունների մի ամբողջ թափոր, ու բոլորն սկսեցին աշխատել. մեկն ըսկսեց քաշաբար բարշ տալ սատկած, իրենից հինգ անգամ մեծ, սարդին ու աշխատեց բարձրացնել ծառի բունը:

Սև պուտերով գատիկը յելավ իր համար գլխապտուլտ բարձրութիւնն ունեցող ցողունի ծալը: Թումը թեքվեց դեպի նա և ասաց.

Չատիկ, գատիկ, գնա, թռիր դու տուն

Տունդ վառվում ե, ձագերդ կ'մնան անբուն:

Յև գատիկն իսկույն լսեց ու թռավ ձագերին նայելու: Այդ բանը թոմին չգարմացրեց. նրան վաղուց հայտնի չեր գատիկի թեթևամտությունը, և նա շատ անգամ եր խափել նրան, նրա պարզամտությունից ոգտվելով:

Այնուհետև լերևաց թրթի բզեզը՝ իր կտոր մարմինը հազիվ քաշ տալով, և թոմը ձեռ տվեց նրան տեսնելու, թե ի՞նչպես է թաթիկները սեղմելու մարմնին և մեռած ձևանալու:

Մինչ այդ թռչունները սարսափելի աղմուկ բարձրացրին: Ամերիկյան ձարեկը նստեց ծառին՝ թոմի գլխավերև, և լիակատար խնդուկյան մեջ սկսեց իր գեղգեղանքը, հարևաններին ծաղրելով: Կապույտ բոցի նման ողում լերեվաց ճչան բուն, նստեց տղաներին մոտ մի ճյուղի, գրլուխը թեքեց մի կողմի վրա և ազան հետաքրքրությունով աչքերը հառեց լեկվորներին: Արագ սլացավ մոխրագույն սկյուռը և նրա յետևից մի ուրիշ, մի քիչ խոշոր՝ աղվեսի ցեղի գազան: Նա ժամանակ առ ժամանակ կանգ եր առնում, վոր նայի անկոչ հյուրերին. այդ փոքրիկ գազաններն ամենայն հավանականությամբ, առաջուց լերբեք մարդ չեյին տեսել, և չգիտեին վախենան թե վոչ:

Ամբողջ բնությունը զարթնեց: Արևի ճառագայթները, նետերի պես, թափանցեցին խիտ սաղարթը. ողում լերեվացին մի քանի թիթեռներ: Թոմն արթնացրեց ծովահեններին, և լերկու բոպե անց նրանք վազվզում ելին միմյանց լեռեից ափի ավազներում: Նրանց չեր գրավում քաղաքը, վոր դեռ քնած եր հեռվում՝ շրերի ծավալուն հարթությունն այն կողմը: Գիշերը շուրը քշել-տարել եր նրանց լաստը, բայց տղաները նույնիսկ գոհ ելին դրանից: Գանշանակում եր մի տեսակ ալրել իրենց ու քաղաքակիրթ աշխարհի միջև չեղած կամուրջը:

Նրանք ճամբար վերադարձան սարսափելի թարմա-

ցած, առույզ և սաստիկ քաղցած. շուտով բոցավառվեց նրանց խարուկը: Հեկը վոչ շատ հեռու գտավ մի սառն աղբյուր, տղաները կայնու և ընկուկենու լայն տերևներից ջրամաններ շինեցին և գտան, վոր շուրը՝ լեռների անտառի անդորրության ու զովության հետ միասին՝ այնքան ել վատ չի փոխարինում սուրճին: Չոն սկսեց ապուխտ կտրտել նախաճաշի համար. բայց թոմն ու Հեկը խնդրեցին մի քիչ սպասել. ափին գտան առանձնացած մի տեղ և կառթ գցեցին: Վորսը շուտով լեկավ: Չոն համբերությունը դեռ չեր կորցրել, չեր նրանք վերադարձան մի քանի տեսակ ձկներով, վոր կարող եր մի ամբողջ ընտանիք կերակրել: Նրանք ձուկը տապակեցին ապուխտի հետ միասին ու գարմացած մնացին. դեռ լերբեք ձուկն տղքան համեղ չեր թվացել: Նրանք չգիտեցին, վոր գետի ձուկը ավելի լավ է տապակել բունելուց անմիջապես հետո, ու լերբեք չեյին մրմտածում այն մասին, թե վորքան համեղ համեմունք է ուտելիքին բացթյա քունը, վազվզոցը, լոզանքը և մանավանդ-քաղցը:

Նախաճաշելով՝ պառկոտեցին սովերում, թույլ տալով վոր Հեկը ծխամորճ ծխի, ապա միասին գնացին շրջակայքը հետախուզելու: Նրանք ուրախ-ուրախ քայլում ելին փթոց կոճղերի վրայից, անցնում ելին խիտ թփուտների միջից, ծառերի բների արանքով, վորոնց վարից-վեր փաթաթել-պատել եր վալրի խաղողի վորթը: Ժամանակ առ ժամանակ նրանք ընկնում ելին հաճելի տեղեր՝ գլխուխտ կանաչի գորգով ծածկված և ծաղիկներով զարդարված:

Նրանք գտան, վոր կղզին չերեք մղոն լերկարություն ունի և չորս մղոն լայնություն և վոր հակառակ ափը, վորին գուգահեռ ձգվում եր կղզին, բաժանված է նրանից մի նեղ հոսանքով, վոր հարլուր քալլ լայնություն ուներ: Նրանք յողանում ելին դրեթե յուրաքանչյուր ժամ և այդ պատճառով ճամբար լեկան կեսորից բավական ուշ: Նրանք չափազանց քաղցած ելին և այդ պատճառով ել ձուկ չբը-

նեցին, բայց առանց յայդ ել հիանալի ճաշեցին սառը ապուխտով. ապա նորից պառկոտեցին սովերում գրուցելու: Բայց խոսակցությունը շուտով ընդհատվեց և բոլորովին լռեց: Անտառի անդորրն ու հանդիսավոր լուսթյունը, մենակության զգացումը, մարդկանցից հեռու լինելը, — այդ բոլորն սկսեց ներգործել տղաների վրա: Նրանք մտածմունքի մեջ ընկան: Նրանց սիրտը սողաց մի անորոշ թախիծ, զարթեցնելով տան կարոտ: Անգամ Յիննը — Կարմիր Չեռքը — նա չեւ եր յերազում ծանոթ պատշգամբի և դատարկ տակաոնների մասին: Բայց ամեն մեկն ամաչում եր իր թուլությունից, ու վոչ մեկը սիրտ չեւ անում իր միտքը բորձրաձայն հայտնելու:

Վորոշ ժամանակ արդեն տղաները հեռվից ինչ-վոր մի առանձին ձայն ելին լսում, ինչպես մենք լեբեմնս քսում ենք ժամացույցի թիկ-թակը, հաշիվ չտալով մեզ, թե ինչ է դա: Բայց խորհրդավոր ձայնը կամաց-կամաց լսվեց ավելի պարզ և ուշադրութուն գրավեց: Տղաները ցնցրվեցին և ականջ դրին: Յերկար ու խոր լուսթյուն տիրեց, անխախտ մի անդորրություն. ապա հեռվից լսվեց մի խուլ ու վհատ «բում»:

— Սա ինչ բան եր, — շշուկով բացականչեց Չոն:

— Չեմ հասկանում, — նույնպես շշուկով պատասխանեց Թոմը:

— Իա, տղերք, կայծակ եր, — վախեցած հայտարարեց Հեկլերին, — նրա համար կայծակ...

— Չայնդ կտրի, — ձշաց նրա վրա Թոմը, — լսիր, մի դուրս տա:

Մպասեցին մի րոպե, վորը նրանց հավիտենություն թվաց, և ապա հանդիսավոր լուսթյան մեջ կրկնվեց նույն ստարոտի, խուլ «բում»:

— Գնանք, տղերք, նայելու:

Յերեքն ել ծուլ լեզան տեղներից ու վազեցին դեպի ափը, վոր նայում եր քաղաքի կողմը: Թփերը լետ տա-

լով նայեցին: Գետի մեջ-տեղը, քաղաքից մի մղոն ներքև, հոսանքով լողում եր մի փոքրիկ շոգենավակ, հոսանքն ի վեր և վար գնում-գալիս ելին բազմաթիվ մակուկներ, բայց տղաները չեյին կարողանում շոկել, թե ինչ են ասում նրանցում նստած մարդիկ: Հանկարծ շոգենավակից բարձրացավ սպիտակ ծխի մի սյուն, վոր դարձավ ամբողջ մի ամպ, և լերրորդ անգամ լսվեց նույն խուլ «բում»:

— Հիմի լես գիտեմ թե ինչ է լեղել, — բացականչեց Թոմը. — մարդ է խեղդվել:

— Դե, իհարկե, — ասաց Հեկլը, — նույնը լեղավ անցյալ ամառ, լերբ Բիլ Տեխերը կեղդվեց. այն ժամանակ ել եյին թնդանոթ արձակում ջրի վրա. ասում են, վոր ջրահեղձները այդ ձայնից ջրի յերեսն են դուրս գալիս: Հետո վերցնում են հաց, նրա մեջ դնում են արծաթ և պցում են ջուրը. ուր ջրահեղձն ընկած է լինում, այնտեղ ել հացը կանգ է առնում:

— Այո, լես լսել եմ այդ մասին, — նկատեց Չոն, — միայն չեմ հասկանում, թե ինչից է, վոր հացը այդպես կանգ է առնում:

— Այստեղ գլխավոր բանը հացը չի, — բացատրեց Թոմը, — այլ այն, թե ինչ խոսքեր են ասում քաբի վրա, լերբ ջուրն են պցում:

— Վոչինչ ել չեն ասում, — առարկեց Հեկլը. — ինքս տեսել եմ ջուրը պցելիս, վոչինչ ել չեն ասում:


— Զարմանալի լես... — ասաց Թոմը, — Բայց գուցե կամաց են ասում իրենց մեջ: Իհարկե, այդպես էլ կլինի: Այդ կարելի չեւ իսկույն հասկանալ:

Մյուսները համաձայնեցին, վոր Թոմը ճիշտ է ասում, վորովհետև դժվար է կարծել, վոր հասարակ հացի կտորը, առանց կախարդանքի, կարողանա ներգործել մի այդպիսի կարեվոր բանում:

— Ո՛ր, ինչպես կուզելի այնտեղ լինել, — բացականչեց Չոն:

— Յես ել, ձախակցեց Հեկը: Շատ կուզելի հմանալ  
նվ ե խեղդվել: Տղաները ահանջ դրած սպասում էլին:  
Հանկարծ թոմի գլխում մի միտք ծագեց:

— Տղերք, լես գիտեմ նվ ե խեղդվել: Մենք:  
Նրանք իրենց իսկուն հերոսներ զգացին: Յեվ ինչպես  
հպարտանալին: Իրենց վնասում են, իրենց լետեվից լաց



Մտրդ ե խեղդվել:

են լինում, իրենց մակուկներ են վորոնում, իրենց համար  
տանջվում են, զղջում են մարդիկ իրենց արածները, վոր  
անխիղճ են վերաբերվել կորած լերեխաներին. և խղճի  
խայթ են զգում. իսկ գլխավորը, վոր ամենից հարևորն է,  
նրանց մասին խոսում ե ամբողջ քաղաքը, նրանց նախան-  
ձում են բոլոր տղաները-այսինքն, իհարկե, նրանց հայտնի  
դառնալուն: Միթե հիանալի բան չե սա: Հենց մենակ  
սրա համար արժեք, վերջիվերջո, ավագակ գտնանալ:

Յերեկոյան մթնշաղին շոգենավակը վերադաձավ  
իր տեղը, մակուկները չբացան, իսկ մեր ծովահենները  
վերադարձան ձամբար: Նրանք ցնծում էլին, հպարտանում

իրենց փառքով և հարազատներին ու հարեաններին պա-  
ճառած գլխացավանքով: Նրանք ձուկ բռնեցին, լեփեցին,  
ընթրեցին ու աջուհետև սկսեցին յենթադրություններ անել  
թե ինչ են ասում ու մտածում իրենց մասին քաղաքում,  
ու պատկերացնում էլին ընդհանուր վշտի աջնալիսի տեսա-  
բաններ, վորոնց հաճությամբ կնայելին իրենք: Բայց լերը  
գիշերվա սովերները պարուրեցին նրանց, խոսակցությունը  
կամաց-կամաց դադարեց, լոեց: Յերեքն էլ սեեռուն նա-  
յում էլին կրակին և նրանց մտքերը, ըստ յերեվույթին  
թափառում էլին հեռուներում: Կասկածներ ծագեցին:  
Յերկուսի սիրտը անհանգիստ եր, յերկուսն իրենց դժբախտ  
էլին զգում. յերբեմն նրանց շուրթերից հոռաչանք եր  
դուրս թռչում: Մինչև անգամ Ջոն սիրտ արավ հարցնել  
ընկերներից, թե ինչ են կարծում նրանք տուն դառնալու  
մասին, — իհարկե. վոր վոչ թե հիմա, այլ...

Թոմը ծաղր ու ծանակի լենթարկեց նրան: Հեկը միա-  
ցավ թոմին, և խեղճ սառանվող հերոսը շտապեց բացա-  
տրել, թե ասաց այնպես, աշխատելով ամեն կերպ արդա-  
րանալ տան կարոտը քաշելու մեղազրանքից:

Սավարը թանձրանալու հետ՝ Հեկն էլ սկսեց ննջել  
և, վերջապես, խռմփացրեց, նրա լետեվից և Ջոն: Թոմը  
մի առժամանակ պառկած եր անշարժ, արմուռնկին հենած,  
և սեեռուն նայում եր ընկերների դեմքին, հետո նա զգու-  
շությամբ շոքեց և սկսեց կանաչների մեջ, կրակի լույսով,  
ինչվոր բան վորոնել: Գտավ կեչու սպիտակ կեղևի կտոր-  
ներ և ջուկեց յերկու ավելի հարմարը. ապա սկսեց, հենց  
կրակի կողքին, դժվարությամբ ամեն մի կտորի վրա մի  
քանի սող գրել իր սուրիկով: Դրանցից՝ մեկը վուրեց ու  
դրեց զրպանը, մյուսը Ջոյի գլխարկի մեջ, բացի դրանից  
նա գլխարկի մեջ դրեց մի քանի՝ դպրոցականի համար  
անգին բաներ, ինչպես որինակ կավիճի կտոր, ռետին.  
լերեք կառթ ու մի գնդակ: Ապա զգուշությամբ, վտանքի  
ծայրի վրա քայլելով մտավ ծառերի արանքը: Յերբ բա-  
վական հեռացել եր՝ սկսեց վազել դեպի ափը:



Մի քանի ընդե անց՝ թոմը շուրը մտած գնում եր  
 դեպի Իլինոյի ափը։ Նա անցավ կես ճամբան, նախ քան  
 շուրը կհասներ իր գոտկատեղը, բայց, հոսանքի պատճա-  
 րով, այլեվս չէր կարելի վտտով գնալ, և թոմն սկսեց լող  
 տալ. մինչև հակառակ ափը մտնում եր ընդամենը մի հար-  
 յուր քայլ։ Նա լողաց հոսանքի հակառակ, բայց շուրը նրան  
 քշեց ավելի արագորեն, քան սպասում եր։ Բայց և այնպես,  
 նա, վերջիվերջո, հասավ ափին և գետց նրա լերկարությամբ,  
 մինչև վոր հարմար տեղ գտավ դուրս գալու։ Այստեղ նա  
 ձեռքը կոխեց բաձկոնի գրպանը, համոզվեց վոր կեղևի  
 կտորը անփնաս ե, և ափն ի վեր գնաց անտառով, ուշ  
 չդարձներով, վոր շուրը կաթկթում ե շորերից։ Ժամը տա-  
 սին մոտ եր արգեն, լերը նա դուրս լեկավ գլուղի դիմա-  
 ցը գտնվող մի բաց տեղ և նկատեց բարձր ափի մոտ՝ ծա-  
 ռերի տակ կանգնած շոգենավակը։ Ամեն ինչ խաղաղ եր։  
 Աստղերի լույսով թոմը սուս ու փուս անցավ ափով,  
 լարված նայելով գետին, մի տեղ շուրն ընկավ լողաց մի  
 քանի քայլ և մտավ նավակը, վոր համենայն դեպս կապ-  
 ված եր շոգենավակի յետևի կողմից։ Թոմը պառկեց նա-  
 վակի հատակին՝ նստարանի տակ և սրտատրոփ սպասեց,  
 թե ինչ ե ինչելու։ Լավեց զանգակի ճաքած զնգոց, և մի  
 ձայն կարգադրեց. «Թո՛ղ»։ Մի ընդե անց շոգենավակի կողը  
 բարձրացավ նավակից վեր և լերկուսն ել ճամբա ընկան։  
 Թոմը լերջանիկ եր իր հաջողությամբ, կարծում եր, վոր  
 նավակն այդ ուրը տեղից չի շարժվի։ Անցան տասերկու

թե տասնուհինգ յերկար ընդեներ։ Շոգենավակի անիվ-  
 ները կանգ առան։ Թոմը դուրս լեկավ նավակից և մը-  
 թան մեջ լողաց դեպի ափը։ Վորպեսզի պատահական ան-  
 ցորդների չհանդիպի՝ ափը դուրս լեկավ իր ուղած տեղից  
 հիսուն քայլ ներքև, ընտրեց ամենագատարկ փողոցները,  
 և շուտով հասավ մորաքրոջ տուն։ Անցավ ցանկապատը  
 և մորաքրոջ ննջարանի լուսամուտից նայեց ներս, վորով-  
 հետեվ ախտեղ լույս եր լերկում։ Սենյակում նստած  
 էլին — մորաքույր Պոլլին, Սիդը, Մերին և Ջո Հարպերի մայ-  
 րը. նրանք գրուցում էին։

Նրանք նստած էլին մահճակալի մոտ, և մահճակալը  
 գտնվում եր նրանց ու դռան արանքում։ Թոմը մոտեցավ  
 դռանը և սկսեց զգուշությամբ փակը բանալ. ապա կամա-  
 ցուկ հրեց դուռը. դուռը ձոնչաց. նա շարունակեց  
 փակը սեղմել, ցնցվելով նրա ամեն մի ձայնից. վերջա-  
 պես, բացվեց բավական մեծությամբ մի արանք, վորով  
 նա կարող եր ներս մտ՝ ել չոքեչոք. նա գլուխը կոխեց ներս  
 ու սողաց։

— Այս ինչու մոմի բոցը այսպես յերերաց հանկարծ, —  
 ասաց մորաքույր Պոլլին։ (Թոմը սողաց ավելի արագ)։ Ով  
 դիտի դուռը բաց ե. Իե, իհարկե. զնա դուռը ծածկիր, Սիդ։  
 Թոմը հենց այդ ժամանակ խցկվեց մահճակալի տակ։  
 Մի առ ժամանակ շունչ քաշեց և ապա սողաց դեպի խո-  
 սողները, ու այնքան մոտեցավ, վոր կարող եր ձեռքը հաս-  
 ցնել մորաքրոջ վոտներին։

— Այո, այդպես ել ասի, — շարունակեց մորաքույր Պոլ-  
 լին, վոր նա վոչ շար. փոչ ել վատ տղա լեր, միայն շարածճի  
 լեր, թեթևադիկ. ինչպես բոլոր յերեխաները. թուշկուտում  
 եր քուռակի պես, միթե կարելի լեր խիստ լինել նրա հետ։  
 Նա լերբեք վոչ մի բան չէր անում շար մտքով, վոսկի  
 աիրտ ուներ։

Ցեվ մորաքույրը լաց լեղավ։  
 — Ծիշտ այդպես ել իմ Ջոն. միշտ պատրաստ եր

չարութիւններ անելու, բայց բարի յեր, բարի. ավելի բարի տղա չէր կարող լինել... Տեր, ներիր ինձ՝ մեղավորիս: Յերբ մտածում եմ, վոր սերուցքի համար ծեծեցի նրան, հետո այդ սերուցքը դեն ածի, վորովհետև թթվել էր... հենց վոր հիշում եմ, թե ել յերբեք չեմ տեսնելու նրան այս աշխարհում, յերբեք, յերբեք, յերբեք. Իմ խեղճ յերեխա:

Յե՛վ միտիս Հարպերը հեկեկաց այնպես, կարծես սիրտը կտոր-կտոր յեղավ:

— Յես հույս ունեմ, վոր Թոմն իրեն լավ է զգում այնտեղ, ուր գտնվում է, առայց Միդը: Նա յեթե մի քանի կողմով լավ էր հողի յերեսին...

— Միդ (Թոմն զգաց, թե ինչպես բռնկեցին մորաքրոջ աչքերը, թեև նա չկարողացավ այդ տեսնել)։ Մի համարձակվիր վատ բան ասել իմ Թոմի մասին, այն ժամանակ, յերբ նա չկա: Ո՛, միտիս Հարպեր, չեմ իմանում վճնց եմ տանելու այս ցավը: Ուղղակի չեմ կարողանում հավատալ, վոր նա այլևս չկա: Նա ինձ համար մեծ մխիթարանք էր, թեև տանջում էր ինձ:

— Այո, ծանր է, շատ ծանր է: Դեռ անցյալ շաբաթ որը Չոս խաղալիք—ատրճանակից կրակեց քթիս տակ, ու յես այնպես շրխացրի նրան, վոր վայր ընկավ: Չգիտեի այն ժամանակ, վոր շուտով... շուտով... Յեթե իմանալի, յես այն ժամանակ կհամբուրեյի նրան, կորհնելի...

— Այո, այո, ձեր զգացումները հասկանում եմ, միտիս Հարպեր, շատ լավ եմ հասկանում: Հենց յերեկ ճաշից առաջ Թոմն կատուին «ցավ կարող» էր խմացրել. խեղճ կենդանին այնպես էր պատեպատ դիպչում, ծուլուծուլ լինում-կարծում էյի տանն ել վողջ իր չի մնալու: Յես էլ, ներիր ինձ տեր, քիչ մնաց մատնոցով գլուխը ծակեմ: Իմ խեղճ յերեխա, իմ կորած-մեռած բալիկ: Ել հիմա վերջացան նրա բոլոր չարութիւնները: Յե՛վ վերջին խոսքը, վոր նա ասաց, հանդիմանութիւն էր...

Բայց այդ հիշողութիւնը չափազանց ծանր էր պառավի համար, և նա լաց յեղավ: Թոմը նույնպես լացակումեց, -ասենք, ավելի ինքն իրեն խղճալուց: Նա լսում էր, թե ինչպես է լաց լինում Մերին, ժամանակ առ ժամանակ քնքույշ խոսքերով իրեն հիշելով: Այդ բոլորը Թոմին բարձրացնում էր իր սեփական աչքում: Սակայն մորաքրոջ վիշտը նրան շատ հուզեց. նա ուզում էր դուրս գալ մահճակալի տակից և ուրախացնել նրան, նրա գիրկը ընկնելով: Բայց զսպեց իրեն, շարունակեց հանգիստ պառկել ու ականջ դնել խոսակցութեան: Հատ ու կտոր խոսքերից իմացավ, թե ինչպես էյին բացատրում իրենց անհայտացումը. սկզբում կարծել էյին, թե խեղդվել են լողանալիս, ապա բռնել են լսատից. հետո տղաներից մեկը հիշեց, վոր իրենց անհայտ կորած ընկերները խոստանում էյին շուտով ինչ-վոր բանով զարմացնել ամբողջ քաղաքը: Այդ ժամանակ իմաստունները, իրենց խելքին զոռ տալով, վորոշեցին, թե տղաները լսատ են նստել, վոր առաջին իսկ մտտիկ քաղաքում իջնեն. բայց կեսորին մոտ լսատը գտան ափի մոտ, գյուղից հինգ-վեց մղոն ներքև, և այդ ժամանակ բոլոր հույսերն ի դերև յելան. վճռեցին, վոր տղաներն, անկասկած, խեղդվել են,—այլապես սովը կստիպեր նրանց գիշերը, յեթե վոչ շուտ, տուն վերադառնալ: Ինչ վերաբերում է ապարդյուն կերպով դիակները վորոնելուն. այդ անաշոգութիւնը բացատրում էյին նրանով, վոր աղետը տեղի չէ ունեցել հենց գետի մեջտեղը, —այլապես տղաները, լավ լողորդներ լինելով, կարող էյին ափ դուրս գալ:

Չորեքշաբթի յերեկոն էր: Յեթե մինչև կիրակի դիակները չգտնվեյին, նշանակում է վոչ մի հույս չկա արդեն, և վճռված էր կիրակի որը հոգեհանգիստ կատարել: Այդ խոսքի վրա Թոմը ցնցվեց. նա պարսափ զգաց:

Միտիս Հարպերը, հեկեկալով, մնաս բարև ասաց և բալերը փոխեց դեպի դուռը, լաց կանգ առավ, և յերկու

վորդեկորույս կանայք, հանկարծակի փութկման ազդեցությամբ, նետովեցին իրար գիրկ ու լաց լեղան միասին, նախ քան բաժանվելը: Մորաքույր Պուլին քնելուց առաջ անսովոր քնքշությամբ համբուրեց Սիդին ու Մերիին. Սիդը հեկեկաց, իսկ Մերին հեռացավ արցունքն աչքերին:

Թոմն ստիպված լեղավ դեռ յերկար մնալ մահճակալի տակ, անգամ նրանից հետո, յերբ մորաքույրը պառկեց քնելու: Մորաքույրը բոլոր ժամանակ շուռ ու մուռ երանում, հագում և յերբեմն հառաչում խորտակված սրտով: Բայց, վերջապես, լուց և քնի մեջ յերբեմն միայն տնքում եր: Թոմը դուրս յեկավ մահճակալի տակից, զգուշությամբ վտար կանգնեց և ձեռով մոմի լույսը ծածկելով, յերկար նայում եր պառավին:

Թոմը հոգով-սրտով խղճաց նրան: Գրպանից հանեց կեղևի կտորը և դրեց մոմի մոտ, բայց հետո ինչ-վոր բան հիշելով, միտք արավ, կեղևը արագ թազցրեց նորից գրպանում և պայծառացած դեմքով կռացավ ու համբուրեց պառավի թոռնոմած շուրթերը: Ապա նուխնպես անձախ դուրս յեկավ, դուռն լետևից փակելով:

Նա մոտեցավ նավահանգստին, ուր սովորաբար կանգնում եր շոգենավը, և ափին մարդ չտեսնելով, համարձակորեն նավը բարձրացավ: Նա գիտեր, վոր նրա վրա մարդ չեր կարող լինել, բացի պահապանից, իսկ նա սովորութուն ուներ քաշվել խուցը ու պինդ քնել: Տղան արձակեց մակուկը, անխոս մեջը մտավ և սկսեց թիափարելով գնալ հոսանքով: Մի վերստ գնալով՝ գետը կրտրեց ու գնաց դեպի հակառակ ափը, և մակուկը մոտեցրեց այն տեղին, ուր հարկավոր եր, վորովհետև այդ բանին անսովոր չեր նրա համար: Նա շատ եր ուզում մակուկը յուրացնել, վորովհետև չե վոր դա լել վորոշ չափով նավ եր և, հետևաբար, ծովահենի որինակսն ավարը,

բայց նա գիտեր, վոր մակուկը կվորոնեն ամեն տեղ, և այդպիսով, կարող են իրենց հետքը գտնել:

Ուստի նա ուղղակի դուրս յեկավ ափը, նստեց անտառում, մի լավ հանգստացավ և, դժվարությամբ զսպելով իրեն, վոր չքնի, հոգնած-հոգնած գնաց նորից դեպի ընկերները: Գիշերն արդեն անցնելու վրա լեր, իսկ յերբ Թոմը տեղ հասավ, բոլորովին լուսացավ: Նա մի փոքր ել նստեց, մինչև վոր արևը չտաքացրեց՝ շուրն իր վուկե ճառագայթներով, ապա նետովեց գեան ու լողաց: Փոքր անց՝ նա, ամբողջովին թրջված ու իրեն թափահարելով, յեկավ ձամբար, հենց այն բոպեյին, յերբ Ջոն ասում եր.

— Ձե, Հեկ, Թոմը վստահելի տղա լե: Նա չի փախչի, կվերադառնա: Նա գիտի, վոր դասալքությունը ամոթ բան ե ծովահենի համար: Նա ինչ-վոր մի արկած ե հրնարել — անա բոլորը: Բայց թե ինչ — չգիտեմ:

— Իսկ, իրերն այնուամենայնիվ մերն են,

— Մերն են, Հեկ, բայց բոլորովին չե: Նամակում ասված ե, վոր մենք վերցնենք այդ իրերը, յեթե ինքը նախաձաշին չվերադառնա:

— Բայց անա և ինքը, — բացականչեց Թոմը հանկարծ հայտնվելով:

Իա թատերական հազվագյուտ եֆֆեկտ եր:

Շուտով նրանք նախաձաշեցին ապուխտով և ձկնով, և նախաձաշի վրա Թոմը պատմեց (առանց գոճնավորվելու) իր արկածները: Յերբ մինչև վերջը լսեցին պատմությունը՝ անսահման յեղավ մեր հերոսների մնափառությունը: Կշտանալով՝ Թոմը պառկեց սովերում՝ քնելու, իսկ մյուս ծովահենները գնացին ձուկ բռնելու և կղզին հետախուզելու:

Ճաշից հետո ավազակախումբը գնաց դեպի ամի կրիւ-  
այի ձվեր փնտռելու: Տղաները փախտերը խփում էին ա-  
վաղին և ուր փափուկ տեղ էլին գտնում, չոքում էլին  
ու սկսում ձեռներով ավազը քանդել: Պատահում էր մի  
փոսից միանգամից հանում էին հինգ-վեց աասնյակ ձու:  
Ձվերը բոլորովին կտր էին, ճերմակ, ընկուզից մի քիչ  
փոքր: Այդ ուր նրանք հիանալի ճաշ ունեցան և նույն-  
պիսի նախաճաշ մյուս ուրը առափոստան:

Նախաճաշից հետո նրանք սկսեցին թուշկատելով վա-  
զել ամին, միմյանց լետեից ընկած և վազելիս շորները  
հանելով. այդպես հանեցին մինչև վերջին շորը, ապա խա-  
զերն ու շարությունները շարունակեցին ջրում, կովելով  
հոսանքի դեմ, վոր լերբեմն գլորում էր նրանց, ինչ վոր  
առավել ևս ավելացնում էր նրանց ուրախությունը: Յեր-  
բեմն հավաքվում էլին իրար մոտ և, շուրը բուրը պցնե-  
լով, շարտում միմյանց լերեսի, յուրաքանչյուրը թշնամոն  
մոտենում էր գզուշությամբ, գլուխը լեա թեքած, վոր  
լերեսն ազատի շարտվող ջրից: Աերջացավ դա ընդհա-  
նուր պաշարով, և բոլորն էլ իրար փաթաթված, ձեռների  
ու վոտների կծիկ դառած, թավալվում էին գետնին՝  
անքալով, փնչացնելով, ծիծաղելով, թքոտելով և հազիվ  
շունչ քաշելով:

Ուժասպառ լինելով՝ դուրս յեկան ջրից, մեկնվեցին  
չոր ավազի վրա ու բոլորովին թաղվեցին մեջը, ապա  
նորից նեավեցին ջուրը, կրկին սկսեց նույնը: Հետո ա-

վազի վրա շրջան քաշեցին ու ցիրկ սարքեցին: Յիրկն ու-  
ներ լերեք ծաղրածու, վորովհետև վոչ մեկն էլ չեր ցան-  
կանում այդ նախանձելի գերը զիջել մյուսին:

Այնուհետև՝ իրենց գնդակները գտան և սկսեցին գա-  
նազան խաղեր, մինչև վոր ձանձրացան: Կամաց-կամաց  
ցրվեցին գանազան կողմեր, և յուրաքանչյուրը կարոտով  
նայում էր այն կողմը,  
ուր ընկած էր արևի շո-  
ղերով վողողված քա-  
ղաքը: Թոմը, ինքն էլ  
այս չնկատելով, մատով  
պրեց ավազի վրա Բեկ-  
կի. հետո իրեն բռնեց  
հանցադործության մեջ,  
գրածը ջնջեց և զայրա-  
ցավ իր թուշկության վրա,  
բայց իրեն գսպել չկա-  
րաց ու նորից գրեց այդ  
անունը, նորից ջնջեց և,  
վորպեսզի նորից գայթա-  
կուլության չենթարկվի,  
միացավ ընկերներին:



Ծովահենները վորոտում են կրիայի ձու:

Բայց Ձոն ընկճվել  
էր գրեթե անուսալի  
կերպով: Նա տան կարոտն այնպես էր քաշում, վոր ար-  
ցունքները հազիվ էր գսպում:

Հեկը նույնպես տխրել էր: Թոմն իրեն չեր կորցնում.  
նա ուներ մի գաղտնիք, վոր մինչև հարմար ժամանակը  
գալը չեր ուզում բանալ ընկերներին, բայց վորոշեց, վոր  
յեթե նրանց տխրությունը ցրել չկարողանա, կասի հենց  
հիմա: Յեվ արտաքին անհողությամբ սկսեց.

— Գիտեք ինչ, աղերք, գրազ կգամ, վոր այս կըզ-  
գում մեզանից առաջ էլ ծովահեններ են յեղել: Յեկեք մի

մի անգամ ել պատենք կղզին: Այստեղ, լեռնի, մի վորևե տեղ թագըրած դանձ կլինի: Ինչ կասեք, լեթե հանկարծ գտնենք կիսով չափ փթած մի սնդուկ՝ արծաթով ու վուկով լիքը:

Իաց այդ առաջարկը առանձին հիացում չառաջացրեց:

Թոմս ելի լեռի ու լեռեք գրավիչ առաջարկներ արավ, բայց նրա բոլոր փորձերն իզուր անցան: Թոմի ձեռները թուլացան: Չոն տխրությամբ ձեռնափայտը խրում եր ավազի մեջ, ու նրա դեմքը սաստիկ մռայլ եր: Վերջապես նա ասաց.

— Ե, տղերք, լեկեք վերջ տանք այս բոլորին: Յես ուզում եմ տուն գնամ: Այստեղ շատ տխուր ե:

— Ինչեր ես ասում Չո, կընտելանաս, — համոզեց Թոմը: — Մի մտածիր, թե ինչքան լավ ե այստեղ ձուկ բլուռնելը:

— Ինձ վոչ մի ձուկ ել հարկավոր չի, յես ուզում եմ գնամ տուն:

— Իսկ լողանալը: Չի վոր վոչ մի տեղ լողանալու համար այսպես հարմարը չես գտնի:

— Լողանալը չի ոգնի: Կիմի լողանալը ինձ դուր չի գալիս, լերք արգելող չկա: Յես ուզում եմ գնամ տուն:

— Թո՛ւ, ինչ հիմարություն ե Պատիկ ե, ուզում ե մորը տեսնի:

— Այո, ուզում եմ տեսնեմ: Դու լել կուղեյիր, լեթե մալը ունենայիր: Յես բոլորովին պատիկ ել չեմ — մենք հասակակիցներ ենք:

Յեվ Չոն կամացուկ հեկեկաց:

— Դե լավ, թող մեր լացկան յերեխան գնա տուն, մայրիկի մոտ. մենք նրան բաց կթողնենք, այնպես չի, Հեկ: Սեղճ փոքրիկ, մամային կարոտել ե: Ե, ինչ կա վոր, թող գնա: Դու հո հավանում ես այս տեղը, այնպես չե՞, Հեկ: Յես ու դու մե՞նք ենք այստեղ:

— Այո, — ասաց Հեկը անտարբեր:

— Յես ել ծանոթ չեմ քեզ, — հայտարարեց Չոն, վոտքի կանգնելով: — Այդպես ել իմացիր:

Նա մռայլ հեռացավ ու սկսեց հաղնվել:

— Մե՞ծ բան ե, — ասաց Թոմը: — Խնդրեմ: Այստեղ վոչ վոր ել քո կարիքը չի զգում: Գնա տուն, թող բոլորը վերադ ծիծաղեն: Լավ ծովահեն ես, խոսք չկա: Հեկն ու յես քեզ նման լացկան չենք: Մենք մնում ենք այստեղ, Հեկ, այդպես չե: Յե՞րե ուզում ե, թող գնա: Առանց նրան ել կմնանք:

Չոն, առանց պատասխանելու, մռայլ դեմքով շրերը հագավ: Թոմը, շնայած իր արտաքին արտահայտության, սրտի խորքում անհանդիստ եր և անգամ վշտացած: Ավելի ևս անհանգստացնում եր նրան Հեկի տեսքը, վոր լուռ ու տրտում նալում եր ընկերոջ ձամբա ընկնելու պատրաստության: Չոն հագնվեց և, առանց մնաս բարև ասելու, գնաց դեպի Իլինոյի ավեր Թոմի սիրտը բեկվեց. Նայեց Հեկին, բայց Հեկը չկարողացավ դիմանալ նրա նայվածքին ու աչքերը խոնարհեց, ապա ասաց.

— Յես ել եմ ուզում գնամ, Թոմ: Մի տեսակ ձանձրալի յե դարձել այստեղ, իսկ հիմի ավելի ձանձրալի կլինի: Մենք ել գնանք, Թոմ:

— Գնա, լեթե ուզում ես. յես չեմ գնա: Յես մնում եմ:

— Թո՛ղ, ավելի լավ ե յես գնամ:

— Գնա, ո՞վ ե քեզ խանգարում:

Հեկն սկսեց հավաքել իր ցրված իրերն, ասելով.

— Գնանք, Թոմ: Իսկապես մի լավ մտածիր: Մենք քեզ կպատենք ափին:

— Ստիպված կլինեք շատ լեռկար սպասել:

Հեկը տխրությամբ հեռացավ: Թոմը կանգնել-նալում եր նրա լետեից, սաստիկ ցանկություն զգալով՝ հպարտությունը դնել մի կողմ և գնալ նրանց լետեից: Հույս ունեք,

Թե տղաները կանգ կանոնեն, բայց նրանք դանդաղորեզ ավելի ու ավելի հեռացան: Հանկարծ Թոմը նկատեց, վոր շուրջը դարձավ անսովոր դատարկ ու լուռ: Նա վերջնականապես հաղթահարեց իր ինքնասիրութիւնը ու վազեց ընկերների յետևից, գոչելով.

— Կանգնեցեք, կանգնեցեք: Բան ունեմ ասելու:

Տղաները կանգ առան: Թոմն սկսեց իր գաղտնիքը պատմել. նրանք լսեցին թթված գեմքերով, քանի դեռ գլխի չեղին ընկել, թե խոսքն ինչին է վերաբերում, բայց չերբ գլխի ընկան—սկսեցին ուղղակի խնդմնալ ուրախութիւնից, գտնելով, վոր «գարմացք» բան է և, յեթե նա այդ բանը առաջուց ասեր, նրանք հեռանալու մասին չեղին ել մտածի:

Տղաներն ուրախութեամբ յետ դարձան և սկսեցին նորից խաղալ, բոլոր ժամանակ խոսելով Թոմի անսովոր վարմունքի վրա և հիանալով նրա մեծ խելքով: Չվերից ու ձկնից կազմված համեղ ճաշից հետո՝ Թոմն ասաց, թե այժմ ուզում է ծխել սովորել: Չոն հայտարարեց, թե ինքն ել կփորձի: Հեկը ծխամորձեր շինեց ու յցրեց: Մինչև այժմ այս յերկու սկսնակը ծխում էին միայն խաղողի տերեւից շինած սիգարներ, բայց դրանք լեզու էլին «կծում» և ընդհանրապես տղամարդուն արժանի բան չեղին:

Նրանք գետնի վրա ձգված, արմուկներին հենած սկսեցին ծուխը ներս քաշել: Միի համը անհաճո չեր, և նրանք փոքր ինչ խեղդուկ զգացին, բայց և այնպես Թոմը հայտարարեց.

— Սա հո բոլորովին հեշտ բան է: Առաջուց իմանայի՛ հիմի վաղուց ելի ծխել:

— Յես ել, — ձայնակցեց Չոն: Բոլորովին դատարկ բան է:

— Քանի-քանի անգամ ուրիշներին ծխելիս տեսնելիս՝ մտածում ելի «այ յես ել սովորեմ», բայց հավատա-

ցած ելի, թե չի աջողվի: Յես միշտ այդպես եմ, այնպէս չի, Հեկ: Իու լսել ես չե: Այ թող Հեկն ասի:

— Այո, հարյուր անգամ եմ ասել: Մի անգամ հիշում ես, սպանդանոցի մոտ եր: Մեզ հետ եր և Բոբ Տենները, Չոննի Միլլերը և Չեֆ Տեչերը: Հիշում ես, Հեկ, ինչ ասի:

— Այո, հիշում եմ: Իա այն որն եր, յերբ յես զընգալս կորցրի... Չե զրա առաջին որը:

— Այ, Հեկը հիշում է:

— Կարծում եմ՝ յես այնպես ծխամորձ կարող ելի ծխել ամբողջ որը, — ասաց Չոն:— Միրոս չի խառնում սկի:

— Իմն ել, — ասաց Թոմը:— Յես կարող ելի ամբողջ որը ծխել, բայց զրազ կզամ, վոր Չեֆ Տեչերը չի կարող:

— Չեֆ Տեչերը: Նրա բանը չի: Թող հլամի փորձի:

— Նա, իհարկե, չի կարող. Չոննի Միլլերն ել չի կարող: Կուզելի մի տեսնիլ, թե վսնց է ծխելու:

— Ե, նրա ինչ բանն է: Նա վոր մի բան ել չի կարողանում:

— Ճիշտ է Չո: Լսիր. այ յեթե մեր ընկերները մեզ տեսնելին հիմա:

— Այ, ինչպես կուզելի: Լսեցեք, աղերք, մարդու բան չասեք: Իսկ յերբ մի անգամ բոլորը հավաքված կլինեն, յես կմոտենամ քեզ և կասեմ. «Չո, ծխամորձ ունես. ծխել եմ ուզում»: Իսկ դու կպատասխանես անփուլթ, այնպես, իբր թե խոսքը դատարկ բանի մասին է: «Այո, հին ծխամորձս է և մի ուրիշն ել կա, — բայց ծխախոտս վատ տեսակի յես»: Իսկ յես կասեմ. «Իա միևնույն է, միայն թե թունդ լինի»: Յեմ այն ժամանակ դու ծխամորձերդ կհանես և յերկուսով կծխեսք, իբրև սովորական բան, — թող նայեն:

— Այ ծիծաղ բան կլինի հա, Թոմ: Կուզելի, վոր այդ բանը լիներ հենց հիմա:

— Յես ել: Իսկ յերբ նրանց ասեսք, թե ծխել սովոր-

բել ենք՝ ծովահեն լեղած ժամանակ՝ տես զհնց են նախան-  
ձելու:

— Ի հարկե: Հասկանալի յե:

Ոստակցութունը շարունակվեց այսպես. բայց հետզ-  
հետե թուլացավ և սկսեց ընդհատվել: Ընդմիջումները դար-  
ձան լեռկար: Բայց թքի քանակը չափազանց ավելացավ:  
Մանն մեկի բերանը դարձավ մի ամբողջ աղբյուր: Հագիվ  
եյին կարողանում լեզվի ներքին հարկը մաքրել, վոր հե-  
ղեղի առաջն առնեն: Չնայած բոլոր ջանքերին՝ կոկորդ-  
ները լցվում եր, և ամեն անգամ դրանից հետո, սիրտներն  
սկսում եր խառնել:

Յերկու սկսնակն ել գունատվեցին. շատ վողբալի  
տեսք ունեցին նրանք: Մխամորճն ընկավ Ջոյի թուլացած  
ձեռներին, Թոմինը—նույնպես: Յև, վերջապես, Ջոն ասաց  
թուլ-թուլ.

Յես դանակս կորցրել եմ, պետք ե գնամ փրն-  
տուելու:

Թոմը դողացող շուրթերով և ընդհատվող ձայնով ա-  
սաց.

— Յես կոզնեմ քեզ: Իու գնա այս կողմի վրա, յես  
կերթամ դեպը՝ դեպի գետը: Չե, Հեկ, դու մեր լետեից մի  
գա, ինքներս կգտնենք:

Հեկը նստեց իր տեղը և սպասեց ժամից ավելի: Հե-  
տո ձանձրացավ և գնաց ընկերներին վորոնելու: Նա դը-  
տավ նրանց անտառում, իրարից բավական հեռու. լեր-  
կուսն ել գունատ ելին և կարծես քնատ: Բայց ինչ-վոր  
մի բան թելադրեց նրան, վոր լեթե առաջ նրանք իրենց  
վատ ելին զգում, ալժմ այդ պատճառը վերացել ե:

Այդ յերեկո ընթրիքին յերկուսն ել չեյին խոսում,  
նայում ելին մի տեսակ ամաչկոտ և, յերբ Հեկը, ընթրի-  
քից հետո իր ծխամորճը լցրեց և առաջարկեց նույնն ա-  
նել նրանց համար, յերկուսն ել հրաժարվեցին, պատճառ  
բերելով իրենց անառողջութունը, — ով զիտի ճաշին ինչ  
կերան՝ փասեց:

XVI

Կես գիշերին մոտ Ջոն արթնացավ և զարթեցրեց ըն-  
կերներին: Ողում կանգնած եր շարագուշակ սոթ, հեղ-  
ձուկ: Տղաները հավաքվեցին իրար գլխի և մոտեցան կրա-  
կին, թեև գիշերը շատ տաք եր: Նստել ելին հանգիստ և  
թեթևակի ականջ ելին դնում: Սարուկից դենը ամեն  
ինչ խավարի մեջ եր:

Հանկարծ ինչ-վոր մի բան փայլեց, լուսավորեց սա-  
ղարթն ու չքացավ, ապա նորից փայլատակեց ավելի պալ-  
ժառ և ելի, ելի: Ծառերի տերևների միջով թուլ հառա-  
չանքի պես մի բան անցավ. աղաներն իրենց այտերին զգա-  
ցին ինչ-վոր մի շունչ ու դողացին, մտածելով, թե դա  
«գիշերվա վողին» անցավ: Հետո խաղաղվեց: Յեվ նորից  
հանկարծ կայծակի շարագուշակ փայլը, վոր անսովոր պալ-  
ժառութամբ լուսավորեց խոտի ամեն մի ցողունը խա-  
րուկի մոտ և յերեք գունատ, վախեցած մանկական դեմքեր:  
Անտառով կայծակ անցավ ու լոցեց, հեռվում լուռ արձա-  
գանք տալով: Փչեց մի սառը քամի, սոսափեց ծառերի  
տերևները միանգամից և մոխիրը շաղ ավեց խարուկի  
շուրջը:

Նորից շողաց փայլակը, և նույն վարկյանին կայծակը  
խփեց: Տղաներին թվաց. թե այդ վորոտից ծառերն ըն-  
կնելու լեն իրենց գլխին: Վերջապես խավարի մեջ նրանք  
սարսափով սեղմվեցին իրար: Տերևներին թակեցին անձ-  
բի առաջին խոշոր կաթիլները:

— Ծնւտ, աղերք, վրանը մտեք, — ձայն ավեց Թոմը:

Նրանք սկսեցին ցրված վագել, ծառերի արմատներին դիպելով: Անտառում սարսափելի փոթորիկ էր. ամեն ինչ ճռնչով ու անոցով կռանում էր նրա գրոհի ա-



հին առագաստը նրանց պիտավերև: Փոթորիկը քանի գընում սաստկանում էր. վերջապես, քամին պոկեց առա-

ռաջ. կայծակները փայլատակում էին գրեթե անընդհատ, մեկը մյուսի լետեկից, չեմ չուրաքանչյուրի հետ մի խլացուցիչ վորուտ: Անձրևը թափվում էր, կարծես կժերից:

Տղաները ձշարով կանչում էին իրար, բայց փոթորկի վրոնոցը և կայծակի հարվածները խլացնում էին նրանց ձայները: Մեկը մյուսի լետեկից վրանը հասան և ծածկվեցին նրա տակ՝ դողահար, ըերծված ու մինչև վերջին թելը թրջված. շուրջ առվի պես, գնում էր նրանց շորերից, բայց ամեն մեկն ուրախ էր, վոր դժբախտության ընկեր ունի: Նրանք խոսել չէլին կարող, լեթե անգամ փոթորիկը չխլացներ նրանց ձայնը, — այնպես կատաղի յեր թափահարվում

գաստը և նա պտույտներ գործեց փոթորկի բերանը ընկած: Տղաները, միմյանց ձեռ բռնած, շուտ-շուտ վալք ընկնելով, վագեցին մտան ափին կանգնած մի մեծ կաղնու պաշտպանության տակ: Այժմ տարերքի պայքարը լեռուն վիճակի մեջ էր: կայծակի անընդհատ փայլատակումներից ամեն բան յերևում էր անսովոր պայծառությամբ. անձրևի թանձր քողի միջից յերևում էին կոացած ծառերը, հորդացած գետը՝ փրփուրից սպիտակ և մյուս ափին գտնվող բարձր ժայռերի ուրվագծերը: Յերբեմն անտառի մի վորևե հսկա, շառաչունով ընկնում էր գետին՝ ջահել ծառերին ջարդելով իր շուրջը. կայծակի չթուլացող վորտան այժմ ընդմիջվում էր հատ ընդհատ, սուր, չոր պայթյուններով, վոր մարդու հոգի լցնում էլին անասելի տարսափով: Վերջում փոթորիկը լարեց իր բոյոր ուժերը և ալեկոծվեց անորինակ կատաղությամբ. թվում էր կտորկտոր է անելու կղզին. վառելու չէ այն, ծառերը արմատահան է անելու և գետնի յերեսից սրբելու: 'Իս մի սարսափելի գիշեր էր անոթեան յերեսաների համար:

Բայց պայքարը, վերջապես, դադարեց և տարերքներն սկսեցին հանգստանալ: կայծակի վորտաները հետզհետե խլացան և անտառում կանաց-կամաց լուռթյուն տիրեց: Տղաները վերադարձան իրենց ձամբարը՝ կարգին վախեցած, բայց պարզվեց, վոր նրանք այնուամենայնիվ բախտավոր են լեղել, վորովհետև այն մեծ թեղին, վորի տակ միշտ գիշերում էլին նրանք, կայծակահար էր յեղել գիշերը և տղերքը կորած կլինելին, լեթե մնային նրա տակ:

Ձամբարում ամեն ինչ թրջվել-շուր էր դառել: կրակը հանգել էր. տղաները, իրենց թեթևամտության շնորհիվ, միջոցներ չէլին ձեռք առել ձամբարը պահելու: 'Իս շատ անախորժ բան էր, վորովհետև յերեքն էլ թրջվել էլին մինչև վոսկորները և գողում էլին ցրտից: Նրանք շատ ափսոսացին, բայց հետո նկատեցին, վոր կրակը մտել էր մոտը գտնվող կոճղի տակը, և վոր մի քանի ամուխներ



գեո չեյին թըջվել: Տղաներն սկսեցին չոր ցախ ու կեղև հավաքել պաշտպանված ծառերի բների տակից և, վերջացես, նրանց համառ շանասիրության շնորհիվ, հաջողվեց կրակը նորից վառել: Կրկին գրին մեծ-մեծ ճաղափայտեր, վառեցին մի ամբողջ խարուղի և նորից վողի առան: Կրակի վրա շորացրին թըջված ապուխտը և ընթրեցին, ապա շարվեցին խարուղի շուրջը և մինչև առավոտ խոսում էին իրենց արկածի մասին. քնելու տեղ, միևնույն է, չկար, փորովհետև շուրջը չկար և վոչ մի չոր տեղ:

Արևի առաջին ճառագայթների հետ՝ նինջն սկսեց հաղթահարել մեր հերոսներին և նրանք պանկեցին գետափին, թաց ավազների վրա:

Յերբ արևը կարգին վառեց նրանց, վեր կացան և ընկճված սկսեցին նախաճաշ պատրաստել: Բայց ուտելուց հետո չէլ իրենց շարքված զգացին. նրանց ամբողջ մարմինը կոտորավում էր. տան կարտար նորից տիրեց նրանց:

Թամը վանեց իրենից այդ կարտարը և անում էր ամենը, վոր ընկերներին ուրախացնի: Բայց նրանց չեյին մխիթարում վոչ զնգակները, վոչ ցիրկը, վոչ լողանքը: Նա հիշեցրեց նրանց մեծ գազանիքը և աջողվեց, այդպիսով, ուրախության նշույլ հարուցել: Թոմն ողավեց գրասից և շտապեց հետաքրքրել նրանց իր նոր մտքով, առաջարկելով առժամանակ թողնել ավազակութունը և բազմազանության համար դառնալ հնդիկներ: Այդ միտքը գրավիչ թվաց. անմիջապես մերկացան և, փոսից գլուխ սև ցեխ քսելով իրենց, դարձան գեբրերի պես շերտավոր. նրանք բոլորն ի հարկե, առաջնորդներ էլին. բոլորը միասին գնացին անտառ, վոր հարձակվեն անգլիական գյուղի վրա:

Կամաց-կամաց բաժանվեցին յերեք թշնամի ցեղերի — ուղմական կոչերով զուրս թռան թագաոցներից ու հարձակվեցին իրար վրա, սպանելով հազարավորներ թշնամու բանակից: Տաք կռիվ էր և տղաները գո՛ մնացին:

Ընթրիքի ժամանակ յեկան ճամբար՝ քաղցած, բայց

յերջանիկ: Բայց այստեղ մի դժվարութուն ծագեց. իրար թշնամի հնդիկները չեյին կարող միասին հաց կտրել, նախանական հաշտութուն չկնքելով միմյանց հետ. իսկ այդ ժամանակ ուղղակի անկարելի էր չծխել խաղաղության չիքուխներ: Յերբեք չեյին լսել, թե հաշտութուն կնքելիս կարելի էր առանց դրան: Նրանցից յերկուսը գրեթե ավստոացին, թե ինչու ծովահեն չեյին մնացել: Բայց այլ ընտրանք չկար և նրանք աշխատելով, վորքան այդ հնարավոր է՝ ուրախ յերևալ, սկսեցին հերթով չիբուխ ծխել:

Յեվ ինչ: Վերջում նրանք ուրախ յեղան, վոր վայրենի էլին դարձել, վորովհետև այնուամենայնիվ դրանից մի բան շահել էլին, պարզվեց, վոր նրանք այժմ կարող են մի փոքր ծխել. և յեթե դրանից մի քիչ վատ զգացին իրենց, բայց դա այնքան էլ լուրջ անհարմարութուն չեր: Հասկանալի յե, նրանք շտապեցին ողավել այդ բարեհաջող հանգամանքից և ընթրիքից հետո, սիրտ թեթևացնելու փորձը կրկնեցին լիակատար աջողությամբ, վորի շնորհիվ յերեկոն շատ հաճելի անցավ:

Բայց այնքան ել ուրախ չեր փոքրիկ քաղաքը շաբաթ որվա խաղաղ լերեկոյան: Հարպերները և մորաքույր Պոլլիի ընտանիքը՝ վշտահար ու արտասովալից աչքերով սև հագան: Փոքրիկ քաղաքը անհասարակ շատ ել աղմկալից կյանք չունեի, իսկ այժմ այնտեղ տիրում եր անսովոր լուսթյուն: Քաղաքացիները ցրված-շփոթված կատարում ելին իրենց սովորական գործը և հաճախ հառաչում: Յերեխաներին ծանր եր թվում շաբաթորյա հանգիստը: Սաղերն առաջ չելին գնում, և հետեղհետե լերեխաները բոլորովին հրաժարվեցին խաղերից:

Մի լերկս Բեկկի Տեչերն տխուր նստել եր դպրոցի բակում և, փոչ մի բանի մեջ մխիթարություն չգտնելով, խոսում եր ինքն իր հետ:

— Գոնե նրա նվիրած պղինձե կրճակը պահելի, թե չե նրան հիշելու բան չունեմ:

Բեկկին փղձկաց, ապա շարունակեց.

— Այդ հենց այստեղ եր... Ո՛ր, լեթե կարելի լիներ մեր հանդիպումը, յես նրան ել այդպես շար խոսքեր չեյի ասի: Բայց նա չկա, և յերբեք, յերբեք ել չեմ տեսի նրան:

Այդ միտքը տանջում եր նրան և նա հեռացավ արցունքն աչքերին:

Հետո լեկավ տղաների ու աղջիկների մի ամբողջ խումբ, բոլորը թոմի դպրոցական ընկերները, և բոլորը ցանկապատի մոտ կանգնելով ու մեռածների հարգելու

համար ձայները իջեցնելով հիշեցին, թե ինչպես թոմը այս եր անում, այն և ինչ ե ասել Ձոն. ու նրա յուրաքանչյուր խոսքի մեջ այժմ տեսնում ելին շարագուշակ մարգարեյությունը: Յեվ ամեն մի հիշող ցույց եր տալիս ճիշտ տեղը, ուր կանգնած են լեղել կորած տղաները, միշտ ավելացնելով. «Իսկ յես կանգնած ելի ճիշտ այնպես, ինչպես կանգնած եմ, իսկ նա ինչպես դու յես կանգնած, ու նա ժպտաց այսպես և յես դրանից հանկարծ ինձ այնպես վատ զգացի, հասկանում եք: Դե, այն ժամանակ, իհարկե, չեյի հասկանում, թե դա ինչ ե նշանակում, բայց այժմ հասկանում եմ»:

Վեճ ծագեց այն մասին, թե ով ե վերջին անգամ վողջ-կենդանի տեսել տղաներին. շատերն իրենց ելին վերագրում այդ տխուր պատիվը, բայց նրանց խոսքերն ավելի կամ պակաս չափով հերքվում ելին մյուս վկաների ցուցմունքներով. յերբ, վերջապես պարզվեց, թե վերջին տեսնողը ովքեր են լեղել, այդ վերջանիկները հպարտացան, իսկ մնացած տղաները նայեցին նրանց նախանձով: Մի տղա, ավելի լավ բան չգտնելով, հայտարարեց նկատելի հպարտութամբ.

— Թոմ Սոյերը մի անգամ մի լավ ծեծեց ինձ:

Բայց նրա՝ իրեն փառքով ծածկելու փորձը անհաջող անցավ: Նույնը կարող ելին ասել տղաներից շատերը, այնպես վոր նրա դափնիները չափազանց եժանագին դուրս լեկան: Սումբը ցրվեց, շարունակելով ակնածանքով հիշել կորած հերոսներին:

Միուս առավոտ, դպրոցի զբաղումները վերջանալուց հետո, սովորական զանգահարության փոխարեն, լավեց լեկեղեցու զանգի խաղաղ ու ճիգ ծնգոցը: Մեկը մյուսի լետից լեկեղեցի ելին գալիս ծխականները, կանգ ելին առնում շեմքում, վոր շուկով խոսեն տխուր դեպքի մասին: Վոչ-վոչ չեր հիշում, վոր փոքրիկ լեկեղեցին յերբեկցե այդքան լիբը լիներ: Հանկարծ լուսթյուն տիրեց, և

յեկեղեցի մտավ մորաքույր Պոլին՝ Սիդի ու Մերիի հետ միասին. նրա յետեից՝ Հարպերների ընտանիքը—ամբողջովին: Բոլորը, մի մարդու նման, զրանց թվում և քահանան, վեր կացան հարգալիր և կանգնեցին այնքան ժամանակ, մինչև վոր կորածների հարազատները հաստեցին առաջի նստարանին: Ապա նորից տիրեց լուռություն, վորն ընդհատվում էր միայն զսպված հեկեկանքներով:

Վերջապես քահանան ձեռները տարածեց և ժամերգութունը սկսվեց:

Յերգեցին մի հուզիչ աղոթք, վորից հետո քահանան քարոզ ասաց:

Նա կորած տղաներին ներկայացրեց այնպիսի արժանավորութունների և հազվագյուտ շնորքի տեր, վոր յեկեղեցում ել մարդ չմնաց, վոր չափսոսար նրանց և խղճի խալթ չզգար, վոր ինքը համառորեն աչք է փակել խեղճ տղաների արժանավորութունների վրա և նրանց մեջ տեսել է միայն պակասութուններ ու արատներ:



Քահանայի ձառը հետզհետե ավելի հուզիչ զարձակ, հավաքված ծխականներն ավելի խանդաղատեցին և, վերջապես, ամբողջ խմբով միացան հարազատների լացին. քահանան ինքն ել, չկարողանալով հուզումը զսպել, լաց յեղավ ամբիոնում:

Յեկեղեցու վերնահարկում ինչ-վոր աղմուկ լսվեց,

վորի վրա վոչ վոք ուշադրութուն չդարձրեց. մի ըոպե անց՝ մուտքի դուռը ձոնչաց: Քահանան արցունքոտ աչքերը բարձրացրեց թաշկինակից վեր և զարմանքից քարացավ:

Այդ տեսնելով՝ նույն կողմը նայեցին մյուսը, յերրորդը... մի ակնթարթ և բոլոր ծխականները, մի մարդու պես, վեր կացան տեղներից ու նայեցին յերեք հանգուցյալներին, վոր դեպի բեմն ելին գնում. Թոմն առաջ, Չոն նրա յետեից, իսկ վերջում Հեկը, վոր ընկճված նայում էր իր շրջերին, վորոնցից ցնցոտիներ ելին մնացել միայն: Նրանք բոլոր ժամանակ վերնահարկում նստած. լսում էին իրենց համար ասվող դամբանականը:



Հեկը կանգնել էր շփոթված:

Մորաքույր Պոլին, Մերին և Հարպերները նետվեցին դեպի իրենց հարուժվուն առած սիրելիները, համբույրներով ծածկելով նրանց գեմքը, բայց խեղճ Հեկը մնացել էր շփոթված, չիմանալով ինչ անել և ուր գնալ իր վրա սևեռած այդքան անհյուսիսկալ հայացքներից: Նա նայում

եր շուրջը և ուզում եր արդեն դուրս պրծնել, բայց  
Թոմը բռնեց նրա ձեռքը, ստելով:

— Մորաքույր, այդպես չի կարելի: Մեկն ել գոնե  
չեկին ուրախացներ:

— Իհարկե, սիրելիս: Սրտանց ուրախ եմ այս խեղճ  
վորքին տեսնելու համար:

Յեվ մորաքույր Պոլլին սկսեց տղային սիրալիր խոս-  
քերով շոյել, վոր ավելի ևս սաստկացնում եր նրա շփո-  
թությունը:

Ապա բոլորը յերգեցին: Հին գոհաբանական հիմնը  
հնչում եր, քան յերբեք, և ծովային ավազակը՝ Թոմ Սո-  
յերը, նայելով իրեն նախանձող ընկերներին, խոստովա-  
նում եր իր սրտում, վոր դա իր կյանքի լավագույն ըո-  
պեն ե:

Այդ ուրը Թոմն ստացավ ապտակներ՝ ու համբույրներ-  
նայած մորաքրոջ տրամադրության-և ասիքան շատ, վոր  
մի ամբողջ տարի հերիք եր իրեն:

XVIII

Դրանում ել կայանում եր Թոմի մեծ գաղտնիքը—տուն  
վերադառնալ բոլորով միասին և ներկա լինել իրենց սե-  
փական թաղմանը: Շաբաթ ուր նրանք գերանով  
անցան հակառակ ափը, դուրս յեկան հինգ-վեց վերստ  
քաղաքից ներքե, գիշերեցին անտառում և լույսը ծագե-  
լուն պես վերադարձան քաղաք ու մի լավ քնեցին յեկե-  
ղեցու վերնահարկում, կոտրոված նստարանների քառսիմեշ:  
Յերկուշաբթի առավոտյան, նախաճաշի ժամանակ,  
մորաքույր Պոլլին և Մերին անշափ բարի ելին դեպի  
Թոմը և սիրով կանխապես կատարում եյին նրա ցանկու-  
թյունները: Անսովոր աշխուժ խոսակցության միջոցին  
մորաքույր Պոլլին ասաց.

— Գիտես ինչ, Թոմ, չեմ ասում թե դա հետաքը-  
քիր չի—ստիպել բոլորին տանջվել համարյա մի ամբողջ շա-  
բաթ, միայն թե դուք ուրախանաք. բայց յես շատ ցավում  
եմ, վոր դու այդպիսի չար սիրտ ունես, և այդքան քիչ ես  
սիրում ինձ: Յերբ դու կարող եյիր գերան նստած՝ լողալ  
անցնել գետը՝ սեփական թաղման ներկա լինելու, կարող  
եյիր գալ և տուն, մի կերպ հանգստացնել ինձ, վոր մե-  
ռած չես, այլ փախել ես:

— Այո, այդ բանը կարող եյիր անել Թոմ, — ասաց  
Մերին, — և իհարկե կանելիր, յերբ մտքովդ անցնեիր:

— Ճիշտ, Թոմ: Կանեյիր: Յեվ մորաքույր Պոլլին  
ժպտաց մի տխուր ժպիտով: — Դե ասա՛ կանեյիր, յեթե  
մտքովդ անցնեիր:

— Չգիտեմ... Չե վոր այդպես ամեն ինչ կփչանար..

— Ախ, թում, իսկ յես կարծում ելի անքան ես ինձ սիրում վոր,—ասաց մորաքույր Պոլլին տրտում ձայնով, վորից թումն իրեն վատ զգաց։—Յեթե գոնե մտածելիր այդ մասին, ել չեմ ստում—անելիր. բայց դու մինչև անգամ չես ել մտածել։

— Ե, մորաքույր, դա դեռ վոչինչ, - միջամտեց Մերին։— Թումի գլուխը չե վոր լիքն ե քամիներով. նա միշտ այնպիսի բաների մեջ ե, վոր ժամանակ չունի մտածելու։

— Ուրեմն ավելի ցավալի յե։ Միզը կմտածեր. Յեվ Միզը կգար։ Ախ, թում, կգա ժամանակ կախոտաս, վոր չես աշխատել գեթ մի փոքր սիրել ինձ,—կախոտաս, բայց ուշ կլինի։

— Դե, հերիք ե, մորաքույր, դու հո իմանում ես, վոր քեզ սիրում եմ,—ասաց թումը։

— Յես ավելի լավ կիմանայի, յեթե այդ ամենափոքր չափով յերևար քո վարմունքից։

— Շատ ցավում եմ, վոր այդ բանը մտքովս չի անցել,—ասաց թումը զղջման լեզանակով։—բայց դրա փոխարեն քեզ գոնե յերագումս տեսել եմ—սա հո մի բան արժի։

— Ասենք, մի փոքր.. չե վոր կատուներն ել են յերագ տեսնում,- բայց դե ելի լավ ե, քան վոչինչ։ Ի՞նչ տեսար յերագումդ։

— Այ ինչ։ Չորեքշաբթի յերեկոյան յերագումս տեսա, վոր իբր թե դու նստած ես մահճակալիս կողքին, Միզը քո կողքին՝ փոքրիկ արկղի վրա, իսկ նրա կողքին Մերին։

— Ինչ կա վոր, մենք այդպես ել նստել ելինք։ Մենք միշտ այդպես ենք նստում։ Ուրախ եմ, վոր յերագը գոնե հիշեցրել ե մեր սովորութիւնները։

— Հետո յերագումս տեսա, վոր այստեղ ել նստած ե Չո Հարպերի մայրը։

— Յեվ ճիշտ վոր նա այստեղ եր։ Ել ինչ տեսար յերագումդ։

— Ամեն տեսակ բան։ Բայց հիմա վատ եմ հիշում։

— Դե, փորձիր հիշել։ Միթե չես կարող։

— Հետո ինձ յերագումս թվաց թե քամին... քամին

հանդգրեց....

— Հիշիր, թում. թե, քամին ի՞նչը հանդգրեց։

Թումը մատներն ամուր սեղմեց ճակատին և մի բոպե անհանգիստ սպասելուց հետո, բացականչեց.

— Հիշեցի, հիշեցի. քամին հանդգրեց մոմը։

— Տեր, դու վողորմաս։ Հետո, թում, հետո։

— Հետո դու իբր թե ասացիր. «կարծես թե դուռը»..

— Հետո, թում, հետո.

— Սպասեք, թող հիշեմ...Ախ, հա։ Դու ասիր, վոր քեզ թվում ե թե դուռը բաց ե։

— Այո, յես այդ ասել եմ, հիշում ես Մերի։ Հետո։

— Հետո... հետո... Դե, չեմ հիշում. վստահ չեմ, բայց ինձ թվում ե, վոր իբր թե Միզին ուղարկեցիր վոր նա... վոր նա...

— Հը, հը, կարգադրեցի ի՞նչ անի։

— Կարգադրեցիր... կարգադրեցիր դուռը փակի...

— Տեր, դու վողորմաս։ Կյանքումս այդպես բան չեմ լսել։ Դե յեկեք ու սրանից հետո յերագներին մի հա՛վատաք։ Վազեմ անմիջապես միտիս Հարպերին պատմեմ։ Պատմիր, թում, թե ել ինչ յեղավ հետո։

— Ո. հիմա բոլորը հիշեցի, հորաքույր։ Հետո դու ասիր, թե յես չար չեմ, այլ չարաճճի, և վոր ինձանից հանգստութիւն պահանջելը նույնն ե, ինչ վոր,— ի՞նչպես ասիր,- քուռակից, ինչ։

— Այո, այո, յես այդպես ել ասել եմ։ Ախ, տեր ասոված։ Ե, հետո ի՞նչ, թում։

— Հետո դու լաց յեղար։

— Ճիշտ, և ճիշտ, լաց յեղա, և դա առաջին անգամ  
չեր: Հետո:

Հետո միսիս Հարպերը նույնպես լաց յեղավ և ա-  
սաց, վոր Ջոն նույնպես լավն եր, բայց ափսոս վոր ծե-  
ծեց նրան սերոցքի համար, յերբ այդ սերոցքն ինքն ել  
թափել ե:

— Դա մարդարեւական յերազ ե յեղել: Պատմիր:  
պատմիր տեսնենք:

— Հետո Սիդը ասաց...

— Յես, կարծեմ, բան չեմ ասել:

— Չե, Սիդ, ասացիր, — ուղղեց Մերին:

— Լոեցեք, մի խանդարեք: Հը, Թոմ, ասա ինչ ա-  
սավ:

— Սա ասաց, թե յես այնտեղ ավելի լավ կլինեմ,  
ուր գնացել եյի. բայց յեթե յես առաջուց լավ լինեյի...

— Տեր ասավանձ. լսում եք: Այդ հենց նրա խոսքերն  
են:

— Յեվ դու դրա համար նրան հայնոցեցիր: Չե, այս-  
տեղ հրեշտակ ե յեղել: Այդ հրեշտակն ե ներշնչել քեզ:

— Հետո միսիս Հարպերն սկսեց խոսել Ջոյի մասին,  
թե ինչպես ե ատրճանակը կրակել իր քթի տակ, իսկ  
դու նրան պատմեցիր կատուի և դեղի մասին:

— Բոլորովին ճիշտ ե:

— Հետո դուք յերկար խոսեցիք, թե ինչպես են  
մեզ փնտրել գետում, թե կիրակի որը մեզ թաղելու յեն,  
իսկ հետո դու և միսիս Հարպեր գրկեցիք իրար ու լաց  
յեղաք և դրանից հետո նա գնաց:

— Ճիշտ այդպես եր: Նստած տեղս չորանամ, թե  
այդպես չլիներ: Յեթե դու բոլորը տեսած և քո աչքերով  
լսած լինեյիր, Թոմ, չեյիր կարող ավելի մանրամասն  
պատմել: Ե, հետո ինչ յեղավ:

— Հետո դու պառկեցիր քնելու: Յես այնպես խղճա-  
ցի քեզ, վոր մի կեղեվի կտոր վերցրի ու վրան գրեցի:

«Մենք չենք մեռել, մենք փախել ենք միայն, վոր ծովա-  
յին ավազակներ դառնանք», ու գրածս դրի սեղանի  
վրա, մոմի կողքին, իսկ դու այդ ժամանակ քնած եյիր, ու  
քո դեմքը այնքան բարի-բարի յեր, վոր յես մոտեցա  
կուսցա ու շրթունքներդ համբուրեցի:

— Ճիշտ ե, Թոմ, ճիշտ: Ե, դրա համար ամեն ինչ  
ներում եմ քեզ:

Յեվ նա Թոմին այնպես սեղմեց գրկում, վոր Թոմն իրեն  
զգաց իբրև վերջին որիկա:

— Դա շատ լավ բան ե յեղել նրա կողմից. թեև դա  
միայն յերազ ե յեղել, — նկատեց Սիդը կարծես ինքն իրեն:

— Լսիր, Սիդ: Մարդը յերազում անում ե այն,  
ինչ կյանքում կաներ: Առ քեզ մի մեծ խնձոր, Թոմ. դիտ-  
մամբ քեզ համար եյի պահել, այն դեպքում, յեթե գտնը-  
վես: Սակայն, յերեխեք, գնացեք, արդեն ժամանակն ե:

Յերեխաները գնացին դպրոց. իսկ պառավ մորաքույ-  
րը՝ միսիս Հարպերի մոտ — քրոջ վորդու գարմանալի յե-  
րապը պատմելու Սիդը կարևոր չհամարեց ասել այն, ինչ  
մտածում եր սովից հոսանալիս: Իսկ նա մտածում եր ա-  
հա թե ինչ:

«Մի՞թե կարելի յե այնքան յերկար ու կանոնավոր  
յերազ տեսնել: Բոլորը հնարովի բան ե»:

Վորպիսի հերոս եր դարձել այժմ Թոմը: Նա չեր  
վազվզում և չեր թռչկոտում, բայց իրեն պահում եր հպարտ,  
արժանապատվությամբ, ինչպես վայել ե ծովահենին,  
վորն զգում ե, թե բոլոր հայացքներն ուղղված են իրեն:  
Յեվ իրոք այդ այդպես եր. նա այնպես եր ցուլց տալիս,  
թե չի նկատում իրեն ուղղված հայացքները, և չի լը-  
սում իր մասին արվող նկատողութունները, բայց սրտի  
խորքում հրճվում եր և՛ այդ հայացքներով, և՛ այդ  
նկատողութուններով: Փոքրիկ աղաները խմբերով վազում  
եյին նրա յետեվից, հպարտանալով, վոր իրենց տեսնում  
են նրա հետ միասին և վոր նա հանդուրժում ե նրանց

իր կողքին, կարծես թե նա թափորի գլուխն անցած թմբկահար լիներ կամ գազանանոցի առաջից գընացող փիղն: Նրա հասակակիցները ձևացնում էլին, վոր իբր թե վոչինչ չգիտեն նրա բացակայության մասին, բայց և այնպես սաստիկ նախանձում էլին նրան: Նրանք ամեն բան կտալին աշխարհում, միայն թե ունենային նրա արևահար մորթը և փայլուն հոշակը:

Իպրոցում աշակերտներն այդպես էլին վերաբերվում նրան ու Ջոլին, և նրանց հայացքներն արասհայտում էլին մի այնպիսի պերճախոս հիացմունք, վոր յերկու հերոսն էլ շուտով սկսեցին անտանելի հպարտանալ: Նրանք սկսեցին իրենց արկածները պատմել ազահուլթյամբ լսող ունկնդիրներին, բայց միայն սկսեցին. վերջացնել չը չկարողացան: Իսկ յերբ, վերջապես, հանեցին իրենց ծխամորձները և սկսեցին ծխել ամենաանվրդով տեսքով, նրանք փառքի գագաթնակետին հասան:

Թոմր վորոշեց, վոր այժմ կարող է ապրել առանց Բեկկի Տեչերի: Իր փառքը իրեն հերիք է: Նա կապրի փառքի համար: Այժմ, յերբ ինքն այսպես հոշակավոր է, նա, գուցե և, ցանկանա հաշտվել: Ե, թող գնա: Թող տեսնի, վոր Թոմն ինքն էլ կարող է այնպես անտարբեր լինել, ինչպես աղջիկներից վոմանք: Հենց այդ միջոցին Բեկկին լեկավ: Թոմն այնպես ձևացավ, թե չի նկատում: Նա գնաց-միացավ տղաների ու աղջիկների մի խմբի, ուր անմշապես խոսակցություն սկսվեց: Շուտով Թոմը տեսավ, որ Բեկկին ուրախ լետ ու առաջ է վազվզում՝ կարծած զեմքով ու փայլուն աչքերով. կարծես ընկերուհիների լետեկից ընկնելով տարված, և ծիծաղից խնդմնդում եր ամեն անգամ, յերբ աջողվում եր մեկին ու մեկին բռնել: Բայց միևնույն ժամանակ Թոմը նկատում եր, վոր Բեկկին աշխատում եր բոլոր ժամանակ՝ մոտ լինել իրեն և, ըստ յերևուլթին, հետևում է իրեն: Իս անչափ շոյում եր Թոմի ինքնասիրությունը: Բայց ելի շարունակում եր

ցուլց տալ, թե նրան չի նկատում: Այդ ժամանակ Բեկկին դադարեց աղջիկների լետեկից վազվզելուց և սկսեց անվճռական քայլերով շրջել Թոմի մոտերը, ժամանակ առ ժամանակ հառաչելով ու գաղտուկ Թոմին նայելով: Հանկարծ Բեկկին նկատեց, վոր Թոմն ամենից շատ խոսում է Եմմա Լորենսի հետ: Բեկկին մոտեցավ ավելի, կանգնեց գրեթե նրանց կողքին և շինծու ուրախ յեղանակով դիմեց ընկերուհիներին.

— Ինչ անպիտան ես, Մերի-Աննա ի՞նչու չեյիր լեկել կիրակնորյա դպրոց:

— Յեկել եչի, միթե՞ ինձ չտեսար:

— Չե, չեմ տեսել: Վորտե՞ղ եյիր նստած:

Ինչպես միշտ, միսս Պիտերսի դասարանում: Յես քեզ տեսա:

— Իսկապես: Վորքան տարրինակ է, վոր յես քեզ չեմ տեսել: Յես ուզում եյի քեզ ասեմ, վոր մենք պիկնիկ ենք սարքելու:

Ա, հետաքրքիր է: Ո՞վ է սարքելու:

— Մայրիկս սարքում է ինձ համար:

— Ա՛խ, ինչ լավ է: Բայց նա ինձ կհրավիրի:

— Դե, ի հարկե: Չե վոր պիկնիկը սարքում է ինձ համար՝ նշանակում է կհրավիրի բոլորին՝ սև յես ուզում եմ. իսկ յես ուզում եմ, վոր դու լեյ մեզ հետ լինես:

— Շատ սիրալիր ես: Իսկ յերբ է լինելու պիկնիկը:

— Դեռ չգիտեմ. գուցե արձակուրդներին:

— Ա՛յ կուրախանանք հա: Կկանչես բոլոր աղջիկներին ու տղաներին:

— Բոլորին. ով ինձ հետ լավ է կամ ուզում է իմ բարեկամը լինել:

Յեվ նա գաղտուկ նայեց Թոմին. բայց Թոմը այդ ժամանակ Եմմա Լորենսին պատմում եր կղզում յեղած սարպիսի փոթորկի մասին և այն մասին, թե ինչպես կարծակր խիեց թեղի ծառին ու «փշուր-փշուր արավ» այն

ժամանակ, յերբ ինքը կանգնած էր ծառից յերեք քայլ հեռու:

- Իսկ յես կարող եմ գալ,—հարցրեց Գրեսի Մելլերը
- Կարող ես:
- Յե՛ս, հարցրեց Սալլի Ռոշերսը:
- Ի հարկե:
- Յե՛ս ել,—ասաց Սուզի Հարպերը:—Ձոն ել կարող ես:
- Ի հարկե, ի հարկե:



Թոմս ու Եմման:

Բոլորն ել առաջարկում էին նույն հարցը և բոլորն ել ուրախ ուրախ ծափ էին տալիս գրական պատասխան ստանալով, այնպես վոր վերջիվերջո, բոլորն ել հրավիրվեցին, բացի Թոմից ու Եմմայից:

Բայց Թոմը հանգիստ հեռացավ, առանց զրույցը ընդհատելու, և իր հետ տարավ Եմմային: Բեկկիի շուրթերը դողում էին, աչքերում արցունք էր լերևում, բայց նա հուզումը թաղցնում էր շինծու ուրախության ներքո և շարունակում շաղակրատել:

Բայց և այնպես պիկնիկը կորցրեց իր հետաքրքրությունը Բեկկիի աչքում, նմանապես և բոլորը: Նա շտապեց հեռանալ ընկերուհիներից, գնաց առանձնացած մի տեղ և նստեց վերավորված ու մռայլ, մինչև վոր գանգը տվին:

Այդ ժամանակ նա յեղավ տեղից և, բարկացած աչքերը փայլեցնելով, ինքն իրեն ասաց, թե այժմ անելիքը գիտի:

Դասամիջոցին Թոմը շարունակեց շաղակրատել Եմմա Հորենսի հետ և դիտամբ գնաց Բեկկիին վորոնելու՝ նրան ծաղրելու համար: Ու գտավ նրան դպրոցի յետևը փոքրիկ նստարանին նստած—նա մի պատկերազարդ գիրք էր թերթում Ալֆրեդ Տեմպլի հետ միասին, և յերկուսն ել այնպես կլանված էին այդ աշխատանքով, վոր թվում էր ել բան չեն տեսնում: Թոմը սաստիկ անախտոթուլթուլուն զգաց, վոր մերժել էր Բեկկիի առաջարկած հաշտության ուղին: Նա իրեն դատապարտեց ամենածանր խոսքերով: Եմման շարունակում էր շաղակրատել, բայց Թոմի լեզուն չորացել էր կարծես: Նա Եմմային չէր լսում և, յերբ նա կանգ էր առնում պոստասխան ստանալու, Թոմն ինչ-վոր անկապ բան էր փնթփընթում, վոր հաճախ խոսակցությանը չէր վերաբերվում: Ու միաժամանակ Թոմն ուզում էր այնպես անել, վոր անցնի Բեկկիի նստարանի կողքով: Եմմայի ուրախ շաղակրատանքը, վերջապես, անտանելի դարձավ նրան: Թոմը նրան հասկացնում էր ակնարկնով, թե ինքն այս ու այն տեղը պիտի գնա, այս ու այն բանը պիտի անի, ժամանակն անցնում և, բայց իզուր,—Եմման շարունակում էր խոսել:



«Ո՛ր, գրողը տանի քեզ», մտածում էր Թոմը, «մի՞թե քեզնից չեմ ազատվելու»: Վերջապես նա հալտարարեց, թե պիտի գնա տուն, և գնաց, Եմմային ատելով:

«Գոնե մի ուրիշը լինեք»,— մտածում էր Թոմը,-- «ով




ուզում ե լիներ, միայն թե վոչ այդ Սան-Լուեցի Ֆրանստը, վոր իրեն յերևակայում ե թե շատ լավ հագնված ե և ազնվականի տեսք ունի: Ապասիր հալա: Յես քեզ ծեծեցի մեր քաղաք գալու առաջին իսկ որը, և ելի կծեծեմ: Ապասիր — ցուլց կտամ քեզ»: Յեվ թոմը, սիրտը հովացնելու համար, սկսեց ձեռները թափահարել ոգում, խփելով յերևակայական հակառակորդին: «Ա. ո. քեզ: Կերան, հերիք ե: Այ, տես, մյուս անգամ ել այդպես բաներ չանես»: Ու յերևակայական կռիվը վերջացավ թոմի կատարյալ հաղթանակով: Տասներկու ժամին թոմը փախավ տուն: Բեկկին շարունակում եր պատկերները նայել Ալֆրեդի հետ, բայց ժամանակը անցավ, թոմը չվերադարձավ, այդ հանգամանքը մոռալեց Բեկկիի ուրախութունը: Պատկերները ձանձրացրին նրան, նա դարձավ լուրջ ու ցրված, ապա ախուր, ի վերջո՝ իրեն բոլորովին դժբախտ զգաց և ափսոսաց, վոր իր վրեժխնդրութունն այդ աստիճանի յեր հասցրել: Խեղճ Ալֆրեդը, նկատելով վոր Բեկկին, հալանի չե ինչո՞ւ, դադարեց իր վրա ուշ դարձնելուց, անընդհատ բացականչում եր, «Այ, լավ պատկեր: Նայիր սրան»: Աղջիկը, վերջապես համբերութունը կորցրեց ու բացականչեց. «Ե՛հ, թողեք ինձ ձեր պատկերներով: Չանձրացրիք»: Լաց չեղավ ու հեռացավ:

Ալֆրեդը վազեց նրա յետևից, աշխատելով մխիթարել նրան. բայց Բեկկին ասաց:

— Հեռացեք: Թողեք ինձ: Յես ատում եմ ձեզ: Տղան կանգ առավ, շիմանալով, թե ինքն ինչ արավ Բեկկիին. չե վոր նա խոստացել եր, թե ամբողջ դասամիջոցին պատկերներ կնայի, և հանկարծ զնաց: Ալֆրեդը տխուր-տրտում նստեց դատարկված դասարանում: Նա ամոթահար եր և բարկացած: Յերևի այդ աղջիկն իր հետ խոսում եր միայն նրա համար, վոր չարացնի թոմ Սոյեբին: Յեվ նա ատելութուն զգաց դեպի թոմը: Նա ուզեց մի վերևե միջոց գտնել թշնամուն դադելու, բայց այն-

պիսի միջոց, վոր իրեն վտանգի չենթարկեր: Այդ ժամանակ նրա աչքովն ընկավ թոմի դասարանային ընթերցանության գիրքը: Այլ քեզ հարմար առիթ:

Նա գիրք բացեց, բացեց հենց որվա դասը ու թանաքը լցրեց յերեսի վրա: Բեկկին հենց այդ րոպեին նայեց լուսամուտից և տեսավ,



Ալֆրեդի վրեժխնդրութունը:

թե ինչ արավ, բայց յետ քաշվեց՝ առանց նկատելու: Նա վազեց տան ուղղությամբ, հույս ունենալով հանդիպել թոմին և պատմել նրան գրքի մասին: Թոմը կուրախանար, շնորհակալ կլիներ, և բոլոր անախորժութունները կը վերանային: Բայց կես ճամբին փոշմանեց. հիշեց, թե ինչպես թոմը ուշ չեր դարձնում իր վրա, յերբ ինքը խոսում եր պիկնիկի մասին, և նա վորոշեց չըխառնվել այդ գործին: Թող նրան ծեծեն փչացրած գրքի պատճառով, — իր համար միևնույն ե. ինքը նրան ատում ե:

XIX

Թոմը տուն լեկավ մուտլ և մորաքրոջ առաջին իսկ խոսքերից հասկացավ, վոր նա իրեն վշտակից չի կարող լինել:

— Հը, Թոմ, ինչպես լերևում ե, յես քո կաշին քերթելու յեմ:

— Յես ի՞նչ եմ արել, մորաքույր:

— Հերիք է: Հիմարի պես գնում եմ միտիս Հարպերի մոտ, հուշս ունենալով թե կատիպեմ նրան հավատալ քո լերազի հիմաբանության, և ի՞նչ ե պարզվում: Նա Զոյից իմացել ե, վոր դու այստեղ ես լեղել: Ինչ կարող ե դուրս գալ այդպես մի տղից, վոր անխիղճ կերպով ստում ե: Դու ինչպես ե, վոր մի խոսք չասիր և թողիր գնամ միտիս: Հարպերի մոտ, վոր բոլորը ծիծաղեն վրաս, հիմարի տեղ դնեն:

Այդ հայացքը Թոմի համար նոր եր: Առավոտյան իբ արարքը նրան թվում եր սրամիտ կատակ: Իսկ այժմ տեսնում եր, վոր վատ, հիմար բան ե արել: Նա գլուխը կախեց և առաջին ըոպելին չգիտեր ինչ պատասխանի, հետո ասաց.

— Յավում եմ, մորաքույր՝ վոր այդ բանն արել եմ. չեմ մտածել:

— Ախ, Թոմ, դու յերբեք չես մտածում: Դու յերբեք վոչ մի բանի մասին չես մտածում, բացի քո սեփական բավականութունից: Բայց տես, մտածել ես՝ գիշերը Զեկսոնի կղզուց գալ և ծիծաղել մեր վշտի վրա: Մտածեցիր

լերազիդ պատմութուններով հիմարացնել ինձ, բայց չմտածեցիր խղճալ մեզ և չվշտացնել:

— Մորաքույր, հիմա հասկանում եմ, վոր դա վատ բան եր իմ կողմից, բայց յես չեյի ուզում սոփոթութուն անել, — ազնիվ խոսք, չեյի ուզում: Յեվ այն լերեկս ի՞նչ տուն լեկա վոչ թե նրա համար, վոր ծիծաղեմ քեզ վրա:

— Բա ինչո՞ւ համար լեկար:

— Յեկա ասելու, վոր չանհանգստանաք, վոր չենք խեղդվել:

— Թոմ, Թոմ: Սրտանց կուրախանալի յեթե կարողանալի հավատալ, վոր այդպիսի բարի միտք ե յեկել գլուխդ. բայց ինքդ գիտես, վոր այդ բանը քեզ չի պատահում, և յես այդ գիտեմ, Թոմ:

— Ճիշտ եմ ասում, ճիշտ, դրա համար եյի յեկել, մորաքույր: Տեղս չորանամ, թե սուտ եմ ասում:

— Ախ, Թոմ, մի ստիր, մի ստիր: Դա հարյուրապատիկ վատ ե:

— Սուտ չի, մորաքույր, ճիշտ ե: Յավեցի, վոր դուք շատ կվշտանաք — դրա համար լեկա:

— Ամեն ինչ կտայի, վոր հավատամ քեզ. դա կբավեր քո մեղքերը: Յես պատրաստ ելի նույնիսկ ուրախանալ, վոր դու փախել ես և այդպես վատ վարվել: Բայց չեմ կարող հավատալ: Ինչո՞ւ այն ժամանակ անկեղծ չեղար, տղաս:

— Գիտես ինչ, մորաքույր, յերբ դուք սկսեցիք թաղման մասին խոսել, մտքով այսպես բան անցավ — մտնեմ յեկեղեցին ու թագնվեմ, և այդ այնքան հետաքրքիր թվաց, չուզեցի վոր բանը փչացնեմ: Դրա համար ել ծառի կեղևը նորից դրի վրայանա ու լռեցի:

— Ի՞նչ կեղև:

— Այն, վորի վրա քեզ համար գրել եյի, թե մենք ավազակ ենք դառել: Հիմի այնքան եմ ցավում, վոր դու

իմ համբուրելու ժամանակը չզարթեցիր, շատ եմ ցավում  
— ազնիվ խոսք:

Մորաքրոջ խրատ դեմքը մեղմացավ և աչքերում լե-  
րեսաց քնքշութիւնն

— Ճիշտ, դու համբուրեցիր ինձ, Թոմ:

— Այո, համբուրեցի:

— Վստահ ես:

— Այո, է հարկե, վստահ եմ:

Ինչո՞ւ համբուրեցիր Թոմ:

— Վորովհետեւ քեզ այնպես եմ սիրում, դու հեկեկում  
ելիր յերազումդ և յես խղճացի քեզ:

Այդ խոսքերը հնչեցին շատ անկեղծ: Պառավի ձայնը  
զողաց ակումս, յերբ նա ասաց.

— Համբուրիր ինձ, Թոմ: Հիմա դնա դպրոց և ել  
գլուխս շտանես:

Մի ըռպելից հետո՝ Թոմն արդեն դպրոց գնաց, իսկ  
մորաքրոջը Պոլլին վազեց մտան, ուր կախված էր Թոմի  
բաճկոնը, վոր հագել էր նա իր ավազակային արկածնե-  
րի որերին: Բաճկոնը ձեռն աններով մորաքրոջը հանկուրծ  
մտածմունքի մեջ ընկավ ու ասաց ինքն իրեն:

— Չե, ավելի լավ է թող ֆեստ Խեղճ տղա: Վստահ եմ,  
վոր սուտ ասաց. բայց այդպիսի սուտը մեղք չի: Այդ  
սուտը մխիթարեց ինձ: Հուշս ունեմ, զիտե՛՛՛՛, վոր անբը  
կների նրան, վորովհետեւ ստեց մտքուր սրտով: Բայց չեմ  
ուզում համոզվել, վոր դա սուտ է, — չեմ նախ, չե:

Նա բաճկոնը կախեց տեղը ու մի ըռպե մտածեց,  
նրան նայելով: հետո ձեռը նորից մեկնեց. կրկին լեռ քա-  
շեց. վերջսպես, իրեն վստահեցրեց, թե «դա բարի նպա-  
տակով ասված սուտ էր և յես չպետք է վշտանամ» Մի  
ըռպե անց նա կարդում էր արդեն Թոմի ձեռով կեզերի  
վրա գրածը և ասում արցունքների միջից.

— Յես կարող ելի այս տղի հարյուր հազար մեղքն  
ել ներել:

## XX

Թոմին համբուրելիս՝ մորաքրոջը Պոլլիի դեմքին կար  
մի ինչ—վոր բան, վորից նրա վնասութունը չբացավ  
հանկարծ, և նրա սիրտը նորից թեթևութուն գգաց: Նա  
դնաց դպրոց և բախտը ժպտաց նրան—մարդագետնում  
հանդիպեց Բեկկի Տեչերին: Թոմը միշտ գործում էր ըռ-  
պելի տ գավորության տակ: Նա, առանց մտածելու, վա-  
զեց դեպի Բեկկին ու ասաց.

— Յես այտոր շատ վատ վարվեցի, Բեկկի, և այն-  
պես ցավում եմ... Յես ել յերբեք, յերբեք կանքումս  
այդպես բան չեմ անի: Արի հաշտվենք, ուզում ես:

Ազջիկը կանգ առավ ու արհամարհանքով նայեց նրա  
գեմքին:

— Յես շատ յերախտապարտ կլինիմ, միտեր Թոմաս  
Մոյեր, յեթե ինձ հանդիսա թողնեք: Յես այլևս չեմ ցան-  
կանում խոսել ձեզ հետ:

Նա գլուխը թափ տվեց ու անցավ: Թոմն այնքան  
վշտացած էր, վոր նույնիսկ պատասխան չգտավ. «Պահ,  
ինչ դժբախտութուն: Թքել եմ», բայց արդեն ուշ էր,  
— հարմար ըռպեն անցել էր: Ուստի նա վոչինչ չասաց,  
բայց և այնպես կատաղեց: Տխուր շրջում էր դպրոցի բա-  
կում, ափսոսալով, վոր Բեկկին տղա չի, և նրան չի կա-  
րելի ձեծել: Հենց այդ ժամանակ Բեկկին անցավ նրա  
կողքով և վերավորական խոսք ասավ Թոմի հասցեին: Թո-  
մը պատասխանեց նույն կերպ, և դա վերջնականապես  
անջատեց նրանց: Չարույթի մեջ Բեկկին հագիվ էր կա-

բողանում սպասել, վոր դասերը նորից սկսվեն,—աչնպես  
եր ուզում, վոր թոմը պատժվի շուտով փշացրած գրքի  
համար: Յեթե նա իր սրտում մի ծածուկ միտք ունե՞ր՝  
մատնել Այֆրեդ Տեմպլին, այդ միտքը, սակայն, չքացավ  
թոմի խայթիչ խոսքերից հետո:

Խեղճ աղջիկ: Չգիտեր. վոր իրեն ել ադետ է սպա  
սում: Ուսուցիչ միսսեր Դորինսը սնափառ մի մարդ էր՝  
հասուն տարիքով: Նրա նմիրական յերագն էր —բժիշկ դառ-  
նալ, բայց չքավորութան պատճառով դպրոցական ուսուց-  
չից դենը չգնաց: Ամեն որ դասարանում սեղանի արկղից  
հանում էր ինչ—վոր խորհրդավոր գիրք և ընդմիջում ֆե-  
րին, յերբ աշակերտները դաս չեյին ասում, խոբասուզ-  
վում էր ընթերցանության մեջ: Այդ գիրքը նա միշտ փա-  
կի տակ էր պահում: Դպրոցում չկար մի տղա, վոր չաչը-  
վեր ցանկությունից—գեթ մի աչքով այդ գրքին նայելու:  
բայց առիթ չէր լինում: Յուրաքանչյուր աշակերտ իր լեն-  
թադրությունն ուներ այն մասին, թե դա ինչ գիրք է:  
բայց յուրաքանչյուրը մտածում էր յուրատեսակ, ուստի  
ճշմարտությունը մնում էր անհնարին: Յեվ ահա Բեկկին,  
ուսուցչի ամբիոնի մոտից անցնելիս (ամբիոնը գտնվում  
էր դռնից քիչ հեռու) նկատեց, վոր բանալին կողպեքի մեջ  
է. ուսուցիչը մոռացել էր վերցնել: Կարելի՞ էր արդյոք  
բաց թողնել մի այդպիսի յեղակի դեպք: Աղջիկը շուր-  
ջը նայեց. վոչ-վոք չկար: Մի բոպե անց՝ գիրքը ար-  
դեն նրա ձեռին էր: «Անասովիա» վերնագիրը վոչինչ  
չբացատրեց նրան, և նա սկսեց գիրքը թերթել... Հենց ա-  
ռաջին եջի վրա տեսավ գեղեցկորեն նկարված և գունա-  
վորած մարդկային պատկեր: Այդ բոպելին մի ստվեր ըն-  
կավ եջի վրա. շեմքին կանգնած էր թոմ Սոյերը, վոր  
նուճնպես նկատեց պատկերը: Բեկկին շտապով ծածկեց  
գիրքը, բայց այնպես անաշող, վոր կիսով չափ պատռեց  
թուղթը պատկերի հետ միասին: Նա գիրքը գցեց արկղը:

Բանալին պատեց փակի մեջ և լաց լեղավ ամոթից ու բար-  
կությունից:

— Թոմ Սոյեր: Այդ շատ նուան է ձեզ: Ի՞նչ ստորու-  
թյուն—ծածուկ հետևել և լրտեսել ուրիշներին:

— Ինչո՞ւ լրտեսել: Մի՞թե գիտեյի ինչ էք անում:

— Ամաչեցեք, թոմ Սոյեր: Դուք, ի հարկե, կմատ-  
նեք ինձ, և այն ժամանակ յես ինչ եմ անելու: Ինձ ան-  
պարսան կծեծեն, իսկ ինձ դեռ յերբեք չեն ծեծել դպրո-  
ցում:

Նա վոտը խփեց հատակին և ավելացրեց:

— Յեվ թող ծեծեն, յեթե դուք այնքան ստոր էր:  
Յես ել գիտեմ: Սպասեցեք, կտեսնեք ինչ կլինի: Գարչե-  
լի, գզվելի:

Յեվ նա լաց լինելով՝ նետվեց սենյակից դուրս:

Թոմը մնաց տեղում, այդ անսպասելի հարձակումից  
շրմած: Հետո ասաց ինքն իրեն.

— «Ինչ գարմանալի և հիմար են այդ աղջիկները, նրանց  
յերբեք չեն ծեծել դպրո-  
ցում: Մեծ բան է, վոր  
ծեծեն: Այդ աղջիկները  
միշտ այդպես են—քնքույշ  
ու վախկոտ: Ի հարկե, յես  
Դորինսին չեմ ասի այդ  
փոքրիկ աղջկա մասին,  
բայց նա միևնույն է կըրո-  
նըվի: Դորինսը կհարցնի՝  
սով է պատռել իր գիրքը:  
Վոչ-վոք ձայն չի հանի:  
Այն ժամանակ ուսուցիչը  
կսկսի հարցնել մեկ-մեկ,  
ինչպես անում է միշտ, և  
յերբ հերթը հասնի հան-  
ցավորին, նա գեմքից արդեն



Բեկկին բռնվում է հանցանքի վայրում  
կհասկանա, վոր մեղավորը

Բեկկին է, նույնիսկ առանց հարցնելու Աղջիկներին զեւ-  
քից ամեն բան կարելի յէ իմանալ, — նրանք վոչինչ չեն  
կարողանում ծածկել: Դե, ի հարկե, նա իրենը կատանա:  
Բեկկի Տեչերը, — բռնվեց այժմ ել չի ազատվի»: Մի փոքր  
մտածելով՝ Թոմն ավելացրեց. «Տեղն է: Նա ուրախ  
կլիներ, յեթե յես բռնվելի, — թող ինքը փորձի հիմի»:

Յեվ Թոմը միացավ բակում խաղացող ընկերներին:  
Մի քանի ընկերացի հետո ուսուցիչը չեկավ, և դասերն սկսվե-  
ցին: Թոմն այնքան ել չեր հետաքրքրվում դասով: Նա ըո-  
պե առ ըոպե նայում եր այն կողմը, ուր նստած էին  
աղջիկները, և ամեն անգամ նրան հուզում եր Բեկկի  
գեմքի արտահայտութունը: Նա բոլորովին ել չեր ուզում  
խղճալ նրան, բայց և այնպես չեր կարողանում իրեն գոպել  
վոր չխղճա: Նա չեր կարողանում իր մեջ հարուցել նույն-  
իսկ ուրախության և ցնծության պես մի բան: Բայց շու-  
տով ուսուցիչն անա նկատեց, վոր նրա գրքի վրա թա-  
նաք է թափված, և Թոմի ուշքն ու միտքը կլանեցին իր  
սեփական դործերը: Բեկկին միառժամանակ դուրս չեկավ  
իր ճնշված վիճակից և հետաքրքրվեց: Նա չեր կարծում,  
թե Թոմի հավաստիացումները, թե թանաքն ինքը չի թա-  
փել, կարող են նրան պատժից փրկել և իրավացի յեր:  
Ուրացումը բանը կվատթարացներ միայն: Բեկկին կար  
ծում եր, թե ինքը դրա համար, կուրախանա, բայց դա  
այնքան ել հեշտ չեր: Յերը բանը հասավ ամենավատ տե-  
ղը, նա ցանկացավ վեր կենալ և ասել, թե դա Ալֆրեդ  
Տեմպլն է արել, բայց հարկադրեց իրեն՝ հանգիստ նստել,  
ինքն իրեն ստելով. «Նա հավանորեն կգանգատվի, վոր պատ-  
կերը չես եմ պատուել: Վոչ մի խոսք ել չեմ ասի. անգամ  
յեթե դա անհրաժեշտ լինի նրա կյանքը փրկելու համար»:

Թոմն ստացավ իր բաժին ձիպոտի հարվածները և  
անող վորագարձավ իր տեղը: Նա հնարավոր եր համա-  
րում, թե, կարող է պատահել ինքն է պատահաբար խա-  
ղի ժամանակ թանաքամանը շուռ տվել գրքի վրա, ու նա

մեղքն իրեն ից հեռացնում եր ձևի համար և նրա համար,  
վորովհետև սովորույթն այդ է պահանջում. հետո համա-  
ռեց:

Անցավ մի ամբողջ ժամ ուսուցիչն իր գահին նստած՝  
կարծես ննջում եր դաս սերտող աշակերտների բավոցից.  
ողն ինքը մի տեսակ քնարեր դարձավ: Վերջապես, միս-  
տեր Գոբլինսը ուղղվեց. բացեց սեղանի զգրոցը և ծուլ-  
ծուլ ձեռը մեկնեց գրքին, կարծես տատանվելով՝ հանել  
այն թե վոչ: Աշակերտների մեծ մասը նայում եր այդ  
բանին ձանձրույթով. բայց նրանցից լերկուսը հետևում ե-  
լին նրա յուրաքանչյուր շարժումին: Միառժամանակ միս-  
տեր Գոբլինսը ցրված՝ գիրքը շուռ եր տալիս ձեռքերին,  
հետո հանեց այն և, հարմար նստելով, պատրաստվեց կար-  
դալ:

Թոմը նայեց Բեկկիին: Ո՛ր, վարքան վողորմելի, շիթ-  
ված տեսք ուներ նա: Կարծես հրացանի նշանի տակ դո-  
ղացող ճագար լիներ: Թոմն իսկույն մոռացավ նրա հետ  
ուներցած վեճը: Պետք է անմիջապես մի վորեք բան աս-  
նել, անմիջապես, առանց դանդաղելու: Բայց վտանգը  
վանելու դժվարութունը թուլացնում եր նրա հնարավոր-  
ութունը: Վերջապես: Փայրուն միտք: Նա վազելով կնո-  
տենա, գիրքը կխլի ուսուցչի ձեռից, կվաղի դուրս ու  
հայդա: Բայց նա տատանվեց մի փոքր, և հարմար ընկն  
կորցրեց, — ուսուցիչը բաց արավ գիրքը: Յեթե կարելի  
լիներ այդ կորցրած ընկն յետ բերել: «Զափագանց ուշ  
է. հիմա Բեկկի համար ել փրկություն չկա», — ասաց Թոմն  
ինքն իրեն: Յեվս մի ընկն — և ուսուցիչը աչքերը պտտում  
եր դասարանում: Բոլոր աչքերը խոնարհեցին նրա հայաց-  
քի առաջ: Այդ հայացքի մեջ կար մի այլպեղի բան, վոր  
անմեղներն անգամ դողացին սարսափից: Տիրեց մը լուռ-  
թյուն, վորի ընթացքում շատերը կարողացան համբել մինչև  
տասը. ուսուցիչն իր մեջ, այսպես ասած, զայրույթ եր  
կուտակում: Վերջապես, խոսեց.

— Ո՛վ ե պատուել այս գիրքը:

Վաչ մի ձայն: Գասարանում աջնպիսի լուսթյուն եր, վոր կարելի յեր լսել, թե ինչպես ե ընկնում քորոցը: Լոտ թյունը շարունակվեց. ուսուցիչը հերթով նայում եր յա բարանչուր դեմքի, հանցանքի նշաններ վորոնելով:

Բեստամեն Ռոջերս, դ՞ու յես պատուել այս գիրքը:

Բացասական պատասխան: Նորից լուսթյուն:

— Ժողեֆ Հարպեր, դ՞ու:

Նորից բացասու է: Թոմի անհանգստությունն ավելանում եր: Այդ հարցերն ու պատասխանները նրա համար դանդաղ տանջանք ելին: Ուսուցիչը աղաներին հարց ու փորձելով՝ դիմեց աղջիկներին.

— Եմմի Լուրենս:

Նա գլուխը շարժեց բացասաբար:



— Գրեսի Միլլեր:

Նույնը:

— Սյուզաննա Հարպեր, ուրեմն դ՞ու յես:

Նորից բացասական պատասխան: Այժմ հերթը հասավ Բեկկի Տեչերին: Թոմը դողում եր վոտից գլուխ:

— Ռեբեկկա Տեչեր (Թոմը նայեց նրա դեմքին, վորն ամբողջովին սպիտակել եր վախից), դու չես պատուել արդյոք... Վճճ... նայիր յերեսիս (Բեկկին ազաշագին վեր բարձրացրեց ձեռները)... Դու հո չես պատուել այս գիրքը:

Թոմի ուղեղում կայծակի պես մի միտք փայլեց: Նա թռավ ու բացականչեց.

— Այդ յես եմ արել:

Ամբողջ դպրոցը տարակուսանքով նայեց խենթին, վոր մի այդպիսի շտեռնված բան եր արել: Թոմը մի բուպե կանգնեց, վոր ցրված մտքերը հավաքի, և չերբ. վերջապես, դնաց այն անկյունը, ուր նրան սպասում եր պատիժը, խեղճ Բեկկիի աչքերում փայլող դարձանքն ու շնորհակալությունը, վոր վարձատրելու չեր նրան և հարցուր հարված եր արժենալու: Սեփական քաջադործությամբ տարված, նա՛ առանց մի ճիչ հանելու՝ տարավ անողք պատիժը և նույնպիսի անտարբերությամբ ընդունեց հավելյալ պատիժը— մնալ դպրոցում չերկու ժամ՝ դասերը վերջանալուց հետո: Նա գիտեր, թե բակու է ո՞վ ե սպասելու իրեն, չերբ բանտարկությունից արձակեն, ուստի դպրոցում նստելու ձանձրույթը նրան մեծ աղետ չեր թվում:

Արձակուրդները մոտենում էյին: Ուսուցիչը, վոր միշտ խիստ էր, դարձավ ավելի դաժան ու պահանջկոտ: Նա ցանկանում էր, վոր իր դպրոցն աչքի ընկնի քննությունների ժամանակ, Նրա փայտն ու քանոնն այժմ շատ քիչ էյին մնում անգործ ընկած, գոնե ստորին դասարաններում: Միայն մեծ տղաները և տասնութ-քսան տարեկան աղջիկներն էյին ազատվում պատժից: Միստեր Դոբինսը խիստ էր պատիժ տալիս, վորովհետև նա, թեև իր պարիկի տակ թագցնում էր բոլորովին ճազատ մի գլուխ, բայց այնքան էլ տարիքով չէր, և մկանները առողջ էյին: Նշանավոր որը մոտենալու հետ միասին՝ յերևան էր գալիս նրա մեջ թագնված տանջելու հակումը: Նրան, թվում էր, հաճույք է պատճառում պատժել ամենաչնչին արարքի համար: Դժբախտ փոքրիկները ցերեկները ցավ ու սարսափ էյին ապրում, իսկ գիշերները վրեժխնդրության ծրագիրներ էյին կազմում: Նրանք առիթը բաց չէյին թողնում ուսուցչին վորևե գլխացավանք պատճառելու: Բայց նրանք ինչպես կարող էյին համեմատվել ուսուցչի հետ: Ամեն մի աջողված արարքի համար դպրոցականները միշտ ծեծ էյին ուտում և խայտառակվում: Վերջապես, նրանք դավադրություն կազմեցին և մտածեցին վրեժխնդրության այնպիսի ծրագիր, վորը փայլուն հաղթանակ էր խոստանում: Նրանք իրենց գաղտնիքը հարտնեցին ցուցանակներ գրողի տղային և համոզեցին նրան՝ իրենց ոգնել: Նա շատ ուրախացավ և զարմանալի չէ, ուսուցիչը ճաշում էր նրա հոր

տանը, և տղան շատ պատճառներ ուներ նրան ասելու: Կարծես դիտմամբ, ուսուցչի կինը մի բանի որով մեկնեց ծանոթների մոտ՝ հյուր և ուրեմն, վոչինչ չէր խանդարի ծրագրած վրեժխնդրությանը: Ուսուցիչը հարբեցող էր, և նկարչի տղան խոստացավ ընկերներին, վոր քննության յերեկոյան, հենց վոր նա կխմի ու կքնի բազկաթոռի մեջ, նա «ամեն ինչ կարգի կբերի» և ինքը կհեռանա:

Ամեն ինչ յեղով ծրագրածի պես: Նշանակված որվա յերեկոյան ժամը ութին դպրոցի շենքը պայծառ լուսավորված էր և տերևների ու ծաղիկների գիրլյանդներով դորդարված: Ուսուցիչը նստած էր բարձրության վրա, բազկաթոռի մեջ: Նրա յետևը գտնվում էր մի սև տախտակ: Դեմքից յերևում էր, վոր բավականաչափ գինի չէ խմել: Նրա դիմաց վեց շարք նստարան և ամեն կողմից էլ յերեք շարք բռնել էյին յաղաքի պաշտոնական անձինք և աշակերտների ծնողները: Չախ կողմի վրա, բազաբացիների նստարանների յետև, ժամանակավորապես շինված լայն աախտակամածի վրա նստած էյին այն աշակերտները, վոր պիտի մասնակցեյին այսորվա քննության, լվացված, մարրված փորրիկ տղաների շարքեր, վոր իրենց շատ վատ էյին զգում իրենց տոնական հագուստների մեջ, պատանիների շարքեր և, վերջապես, փոքրիկ աղջիկների և հասակավոր աղջիկների շարքեր, վորոնք զարդարված էյին նուրբ կտորներից կարած հագուստներով և, ըստ յերևույթին, մի ըուպե անգամ չէյին մոռանում իրենց մերկ թեվերը, դրանց վրալի զարդերը և գլուխների վարդագույն ու յերկնագույն ժապավոնները: Մնացած տեղերը գրավում էյին այն դպրոցականները, վորոնք քննությանը չէյին մասնակցելու:

Սկսվեց նրանից, վոր մի փոքրիկ տղա վեր կացավ և ամաչկոտ արտասանեց դողահար շարժումներով, կարծես մի մեքենա, վորի ինչ-վոր մի բանը փշացել էր: Բայց և այն-

պեզ, նա վերջացրեց աշոգությամբ, ծափահարություններ ստացավ, գլուխ տվեց ու հեռացավ:

Մի փոքրիկ աղջիկ աստիճանի գեմքով թռնում է «Մերին ուներ մի գառը», գլուխ տվեց և ծափահարությունները կարմրած ու լերջանիկ նստեց իր տեղը:

Ապա շինծու համարձակությամբ բեմ բարձրացավ թոմ Ոոյերը և սկսեց արտասանել հին, բայց անմեռ «Տրվեքինձ ազատութուն և սպանեցեք ինձ», մոլեգնորեն ձայնը բարձրացնելով և ձեռները սաստիկ թափահարելով, բայց, կեսին հասնելով, շփոթվեց: Սարսափը տիրեց նրան. վտանները չեյին հնազանդվում կոկորդը ճնշում էր ինչ-վոր և նա չէր կարողանում մի խոսք ասել: Ունկնդիրները, ճիշտ է, հավանորեն, համակրում էին նրան. բայց չէ վոր լուռ էլին, և այդ լուռությունը թոմին ավելի չեր ճնշում,



բան նրանց համակրանքը: Ուսուցիչը հոնքերը կիտեց և դա բոլորովին հուսահատեցրեց տղային: Մի բիչ էլ փորձ արավ բան ասելու և բոլորովին շփոթված, իջավ բեմից:

Փորձեր լեղան աջակցել նրան ծափահարություններով, բայց շատ թույլ:

Անուշտեկ արտասանվեցին. «Տղան կանգնած էր այրվող տախտակամածի վրա»... «Ասորացիք գնում էին, ի՞նչպես գայլը հոտի վրա» .. և ուրիշ հատվածներ: Ապա ջանել լեզուները կարգացին իրենց հեղինակությունը: Յուրաքանչյուրը հերթով չեղնում էր, կանգնում բեմում, կոկորդը մաքրում, հանում սիրուն ժապավենով կապած ձեռագիրը և սկսում կարգալ: Այդ շարադրությունների թեման նույնն էր, ինչ վորնման դեպքում գրել էլին այդ աղջիկների մայրերը, տատերն ու տատերի տատը. «Բարեկամութուն», «Հիշողություններ անցյալի մասին», «Հեքյաթալին թագավորութուն», «Կրթության առավելությունը», «Տխրություն», «Սեր դեպի ծնողները» և այլն, և այլն:

Կարգացված առաջին շարադրության վերնագիրն էր «Ահա ինչ բան է կյանքը»: Դրա ընթերցումը ժամանակ առ ժամանակ ընդհատվում էր շշուկով արվող նկատողություններով, ինչպես՝ «Վորքան լավ է», «Վորքան գեղեցիկ է», «Ի՞նչ ճշմարտութուն» և այլն:


Դրանից հետո բեմ բարձրացավ մի թուխ, սև աչքերով ու սև մազերով աղջիկ. նախ եֆֆեկտավոր լուռություն պահեց, ընդունեց դեմքի վողբերգական արտահայտություն և դուստ սկսեց:

«Տեսիլք.— Գիշերը մութն էր ու փոթորկալից: Յերկնային գահի շուրջը վոչ մի առող չէր դողում, բայց դրա փոխարեն մարդու ականջներում շարունակ դողում էին խուլ վորոտներ, իսկ կայծակը բարկացած պատռում էր լերկնային ամպամած կամարը, կարծես արհամարհելով այն իշխանութունը, վոր ձեռք է բերել նշանավոր Փրանկլինը<sup>1)</sup>»

<sup>1)</sup> Բենիամին Ֆրանկլին — ամերիկացի նշանավոր գիտնական, սպրում էր XVIII դարում: Նա փորձեր արավ այն ժամանակները քիչ հայտնի էլեկտրականության վրա և նկատեց շանթարգելը:



Նրանց սարսափելի ուժի վերաբերմամբ: Անգամ կատաղի բամբիները միահամուռ վորոշել ելին թողնել իրենց գաղտնի ապաստանները և մրրկում ելին, կարծես նրա համար, վոր ել ավելի սարսափով պատեն այդ վայրի տեսարանը» և այլն, և այլն:



Պատմված ուսուցիչը: զիտեր բանն ինչու՞ն էր, և աշխատում էր ուղղվել: Նա

Սմբողջ շարագրութունը բռնում էր տասն եջ և վերջանում էր անսովոր դաժան քարոզով: Դա համարվեց գերագանց և արժանանցավ բարձր պարգևի: Քաղաքագլուխը, պարգևը հեղինակին տալով, արտասանեց մի ջերմ ճառ, հավատացնելով, թե «չերբեք զրանից գեղեցիկ զրվածք չի լսել»:

Ուսուցիչը, միանգամայն ուրախացած, մի կողմ քաշեց բազկաթուռը և, թիկունքը լսարանին դարձնելով, սկսեց գրատախտակի վրա նկարել Ամերիկայի քարտեզը, վոր հետո բոլոր դասարանները ըննի աշխարհագրութունից: Բայց ձեռը լավ չէր հնազանդում նրան, ու դասարանում մի զուսպ ծիծաղ անդամ: Նա

Մնչեց նկարածը և նորից գծեց, բայց դուրս չեկավ ավելի վատ և քրքիջը հընչեց ավելի բարձր: Նա իր ամբողջ ուշագրութունը կենտրոնացրեց աշխատանքի վրա, կարծես վորոշելով վերջ տալ այդ անտեղի ուրախութիան: Նա զգում էր, վոր բոլոր հալացքներն ուղղված են իր վրա, և կարծում էր թե բանը լավ է վերջանալու. բայց ծիծաղը դասարանում չէր դադարում, այլ, ընդհակառակը, սաստկանում էր: Յեվ զարմանալի չէ: Հենց ուսուցչի գլխավերևը՝ առաստաղում մի անցք կար, այդ անցքից իջնում էր թոկով կապկպած մի կատու, գլուխը փալատով պիտդ փաթաթած, վոր չմյավի: Իջնում էր դանդաղ, ծռմուխում էր ամբողջ մարմնով ու ձգվում վեր, աշխատելով ծակերով թոկը բռնել, բայց բռնում էր միայն ողբ: Քրքիջը քանի գնում սաստկանում էր, կատուն—ընդամենը մի թիզ էր հեռու իր գործով կանված ուսուցչից... ցած... ելի մի ակնթարթ, և նա հուսահատությամբ ճանկերը խրեց ուսուցչի պարիկի մեջ ու իր ավարի հետ միասին սլացավ վեր՝ գարձացած հասարակութան աչքի առաջ: Յեվ մ-ր Դոբլինսի ճազատ գանգի շուրջը մի անսպասելի փայլ լիջավ, վորովետև նկարելի վորդին վառվեցո՞ւնց նրա ճազատը ..

Դրանից հետո՝ ժողովը ցրվեց: Տղաները սլատովեցին. Յեկան արձակուրդները:

Բեկկի Տեչերը ամառը զնայ ծնողների մոտ՝ ուրիշ քաղաք, և նրա մեկնումով կյանքի ուրախութունը խավարեց:

Վերջապես, փոքրիկ քաղաքի քնած մթնուրտը շարժվեց — և շատ ուժեղ: Նշանակվեց բժշկին սպանողի դատի ուրը: Փոքրիկ քաղաքում մի գլուխ այդ մասին ելին խոսում. ուր գնայիր խոսք ու զրուցի առարկան այդ եր: Այնքան մի ակնարկ սպանութչան մասին՝ արյունը սառեցնում եր թոմի յերակներում. վոչ մաքուր խիղճը և սեփական չերկուղները նրան թելադրում ելին, վոր այդ զրուցներն իր մոտ իզուր չեն արվում, վոր իրեն «շոշափում» են: Նա Հեկին տարավ մի առանձնացած տեղ, վոր հետը խոսի և սիրտը մի քիչ թեթևացնի, ազատություն տա լեզվին և այդպիսով վիշտը կլսի բնկերոջ հետ: Բացի դրանից, նա ուզում եր համոզվել, թե կարողանում ե արդյոք Հեկը բերանը պինդ պահել:

- Դու մարդու բան ասել ես:
- Ինչի՞ մասին:
- Ինքդ գիտես ինչի մասին:
- Իհարկե չե:
- Վոչ մի խոսք:
- Վոչ մի խոսք: Գետինը մանեմ, թե սուտ եմ ասում: Ինչո՞ւ չես հարցնում վոր:
- Այնպես. վախենում եյի:
- Ինչ ես ասում, թոմ Սոյեր: Մենք կորած ենք, յեթե բան խոսենք: Ինքդ գիտես ելի:
- Թոմը թեթևություն զգաց: Գիչ լռելով հարցրեց.
- Հեկ, չե վոր վոչ-վոք չի կարող ստիպել, վոր խոսես:

— Ստիպել ինձ: Ներողություն կանես: Յեթե ուզես. վոր այդ միտին ինձ խեղդի, այն ժամանակ, թերեւ, խոսեմ, այլ դեպքում—վոչ մի կերպ:

— Այ դա լավ ե: Յես այսպես եմ կարծում, քանի չենք խոսի, մեզ վոչ մի մարդ ձեռ չի տա: Այնուամենայնիվ, արի յերգվենք, վոր կլուենք: Այդպես ավելի լավ կլինի:

— Համաձայն եմ:

Յեվ նրանք նորից յերգվեցին պատշաճ հանդիսավորությամբ:

— Իսկ ի՞նչ են խոսում. Հեկ: Ռ՛ւ՛՛՛՛ են կասկածում սպանութչան մեջ: Այնքան բաներ եմ լսել՝ բան չեմ հասկանում:

— Ի՞նչ են խոսում: Միշտ միևնույն բանը, Մեֆ Պոտտեր, Մեֆ Պոտտեր, Մեֆ Պոտտեր: Գրտինքս վրա չե տալիս, չերբ լսում եմ. քիչ ե մնում հեռանամ, թագնվեմ մի վորևէ տեղ:

Ճիշտ այդպես ել ինձ ե պատահում: Նա կորած մարդ ե: Դու չէս խղճում նրան:

— Այո, շատ: Նա իսկական մարդ ե. վոչ մեկին չարություն չի անում: Մի քիչ ձուկ ե բռնում, վոր խմելու փող ունենա և շատ ժամանակ ման ե գալիս անգործ... Ե, չե վոր մենք բոլորս ել այդպես ենք: Այնուամենայնիվ նա բարի յե. մի անգամ իր բաժին ձկի կեսը տվեց ինձ, ու ինքը մնաց սոված: Իսկ բանի՞ անգամ ե պաշտպանել ինձ և վորձանքից ազատել:

— Ինձ համար ել ձուկ բռնելու կառթեր ե շինել: Կուզեյի, վոր նրան ազատելինք:

— Ինչեր ես ասում: Ինչպես կարող ենք ազատել Յեթե մենք նրան բաց թողնենք, ելի կբռնեն:

— Այո, այո, կբռնեն: Բայց յես չեմ կարող տանել, չկբբ նրան հայհոյում են մի բանի համար, վորի չի արել:

— Յես ել, թոմ: Հասկանում ես, մեկ ել տեսար ա-

սին, թե նա ամենաավագակային ռեխն ե ամբողջ քաղաքում, ու զարմանում են, թե ինչպես ե, վոր մինչև հիմա նրան չեն կախել:

— Այո, այո, այդպես ել ասում են: Ականջովս լսել եմ. ասում են, վոր չեթե նրան արդարացնեն, մեր տղաներն իրենք կկախեն նրան:

Տղաները յերկար խոսեցին, բայց այդ զրույցը մեծ միթիթարանք չբերեց նրանց: Յերեկոյան միջնադին գնացին նրանք փոքրիկ, առանձնացած բանտի շուրջը պատելու, աղոտ մի հույս ունենալով, վոր իցե թե մի վորևե առանձին բան պատահի և միանգամից իրենց ազատի դժվարութիւնից, Բայց վոչինչ չպատահեց. ըստ յերևույթին վոչ հրեշտակները, վոչ կախարդները չհետաքրքրեցին դժբախտ բանտարկյալով:

Տղաներն արին այն, ինչ հաճախ ել անում ելին առաջ. — վանդակի միջով Պոտտերին հանձնեցին մի քիչ ծխախոտ ու լուցկի: Նա գտնվում եր ներքին հարկում, և պահակ ել չկար մոտերքը:

Այդ նվերների համար արտահայտած նրա շնորհակալութիւնը միշտ ել անհանգստացնում եր նրանց խիղճը: Իսկ այս անգամ ավելի ևս ցավ պատճառեց: Նրանք իրենց զգացին ստոր մասնիչներ, չերբ Պոտտերն ասաց:

— Բարի տղաներ եք, այստեղ ամենից ավելի դուք եք խղճում ինձ. յես ել բոլոր յերեխաների համար ոճեր ու ամեն տեսակի խաղալիքներ եմ շինել, ցույց եմ տվել, թե վորն ե լավ ձուկ բռնելու տեղը. մի խոսքով՝ բարեկամ եմ յեղել նրանց. իսկ հիմա, յերբ փորձանքի մեջ եմ ընկել, բոլորը մոռացել են ինձ, բացի թոմից ու Հեկից դուք ինձ չեք մոռացել, յես ել ձեզ չեմ մոռանա: Այո, տղերք, յես սարսափելի բան եմ արել. ով գիտի գինին եր ուղեղս մթափնել—միայն դրանով կարող եմ բացարել... Հիմա դրա համար ինձ կուտեցնեն—և տեղին ե: Թերևս գա ինձ համար ավելի լավ ե, գոնե յես արդպես

այս գիշեր, թե չե ով փոսերը տեսնի՝ իսկուհն գլխի կընկնի, թե ինչ ե կատարվել, ու ինքը կհանի գանձը:

— Վոր արդպես ե, յես ելի կգամ լուսամուտի տակ կմլավեմ:

— Լավ: Արի բանն ու քլունգը պահենք թփերի մեջ:

Գիշերը, տասերկուսի մոտ, տղաներն յեկան նուհն տեղը, և ստվերում նստելով, սկսեցին սպասել: Խուլ տեղ եր, ուշ ժամ: Հեռվից յեկավ շան խուլ հաշոց, բուն արձագանք տվեց դրան շարագուշակ կոխնչով: Շրջապատի հանդիսավորութիւնը ճնշում եր տղաներին, և նրանք քիչ եյին խոսում իրար հետ: Վերջապես, վորոշեցին, թե կես գիշերը հասել ե, նկատեցին ուր ե ընկնում ստվերը, և սկսեցին քանդել: Հույսը թե յովեց նրանց. աշխատեցին ավելի մեծ հետաքրքրութամբ, ուստի և ավելի մեծ յեռանդով: Փոսն ավելի խորացավ, և յերբ բանը դիպավ ինչ-վոր բանի, նրանց սիրտը գնաց. բայց յուրաքանչյուր անգամ նրանց սպասում եր հիասթափութիւն: Պարզվեց, վոր բանը դիպել եր արմատի թե քարի: Վերջապես թոմն ասաց,

— Շարունակելն ավելորդ ե, Հեկ. մենք ելի այն տեղը չենք քանդում:

— Վսնց թե այն տեղը չի: Չեյինք կարող սխալվել: Մենք սկսեցինք քանդել հենց այն տեղը, ուր ստվեր ընկավ:

— Գիտեմ, բայց այդ չի բանը:

— Ի՞նչ կա:

— Բանն այն ե, վոր մենք ժամացույց չունենք, և ժամանակը վորոշեցինք մոտավորապես: Գուցե այն ժամանակ շատ վաղ եր կամ շատ ուշ:

Բանն ընկավ Հեկի ձեռից:

— Դա ճիշտ ե... Բանն ել հենց այդ ե: Դե, ուրեմն, պիտի թողնել: Չե վոր միևնուհն ե՝ ժամանակը չենք կարող ճիշտ վորոշել. հետո սարսափելի յե, յերբ շուրջը վրե-

տում են կախարհներ և ուրվականներ: Բոլոր ժամանակ ինձ թվում եր թե՛ ինչ-վոր մեկը կանգնած է յետև, և վախենում եմ յետ դռնալ, վորովհետև, գուցե, մի ուրիշը կանգնած է առաջիս ու միայն առիթի յե սպասում: Բոլոր ժամանակ մարմինս դողում ե:

— Յես ել եմ վախենում, Հեկ. ինձ հետ ել գրեթե նույնն է պատահում: Ասում են, յերբ ծառի տակ գանձ են թաղում, մոտերքում մեռել են դնում, վոր գանձը հսկի:

— Ինչեք ես ասում:

— Այո, դնում են,— այնքան եմ լսել:

— Չե, գիտես ինչ, Թոմ, ցանկությունն չունեմ մեռելների կողքին ման գալու, փորձանքի մեջ կզցեն:

— Յես ել ցանկությունն չունեմ նրանց արթնացնելու, Հեկ: Հանկարծ այստեղ պարկոզը՝ գանգը կբարձրացնի ու կգոռա:

— Հերիք ե, Թոմ, ձայնդ կտրի:

— Ճիշտ եմ ասում, Հեկ, այդպես ահ կա սրտումս:

— Լսիր, Թոմ, գնանք այստեղից քանի գլուխնիս վրաներս ե: Բախտներս փորձենք մի ուրիշ տեղ:

— Գնանք: Թերևս դա ավելի լավ կլինի:

— Ուր գնանք:

Թոմը մտածեց մի փոքր և ասաց.

— Այն տունը, ուր ուրվականներ կան:


— Ե, կորչի: Չեմ սիրում այդ սատանայական տեղերը, Թոմ: Դա հո մեռելներից վատ է: Մեռելները, գուցե, խոսում են գոնե, բայց սավանի մեջ փաթաթված չորս բոլորդ չեն պտտում և ուղիղ յերեսիդ նայելով ատամ չեն կրճատում, ինչպես ուրվականներն են անում: Յես այդ չեմ կարող տանել, Թոմ: և ուրիշ մարդ ել չի կարող տանել:

— Այո, բայց չե՞ վոր ուրվականները շրջում են միայն գիշերները. ցերեկը նրանք մեզ չեն խանգարի քանդելու:

— Այդ այդպես է. բայց և այնպես մարդիկ ցերեկով ել խուսափում են մտնել այդ տեսակ տներ, ուր մնաց գիշերը:

— Դա ավելի նրանից է, վոր մարդիկ առհասարակ չեն սիրում գնալ այն տեղերը, ուր յերբեմիցե մարդ են սպանել: Բայց չե վոր այս տան մոտ գիշերն ել բան չի յերևում. միայն կապույտ լույս է յերևում լուսատուից, և վոչ թե իսկական ուրվական:

— Ե, Թոմ, յեթե մի տեղ կապույտ լույս տեսնես, կարող ես գրազ գալ, վոր ուրվականը ղեռու չի: Ինքդ դատիր. գիտես վոր ուրվականից բացի ուրիշ մեկը կապույտ լույս չի վառում:



Անրևակ տուն:

— Դա ճիշտ է, բայց և այնպես նրանք ցերեկով չեն շրջում, ել ինչո՞ւ վախենալ նրանցից:

— Դե լավ, քանի վոր եդպես ես ցանկանում, գնանք քանդենք. միայն թե՛ վտանգավոր է:

Տղաներն իջան բլրից: Ներքև, լուսնի լուսով լուսա-  
վորված հովտի մեջտեղը կախարչված տունը կանգնած էր  
մենակ. ցանկապատը վաղուց քանդվել-ընկել էր, շեմքը  
ծածկվել էր խոտով. ծխնելույզը խորտակվել էր. լուսա-  
մուտներին ապակի չկար. անկյուններից մեկը նույնպես  
քանդվել-թափվել էր ներս: Տղաները յերկար նայում էին  
և, սպասելով, թե անա կապույտ յույսը կերևա լուսամու-  
տում, խոսում էին շշուկով: Ապա թեքվեցին դեպի աջ,  
մեծ շրջան արին, վոր սարսափելի տան մոտով շանցնեն,  
և տուն վերադարձան անտառով, վոր գտնվում էր բլրի  
հակառակ լանջին:

XXV

Հետևյալ սրը, կես որին, տղաներն իրենց գործիքնե-  
րով նորից լեկան ցցաշոր ծառի մոտ: Թոմը ցանկանում էր  
վորքան կարելի չե շուտ լինել ուրվականներ ունեցող  
տանը, բայց Հեկն աջնքան չէր շտապում:

— Լսիր, Թոմ, սկսեց նա, — գիտես այսոր ի՞նչ որ է:

Թոմը մտքում համրեց շաբաթվա որերը և զարմացած  
ընկերոջը նայեց:

— Այ, այ, այ. մոռացել եցի:

— Յես ել չելի մտածել այդ մասին և միայն հիմա  
հիշեցի, վոր այսոր ուրբաթ է:

— Վայ, քո տունը չքանդվի: Պետք էր զգուշ լինել...  
կարող էլինք փորձանքի մեջ ընկնել՝ ուրբաթ որով այդ-  
պես բան անելով:

— Այդ ամեն մի հիմար էլ գիտի: Առաջինը դու չես, Հեկ:

— Մի՞թե ասի, թե չես առաջինն եմ: Բայց բանը  
մենակ ուրբաթը չի: Գիշերս շատ վատ լերաց է՝ տեսել.  
չերագումս մկներ տեսա:

— Ի՞նչ ես ասում: Դա շատ վատ լերաց է: Մկները  
փորձանքի նշան են: Կովո՞ւմ էլին, ի՞նչ է:

— Չե:

— Այդ դեռ լավ է: Յեթե մկները չեն կովում՝ նշա-  
նակում է փորձանքը մոտերքումն է: Պետք է մարդ ականջը  
ձենի պահի, վոր փորձանքի մեջ չընկնի: Այստեղ թողնենք  
այս բանը և արի ավելի լավ է խաղանք: Հեկ դու ճանաչո՞ւմ  
Ռոբին Հուգին:

— Չե, ի՞նչ բան է Ռոբին Հուզը:

— Դա Անգլիայի ամենանշանավոր մարդկանցից մեկն էր և շատ լավ մարդ: Նա ավազակ էր:

— Այ, մարդ այդպես բան լինի: Նա ունի եր կողոպտում:

— Միայն հարուստներին: Բայց աղքատներին չերբեք չեր նեղում: Աղքատներին սիրում էր և իր ունեցածը միշտ բաժանում նրանց:

— Այ, ով գիտի, ինչ հիանալի մարդ է չեղել:

— Այո, իսկապես հիանալի: Այդպես ազնիվ մարդ աշխարհում չի չեղել: Հիմա այդպես մարդիկ սկի չկան եր, հավատա: Նա մի ձեռով կարող էր ամեն մի անգլիացու ծեծել, յեթե նույն իսկ մյուս ձեռը մեջքին կապված լիներ: Մի վերստ հեռվից նետով խփում էր ամենափոքր

կոպեկանոցին, և յեթե նետը դիպչում էր կոպեկանոցի պոսկին, այնքան էր արդեն վշտանում, վոր նրատում էր ու լաց լինում: Այսպես ուրեմն, մենք խաղալու յենք Ռոբին Հուզ: Դա շատ լավ խաղ է: Քեդ կսովորեցնեմ:

— Լավ, համաձայն եմ:

Նրանք մինչև յերեկո Ռոբին Հուզ խաղացին, ժամանակ առ ժամանակ ազան հայացքներ գցելով ուրվականներ ունեցող տան կողմը և խոսելով, թե ինչ



Ռոբին Հուզ:

է սպասում իրենց վաղը: Յերբ արևն սկսեց իջնել դեպի արևմուտք՝ նրանք գնացին տուն և շուտով թազնվեցին անտառում:

Շաբաթ որը, կեսօրից հետո, աղաները նորից ցցաչոր ծառի մոտ ելին: Նրանք ծխեցին, խոսեցին՝ սովորում պառկած, հետո մի քիչ քանդեցին արդեն քանդած փոսը, հույս չունենալով հաջողության վրա, քանդեցին միայն նրա համար, վորովհետև, ինչպես թո՛մն էր հավատացնում, քիչ չեր պատահել, վոր հուսահատությունից մարդիկ մինչև վերջը չեն ուղել քանդել, յերբ գանձին հասնելու համար վեց մատնաչափ հազիվ էր մնացել, իսկ հետո յեկել է ինչ-վոր մեկը և բահի մի հարվածով գտել է գանձը:

Բայց այս անգամ ել աղաների ջանքն իրուր անցավ, և նրանք բահերն ուսած հեռացան, գիտակցելով, վոր բախտի հետ կատակ չեն արել, այլ բարեխղճությամբ կատարել են այն բոլոր պայմանները, ինչ անհրաժեշտ է գանձ փնտրելու համար:

Յեվ, վերջապես, ահա մոտեցան նրանք «կախարդված» տանը: Մեռելային լուսթյունը, վոր տիրում էր այստեղ՝ շոգ կեսօրին, նրանց թվում էր շարագուշակ ու սարսափելի: Նրանք մոտեցան դռանը և, սարսափից դողահար, նայեցին ներս: Տեսան մի սենյակ, ուր հատակի տեղ կանաչ էր բուսել, տեսան առանց ապակու լուսամուտների, քանդված սանդուղք. ամեն կողմ կախկապած էր հին վոստախը: Նրանք սրտապնդեցին ու կամացուկ ներս մտան: Խոսում ելին շշուկով, սիրտները խփում էր, մար-



մընի բոլոր մկանները լարված ելին, լսվում ելին ամենա-  
աննշան շրջուկն անգամ. պատրաստ ելին առաջին իսկ  
ձայնից փախչել: Բայց կամաց-կամաց միջավայրին ընտե-  
լացան, ու նրանց վախն անցավ. հետաքրքրությամբ նա-  
չեցին տանը, զարմանալով իրենց համարձակության վրա  
և միևնույն ժամանակ զբանով հպարտանալով: Հետո ուղե-  
ցին տեսնել վերին հարկն ել: Դանշանակում եր նահանջի  
ճանապարհը կտրել, բայց նրանք խրախուսեցին իրար և,  
վերջիվերջո, չեղավ այն, ինչ պետք եր սպասել. նրանք  
գործիքները նետեցին մի անկյուն և սանդուխով բարձր-  
րացան վեր: Այնտեղ ել նույն ամայության ազդեցությունը:  
Մի անկյունում գտան մի խուց, վոր խորհրդավոր բանի  
հույս եր տալիս, բայց սխալվեցին իրենց սպասելիքների  
մեջ. խուցը դատարկ եր: Այժմ բոլորովին արիացան ու  
տիրապետեցին իրենց: Քիչ մնալուց հետո՝ արգեն ուզում  
ելին ցած իջնել և փորելու աշխատանքն սկսել, յերբ  
հանկարծ...

— Մը՛սս, — արտասանեց թո՛մը:

— Ի՞նչ կա, - շնչաց Հեկը, սարսափից թան կտրած:

— Սո՛ւս. Լսո՛ւմ ես:

— Այո. ոյ, ոյ, ոյ: Արի փախչենք:

— Ո՛ւր փախչենք: Հանդիստ նստի, մի շնչի: Նրանք  
մոտենում են դռանը:

Տղաները մեկնվելով պառկեցին հատակին, աշխատե-  
լով ձեղքերի միջոցով վորևե բան տեսնել, և պառկեցին  
այդպես՝ սարսափից դողալով:

— Այ, կանգնեցին... չե... ելի գալիս են... չեկան:  
Իե, մի ֆրսֆսա, Հեկ — կլսեն: Ոհ, ինչո՛ւ չեկա այստեղ ե:

Ներս մտան յերկու հոգի: Մեկը խուլ ու համր ծե-  
րունի յեր, սպանացի, վոր վերջերս մեկ-մեկ յերևում եր  
քաղաքում. մյուսին՝ տղաներից վոչ մեկը չեր ճանաչում:

«Մյուսը» կեղտոտ, պատառոտուն շորերով մի եակ  
եր, անհաճո դեմքով: Սպանացին փաթաթված եր լայն

թիկնոցի մեջ. նա խիտ ճերմակ այտամիրուքներ ուներ.  
Լաչնեզը գլխարկի տակից իջնում ելին յերկար, սպիտակ  
մազերը. աչքերին կար կանաչ ակնոց: Յերբ ներս մտան՝  
«մյուսը» ինչ-վոր շուկով պատմեց ընկերոջը. յերկուսն  
ել նստեցին հատակին, յերեսները դեպի դուռը, միջքները  
պատին, և խոսողը շարունակեց իր պատմությունը: Կա-  
մաց- կամաց նա մոռացավ զգուշությունը, և սկսեց բարձր  
խոսել:

— Չե, — ասում եր նա, — չես ամեն ինչ կշռադատել  
եմ; և այդ ինձ դուր չի գալիս: Դա վտանգավոր բան ե:

— Վտանգավոր, — փնփնթաց «խուլ ու համրը», ի  
մեծ զարմանս տղաների: — Ե՛, վախուկ:

Այդ ձայնը լսելով՝ տղաները քիչ մնաց սարսափից  
ճչալին: Դա հնդիկ Չուի ձայնն եր: Յերկուսն ել լոեցին,  
հետո Չոն ասաց.

— Բայց այն մյուսը վորքան ել վտանգավոր եր,  
բայց ելի չեղավ:

— Այն ուրիշ բան եր: Այն այստեղից հեռու չե, վերև,  
և նրա մոտերքը ուրիշ բնակություն չկա:

— Բայց ինչքան վտանգավոր ե ցերեկով այստեղ  
գալը. բավական ե միայն մեկը նայի վրաներս՝ իսկույն  
կկասկածի:

— Գիտեմ: Բայց ավելի հարմար տեղ չկար, վոր  
թագնվենք այս հիմար գործից հետո: Յես, առհասարակ  
չեմ ուզում այստեղ մնալ: Յես դեռ յերեկ եյի ուզում  
դուրս գալ, բայց դժվար եր աննկատելի հեռանալ, քանի  
այդ անիծյալ տղաները խաղում ելին տան դիմաց՝ բլուրի  
վրա:

Այս խոսքերից «անիծյալ յերեխաների» մարմնով սար-  
սուռ անցավ: Ի՞նչ լավ եր, վոր գործն ուրբաթ որը չըս-  
կսեցին և վորոշեցին մի որ սպասել: Մտի խորքում ավ-  
ստում ելին, վոր իրենց անելիքը չհետաձգեցին մի ամբողջ  
տարով: Շրջմպիկները հանեցին իրենց պաշարը և սկսե-

ցին ուտել: Յերկար մտածմունքներէց հետո՝ հնդիկ Չոն ասաց.

— Լսիր, տղա, դու յետ գնա դեպի գետը—նա հարմար տեղ է քեզ համար—ու իմ մասին լուր կտամ քեզ: Իսկ չես հարմար ըուպե կղանեմ և մի անգամ ել կերթամ քաղաքը նայելու: Պետք է առաջուց ամեն բան լավ իմանալ և համոզվել, վոր հանգամանքները բարեհաջող են—այն ժամանակ կսկսենք վտանգավոր գործը: Իսկ հետո արդեն կերթանք Տերսառ:

«Մյուսը» դրանից գոհ մնաց: Ապա յերկուսն ել ըսկսեցին հորանջել, և հնդիկն ասաց.

— Քունս տանում է սարսափելի: Հերթը հիմի բոնն է արժու՞ն մնալու:

Նա վտան ու ձեռն իրեն քաշեց, կուշ յեկավ կանաչի վրա և շուտով խումփացրեց: Ընկերը մի յերկու անգամ հրեց նրան, և նա խումփոցը կարեց: Հետո պահպանութիւն անողն ել սկսեց ննջել, նրա գլուխը քանի գնում ցածանում-իջնում եր. այժմ խումփում ելին յերկուսն ել:

Տղաները թեթևացած շունչ քաշեցին:

— Հիմի փրկված ենք, — շնչաց թոմը: — Գնանք քանի շուտ է:

— Չեմ կարող, — ասաց Հեկը, — տեղն ու տեղը կմեռնեն, յեթե զարթնեն:

Թոմը խնդրում, համոզում եր, Հեկը՝ համառում: Վերջապես, Թոմը կամացուկ վեր կացավ և մենակ գնաց: Բայց առաջին իսկ քայլափոխին՝ հին տախտակներն այնպես ձոճոացին, վոր նա տեղն ու տեղը նստեց, վախից կիսամեռ, և յերկրորդ անգամ ել չփորձեց քայլ անել: Բոպեններն անտանելի դանդաղ ելին անցնում. տղաներին թըվում եր, թե ժամանակը վերջացել է արդեն և հավիտենութիւնն անգամ սառել. նրանք շատ ուրախացան տեսնելով, վերջապես, վոր արեւ մայր է մտնում:

Այժմ արդեն խումփում ելին վոչ թե յերկուսը, այլ

մեկը: Հնդիկ Չոն վեր կացավ, նստեց, շուրջը նայեց, նայեց ընկերոջը, վորի գլուխը կախվել էր ծնկներին, և մուսլ ժպտաց: Ապա նրան մի քացի տալով՝ ասաց.

— Վեր կաց, Լավ ես պահպանութիւն անում, խոսք չկա:

— Ե, ինչ կա վոր. բան հո չպատահեց: Մի՞թե քնել եմ:

— Իե, ժամանակ է ձամբա ընկնելու: Մենք դեռ մի փոքր պաշար ունենք, կարծեմ: Ի՞նչ պիտի անենք:

— Չգիտեմ իսկապես: Մի՞թե այստեղ թողնենք, ինչպես միշտ: Ախր մինչև դեպի հարավ չչարժվենք—մեզ պետք չի գալու: Իսկ վեց հարյուր հիսուն արծաթը շալակով տանելը հեշտ բան չի:

— Այդպես է, բայց այստեղ գալու ցանկութիւն չկա:

— Ե, վոչինչ գիշերը կգանք ինչպես միշտ. դա ավելի լավ կլինի:

— Այո, բայց այ ինչ կա, բարեկամ. մենք ախր, գուցե, դեռ շուտով չկատարենք այն գործը — գիտես մորը. ով գիտի ինչ կարող է պատահել. մեր փողերը վատ ենք պահել... Արի մի լավ, խոր թաղենք:

— Լավ ասիր, — ասաց ընկերը և, անցնելով սենյակի մյուս կողմը, չոքեց, հետո ոջախի լեռին կափարիչներէց մեկը բարձրացրեց ու հանեց այնտեղից մի տուպրակ, վորի մեջ հաճելի զրնգաց արծաթը. նա այնտեղից հանեց քսան թե յերեսուն դոլլար՝ իր համար և նույնքան ել հնդիկի համար ու տուպրակը տվեց նրան: Հնդիկը անկունում չոքած՝ մեծ դանակով քանդում եր գետինը:

Տղաներն անմիջապես մոռացան իրենց վախն ու դրժբախտութիւնը: Ազան աչքերով հետևում ելին շրջմովիների շարժումներին: Այդպիսի հարստութիւն նրանք չեղևակայել անգամ չելին կարող: Վեց հարյուր դոլլար: Գաբավական է վեց յերեխա հարստացնելու համար: Գանձն իր վտով ընկել էր նրանց ձեռք. այժմ ել կարիք չկար





Անտանելի սարսափը տղաների մեջ վճռականութիւն զարթեցրեց, և նրանք արդեն ուզում էին խուցը նետ-վել, չէրբ հանկարծ կոտորող տախտակների ճռինչ լսվեց, և հնդիկ Ջոն տապալվեց գետին՝ կոտորված սանդուղի մնացորդի հետ միասին: Տնքալով ու հայտնելով նա վոտքի կանգնեց, իսկ ընկերն ասաց.

— Ե, ինչ կարիք կար այդտեղ բարձրանալու: Յեթե մեկն այնտեղ նստած է, թող նստի իր համար, — մեր ինչ բանն է: Յեթե ուզում ե ցած. թուչի ու գլուխը կոտորի, ելի չենք խանգարի: Քառորդ ժամից հետո բոլորովին կմթնի: Այն ժամանակ թող մեզ հեռուեն, յեթե ուզում են, դեմ չեմ: Յե՛ս այնպես եմ կարծում, վոր յեթե այս իրերն այստեղ բերողը մեզ տեսել է, ով գիտի մեզ ընդունել ե սատանաների կամ ուրվականների տեղ և այժմ, յերևի, յերկու վոտ ել փոխ առած փախչում է:

Ջոն թոնթորալով համաձայնեց ընկերոջ հետ, թե ել վորոնելու ժամանակ չկա, պետք է շուտով ձամբա ընկնել: Նրանք դուրս յելան տնից թանձրացող աղջամուղջի մեջ և գնացին դեպի գետը, տանելով իրենց հետ թանգազին սնդուկը:

Թոմս ու Հեկը վեր կացան, յերկար պառկելուց ու վախից թուլացած, բայց թեթևացած սրտով, և պատի գերանների արանքով յերկար նայեցին նրանց յետևից: Հետևե՛լ: Չե՛ս ներողութիւն կանես: Մեր հերոսներն ուրախ յեղան, վոր անվնաս, առանց վիզները կոտրելու, իջան ցած և, բլուրն անցնելով, վերադարձան քաղաք: Ճամբին քիչ խոսեցին իրար հետ. Ի՛նչ կարիք կար բանն ու քլունգը այդ տունը տանելու: Այդ գործիքները չլինելին՝ հնդիկ Ջոն վոչինչ չեր կասկածի: Նա նորից կթաղեր իր արծաթն ու վոսկին, սպասելով, թե չէրբ կարող ե վրեժխնդիր լինել, ապա, վերադառնալով, փոսը կգտներ դատարկ: Ի՛նչ հիմարութիւն՝ վոր գործիքները բերին այստեղ: Նրանք վորոշեցին հետևել սպանացուն, յերբ նա

քաղաք գա իր մտադրած վրեժխնդրութիւնն իրագործելու, և ապա հետևել նրան մինչև № 2-ը: Հանկարծ Թոմի գլխում մի միտք ծագեց.

— Հեկ, իսկ յեթե նա մեզնից ե ուզում վրեժխնդիր լինել:

— Ո՛ր, մի ասի, — ասաց Հեկը, վախից հազիվ վոտի վրա կանգնելով:

Նրանք ամեն ինչ՝ կշռադատեցին և, մինչև քաղաք հասնելը համաձայնեցին, վոր հնդիկը կարող եր նկատի ունենալ և ուրիշին կամ, գոնե, մենակ Թոմին, վորովհետև Թոմս եր վկայութիւն տվել նրա դեմ: Թոմին շատ քիչ եր մխիթարում այն միտքը, թե վտանգը սպառնում է միայն իրեն: Նա կարծում եր, վոր ընկերովի այնքան ել սարսափելի չեր լինի:

Յերեկվա ապրուսեները թոմին տանջեցին ամբողջ գիշերը: Չորս անգամ լերագում տեսավ, վոր գանձն իր ձեռքն է, և չորս անգամ չքանում-կորչում էր այդ գանձը, լերը զարթնում էր:

Առավոտյան դեմ, անկողնում պառկած նա հիշելով իր արկածի մանրամասները, նկատեց, վոր դրանք մի տեսակ անորոշ ու հեռու լին, կարծես կատարվել էին ուրիշ աշխարհում և վաղուց-վաղուց, և նա մտածեց, թե այդ արկածները, գուցե, լերագումն է տեսել:

Բայց վորքան շատ էր մտածում, այնքան ավելի պարզ ու վորոշ էլին պատկերանում նրա հիշողութւան մեջ կատարված դեպքի մանրամասնութւունները և, վերջիվերջո, նա հանգեց այն մտքին, թե դա, թերևս, լերագ է: Շտապ-շտապ նախաճաշեց ու գնաց Հ<sup>1</sup> կին վորոնհիլու:

Հեկը նավակի պոնկին նստած՝ վորոնները խաղացնում էր ջրում, և շատ ընկճված դիրք ուներ: Թումը վորոշեց չհարցուփորձել Հեկին, այլ խոսեցնել. լեթե իր ակնարկը չհասկանա, — նշանակում է, թո՛մն այդ բոլորը տեսել է լերագում:

— Բարով, Հեկ:

— Բարով: Ե, թո՛մ, լեթե այդ անիծյալ բանը ծառի տակ թողնելիք, փողը հիմի մեր ձեռին կլիներ: Ափսոս:

— Ուրեմն լերագ չէր: Ափսոս, վոր լերագ չի լեղել:

— Ի՞նչ լերագ:

— Յերեկվա պատահածի մասին եմ ասում. Ինձ արդեն թվում էր թե լերագում եմ տեսել այդ բոլորը:

— Յերագում: Սանդուղը վորտի տակ չկտորեր, նա քեզ լերագ ցույց կտար: Իսկ լես ամբողջ գիշեր լերագումըս տեսնում էլի այդ անիծյալ սպանացուն, վոր վազում է լ'տեխցս: Գրողը տանի նրան:

Ինչո՞ւ գրողը տանի: Մենք պետք է նրան գանենք և փողերը վերցնենք:

Նրան լերբեք էլ չենք գտնի: Այդ տեսակ հաջողութւունը չի կրկնվում.

չկարողացանք ոգտվել և ամեն ինչ կորավ: Գիտես, լես սարսափից դողում եմ, լերը մտածում եմ, վոր կարող եմ հանդիպել նրան:

— Յես էլ, Հեկ: Բայց և այնպես կուզելի տեսնել նրան և հետեել թե վորտեղ է դրանց № 2-ը:

— № 2-ը՝ Այո, այո: Յես ինքս մտածել եմ այդ մասին, բայց չեմ կարողացել մի բան հասկանալ: Ի՞նչ ես կարծում, դա ի՞նչ կարող է լինել:

— Չգիտեմ. Ինչ-վոր մութ բան է: Լսիր, Հեկ, դա գուցե տան համար է:

— Ինչեր ես ասում: Իհարկե, չէ: Մեր փոքրիկ քաղաքում այդ չի կարող լինել: Չե՞ վոր մեր տները համար չունեն:

— Ճիշտ է. թող մի մտածեմ: Գիտես, դա գուցե ճաշարանի սենյակի համարն է:



Խորհրդակցութւուն

— Տես ե, լավ են հնարել: Մենք յերկու ճաշարան ունենք: Ստուգելը դժվար չի:

— Սպասիր այստեղ, Հեկ, մինչև գամ:

Յե՛վ թո՛մը չբացավ: Նա չեր սիրում Հեկի հետ միասին յերևալ հասարակության մեջ: Կես ժամից նա վերադարձավ: Լավ ճաշարանում (ուր առաջուց մտավ թո՛մը), № 2-ը վաղուց արդեն գրավել էր մի ջահել փաստաբան: Վաս ճաշարանում № 2-ը մի տեսակ խորհրդավոր էր: Ճաշարանատիրոջ փոքրիկ տղան պատմեց, վոր այդ համարը բոլոր ժամանակ փակ է, ու նա յերբեք չի տեսել, վոր մեկը մտնի այնտեղ կամ դուրս գա այնտեղից, բացի գիշերները: Նա չգիտեր այդ տարրինակության պատճառը, ուստի և կարծում էր, թե յերկրորդ համարը «մաքուր չի»: Ի միջի ալոց, նա ասաց, թե յերեկ գիշեր այնտեղ լույս է տեսել:

— Այ, ինչ լսեցի, Հեկ: Համոզված եմ, վոր նրանք հենց այդ յերկրորդ համարի մասին ելին խոսում:

— Յես ել եմ կարծում, թո՛մ: Բա ինչ անենք:

— Սպասիր: Թող մտածենք:

Թո՛մը յերկար մտածեց, ապա ասաց.

— Այ ինչ պիտի անել: Այդ յերկրորդ համարի յետևի դուռը դուրս է գալիս ճաշարանի ու փլեկ սարայի արանքի նեղ փողոցը: Աշխատիր ինչքան կարելի յե շատ բանալի գտնել, յես ել կբերեմ մորաքրոջս բոլոր բանալիները, և մու՛թ գիշեր լինելուն պես կփորձենք այդ դուռը բանալ: Յե՛վ չմոռանաս հետևել հնդիկ Ջոյին, յեթե քաղաքում յերևա. — հիշո՛ւմ ես՝ ասաց, թե կգա տեսնելու — հարմար է արդյոք ժամանակը վրեժ առնելու համար: Հենց վոր նրան տեսնես, յետևից գնա, և յեթե նա համարը չմտնի, նշանակում է՝ գլխի չենք ընկել:

— Ախր, յես ինչպես կարող եմ մեն-մենակ հետևել նրան. վախենում եմ:

— Այդ ախր գիշերը պիտի անես. նա գուցե քեզ չի ել տեսնում. իսկ յեթե տեսնի, վոչինչ չի կարծի:

— Ե, յեթե մու՛թ գիշեր է լինելու, համաձայն եմ. փորձիր...

— Յեթե գիշերը մու՛թ լինի, յես ել կհետևեմ նրան, Հեկ: Թե չե ինչ իրեն հարկավոր է՝ կիմանա ու, փոզերն առած, կփախչի:

Ճիշտ է, թո՛մ, ճիշտ է: Յես կհետևեմ նրան:

Այդպես. լավ է: Միայն թե ականջիդ յետեր չգցես, Հեկ: Իսկ յես արդեն պատրաստ կլինեմ:

Թոմն ու Հեկը վորոշեցին հենց այդ յերեկո փորձել: Մինչև ժամի իննը անցան-դարձան ճաշարանի շուրջը: Մեկը հսկում էր մուտքի դուռը, մյուսը—այն դուռը, վոր դուրս էր գալիս նեղլիկ փողոցը: Այս վերջինում վոշ-վոջ չերեաց. սպանացու նման վոշ մի մարդ վնչ մտավ այնտեղ, վնչ դուրս յեկավ այնտեղից: Գիշերը խոտտանում էր պարզ լինել, և Թոմը գնաց տուն, ընկերոջ հետ պայմանավորվելով, վոր յեթե մթնի, նա կգա և լուսամուտի տակ կմլավի. այն ժամանակ Թոմը դուրս կգա լուսամուտով, և նրանք կերթան բանալիները փորձելու: Բայց լուսնյակ գիշեր յեղավ, ուտի տասերկուսից հետո Հեկը թողեց իր գիտարանն ու գնաց քնելու շաքարի դասարկ տակառում, վորը նրա գիշերային ապաստանն էր:

Յերեքշաբթի որն էլ հաջողութուն չունեցան. չորեքշաբթի նույնպես: Բայց հինգշաբթի գիշերը խոտտանում էր մութ լինել: Թոմը նախապես ծլկեց անից, հետը վերցնելով մորաքրոջ թիթեղե լապտերն ու մեծ սրբիչը, վորով ծածկելու չեր լապտերը: Նա լապտերը թազցրեց այն տակառում, ուր գիշերում էր Հեկը, և յերկուսն էլ սկսեցին հսկել: Կես գիշերից մի ժամ առաջ ճաշարանը փակեցին ու նրա միջի լույսերը հանգցրին. մյուս աներում ճրագներն արդեն հանգած էին: Սպանացին չերեաց: Մի խոսքով՝ հանգամանքները լավ էին դասավորվում: Գիշերըն այնքան մութն էր, վոր չեթե մատդ աչք կոխելիք—

մարդը չեր տեսնի: Լուսթյունը խանգարվում էր յերբեմն հեռավոր վորոտի արձագանքներով:

Թոմը լապտերը վառեց դեռ տակառի մեջ, և մեր հերոսները մթան միջով գնացին դեպի ճաշարան:

Հեկը պահակ կանգնեց մուտքի մոտ, իսկ Թոմը խաբխափելով անցավ-գնաց նեղլիկ փողոցը: Տիրեց ճնշող լուսթյուն, վորը սարսափելի վախեցնում էր Հեկին: Նա ցանկանում էր, վոր լապտերի լույսը մթան մեջ ընկնի իր վրա. դա կվախեցներ նրան, բայց, գոնե, ապացուց կլիներ, թե Թոմը դեռ կենդանի յե:

Թոմի գնալուց հետո կարծես մի քանի ժամ էր անցել:

«Ով գիտի իրեն վատ ե գզացել,—մտածեց Հեկը:—Գուցե և վախից մեռել ե արդեն»:

Ահաբեկված Հեկը հեռագեհետե մտաեցավ նեղլիկ փողոցին, չերևակայելով ամեն տեսակ սարսափներ և ամեն բոպե վորևե աղետից վախենալով: Նա հազիվ էր շնչում, իսկ սիրան այնպես սաստիկ էր զարկում, վոր վախենում էր հանկարծ չպալթի:

— Հանկարծ լույս շողաց, և Թոմը սլացավ Հեկի կողքով:

— Փախիր,— շնչաց նա:— Փախիր, ազատվիր:

Ել կրկնելու կարիք չեղավ. Նախ քան Թոմը կափարտեր իր խոսքը՝ Հեկը քամու պես սլանում էր արդեն: Տղաները կանգ չառան, մինչև վոր չհասան քաղաքի մյուս ծայրում գտնվող հին սպանդանոցը: Հազիվ ծածկի տակ էլին մտել՝ փոթորիկն սկսվեց, և անձրևը թափվեց վարար, ասես կծերից: Մի փոքր հանգստանալով՝ Թոմն սկսեց պատմել:

— Ո՛ր, Հեկ, ինչ սարսափելի չեր: Յերկու բանալի փորձեցի, աշխատեցի վորքան կարելի չե կամաց, բայց այնպես էլին գնդգնդում, շունչս կտրում էր վախից,—ու կողպեքի մեջ սկի չեյին պտտվում: Հանկարծ, ինքս էլ այդ

Հնկատերու՛, բռնակը հուպ տվի, և դուռը բացվեց: Փակ չեք յեղեր: Յես ընկա, սրբէ՛յր չեա գցեցի ու...

— Ի՞նչ: Ի՞նչ տեսար. Թոմ:


— Հեկ, քիչ մնաց հնդիկ Չոյի ճանկն ընկնեմ:

— Ի՞նչ ես ասում:

— Հա: Հատակին պառկել եք ու պինդ քնել՝ ձեռները տարածած. աչքի վրա չեղ, առաջվա պես, մնչամ կար:

— Հետո ի՞նչ արիր: Չարթնեց:

— Չե, սկի չչարժվեց: Ով գիտի հարբած եք: Սրբէ՛-  
չը վերցրի ու պո՛կ:



— Այդ բոպելին սրբիչ կհիշելի՛:

— Բայց չես հիշեցի: Յեթե կորչեր՝ մորաքույրս հո-  
դիս կհաներ:

— Լսիր, Թոմ, բա սնդուկը շտեամբ:

— Այ քեզ բան: Ժամանակ կանր նախելու: Վոչ մի  
բան ել չտեսա, — վոչ սնդուկ, վոչ խաչ, վոչ լինչ, բացի  
շշերից և թիթեղե թասից, վոր ընկած ելին հատակին,

Չոյի կողքին: Տեսա ելի յերկու փոքր տակառ ու շատ  
շշեր: Հասկանում ես հիմի, թե ի՞նչ վողիներ են վխտում  
ախտեղ:

— Ի՞նչ, որինակ:

— Ողու վողի: Ո՛վ գիտի «Ժուժկալների ընկերու-  
թյան» տներում միշտ այդ տեսակ սենյակներ են լինում:  
Ի՞նչ ես կարծում, Հեկ:

— Գուցե: Ով կարող եք իմանալ: Լսիր, Թոմ, այս  
հիմի հենց սնդուկը վերցնելու ժամանակն է, յեթե հնդիկ  
Չոն հարբած-պառկած է:

— Ի՞նչ կա վոր: Գնա, փորձիր...

Հեկը ցնցվեց:

— Չե, չեմ ուզում:

— Յես ել չեմ ուզում, Հեկ: Չոյի կողքին ընկած մի  
շիշ քիչ է: Յեթե յերեքը լիներ, այն ժամանակ գուցե...  
Տիրեզ յերկարատե լուսթյուն. ապա Թոմն ասաց.

— Կիտես ինչ, Հեկ, սկի չփորձենք ել, մինչև հաս-  
տատ չիմանանք թե հնդիկն այդ սենյակուսն է: Թե չե  
շատ սարսափելի չե: Ախր յեթե ամեն գիշեր հսկենք, մի  
անգամ հո կտեսնենք վոնց է դուրս գալիս, և այն ժամա-  
նակ կալծակի արագությամբ սնդուկը կվերցնենք ու...  
տուն:

— Լավ, համաձայն եմ: Պատրաստ եմ հսկել թեկուզ  
ամբողջ գիշերը մինչև առավոտ և յուրաքանչյուր գիշեր,  
միայն թե մնացածը քեզ վրա վերցրու:

— Յես ել համաձայն եմ: Միայն թե վաղի մեր կողմն  
ու մլավի. յեթե անմիջապես դուրս չգամ, ավագ շարտի  
լուսամուտին — կզարթնեմ:

— Տես, պայմանը փողից թանգ է:

— Գե, Հեկ, անձրևը կտրեց, չես գնամ տուն: Շու-  
տով լուսն ել կբացվի, ընդամենը յերկու ժամ է մնացել:  
Գու առայժմ հսկիր այդտեղ — լավ:

— Լավ, լավ: Յես ամբողջ գիշեր կըրջեմ այս ճա-

շարանի շուրջը. ցերեկը կքնեմ, իսկ գիշերը պահակութիւն կանեմ:

— Ուզի՞ր ես ասում. բա վորտե՞ղ պիտի քնես:

— Բեն Ռոջերսի խոտանոցում: Նա, վոչինչ, թողնում է ինձ: Նրանց հնգիկը՝ քեռի Ձեկը նույնպես թողնում է, չի քշում: Յես Ձեկի համար շուր եմ կրում. յերբեմն նա ինձ ուտելու բան է տալիս, յեթե մոտը լինում է: Նա շատ բարի մարդ է, թում: Ինձ սիրում է, վորովհետև յերբեք քիթս չեմ ցցում նրա առաջ: Յերբեմն էլ ուտում ենք իրար հետ՝ մի ամանից: Յես հպարտ չեմ: Միայն թե դու այդ բանը վոչ մեկին մի ասի: Քաղցը հանաք բան չի— ստիպում է ամեն բան անել:

— Կով, Հեկ, ցերեկը քեզ չեմ անհանգստացնի: Քեզ կգարթեցնեմ միայն այն դեպքում, յեթե շատ հարկավոր լինի: Իսկ յեթե գիշերը դու մի բան նկատես, անմիջապես վազիր ինձ մոտ ու մլավիր լուսամուտի տակ...

XXVIII

Առաջին բանը, վոր լսեց թոմը ուրբաթ առավոտյան, ուրախալի լուր էր— դատավոր Տեչերի ընտանիքը վերադարձել էր քաղաք: Մի առ ժամանակ հնգիկն ու իր գանձը յերկրորդ տեղը բռնեցին թոմի համար, իսկ նրա գլխում առաջին տեղը դրավեց Բեկկին:

Նրանք հանդիպեցին և «շատ ուրախ» ժամանակ անցրին, մյուս դպրոցականների հետ գանազան խաղեր խաղալով: Յերեկոյան դեմ թոմն իմացավ և մի հաճելի նորութիւն. — Բեկկին այնքան տարավ մոր գլուխը, խնդրելով որ նշանակել խոստացած և շարունակ յետաձգվող պիկնիկի համար, վոր մայրը, վերջապես, համաձայնեց: Բեկկիի ուրախութեանը չափ չկար. թոմը նույնպես յոթերորդ յերկնքումն էր: Մինչև արեւ մայր մտնելը բոլոր հրավերներն ուղարկվեցին, և յերիտասարգութիւնը տենդագին պատրաստվում էր այդ որվա համար, հուզվելով ու նախապես հազվագյուտ բավականութիւնը ձաշակելով: Թոմը հուզումից յերկար չկարողացավ քնել և շարունակ սպասում էր, վոր Հեկն անա ուր վոր է կմլավի լուսամուտի տակ, և մյուս որը նա իր հարստութեամբ կգամացնի Բեկկիին և պիկնիկի բոլոր մասնակիցներին: Բայց նա սխալվում էր իր սպասումների մեջ— այդ գիշեր ազդանշան չլսեց:

Առավոտը յեկավ, և ժամը տասնութեկին ուրախ աղմըկալից խումբը հավաքվեց դատավորի տանը: Բոլոր պատրաստութիւններն ավարտված էլին արդեն: Մեծերը

մնացին տանը, չկամենալով ամաչեցնել յերեխաներին իրենց ներկայութեամբ: Գառն ելին, վոր յերեխաները բուրովին ապահով կլինեյին մի քանի շահել՝ տասնութ տարեկան աղջիկների և քսան տարեկան յերիտասարդների հսկողութեան տակ: Գետն անցնելու համար վարձված եր հին պարուր, և շուտով ամբողջ խումբը աղմուկով շարժվեց փողոցով, մթերքներով լիքը կողովներով ծանրաբեռնված: Միզը հիվանդ եր և հարկադրված յեղով գրկել իրեն բավականութունից: Իսկ Մերին մնաց տանը, վոր Միզը չտարի: Միսիս Տեչերը հրաժեշտ տալով ասաց Բեկկիին.

— Դու աւել կվերադառնաս: Լավ չի՞ լինի գիշերես պարուրին մոտ ապրող ընկերուհիներինցդ մեկի տանը:

— Վոր այդպես ե, մայրիկ, յես կգիշերեմ Սյուզե Հարպերի մոտ:

— Լավ, աղջիկս: Խելոք յեղիր և քեզ լավ պահիր: Յերը նրանք ներս մտան՝ Թոմս ասաց Բեկկիին:

— Կսիր, գիտես ինչ կանենք: Փոխանակ Հարպերի մոտ գնալու, սարը կբարձրանանք և կգիշերենք այլի Դուգլասի տանը: Նա պաղպաղակ կուտենա: Նա ամեն ոք պաղպաղակ ե ունենում և այնքան առատ: Շատ կուրախանա մեզ տեսնելով:

Բեկկին մտածեց մի րոպե և ասաց.

— Բայց ինչ կասի մայրիկը:

— Վորտեղից պիտի իմանա:

Աղջիկը մտածեց կրկին և ասաց անվճռական.

— Դա լավ չի, բայց...

— Ել ինչ «բայց»: Դատարկ բան ե: Մայրիկդ չի իմանա... Յեզ ինչ վատ բան կա այդտեղ: Նրան հարկավոր ե միայն, վոր դու ապահով լինես: Հենց նա ինքը այդտեղ կուղարկեր քեզ, յեթե հիշեր: Ծիշտ եմ ասում:

Այլի Դուգլասի հուշակված հյուրասիրութունը մեծ գալթակողութուն եր: Պաղպաղակը և Թոմի պնդումները

վերջ տվին աղջկա տատանումներին: Յեզ յերեխաները վորոշեցին վոչ վորի չասել այդ մասին:

Հետո Թոմը հիշեց. իսկ յեթե Հեկն այս գիշեր ազգանշան տա: Այս միտքը վորոշ չափով սառեցրեց նրա սրտի ուրախութունը: Բայց և այնպես չկարողացավ հրաժարվել այլի Դուգլասի պաղպաղակն ուտելու մտադրութունից: «Յեզ ինչու համար հրաժարվել», ասում եր նա ինքն իրեն. «յերեկ ազգանշան չեղավ, ինչու հենց այնպատճառ այսօր պիտի լինի»: Յերեկին ուրախ անցնելու իրական հաշիվը մի կողմը թողեց գանձին տիրանալու անիրական հույսը: Ինչպես և վայել ե աղային, նա յենթարկվեց ավելի ուժեղ ցանկութեան և սնդուկի խնդիրը յետաձգվեց վազվան:

Բաղաքից յերեք մղոն հեռու, գետի հոսանքն ի վար գնալով, պարոմը կանգ առավ ծառերով լիքը մի հովտի գիմաց և մոտեցավ ափին: Բազմութունը դուրս յեկավ ափը, և շուտով անտառի հեռուներն ու ժայռերը արձագանգեցին ուրախ ծիծաղին ու կանչերին: Փորձեցին ամենաբազմազան միջոցներ՝ տաքանալու և հոգնելու համար. վերջապես, յերեխաները՝ ախորժակները բացված՝ վերադարձան ճամբար և սկսեցին համեղ ուտելիքները վոչնչացնել: Իսկ յանջուքից հետո նստասեցին սաղարթախիտ կաղնու տակ ու սկսեցին շաղակրատել: Փոքր անց՝ մեկը ձայն տվեց.

— Ո՞վ ե ուզում քարանձավ գնար:

Բոլորը ցանկութուն հայտնեցին քարանձավ գնալու: Գտան մի խումբ բանալիներ և սկսեցին սարը բարձրանալ: Քարանձավի բերանը գտնվում եր բարձր՝ բլրի լանջին և ձևով նման եր Ա տառին: Նրա հաստ կաղնյա դուռը բաց եր: Ներսը մի փոքրիկ խուց կար՝ սառցարանի պես սառը, պատած բնական պինդ կրով, վորից ցողի պես խոնավութուն եր թափվում: Մի ինչ-վոր խորհրդավոր բան կար այդ քարանձավի մեջ. սարսափելի յեր կանգ-



նել այդ թանձր խավարի մեջ ու նայել կանաչ, արևով  
 վողողված հովիտն: Բայց ապավորութունները շուտով  
 թուլացան և քաշքշուկը նորից սկսվեց: Հենց վոր մեկը  
 մոմ եր վառում՝ բոլորը միանգամից հարձակվում ելին  
 վրան. նա պաշտպանվում եր, սկսվում եր պայքար, հետո  
 մեկն ու մեկը հանգցնում կամ մոմը խլում եր նրա ձե-  
 ռից, և խավարի մեջ հնչում եր նորից ուրախ ծիծաղը ու  
 սկսվում եր քաշքշուկը: Բայց ամեն բան վերջանում ե  
 աշխարհում: Յերեխաները լռեցին և սկսեցին իծաշարուկ՝  
 միմյանց յետևից իջնել գլխավոր անցքի գիրա վալրեջրով:  
 Մոմերի առկայծող լույսով յերևում ելին բարձր քարե  
 պատերը մինչև իրենց միացման տեղը՝ վաթսուն փոռնա-  
 չափ բարձրութան վրա: Գլխավոր այդ մուտքի լայնու-  
 թյունը ու թսուռն փոռնաչափից ավելի չեր: Յուրաքանչյուր  
 քալափոխին՝ յերկու կողմից դրան միանում ելին ուրիշ,  
 ավելի նեղ անցքեր, վորովհետև Մակ. Գուգալի քարանձա-  
 վը վոչ այլ ինչ եր, քան մի լաբիրինթ, ոճապատույտ ու  
 ծուռ միջանցքների, վորոնք միանում ու բաժանվում ելին  
 նորից, բայց յեղջ շունչի: Ստում ելին, թե այդ անց-  
 քերի ու ձեղքերի խճճվածքում կարելի յեր թափառել որ  
 ու գիշեր և յերբեք յեղջ չգանել քարանձավից դուրս գա-  
 լու: Թե նա իջնում ե. հետզհետե ավելի ու ավելի ցած,  
 և ամեն տեղ միևնույնն է — մի լաբիրինթը գտնվում ե  
 մյուսի տակ, ու դրանք վերջ չունեն: Վոչ մի մարդ չի  
 կարող պարծենալ, թե ինքը «ճանաչում ե» քարանձավը.  
 ասենք, ճանաչելն ել անկարելի յեր: Սովորաբար շահել  
 մարդիկ ուսումնասիրում ելին նրա մի փոքրիկ մասը մի-  
 աչն, և այդ մասից դենք գնալը հաճելի չեր: Թոմ Մոյերը  
 քարանձավը ճանաչում եր մյուսներից վոչ վաս և վոչ  
 լավ:

Թափորն անցավ մոտ յերեք քառորդ մզոն գլխավոր  
 անցքով և ապա բաժանվեց գուլգերի ու խմբակների, վո-  
 րոնք ծովեցին դեպի կողքի անցքերը, անցան նեղլիկ մի-

ջանքներով, անսպասելի հանդիպեցին միմյանց այն տե-  
 դերում, ուր միջանցքները միանում ու կրկին բաժան-  
 վում ելին: Այստեղ մի-  
 մյանց կարող ելին կոր-  
 ցնել կես ժամով, շան-  
 ցնելով քարանձավի բո-  
 լորին «հայտնի» սահ-  
 մանը:

Կամաց-կամաց խըմ-  
 բերը մեկը մյուսի յե-  
 տևից դուրս յեկան քա-  
 րանձավից՝ հոգնած, ու-  
 բախ, վտախ-գլուխ մոմի  
 կաթիլներով ծածկված,  
 կավաշաղախ և հաջող  
 զբոսանքից լիովին հիա-  
 ցած: Բոլորը զարմանում  
 ելին վոր չեն նկատել,  
 թե ժամանակն ինչպես  
 ե անցել և թե դուրսը  
 յերեկո յե արդեն: Կես  
 ժամ կլիներ արդեն պա-  
 րուկից գանգահարում  
 ելին՝ ճամբորդներին յեա  
 կանչելով: Յերը պա-  
 րոմը, ուրախ խմբերով  
 ծանրաբեռնված, հեռա-  
 նում եր ափից, վոչ-  
 վոր, կապիտանից բացի,  
 մազաչափ անգամ չեր  
 ափսոսում կորցրած ժամանակի համար:

Հեկն արդեն պահակ եր կանգնել, յերբ նավակի կրակ-



Յերեխաները քարանձավում:

ները՝ շոգալով անցան նավահանգստի մոտով: Նավակից խոսակցութեան ձայն չեր գալիս. լերիտասարդները լուել էյին, ինչպես այդ միշտ պատահում է, յերբ մարդիկ սաստիկ հողմած ես լինում: Հեկը զարմացավ մի քիչ, թե այդ ինչ նավակ է, վոր նավահանգստում կանգ չառավ, բայց հետո մոռացավ նավակը և ուշն ու միտքը կենտրոնացրեց իր անելիքի վրա: Թիեց ժամի տասը, գազարեց սալերի ճռիւնչը, այս-այն կողմ ցրված ճրագները հանգան, անցորդները թագնվեցին ինչ-վոր տեղեր. փոքրիկ քաղաքը ննջեց, և փոքրիկ պահակը մնաց մեն-մենակ՝ լընութեան մեջ: Ժամը տասնութեկին հանգան և ճաշարանի ճրագները: Այժմ ամեն եողմ խավար եր: Հեկն սպասեց, ինչպես նրան թվում եր, անշափ յերկար, բայց վոչինչ չպատահեց: Գործի հաջողութեան մասին ունեցած նրա հավատն սկսեց թուլանալ: Ի՞նչու համար է այս բոլորը: Արժի՞ պահակ կանգնել: Ավելի լավ չի՞ մտնի տակառը՝ քնի:

Այդ բոպեյին նա մի թեթև աղմուկ լսեց և անմիջապես լսելիքը լարեց: Նեղ փողոցի վրա բացվող դուռը կամացուկ ծածկվից: Հեկը նետվեց աղյուսե սառայի անկյունը: Մի բոպե անց՝ նրա կողքով վազեցին մարդկային յերկու կերպարանք. մեկի կոնատակին կարծես ինչ-վոր բան կար—յերևի սնդուկ: Ուրեմն գանձը փախցրին: Ի՞նչ անել հիմա: Թոմին կանչե՞ր: Ինչո՞ւ համար: Դա հիմար բան կլիներ. մինչև ինքը գնա Թոմի յետևից, նրանք սրնգուռը ձեռներին կհեռանան—դե արի ու գտի: Չե, նա կերթա նրանց յետևից և կհետևի. բայց այսպիսի մութին ինչպես տեսնի նրանց: Այսպես ինքն իր հետ խոսելով՝ Հեկը դուրս յեկավ թագստոցից և, կաավի պես, զգուշորեն փնայ շրջմովիներ յետևից, իրեն պահելով այնպիսի հեռավորութեան վրա, վոր նրանք աննկատելի շմայլին ու թագնվելիս:

Նրանք անցան գետի յերկարութեամբ ընկած փողո-

ցով, հետո թեքվեցին ձախ՝ հատող փողոցը և բոլոր ժամանակ ուղիղ գնում էյին, մինչև չհասան այն արահեաք, վորը տանում եր դեպի բլուրը: Ապա գնացին այդ արահետով: Առանց մտածելու, շրջան արին անցան վալեցու՝ բլրի լանջին, կես ճանապարհին գտնվող սուռը, ու շարունակեցին վեր բարձրանալ: «Ընը», մտածեց Հեկը, «սրանք ուզում են փողը հին քարհանքում թաղել»: Բայց նրանք սկի կանգ չառան ել քարհանքի մոտ, այլ գնացին դեպի բլրի գագաթը. հետո շրջեցին դեպի մի նեղ արահետ, վոր ձգվում եր խիս թփուտի միջով, և իսկուշն չքացան խավարում: Հեկը քայլերն արագացրեց, վոր նրբանց հասնի, վորովհետև իրեն տեսնել չեյին կարող: Մի առ ժամանակ վազում եր գրեթե, հետո քայլերը դանդաղեցրեց, վախինալով, թե հանկարծ նրանցից առաջ չընկնի. իսկ մի բանի քայլ հետո բոլորովին կանգ առավ ու ալկանջ դրեց: Վոչ մի ձայն. նա լսում եր իր սրտի դարկերը միայն: Բլրից լավեց բուխ շարագուշակ կռիւնչը, բայց քայլերի ձայն չեր լսվում: Մի՞թե ամեն ինչ կորավ: Հեկըն ուզում եր հեռանալ արդեն, յերբ հանկարծ մեկը յերկու քայլի վրա սկսեց հազալ: Հեկին թվաց թե սիրտը ծուլ յեղավ մինչև կոկորդը. բայց նա սիրտը կուլ տվեց նորից ու մնաց իր տեղը, ամբողջ մարմնով դողողալով, կարծես միանգամից բռնվեց տասը տենդով. այնպիսի թուլութուն եր զգում, վոր կարծում եր, թե ահա ուր վոր է կրնկնի: Հեկը ճանաչեց այդ տեղը. նա կանգնած եր ցանկապատի անցքից հինգ քայլ հեռու, այն ցանկապատի, վորով շրջապատված եր այլի Դուգլասի կալվածքը:

«Լավ», մտածեց նա, «թող թաղեն այստեղ, գտնել յերկար ման չենք գա»:

Հետո հնդիկ Չոյի ձայնն ասաց կամացուկ.

— Գրողն այդ կնկանը տանի: Նա կարծես հյուրեր ունի. այնտեղ լույս կա, թեև ուշ է:

— Վորա՞նք եւ լուսը, յես չեմ տեսնում:

Մյուս ձայնը պատկանում եր Ջոյի ընկերոջը, վորին Հեկը տեսել եր կախարդված տանը: Մառը մի գող անցավ Հեկի մարմնով: Ահա թե ունի ելին ուզում վրեժխնդիր լինել: Նրա առաջին ցանկութունը յեղով փախչել: Հետո հիշեց, վոր այրի Դուգլասը մի քանի անգամ բարութուններ եւ արել իրեն, իսկ այս մարդիկ, գուցե, ուզում են սպանել նրան: Հեկը ցավեց, վոր ինքը քաջութուն չունի նրան նախագողացնելու, բայց զիտեր, վոր համարձակութուն չի ունենա. յեթե հանկարծ սրանք իրեն բռնեն: Այս բոլորը և շատ ուրիշ բաներ անցան նրա գլխով, նախ քան հնգիկը կպատասխաներ.

— Թփերը չեն թողնում, վոր լուսը տեսնես: Դեմն արի, այսպես. հիմի տեսնում ես:

— Այո: Ինչպես յերևում ե հյուրեր ունի: Ավելի լավ չե այս բանը թողնենք:

— Թողնել, յերբ ուզում ես հերանալ այս տեղերից: Թողնել, յերբ, գուցե, ել այսպիսի առիթ չլինի: Ինչպես մի անգամ ասել եմ, ելի կրկնում եմ—այդ կնկա վողն ինձ պետք չի, կարող ես ինքդ վերցնել: Բայց նրա մարդը վիրավորել ե ինձ, այն ել մի քանի անգամ. նա հաշտարար դատավոր եր և մի քանի անգամ բանտ ե դրել ինձ շրջմովիկութան համար: Նա իր բախտից մեռավ, բայց յես հաշիվը կտեսնեմ կնկա հետ:

— Ո՛ր, մի սպանի: Հարկավոր չի:

— Սպանել: Մի՞թե ասի կսպանեմ: Յես նրան կսպանելի, յեթե այստեղ լիներ, բայց վո՛չ այս կնկան: Յերբ ուզում են կնոջից վրեժ առնել, նրան չեն սպանում,—ինչո՞ւ համար: Բավական ե նրա յերեսհարքը փշացնել. քիթը ջարդել, ականջները կտրել, խողի պես...

— Ի սեր աստ, դա...

— Բո կարծիքները թող քեզ: Յես նրան կկապեմ իր մահճակալից: Յեթե նա արյունաքամ լինի, մի՞թե դա իմ

հանցանքը կլինի: Յես լաց չեմ լինի, յեթե նա սատկի: Իսկ դու, ախպերս, ընկերաբար կողնես ինձ,—դրա համար ել այստեղ ես յեկել. յես մենակ գուցե չկարողանամ բան անել: Իսկ յեթե ստիպված լինեմ քեզ սպանել, կսպանեմ և այդ կնկան,— ու այն ժամանակ ել վո՛չ մեկը չի իմանա, թե ով արավ այդ:

— Ե, ինչ կա վոր: Յեթե անելու յես, արա: Վորքան շուտ, այնքան լավ, յես աժբողջ մարմնովս դողում եմ:

— Ի՞նչպես: Հիմա: Բա հյուրերը: Լսիր, ախպերս, այդ կասկածելի յե, ինչո՞ւ յես այդպես շտապում: Չե, կրսպասենք, մինչև ճրագները հանգչեն. շտապելու կարիք չկա:

Հեկն զգաց, վոր հիմա լուսություն կախրի՝ ել ավելի սարսափելի՝ քան մարգասպանների այդ խորհրդակցութունը. ուստի և նա շունչը պահած՝ մի քայլ յես գնաց, նախապես շոշափելով այն տեղերը, ուր պիտի դներ վոտքը: Նույնպիսի զգուշութամբ նա յետ դրեց մյուս վոտքը, հետո ելի, ելի: Հանկարծ նրա վոտի տակ մի ճյուղ ճրթաց: Հեկի շունչը փորն ընկավ: Նա կանգ առավ, ականջ դրեց: Վո՛չ մի ձայն. մեռելային լուսություն: Մաստիկ ուրախացած, նա զգուշութամբ շուտ յեկավ յերկշարք թփերի արանքում և արագ, անաղմուկ քալեց առաջ: Քարհանքին հասնելով՝ նա իրեն ապահով զգաց ու սկսեց վազել, վորքան վոտումն ուժ կար: Նա քամու պես սլացավ, հասավ վալլեցու տանը և սկսեց բուռնցքներով ծեծել դուռը: Լուսամուտից դուրսներն հանեցին ձեր ազգակաթերն ու նրա յերկու ուժեղ ջանել վորդիները:

— Ի՞նչ ազմուկ ե: Ո՞վ ե դուռը ծեծում: Ի՞նչ եք ուզում:

— Ներս թողեք, շուտ: Բոլորը կպատմեն:

— Դու ո՞վ ես:

— Հեկլերի Ծիննը Ենու, ներս թողեք:

— Հեկլբերի Ֆին,—լավ ե: Դա այնպես մի անուն  
չի, վոր բոլոր դռները բացվին նրա առաջ: Բայց և այն-  
պես, տղերք, ներս թողեք դրան, տեսնենք ինչ ե ու-  
զում:

— Խնդրեմ, ինչ վոր ձեզ պատմելու լեմ—մարդու  
չասեք, թե չե կորած եմ: Բայց քանի վոր այլին բարի  
յե չեղել դեպի ինձ, ձեզ կասեմ: Կասեմ, լեթե խոստա-  
նում եք մարդու բան չասել, վոր լես...

— Ազնիվ խոսք, սա ասելու բան ունի, լեբևում ե  
զուր չի լեկել,—բացականչեց ծերունին:— Դե, փոքրիկս,  
ասա տեսնենք ինչ դիտես, մարդու բան չենք ասի:

Մի քանի րոպե անց արդեն, ծերունին՝ իր լեբկու-  
վորդու հետ, լավ զինված, բլուրը բարձրանալով՝ զգուշու-  
թյամբ վրաները փոխելով՝ գնում եյին թփերի արանքով  
ձգվող արահետով, ասրճանակները սլափափա պահած:  
Հեկլը նրանց տարավ մինչև արահետը, բայց ել դենը չը-  
զընաց: Նա նստեց մի մեծ քարի լետև ու սպասեց: Տի-  
րեց լեբկար, ճնշող լուծիւն. հանկարծ կրակոցներ լըս-  
վեցին ու ճիչեր: Հեկլը շարունակութեանը չսպասեց: Նա  
վեր թռավ տեղից ու սլացավ բլուրից ցած, մի այնպիսի  
արագութեամբ, վորին ընդունակ եյին միայն իր վոտ-  
ները:

## XXIX

Կիրակի առավոտ, լուսը բացվելուն պես, Հեկլը թա-  
կեց ծեր-վալլեցու դուռը: Տանը դեռ քնած եյին, բայց  
այն զգաստ քնով, վորից զարթնում են ամենափոքր ինկ-  
աղմուկի դեպքում, գիշերն անցրած հուզումները հետե-  
վանքով: Լուսամուտից ձայն տվին նրան.

— Ո՞վ ե այդտեղ:

Խոնարհ, վախեցած ձայնը պատասխանեց.

— Խնդրեմ, ներս թողնեք: Յես եմ՝ Հեկլ Ֆիննը:

— Տղաս, մեր տան դուռը գիշեր ու ցերեկ բաց  
քո առաջ: Բարով լեկար:

Տարորինակ հնչեցին այդ խոսքերը փոքրիկ շրջմոլի-  
կի ահանջին: Նա դեռ լեբեք այդպիսի քաղցր խոսքեր  
չեղ լսել, անգամ չեղ հիշում, թե լեբեկիցե մեկն ասած  
լիներ «բարով լեկար»:

Դուռը շուտով բաց արին, և Հեկլը ներս մտավ: Իսկ  
ծերունու քաջ տղաներն շտապեցին հագնվել:

— Ե, տղաս, կարծում եմ, քաղցած կլինես. մեր  
նախաճաշը շուտով պատրաստ կլինի. հանգիստ լեղիր:  
Յես ու տղերքը կարծում եյինք, թե կգաս մեզ մոտ գի-  
շերելու:

— Յես սաստիկ վախեցա,—բացատրեց Հեկլը:— Հենց  
վոր դուք սկսեցիք կրակել, լես թողի փախա, ու լեբեք  
վերստ գնացի առանց կանգ առնելու: Հիմի լեկել եմ ի-  
մանալու, թե ինչ լեղավ. զիտմամբ շուտ եմ լեկել, վոր

այդ գրողի տարածներին չհանդիպեմ, չեթե անգամ սպանված լինեն:

— Այո, տղաս, դեմքիցդ այնպես ե յերևում, վոր գիշերը կարծես չես քնել: Բայց վոչինչ: Հրես քեզ անկողին. հենց վոր նախաճաշես՝ պակկիր: Բայց, տղաս, դրժբախտաբար, սպանված չեն, — և շատ ցավում ենք: Գիտես՝ ինչպես յեղավ. քո նկարագրածով՝ մենք գիտեցինք, վոր տեղ կարող ենք նրանց բռնել. դրա համար զգուշությամբ բոլորովին մոտեցանք նրանց, — չե վոր թփերի պրանքի այդ շավիղը բոլորովին մութն ե՝ նկուղի պես. կանգնեցինք մի հինգ քայլ հեռու և հանկարծ, ինչ ես կարծում — ինչ. փոշտացի: Կատարյալ անհաշոգողություն: Վորքան ել զսպում ելի ինձ, չեր լինում — փոշտում ելի իրար յետևից: Յես գնում ելի առաջից, ատրճանակս պատրաստ բռնած. հենց վոր փոշտացի՝ գողերը թողին-փախան. իսկ յես ձայն եմ տալիս. «կրակեցեք, տղերք», ու կրակեցի յետևներից: Տղերքս նուչնպես: Բայց սրիկաները փախան, — պետք ե կարծել, վոր յերեքս ել վրիպեցինք: Նրանք փախան-մտան անտառ, մենք նրանց յետևից. հետո նրանք կանգ առան և նուչնպես սկսեցին կրակել մեզ վրա, բայց նրանց գրնդակներն անցան մեր կողքից, առանց մեզ վնասելու: Հետո նրանց վոտի ձայնն ել կտրվեց. այդ ժամանակ մենք ել չհետապնդեցինք, սարից իջանք և վոստիկաններին վոտի հանեցինք: Նրանք մի խումբ մարդ ուղարկեցին ափը հսկելու, իսկ յերբ լուսանա՝ անտառը կխուզարկեն: Տրդերքս ել պիտի գնան: Կավ կլինի, վոր դու նկարագրես, թե ինչ կերպարանք ունեցին այդ սրիկաները. դա մեզ շատ կոգնեք: Բայց, տղաս, մթան մեջ դու, կարծեմ, նրանց լավ չես նայել:

— Չե, յես նրանց քաղաքում տեսա և հետևեցի:

— Շատ լավ: Դե ասա՝ տեսնեմ ինչ կերպարանք ունեցին դրանք:

Նրանցից մեկը ծեր, խուլ ու համր սպանացի յե, վոր

վերջին ժամանակները ման ե գալիս քաղաքում, մյուսը — պատառուտած շորերով մեկն ե, տգեղ զեմքով...

— Այդքանը հերիք ե, տղաս, մենք արդեն գիտենք: Յերեկ նրանց տեսանք անտառում. նրանք թրե ելին գալիս այրու տան շուրջը, բայց հենց վոր մեզ տեսան — չքացան: Դե, տղերք, շուտ գնացեք պրիտավի մոտ, իսկ նախաճաշը թող մնա եգուց:

Վալլեցու վորդիներն անմիջապես գնացին: Յերբ նրանք քայլեցին դեպի դուռը՝ Հեկը նետվեց նրանց յետևից, աղաչանքով:

— Խնդրում եմ՝ չասեք, վոր յես եմ մատնել: Շատ եմ խնդրում:

— Կավ, յեթե չես ուզում, չենք ասի: Չե վոր վատ բան չես արել. դրա համար քեզ կգովեն միայն:

— Ո՛ր, չե, չեմ ուզում: Խնդրեմ՝ չասեք:

Յերբ յերիտասարդները դուրս յեկան, ծերունին դարձավ Հեկին.

— Նրանք չեն ասի, բայց յես կասեմ: Իսկ ինչո՞ւ չես ուզում, վոր այդ բանն իմանան:

Հեկն ասաց, թե այդ մարդիկ անպատճառ կսպանեն իրեն, յեթե իմանան, վոր ինքն ե նրանց մատնել:

Ծերունին մի անգամ ևս խոստացավ զազտնիքը պահել, բայց և այնպես հարցրեց.

— Ի՞նչպես յեղավ, վոր դու հետևեցիր նրանց, տղաս: Նրանք քեզ կասկածելի թվացին, ինչ ե:

Հեկը լուեց, մտածելով այնպիսի պատասխան, վոր իրեն չվարկաբեկեր և, վերջապես, ասաց.

— Գիտեք, յես ինքս ել կարգին չեմ ապրում, ու կորած մարդ եմ, գոնե բոլորն այդպես են ասում, և յես չեմ կարող դրա դեմ բան ասել: Պատահում ե գիշերները չեմ քնում, մտածում եմ-մտածում, թե ինչպես անեմ, վոր ուրիշ կերպ ապրեմ: Այդպես ել անցյալ գիշեր: Քնել չկարողացա, կես գիշերին թափառում ելի փողոցներում

ու ելի մտածում այդ մասին. անցա ճաշարանի մոտ լե-  
ղած աղյուսե սառալի մոտով, կանգնեցի պատի տակ ու  
մտածում ելի... Յեվ հանկարծ տեսնում եմ—կողքիցս  
յերկու մարդ են վազում, մեկի կոնատակին ինչ վոր բան-  
մտածեցի, վոր գողացած ապրանք է: Մեկը ծխում էր,  
մյուսն էլ ուղեց սիգարը կպցնել,—ու կանգնեցին ինձա-  
նից յերկու քայլ հեռու: Սիգարները լուսավորեցին նրանց  
դեմքերը, յես ճանաչեցի խուլ ու համր սպանացուն, ճա-  
նաչեցի նրա ճերմակ միրուքից ու աչքին դրած մահլա-  
մից. մյուսը՝ պատառոտված շորերով սատանան՝ էր...

— Դու միթե կարողացար սիգարի լույսով նրանց  
շորերը տեսնել:

Հեկը մի ըուպե շփոթվեց:

— Չգիտեմ ինչպես, բայց յերևի տեսա:

— Հետո ինչ: Նրանք գնացին, իսկ դո՞ւ...

— Յես էլ նրանց յետևից: Այսպես յեղավ: Ուղեցի  
իմանալ, թե դրանք ինչ են անելու: Նրանք բարձրացան  
վեր, յես նրանց յետևից, մինչև այրու տան ցանկապա-  
տը: Այդտեղ կանգնեցի միտան մեջ ու ալանջ դրի. պա-  
տառոտված շորերով մարդը պաշտպանում էր այրուն,  
իսկ սպանացին՝ յերգվում էր, թե շարդելու յե նրա ու-  
խը,—ե՛ս արդեն պատմել եմ ձեզ...

— Ի՞նչպես. այդ բանն ասում էր խուլ ու համրը:

Հեկը նորից բռնվեց: Նա ամեն կերպ աշխատում էր,  
վոր ծերունու մտքովն անգամ չանցնի, թե ո՞վ է սպանա-  
ցին. բայց լեզուն վորոշել էր մատնել նրան: Նա մի քա-  
նի անգամ փորձեց սխալը շտկել, բայց ծերունին աչք  
չեր հեռացնում նրանից, և նա յուրաքանչյուր ըուպե  
ստում էր: Վերջապես, ծերունին ասաց.

— Սիրելիս, ինձանից մի վախի: Ինչ էլ լինի՝ յես  
քեզ չեմ մատնի: Ընդհակառակը, յես քեզ իմ պաշտպա-  
նության տակ կառնեմ: Այդ սպանացին խուլ ու համր  
չի. դու պատահաբար բերնիցդ թոցրիլ և հիմի էլ չես

կարող խոսքդ յետ վերցնել: Դու ինչ վոր վատ բան գի-  
տես այդ սպանացու մասին և չես ուզում ասել: Հավա-  
տացիլ ինձ և ասա. և հան-  
գիստ յեղիլը— յես քեզ չեմ  
մատնի:

Հեկը նայեց ծերունու  
ազնիվ աչքերին, կուսցավ  
և շնչաց նրա ալանջին.

— Դա սպանացի չի—  
դա հնդիկ Չոն է:

Ծերունին քիչ մնաց  
աթոռից գլորվեք:

— Հիմի պարզ է, հիմի  
հասկանում եմ,— ասաց նա:

— Յերբ խոսում ելիլ ա-  
կանջներ կտրելու և քիթ  
շարդելու մասին, կարծում  
ելի այդ ինքդ ես հնարում.

բայց հնդիկ Չոն,— դա, իհարկե, բուրբուլին ուրիշ բան է:

Չրույցը շարունակվեց նախաճաշի վրա ևս, և ծերու-  
նին, ի միջի այլոց, ասաց, թե հեռանալուց առաջ, նա  
վորդիների հետ լապտերը վառել է և նայել հարևանի  
ցանկապատն ու հողը, տեսնելու արյան բծեր չկան վո-  
րևե տեղ: Բժեք չգտանք, բայց մի մեծ կապոց գտանք,  
մեջը...

— Ի՞նչ կար մեջը:

Այս խոսքերը կայծակի արագությամբ դուրս թռան  
տղայի գունատ շուրթերից: Նա ցրված հայացքը հառեց  
ծերունուն, շնչագուսպ սպասելով նրա պատասխանին:  
Ծերունին, իր հերթին, նայեց նրան յերեք, հինգ, տասը  
վայրկյան, նախ քան կպատասխաներ:

— Կապոցը, լիքն էր գողի գործիքներով: Բայց ի՞նչ  
պատահեց քեզ:



Հեկը հենվեց բազկաթուռի թիկունքին և թեթևացած շունչ քաշեց: Ծերունին լուրջ հետաքրքրությամբ նայեց նրան:

— Այո, մի խումբ գողութայն գործիքներ: Դա, ըստ յերևույթին, քեզ շատ հանդատացնում է: Բայց ինչից էլիբ վախենում: Ի՞նչ, կարծում ելիր՝ նրանք կգտնեն:

Հեկը նեղն ընկավ. ծերունին փորձող հայացքը նրանից չեր հեռացնում. Հեկը կյանքը կտար, յեթե հարմար պատասխան գտներ, բայց միտքը բան չեր գալիս, իսկ ծերունու փորձող հայացքը ավելի խորն եր թափանցում նրա ներսը: Հեկի բերանն յեկավ մի անհեթեթ պատասխան. բայց կշռադատելու ժամանակ չկար, և նա թոթովեց.

— Յես կարծում ելի դուք... կիրակնորյա դպրոցի դասազրքեր եք գտել:

Խեղճ տղան շատ վշտացավ ու չկարողացավ ժպտալ, բայց ծերունին ծիծաղեց այնպես բարձր և ուրախ, վոր նրա ամբողջ մարմինը ցնցվեց, և, ի վերջո, կուշտ ծիծաղելուց հետո, հայտարարեց, թե այս տեսակ ծիծաղն ազատում է ծախսերից՝ բժիշկներից ու դեղերից:

— Խեղճ տղա.— ավելացրեց նա, դու գունատ ես, հոգնած. դու, ինչպես յերևում է, շատ տկար ես: Վոր քնես, հանգստանաս՝ կկազդուրվես:

Հեկը բարկացավ ինքն իր վրա, վոր հիմարությունն ասավ ու չկարողացավ իրեն պահել. բայց նա շատ հուզվեց գանված կապոցի մասին լսելով. նա կարծում եր մոռուկն են գտել: Ասենք, վերջին հաշվով նա ուրախ եր, վոր այդպես դուքս յեկավ. այժմ գոնե հաստատ գիտեր, թե ինչ է յեղել կապոցում, ուստի և հանգստացավ: Ամեն ինչ, ըստ յերևույթին, լավ եր դասավորվում. սնդուկը, յերևի մինչև հիմա պահված է Ք Ձ-ում. այժմ յերկու սրիկային ել կրոնեն և գիշերն ինքն ու թոմը, առանց դժվարության, գանձը կվերցնեն.

Նրանք նախաճաշը հենց նոր ելին վերջացրել, յերբ դուռը ձեծեցին: Հեկն շտապեց թագնվել, վորովհետև բընավ չեր ցանկանում, վորպեսզի վորևե մեկը կասկածի թե ինքը վորևե կապ ունի գիշերվա դեպքի հետ: Ծերունին ներս ընդունեց մի քանի տիկիներ ու պարոններ և նկատեց, վոր մի խումբ յերեխաներ սարն են բարձրանում՝ ցանկապատը դիտելու: Ուրեմն նորությունը տարածվել եր:

Ծերունին պատմեց այցելուներին գիշերվա դեպքը: Այլին շնորհակալություն հայտնեց իրեն փրկելու համար:

— Վոչ մի խոսք այդ մասին, տիրուհի: Կա մի մարդ, վորին, գուցե, դուք ավելի յեք պարտական, քան ինձ ու վորդիներին միասին. բայց նա թույլ չի տալիս իր անունը հայտնել: Մեր մտքովը չեր ել անցնի ձեզ ոգնության գալ, յեթե նա չլիներ:

Պարզ է, այդ խոսքերն առաջ բերին այնպիսի հետաքրքրություն, վոր գլխավորը մոռացվեց, և շատ շուտով այդ հետաքրքրությունն անցավ բոլոր քաղաքացիներին: Բայց ծերունին անտեսեց հյուրերի անհամբերությունը և զազանիքը չհայտնեց: Մնացածը լսելով՝ այլին ասաց.

— Յես գիրքը ձեռիս քնել ելի մահճակալի վրա, և բոլոր ժամանակ հանգիստ քնած ելի: Ինչո՞ւ ներս չմտաք և ինձ չարթնացրիք:

— Վորոշեցինք, վոր չարժի: Այդ սրիկաները հազիվ թե վերադառնային. չե վոր նրանք մոռացել ելին իրենց գործիքները և ել ինչով պիտի գործ տեսնելին: Ուրեմն ինչ կարիք կար ձեզ արթնացնելու: Վախեցնելու համար: Բացի դրանից, իմ յերեք նեզը մինչև առավոտ պահակություն արին ձեր տան մոտ: Նրանք հենց նոր վերադարձան:

Յեկան նոր այցելուներ, և յերեք ժամվա ընթացքում ծերունին այն եր անում միայն, վոր հա կրկնում եր իր պատմությունը:

Այդ առափոտ դպրոցում սովորական կիրակնորչա պա-  
ռապոստոսը չկար, բայց միևնույն է հավաքվեցին լեկեղեցի,  
վոր մի լավ կշռադատեն այդ զարմանալի դեպքը: Բոլորը  
գիտեցին, վոր ավագակներին չեն գտել: Քարոզից հետո՝  
դատավոր Տեչերի կինը, բազմութունը ձեռքերով, մոտե-  
ցավ տիկին Հարպերին և ասաց.

— Ե, իմ Բեկկին այսօր ել պիտի քնի ամբողջ ուրը:  
Յես, ասենք, այդպես ել կարծում եյի, վոր նա սաստիկ  
կհոգնի:

— Ձեր Բեկկին:

— Այո (զարմացած հայացք): Միթե ձեզ մոտ չեր  
գիշերը:

— Իհարկե, վոչ:

Տիկին Տեչերը գունատվեց և թուլացած նստեց նըս-  
տարանին: Հենց այդ ժամանակ անցնում էր մորաքույր  
Պոլլին, ընկերուհու հետ տաքացած խոսելով:

— Բարև ձեզ, տիկին Տեչեր, — ասաց մորաքույր Պոլ-  
լին: — Բարև լույս, տիկին Հարպեր: Մեր աղան նորից կո-  
րել է. կարծում եյի թո՞մս այսօր գիշերել է ձեզանից մե-  
կի տանը, իսկ հիմա վախենում է լեկեղեցի գալ, լավ ի-  
մանալով վոր ուտելու չե ինձանից:

Տիկին Տեչերը գլուխն որորեց և ել ավելի գունատվեց:

— Նա մեզ մոտ չի գիշերել, — ասաց տիկին Հարպե-  
րը, նույնպես անհանգստանալով: Մորաքույր Պոլլին հուզ-  
ված էր:

— Ձոն Հարպեր, այս առափոտ թո՞մին չէս տեսել, —  
հարցրեց նա:

— Ձե, չեմ տեսել:

— Իսկ վորտե՞ղ ես տեսել նրան վերջին անգամ:

Ձոն փորձեց հիշել, բայց հաստատ վոչինչ չկարողա-  
ցավ ասել: Յեկեղեցուց դուրս լեկողները սկսեցին կանգ  
առնել, զրույցին ականջ դնել: Բազմության մեջ փսփոսոց  
բարձրացավ. անհանգստութուն էր լերևում բոլորի գեմ-

քին: Յերեխաներին և կրտսեր ուսուցիչներին հարցեր էր,  
վոր տալիս էին: Պարզվեց, վոր վոչ վոք չեր հիշում, թե  
թո՞մն ու Բեկկին չեղել էին արդյոք հավակի վրա, լերբ  
բոլորը վերաբառնում էին տուն. միան մեջ վոչ-վոք չեր  
նկատել նրանց և վոչ մեկի մաքուր չեր անցել հարցնե-  
լու՝ բոլորը ներկա չեն թե վոչ Մի պատանի չհամբերեց  
և բացականչեց.

— Դե ուրեմն նրանք քարանձավումն են մնացել:

Տիկին Տեչերը ուշաթափվեց, մորաքույր Պոլլին հե-  
կեկաց, ձեռները կոտրատելով:

Տխուր լուրն անցավ բերնե-բերան, խմբից-խումբ,  
փողոցից-փողոց: Հինգ բոպե անց արդեն անազանք էին  
խփում, ժողովրդին կանչելու: Գողերն անմիջապես մո-  
ռացվեցին. ձիերը թամբեցին, նավակներն արձակեցին.  
մարդ ուղարկեցին պարուսի լետևից և, կես ժամ անց, մոտ  
լերկու հարյուր մարդ արդեն ցամաքով ու ջրով գնացին  
դեպի քարանձավը:

Ամբողջ ուրբ քաղաքը թվում էր մեռյալ — այնպես էր  
դատարկվել: Ամբողջ ուրբ հարևանուհիներն այցելում էին  
մորաքույր Պոլլին և տիկին Տեչերին, աշխատելով մխի-  
թաբել նրանց, ու լալիս էին նրանց հետ միասին, ինչ վոր  
ամեն տեսակ խոսքերից ավելի իրական էր:

Ամբողջ այդ ծանր գիշերը քաղաքում սպասում էին  
տեղեկության, բայց չերբ, վերջապես, լույսը բացվեց՝ քա-  
րանձավից մարդ լեկավ ուտելիք ու մոմեր տանելու: Տի-  
կին Տեչերը խելքը կորցնում էր հուզումից, մորաքույր  
Պոլլին նույնպես: Իստավոր Տեչերը քարանձավից սրտա-  
պնդիչ նամակներ ուղարկեց, բայց զրանք առանձին ազ-  
դեցութուն չունեցան: Մյուս ուրբ, լուսաբացին, ձեր վա-  
լեցին առև վերադարձավ կավաթաթախ ու լուզոսված:  
Նա Հեկին գտավ հենց այն անկողնում, ուր պառկեցրել  
էին. աղան տաքության ու զառանցանքի մեջ էր: Բոլոր  
բժիշկները գնացել էին քարանձավ, այնպես վոր հիվան-



դին խնամելու հոգն իր վրա առավ այրի Դուգլասը, ասելով՝ թե ինքը կանի հնարավորը, վորովհետև, լավ լինի նա թե վատ, — չի կարելի թողնել առանց խնամքի: Ծերունին ասաց, թե Հեկն էլ ունի իր լավ հատկութունները:

Կեսորին քաղաք վերադարձան սաստիկ հոգնած մարդկանց խմբերը, վոր հույսները կտրել էին կորածներին գտնելու. բայց ավելի յեռանդոտ մարդիկ շարունակում էին վորոնումը: Վերադարձողներից շատ քիչ բան իմացան. նրանք ասում էին միայն, թե ման են յեկել քարանձավի բոլոր հեռավոր միջանցքները, ուր յերբեք չեն յեղել առաջ. գննել են բոլոր անկյուններն ու անցքերը և այդ լաբիրինթում թափառելով, այստեղ-այնտեղ տեսել են կրակներ, լսել են ճիչեր ու կրակոցներ, վոր խուլ տարածվել է մռայլ կամարների տակ: Մի տեղ, քարանձավի աջ մասում, ուր սովորաբար տուրիստներ են այցելում, գտան յերկու խոսք, մոմի մրով քարին գրած՝ «Բեկկի և Թոմ» և նույն տեղը ճարտի կաթիլներով ծածկված մի ժապավեն: Տիկին Տեչերը ճանաչեց ժապավենը և լաց յեղավ վրան: Ուրիշները պատմում էին, թե փնտռողների ժամանակ հեռվում յերբեմն նկատել էին առկայծող լույսեր, և ուրախության ճիչերով նետվել այն կողմը. բայց հետո դառը հիասթափություն էին կրել. յերեսները չէին յեղել այնտեղ. նրանց փոխարեն հանդէպել էին իրենց խմբի մարդկանցից վորևէ մեկին:

Այսպես անցավ յերեք սարսափելի ուր և յերեք սարսափելի գիշեր. ժամերն անցնում էին դանդաղ ու ծանր. քաղաքն ընկավ, վերջապես, մի անհույս ու բուժ վիճակի մեջ: Վոչ մեկի ձեռք բան չեր բռնում: Հենց նոր պատահաբար կատարված հայտնագործումը, թե ժուժկալների Ընկերության ճաշարանի տերը համարներից մեկում ողի ու ոռն է պահել, իր ամբողջ այլանդակությամբ գրեթե չհուզեց հասարակությանը: Պայծառ պահերից մեկում՝ Հեկը ուշքի գալով, խոսք բացեց ճաշարանի մասին և վերջա-

պես, հարցրեց, աղոտ կերպով յերկյուղ կրելով մի սարսափելի բան լսելուց, թե արդյոք ժուժկալների Ընկերության ճաշարանում վորևէ բան չեն գտել իր հիվանդ ժամանակ:

— Այո, գտել են, — յեղավ պատասխանը:

Հեկը վեր թռավ անկողնից, վայրի աչքերով այրի Դուգլասին նայելով:

— Ի՞նչ, ի՞նչ են գտել:

— Վոգելից խմիչքներ: Ողի: Պառկիր, աղաս: Ի՞նչ պես վախեցրիր ինձ:

— Միայն մի բան ասացեք ինձ, միայն մի բան, խնդրում եմ: Ո՞վ է գտել: Թոմ Սոյեթը:

Այրին լաց յեղավ:

— Հերիք է, սիրելիս. քեզ ասել են արդեն, վոր դու այդքան շատ չպիտի խոսես: Դու շատ, շատ հիվանդ ես:

«Ուրեմն, ողուց բացի ուրիշ վոչինչ չեն գտել, վորովհետև, յեթե փող գտած լինեյին — դա անագին իրարանցում կգցեր քաղաքը: Նշանակում է գտնձը չքացավ ընդամիշտ... Բայց ինչո՞ւ մասին է լաց լինում այս կինը: Տարորինակ բան է: Ինչո՞ւ պիտի սա լաց լինի»:

Ահա ինչ մտքեր էին դառնում Հեկի գլխում, և նա այդ մտքերից այնպես հոգնեց, վոր քնեց:

— Ե, քնեց խեղճը, — ասաց այրին ինքն իրեն: «Թոմ Սոյեթը գտավ»: Հիմի գնա ու Թոմ Սոյեթին գտի: Հիմի շատ քիչ մարդ կա, վոր քաջություն ունենա քո Թոմ Սոյեթին փնտռելու:

Վերադառնանք հիմա Թոմին ու Բեկկիրին: Նրանք՝ մյուսներին հետ միասին՝ շրջեցին մուսլ միջանցքները, նաչելով քարանձավի արդին ծանոթ հրաշալիքները, վոր փոքր ինչ սեթևեթ անուններ ունեցին, ինչպես որինակ, «Ընդունարան», «Տաճար», «Ալադինի պալատ» և այլն: Ապա ըսկավեց տապկնոցի խաղը, և Թոմն ու Բեկկին չեռանդով մասնակցում էին նրանց, մինչև վոր հոգնեցին վազվզուքից. այնուհետև նրանք չերկուսով անցան ծուռ ու մուռ միջանցքով՝ մոմերը բարձր բռնած և պատերին դրոտած հառնիխուռն անունները, թվականները, հասցեները և իմաստալից առածները կարգալով: Զրուցով տարված՝ նրանք չնկատեցին ել, թե ինչպես մտան քարանձավի մի այնպիսի մաս, ուր պատերին արդեն գրություններ չկային: Նրանք իրենք մոմի մրով գրեցին իրենց անունները պատի վրա՝ կախված քարի տակ ու առաջ գնացին: Վերջապես, հասան մի տեղ, ուր մի փոքրիկ վրտակ, դուրս ընկած քարից իջնելով և իր հետ կրային դիրտ բերելով, դարերի ընթացքում փայլուն քարից կազմել էր վարար Նիագարայի պես մի բան: Թոմը խցկվեց քարե շրվեթի չետև մի նեղ տեղ, վոր լուսավորի այն՝ Բեկկիրն ուրախութուն պատճառելու համար, և համոզվեց, վոր այդ շրվեթը իրենով ծածկում է մի դիք բնական սանդուղ, վոր խրված էր յերկու քարե պատերի նեղ ճեղքը: Մի ակնթարթում նրանց տիրեց գլուտ անելու սնափառութունը, և նրանք հիշողության համար մրով քարի

վրա նշան անելով՝ գնացին վորոնումներ կատարելու: Յերկար գնում էին կեռ ու մեռ միջանցքով, վորը հաս իջնում էր քարանձավի գագաճարանները. նորից նշան արին և թեքվեցին մի այլ կողմ, վորոնելով նոր հրաշալիքներ, վորպեսզի դրանց մասին պատմեն այնտեղ՝ վերևում: Մի տեղ նրանք մի անագին նիշ

տեսան, վորի առաստաղից բազմաթիվ փայլուն ստալակտիտներ (շթաքարեր) էլին կախվել մարդկային վոտի լեկարությամբ ու հաստությամբ: Նրանք շրջեցին այդ ամբողջ քարանձավը, հիացան նրա գեղեցկությամբ, և այդտեղից դուրս լեկան նրա բազմաթիվ միջանցքներից մեկով: Շուտով ընկան մի ուրիշ քարանձավ, ուր ժայռից աղբյուր էր բղխում, վորի ավազանը ծածկված էր կարծես բյուրեղափայլ գլազուրով: Քարանձավի կամարի տակ բուն էյին դրել հազարավոր չղջիկներ իրար գլխի հավաքված:



Քարանձավի հրաշալիքները:

ներ իրար գլխի հավաքված: Լուսը թառժած արավ նրանց, և նրանք հարյուրներով դես ու գեն ընկան՝ ծվարով ու դեպի մոմը նետվելով: Թոմը գիտեր նրանց բնավորութունը և իմանում էր, թե ինչ վտանգ է սպառնում: Նա բռնեց Բեկկիրի ձեռը և չերկուսով դուրս վազեցին—մտան առաջին պատահած միջանցքը. և լավ արին վորովհետև չղջիկ-

ներից մեկը թեվով հանգրեց Բեկկի մոմը, յերբ նա դուրս եր գալիս քարանձավից: Չղջիկները յերկար հետևում ելին յերեխաներին, բայց նրանք յուրաքանչյուր ընդե թեքվում ելին մի նոր անցք, վոր պատահում եր ճանապարհին, և այդպիսով, վերջապես, ազատվեցին հետապնդումից: Դրանից հետո Թոմը գտավ ստորերկրյա մի լիճ, ադոտ գը-



ծագրություններով, վորոնք կորչում ելին խավարում: Նա վորոշեց դրա ափերը հետազոտել, բայց մտածեց, վոր ավելի լավ ե նախ նստել—հանդստանալ: Յեվ այստեղ առաջին անգամը ստորերկրյա լուսթյունը ճնշող կերպով ազդեց յերեխաներին:

— Սա ի՞նչ բան ե, —ասաց Բեկկին, — կարծես վադուց ել ձախ չի լսվում: Դու չես նկատե՞լ:

— Մի լավ մտածիր, Բեկկի, չե՞ վոր նրանք այնտեղ վերև են, իսկ մենք ներքև. յես սկի չգիտեմ ել, թե վորտեղ ենք. հյուսիսային կողմն ենք, հարավային, թե՞ արեվելյան: Այստեղ նրանց լսել չենք կարող:

Բեկկին անհանգստացավ:

— Վաղո՞ւց ենք այստեղ ման գալիս, Թոմ: Ավելի լավ չի յետ դառնանք:

— Այո, գուցե, ավելի լավ լինի:

— Բայց կարող ես ճամբա գտնել, Թոմ: Այստեղ այնպես խառն ե, յես մենակ չեյի կարող դուրս գալ:

— Յեթե չղջիկները չլինեյին, յես ճամբան կգտնեյի, Բայց յեթե նրանք հանգցնեն մեր յերկու մոմն ել, դա սարսափելի բան կլիներ: Փորձենք ուրիշ ճանապարհ վորոնել:

— Հույս ունեմ ճամբան չենք կորցնի: Դա սարսափելի կլիներ: — Յեվ Բեկկին նույնիսկ ցնցվեց ճամբան կորցնելու մտքից: Թոմն ընտրեց միջանցքներից մեկը, և նրանք յերկար յուռ գնում ելին նրանով, նայելով ամեն մի պատահող անցքի, թե ծանոթ չե արդյոք: Բայց ամեն բան այստեղ անծանոթ եր նրանց: Ամեն անգամ, յերբ Թոմն ուսումնասիրում եր նոր պատահած անցքը, Բեկկին նայում եր նրա դեմքին, սպասելով սրտապնդիչ մի նշանի, և Թոմը միշտ ասում եր ուրախ-ուրախ.

— Սա դեռ մեր անցածը չի, բայց դու մի անհանգստանա. շուտով այն ել կգտնենք:

Բայց և այնպես, յուրաքանչյուր անաշոտության հետ նա կորցնում եր վստահությունը և շուտով սկսեց թեքվել աջ ու ձախ, վոր կողմը պատահեր, հույս ունենալով գտնել, վերջապես, ծանոթ ճանապարհը: Ժամանակ առ ժամանակ նա ասում եր. — «մի վախի. ամեն ինչ լավ ե գնում, — բայց սիրտն այնքան ծանր եր, վոր ձախը զրկը-

վեց շեշտից. «կարծես չեր ասում ամեն ինչ լավ է գնում», այլ «ամեն ինչ կորավ»: Բեկկին վախից կպել եր նրան, աշխատում եր արցունքները գսպել, բայց դա նրան չեր աջողվում: վերջապես նա ասաց.

— Լսի՛ր, Թոմ, չղջիկները վոչինչ. վերադառնանք այն ճամբով: Թե չե բոլորովին կմոլորենք:

Թոմը կանգ առավ:

— Մպասիր:

Յե՛վ խորին լուռության մեջ, այնպիսի լուռության, ուր լերեխաները լսում եյին իրենց սեփական շնչառութունը, Թոմը ձայն տվեց: Նրա ձայնը լերկար արձագանգեց դատարկ կամարների տակ և թույլ հնչյուններով մեռավ հեռվում, կարծես հեգնական մի քրքիջ:

— Ո՛, Թոմ, մի գոռա. սարսափելի չե, — ասաց Բեկկին:

— Սարսափելին սարսափելի չե, բայց և այնպես ավելի լավ է գոռալ, Բեկկի. գուցե մեզ լսեն:

Յե՛վ նա նորից ձայն տվեց:

Այդ «գուցեն» աղջկա համար հնչեց ավելի սարսափելի, քան առաջվա չարագուշակ քրքիջը. նա հասկացավ, վոր Թոմը հուշար կորցնում է: Յերեխաները լուռ կանգնել սպասում եյին. նրանց կանչին վոչ-վոք շպատասխանեց: Թոմը լեռ դարձավ և քայլերն արագացրեց: Բայց շուտով նրա նայվածքի մեջ լեղած անվճռականութունը մասնեց Բեկկիին մի ուրիշ սարսափելի ճշմարտութուն, — նա յետ գնալու ճամբան ել չեր կարողանում գտնել:

— Ո՛, Թոմ, ինչո՛ւ նշաններ չարիք:

— Ինչ հիմարն եմ, Բեկկի, ինչ հիմարն եմ: Մըտքովըս ել չեր անցնում, թե լեռ ենք դառնալու: Չե, ճամբան գտնել չեմ կարող: Ամեն ինչ խառնվել է, խճճվել:

— Թոմ, Թոմ, մենք կորանք, կորանք: Ել լերբեք, լերբեք չենք կարող դուրս գալ այս սարսափելի տեղից: Ո, ինչո՛ւ մյուսներից բաժանվեցինք:

Նա ուժասպառ նստեց գետնին և այնպես հեկեկաց, վոր Թոմը վախեցավ, կարծելով, թե նա հիմա կմեռնի կամ կխելագարվի: Նա նստեց Բեկկիի կողքին ու գրկեց նրան: Նա հեկեկալով՝ դեմքը թաղեց Թոմի կրծքին ու սեղմվեց նրան, գեղելով իր բոլոր վախերն ու ուշացած ափսոսանքները. իսկ հեռավոր արձագանգը՝ նրա տխուր խոսքերը մանրացնում, դարձնում եր ուրախ ծիծալ: Թոմն աղերսում եր նրան սրտապինդ լինել, բայց Բեկկին պատասխանում եր, թե չի կարող: Այն ժամանակ Թոմն ըսկեսց նախատել իրեն, վոր Բեկկիին զրեց այդպիսի սարսափելի դրուժյան մեջ, և այդ լավ ազդեցութունն ունեցավ. Բեկկին ասաց, վոր կփորձի իրեն պահել, կերթա Թոմի լեռնից, ուր ել տանելու լինի, միայն թե այդպես չլսուի, վորովհետև նա ինքը Թոմից պակաս մեղավոր չե: Յե՛վ նրանք վեր կացան ու աննպատակ առաջ գնացին, պարզապես նրա համար, վոր քայլեն ու մի տեղ չընստեն, — չե վոր ավելի վոչինչ չեչին կարող անել:

Փոքր անց՝ Թոմը վերցրեց Բեկկիի մոմը ու հանգցրեց: Այնքան կարեվոր եր նրանց համար լույսը տնտեսել... Առանց խոսքի Բեկկին հավացավ այդ ու կրկին ընկճվեց: Նա գիտեր, վոր Թոմը մի ամբողջ մոմ ունի ու լերեք թե չորս հատ ել կիսատ մոմեր գրպանում, բայց և այնպես նա պարտքը համարեց տնտեսել:

Կամաց-կամաց հոգնութունն իրեն զգացնել տվեց. լերեխաները փորձեցին ուշ չդարձնել դրան. նրանք սարսափում եյին անգամ նստելու մասին մտածել, յերբ յուրաքանչյուր բոպեն այնքան թանգ եր. մի վորևե ուղղությամբ գնալով, թեկուզ անորոշ, այնուամենայնիվ առաջ եյին գնում և, գուցե թե, դեպի յի՛թը. բայց նստել նշակում եր իրենց դատապարտել մահվան:

Բայց չնայած դրան՝ Բեկկիի թույլ վոտները բոլորովին հրաժարվում եյին նրան ծառայելուց: Նա նստեց: Թոմը նստեց նրա կողքին, ու սկսեցին խոսել տան մա-

սին, այնտեղ թողած բարեկամների մասին, հարմար անկողինների և, գլխավորապես լուսի մասին: Բեկկին լաց յեղավ: Թոմն աշխատեց մի վորևե բան հնարել նրան մըխիթարելու, բայց նրա բոլոր ջանքերն իզուր անցան: Բեկկին հոգնածութունից այնքան թուլացավ, վոր, վերջիվերջո, քնեց: Թոմն ուրախ չեղավ զբան: Նա նայում էր աղջկա տանջված դեմքին և տեսնում էր, վոր այդ գեմքը կամաց կամաց, լավ չերազների ազդեցութան տակ, ընդունում է իր սովորական հանգիստ արտահայտութունը. նրա շուրթերի վրա չ'ըկաց ու մնաց մի ժպիտ: Այդ քշնած աղջկանից խաղաղութուն էր բուրում, և Թոմի սրտքերը հաճում էին անցյալում, ազոտ հիշողութունների մեջ: Նա այնպես տարվեց այդ հիշողութուններով, վոր չհկատեց. թե ինչպես Բեկկին զարթնեց և կամացուկ ծիծաղեց: Բայց ծիծաղն իսկույն սառավ նրա շրթունքներին և փոխվեց լացի:

— Ո՛, յես ինչպես կարողացա քնել: Յես կուզելի յերբեք, յերբեք չզարթնել: Չե, չե, Թոմ, այդպես մի նայի: Յես ել այսպես բան չեմ ասի:

— Ուրախ եմ, վոր քնեցիր, Բեկկի. հիմա հանգստացար, կարող ենք նորից գնալ ճամբա վորոնելու:

— Փորձենք, Թոմ, բայց չերպղումս մի այնպիսի հըրաշալի յերկիր տեսա: Իսկ այստեղ...

— Սրտապինդ չեղիր, Բեկկի: Գնանք նորից վորոնելու:

Նրանք վեր կացան և ձեռք-ձեռքի տված գնացին, բայց այլևս աշողության հույս չունեցին: Նրանք փորձեցին հաշվել, թե վորքան ժամանակ է քարանձավումն են. և նրանց թվում էր թե մի քանի ուր ու շաբաթ է այստեղ են, այն ինչ ադ չեր կարող լինել, վորովհետև մոմերը նախնիսկ մինչև վերջը չեցին վառված:

Դրանից հետո նրանք յերկար, իրենք ել չգիտեցին վորքան յերկար—գնում էին անխոս: Թոմն ասաց, թե

պետք է թագվել ու ականջ դնել՝ արդյոք մի տեղից չի լսվում ջրի կաթիլների անկում. անրաժեշտ է մի աղբյուր գտնել: Նրանք գոտան մեկը, և Թոմն ասաց, թե այստեղ պետք է նորից հանգստանալ: Յերկուան ել սարսափելի հոգնած էին, բայց Բեկկին գերադասում էր առաջ գընալ և շատ զարմացավ, յերբ Թոմը չհամաձայնեց: Բեկկին այդ չեր կարողանում հասկանալ: Նրանք նստեցին, և Թոմը մի կտոր կավի ոգնությամբ մոմն ամբացրեց իրենց առջև չեղած քարին: Յերկուան ել մտածմունքի մեջ ընկան և մի առ ժամանակ խոսք չեցին ասում: Առաջինը Բեկկին խզեց լուսթյունը:

— Թոմ, յես քաղցած եմ:

Թոմն ինչ-վոր բան հանեց զբալանից:

— Հիշո՞ւմ ես:

Բեկկին թույլ ժրպտաց:

— Սա մեր հարսանեկան գաթան է:

— Յես կուզելի, վոր դա տակառի մեծութուն ունենար, վորովհետև ել վոչինչ չունենք:



Հարսանեկան գաթա:

— Յես սա թագցրի պիկնիկի ժամանակ, վոր բարձիս տակը դնեմ, ինչպես մեծերն են անում, և գուշակել, թե յերազումս ում կտեսնեմ. բայց սա մեր վերջ... Բեկկին խոսքը չվերջացրեց, չկամենալով ընկերոջը վշտացնել:

Թոմը գաթան յերկու կես արավ: Բեկկին ախորժակով կերավ իր բաժինը, բայց Թոմը հազիվ ձեռ տվեց իր

կտորին: Ապա խմեցին մոտիկ ազրյուրի շուրը: Քիչ անց՝  
Բեկկին առաջարկեց առաջ գնալ. Թոմը մտածեց մի բոպե  
և ասաց.

— Բեկկի, կարո՞ղ ես հանդիսա լսել, ինչ քեզ ասե-  
լու լեմ:

Բեկկին գունատվեց, բայց ասաց, թե թվում է, վոր  
կարող է:

— Այ ինչ, Բեկկի, մենք պետք է մնանք այստեղ,  
այստեղ գոնե խմելու շուր կա. սա մեր վերջին մոմն է:

Բեկկին ազատութուն տվեց արցունքներին ու հե-  
կեկանքներին: Թոմը վորքան կարող էր մխիթարեց նրան,  
բայց դա չոգնեց: Վերջապես Բեկկին ասաց.

— Թոմ:

— Ի՞նչ է, Բեկկի:

— Նրանք կգան մեզ փնտրելու:

— Դե, իհարկե. պարզ բան է, կգան:

— Դուցե՞ հիմա արդեն մեզ վորոնում են, Թոմ:

— Յես կարծում եմ, չերբ նազ վերադառնան:

— Թոմ, այն ժամանակ արդեն մութը կլինի. կնկա-  
տեն արդյոք մեր բացակայութունը:

— Չգիտեմ. համենայն դեպս մայրդ կնկատի, հենց  
վոր բոլորը տուն վերադառնան:

Բեկկիի վախեցած հայացքը հիշեցրեց Թոմին, վոր  
Բեկկին կարող էր գիշերել ընկերուհու մոտ, և հետևաբար  
տանը նրան չեն սպասի: Յերեխաները լռեցին ու մտած-  
մունքի մեջ ընկան: Փոքր անց՝ Բեկկիի նոր հեկեկանքը  
ցույց տվեց, վոր նա յեւ հիշել է այն, ինչ հիշեց Թոմը.  
կիրակի առավոտը կարող է կես լինել, մինչև վոր տիկին  
Տեչերը կիմանա, թե Բեկկին տիկին Հարպերի տանը չի  
գիշերել: Յերեխաները աչք չեցին հեռացնում մոմի վեր-  
ջին մնացորդից, և հետևում էին, թե ինչպես դանդաղ ու  
անխնա հավում էր այն: Վերջապես մնաց մի մատնաչափ  
պատրուկ: Թույլ լույսը բարձրանում իջնում էր, բոցկը-

տում, դանդաղում, վորից հետո կատարյալ խավար էր  
տիրում:

Թե վորքան ժամանակ անցավ, մինչև վոր Բեկկին  
կամաց-կամաց հասկացավ. թե ինքը լալիս է Թոմի գր-  
կում, վ չ մեկը նրանցից չեր կարող ասել: Գիտելին մի-  
այն, վոր շատ, ինչպես իրենց թվում էր, յերկար ժամա-  
նակ անցավ, մինչև վոր չերկուսն էլ արթնացան ծանր յե-  
րազից և նորից գիտակցեցին իրենց գլխին յեկած աղետը:  
Թոմը կարծում էր, թե արդեն կիրակի չե, գուցե մինչև  
խիչ յերկուշաբթի: Նա փորձեց Բեկկիին խոսեցնել, բայց  
նա վշտից ընկճված էր: Նա այլևս վոչ մի հույս չո. ներ:  
Թոմը հավատացնում էր, թե իրենց բացակայութունը  
վաղուց արդեն նկատած կլինեն և ալժմ յերևի փնտրում  
են իրենց: Պետք է նորից կանչել, մեկը կլսի, արձագանք  
կտա և կգա: Նա ձայն տվեց. բայց մթան մեջ նրա ձայնի  
հեռավոր արձագանքը հնչեց այնպես սարսափելի, վոր  
այլևս չփորձեց:

Ժամեր անցան, և քաղցը նորից նեղեց յերեխանե-  
րին: Թոմն իր կտոր գաթան կիսեց Բեկկիի հետ, բայց  
զբանից ուտելու ավելի մեծ ցանկութուն զարթնեց:

— Սը... ասաց Թոմը, — լսում ես:

Բեկկին՝ շունչը պահած՝ ահանջ գրեց: Հեռվից կարծես  
մի թույլ ձայն էր գալիս. յերեխաները նորից ահանջ գրին:  
Թոմն անմիջապես պատասխանեց և, Բեկկիի ձեռը բռնած,  
միջանցքով վազեց ձայնի կողմը. ապա կանգ առավ. ձայ-  
նը նորից կրկնվեց և կարծես ավելի մոտից:

— Նրանք են, — բացականչեց Թոմը, — գալիս են այս-  
տեղ. գնանք, Բեկկի, մի վախի. հիմի ամեն ինչ լավ  
կլինի:

Փոքրիկ գերիները խելքները կորցրել էին ուրախու-  
թյունից. բայց արաբ վազել չեցին կարող, վորովհետև յու-  
րաքանչյուր քալափոխին փուեր էին պատահում, պետք  
էր զգուշ լինել: Մի ձեղքվածքի մոտ նրանք ահամա կանգ

առանձին: Փոքր կարող եր ունենալ յերեք և հարյուր վոտ-  
նահափ խորություն, — միևնույն ե նրանից անցնելը միաք  
չունեն: Թոմը պառկեց փորի վրա ու կ'ացավ վորքան  
կարող եր. ձեռք հատակին չհասավ: Մնում եր մնալ  
այստեղ ու սպասել, մինչև կզան իրենց լեռնից: Յե-  
րեխաներն ակամջ զրին, բայց ձայները հեռանում եին  
պարզապես: Մի քանի ակնթալթ ել' և նրանք լոնցին:  
Ո՛ր, ինչ սարսափելի չեր. Թոմը այնքան գոռաց, մինչև  
ձայնը բոլորովին կտրեց, բայց վոչ վ' ք արձագանք չտվեց:  
Նա սկսեց հուսադրել Բեկ ին: Բայց սնհանգիստ սպա-  
սումի մի ամբողջ հավիտենություն անցավ — ել ձայն չը-  
լավեց:

Յերեխաները խարխափելով լեռ գնացին դեպի աղ-  
բուրը. ժամանակը սահում եր շատ դանդաղ. նրանք նո-  
րից քնեցին ու արթնացան քաղցած, վշտահար: Թոմը հա-  
մոզված եր, վոր այժմ արդեն չ'ըրբեշարթի չե:

Հանկարծ նրա զլխում մի միաք ծագեց: Մտիկ մի  
քանի կողմնակի միջանցքներ կային: Ս. փլի լավ չէ հե-  
տազոտել զրանք, քան տանջվել ծանր անգործության մեջ:  
Նա գրպանից հանեց թղթե ոձ բաց թողնելու թելը, ծալրը  
կապեց ժալոի գուրս ընկած մասին և առաջ գնաց Բեկ-  
կի ձորը բռնած ու կծիկը լեռ տալով: Քսան քայլից հե-  
տո՝ միջանցքը վերջացավ աստիճանի նման մի բանով:  
Թոմը չորեց և սկսեց շոշափել ներքի պատը. շոշափեց  
մի անկյուն, ձգվեց մի փոքր ել դեպի աջ. և հենց այդ  
վայրկյանին՝ քսան քայլի վրա՝ ժալոի ծալրից յերևաց  
մարդկային մի ձեռք՝ մոմ բռնած: Թ. մն ուրախ թլունից  
բացականչեց. բայց՝ ձեռից անմիջապես հետո գուրս յե-  
կավ և մարդու իրանը. դա հնդիկ Ջոն եր: Թոմը սարսա-  
փից քարացավ. նա ել չկարողացավ ձեռն ու փոտը շար-  
թել և սաստիկ ուրախացավ, լերը «սպանացին» թլկոնքը  
գարձրեց իրեն ու անհայտացավ: Թոմը գարմացավ, թե  
ինչպես Ջ. ն չձանաչեց իր ձայնը ու չհարձակվեց իր վրա,

դատարանում աված ցուցմունքի համար սպանելու. բայց  
արձագանքը լերնի, փոխեց իր ձայնը, — լերնի այդ ե պատ-  
ճառը: Վախից Թոմն անսովոր թուլություներ գզաց ամբողջ  
մարմնում: Նա ինքն իրեն ասում եր, վոր լեթե ուժը  
պատի աղբյուրը վերադառնալ, կմնա այնտեղ ու այն չի  
յենթարկվի լելք փնտրելու դավթակողություն, վախենալով  
հանդիպել հնդիկ Ջոյին:



Սարսափելի հանդիպում:

Նա Բեկկիից թազրեց այն, ինչ վոր տեսել եր, և  
ասաց, վոր բացականչել եր այնպես:

Բայց քաղցը և տանջալից դրուժյունը կամաց-կամաց  
հաղթահարեցին վախը: Նորից- նոր աղբյուրի մոտ նստելը  
և նոր քունը փոխեց նրանց տրամադրությունը: Զարթնե-  
լով լերեխաները տանջալից քաղց գզացին: Թոմը չուզ-  
ված եր, վոր այժմ արդեն չորեքշարթի կամ հինգշարթի  
լե, գուցե նույնիսկ ուրբաթ կամ շաբաթ, և թե վորոնոդ-

ները կորցրել են իրենց գտնելու հույսը: Նա առաջարկեց հետազոտել մի ուրիշ միջանցք: Նա պատրաստ եր յենթարկվել նույնիսկ հնդիկին հանդիպելու վտանգին: Բայց Բեկկին շատ եր թուլացել և չեր ուզում տեղից շարժվի: Նա ասում եր, թե մնալու չե նստած տեղը ու սպասելու չե մահվան: Նա թո՞ւին խորհուրդ տվեց՝ թե լի կծիկը վերցնել ու մենակ գնալ, չի՞թե ցանկանում ե, բայց ազերսեց՝ շուտ-շուտ վերադառնալ իր հետ խոսելու, ու թո՞մից խոսք առավ, թե յերբ հասնի սարսափելի բոպեն՝ թո՞մը կնստի իր կողքին ու ձեռը կբռնի, մինչև ամեն ինչ կվերջանա:

Թո՞մը համբուրեց նրան, — գժվարու՞թյամբ շնչելով, վորովհետև կոկորդը սեղմվում եր, — ու ձևացրեց, վոր իբր թե հավատում եր քարանձավից չեյք գտնելու կամ իրենց վորոնողներին հանդիպելու հնարավորու թյան. հետո թե լի կծիկը ձեռն առավ և, խարխափելով ու չորեքթաթ, սկսեց մոտենալ միջանցքներից մեկին, քաղցից տանջվելով և մոտալուտ մահվան նախադգացումը սրտում:

XXXI

Անցավ յերեքշաբթի առավոտը, անցավ և յերեկոն, իսկ քաղաքը շարունակում եր դեռ տխրել. կրած յերեխաները դեռ չեին գտնվել: Յեկեղեցում մաղթանք կատարեցին նրանց փրկու թյան համար: Շատ ազոթքներ յեղան ի խորոց սրտի. բայց բարանձավից ուրախ լուրեր չստացվեցին: Վորոնողների մեծ մասը թողին փնտրումներն ու վերադարձան իրենց սովորական գրադումներին, ասելով թե յերեխաներն, բոտ յրեու թին, ել չեն գրտնվի: Տիպին Տեչերը շատ հիվանդ եր. նա ժամանակի մեծ մասը ուշագնա պահած եր լինում: Նրան տեսնողները պատմում եյին, թե մարդու սիրտ կտոր-կտոր ե լինում, լսելով, թե նա ինչպես ե կանչում աղջկան, տեսնելով, թե ինչպես ե նա գլուխը բարձրացնում ու յերկար ականջ դնում, իսկ հետո հառաչելով՝ գլուխը կրկին դնում բարձին: Մորաքուլը Պոլլին խորին ախրու թյան մեջ եր. նրա գորշ մազերը գրեթե բոլորովին ձերմակել եյին: Յերեքշաբթի յերեկոյան քաղաքը քուն մտավ ախուր, ամեն հույս կտրած:

Գիշերվա կիսին անսպասելի զանգահարություն լրվեց. և մի բոպելում փողոցը լցվեց կիսով չափ հագնված մարդկանցով, վոր կանչում եյին իրար լետուից. «Դուրս յեկեք, դուրս յեկեք: Նրանք գտնվել են, գտնվել»: Զանգերը տալիս եյին, թիթեղյա ամանների եին խփում, փող եին փչում. ամբողջ բնակչությունը վազեց դեպի դետը, յերեխաներին ընդառաջ, վորոնց բերում եին ցըն-



ծալից քաղաղացիները՝ կառքում լծված: Բազմութունը շրջապատեց կառքը, ուղեկցեց տուն և հանդիսավոր թափարով անցավ փողոցներով, շարունակ «ուռու» կանչելով:

Հուսավորութուն չեղավ. ել փոշ-փոք չսպուկեց քրնելու. այդպիսի նշանավոր գիշեր քաղաքը դեռ չեր տեսել: Կես ժամվա մեջ դատավոր Տեչերի տունը գնացին քաղաքի գրեթե բոլոր բնակիչները: Նրանք բռնու մ-գրը-



Յերեսաւերին բերում են կառքով:

կում ելին փրկված յերեսաներին ու համբուրում, սեղմում ելին Տեչերի ձեռք, փորձում ելին խոսել, բայց չեւին կարողանում, և արցունք ելին թափում տնովը մեկ:

Մորաքույր Պուլին յերանության գազաթնակետին եր, նույնպես և տիկին Տեչերը: Տիկին Տեչերը վերջնականապես յերջանիկ կլիներ, չեթե քարանձավից վերագառնար ամուսինը, վորի յետից սուրհանդակ ելին ուզարկել՝ ուրախ լուրը հալանելու:

Թոմը պառկել եր բազմոցի վրա և ադահորեն յտող ունկընդիրներին պատմում եր իր զարմանալի արկածը, գեղեցկության համար բավականին մտածածին մանրամասնութուններ ավելացնելով: Վերջում պատմեց, թե ինչպես Բեկկիին թողնելով, գնացել եր ուրիշ միջանցքներ հետազոտելու. անցել եր յերեք միջանցք և արդեն ուզում եր յետ դառնալ, յերբ հանկարծ հեռվում լույսի մի բիծ տեսավ, վոր կարծես ցերեկվա լույս լիներ՝ ճեղքից ներս ընկած: Պատմեց, թե ինչպես թելի կծիկը թողել եր ու շտապել դեպի այդ լույսը, գլուխն ու ուսը կոխել եր ճեղքը և իր առջև տեսել լախորեն փռված Միսսիսիպի ջրերը. իսկ յեթե դա լիներ գիշերը—հա չեր տեսնի պարծառ բիծը և մտքովն ել չեր անցնի դեպի մինչև միջանցքի ծայրը: Այնուհետև պատմեց, թե ինչպես եր վերադարձել Բեկկիի մոտ՝ ուրախ լուր բերելով, և թե ինչպես Բեկկին ասել եր, վոր դատարկ բաներ չասի իրեն, վորովհետև նա հոգնել է և գիտի, վոր շուտով մեռնելու չե, և ուրախ է դրա համար: Թոմը պատմեց, թե ինչպես ինքը համոզել է Բեկկիին, և ինչպես նա իսկապես քիչ է մնացել ուրախությունից մեռնի, ցերեկվա կապույտ լույսը տեսնելով. ինչպես է ինքը դուրս յեկել ճեղքից և ոգնել Բեկկիին դուրս գալու. ինչպես իրենք նստել ու լաց են լեղել ուրախությունից, իսկ այդ ժամանակ մտախից անցել է մի նավակ, և Թոմը ձայն է տվել նավակի մեջ նստողներին ու բացատրել, թե ինչպես քարանձավից ընկել են այստեղ և վորքան քաղցած են:

Ձկնորսներն սկզբում չհավատացին նրա պատմության, ասելով, թե այդ չի կարող պատահել, վորովհետև նրանց նստած տեղը հինգ վերստ ցած է այն հովտից, ուր գտնվում է քարանձավը: Բայց հետո այդ ձկնորսները նրանց նավակն առան, տարան ինչ-վոր տուն, ընթրիք տվին, հանդիստ տվին յերկու-յերեք ժամ և ապա բերին պուն:

Դեռ լուսաբացից առաջ դատավոր Տեչերին ու նրա հետ չեղած մի բուռ մարդկանց հանեցին քարանձավից այն թուկերի ոգնութիամբ, վորոնցով կապվել էին նրանք քարանձավ իջնելիս, և հայտնեցին ուրախալի նորութունը:

Քարանձավում անցրած յերեք որվա և յերեք գիշերվա քաղցն ու սարսափը անհետևանք չանցան, ինչպես շուտով համոզվեցին թոմս ու Բեկկին: Ամբողջ չորեքշաբթի և հինգշաբթի նրանք մնացին անկողնում պռոկած, և լուրաքանչյուր ժամ իրենց ավելի հոգնած ու հյուժված էլին զգում: Թոմը հինգշաբթի արդեն սկսեց վտտի կունգնել ուրբաթ գնաց քաղաքը շրջելու և շաբաթ որը գրեթե կայտառ եր. բայց Բեկկին մինչև կիրակի դուրս չեկավ սենյակից, իսկ յերբ դուրս չեկավ՝ մի այնպիսի տեսք ունեւր, կարծես լուրջ հիվանդութիւնն եր ունեցել:

Թոմը, Հեկի հիվանդութեան մասին տեղեկանալով, դեռ ուրբաթ որը գնաց նրան փնտրելու, բայց նրան չթողին հիվանդի մոտ վոչ միայն այդ որը, այլև շաբաթ ու կիրակի յել: Հետո արդեն լուրաքանչյուր որ թողնում էին, նախազգուշացնելով, վոր չպատմի քարանձավում պատահածը և առհասարակ հիվանդին հուզող զրուցներ չանի: Այդ բանին հետևելու համար՝ այրի Դուզլասը բոլոր ժամանկ նստում եր նրանց մոտ: Տանը թոմս իմացավ, վոր քիչ է մնացել տիկին Դուզլասին կողոպտեն և վոր գողերից մեկի դիակը գտնվել է գետում՝ նավահանգստի մոտ. ամենայն հավանականութիամբ՝ նա խեղդվել եր, աշխատելով հետապնդումից ազատվել:

Յերկու շաբաթից հետո թոմը նորից գնաց Հեկին տեսնելու. այժմ նա այնքան եր կաղրուրվել, վոր կարող եր ամեն տեսակի զրուց անել. բայց վորովհետև դատավորի տունը ճանապարհի վրա յեր՝ մեր հերոսը մտավ Բեկկին տեսնելու: Դատավորի տանը հյուրեր կային. նրանք խոսեցրին թոմին, և մեկը հանաքով հարցրեց, թե չի ու-

զում արդյոք քարանձավ մտնել: Թոմը պատասխանեց, թե պատրաստ է հենց հիմա:

— Բնավ չեմ կասկածում, թոմ, վոր քեզ հետևողներ կլինեն — ասաց դատավորը, — բայց մենք միջոցներ ենք ձեռք յտել: Այդ քարանձավն այլևս մարդ չի մտնի:

— Ի՞նչպես թե: Ինչո՞ւ:

— Վորովհետև դեռ յերկու շաբաթ առաջ կարգադրել եմ այդ դուռը յերկաթով պատել և յերեք փակով փակել. իսկ բանալիներն ինձ մոտ են:

Թոմս սալիտակեց քաթանի պես:

— Ի՞նչ պատահեց քեզ, տղաս: Ե՛լ, այստեղ յեկեք, մի բաժակ ջուր տվեք:

Ջուրը բերին և թոմի յերեսովը տվին:

— Ո, պ. դատավոր, այնտեղ՝ քարանձավի մեջ ե... հնդիկ Ջոն:

Հինգ րոպեի մեջ նորութունը տարածվեց ամբողջ քաղաքում, և փոքր անց մոտ տաս նավակ՝ մարդկանցով ծանրաբեռնված, գնաց դեպի քարանձավը, իսկ շուտով նրանց հետևեց և շողենավակը՝ ճամբորդներով լիքը։ Թոմ Սոյերն ու դատավորն Տեչերը մի նավակում ելին։



Մի ամբողջ բազմութուն գնաց վորոնելու

Հենց վոր դուռը բաց արին՝ լեկոզները քարանձավի կիսախավարում տեսան մի պատկեր։ Գեանին պառկած էր մեռած հնդիկը, դեմքը դուրս ճեղքին կայցրած, կարծես նրա ազարն յայացքը մինչև վերջին րոպեն չէր կարողացել

կտրվել լույսից ու արտարին ազատ աշխարհից։ Թոմը զգացվեց։ Նա փորձով գիտեր, թե ինչ տանջանքներ կրած կլինի այդ թշվառը։ Նա խղճաց հնդիկին, բայց միևնույն ժամանակ մեծ թեթեվութուն զգաց ու այժմ միայն հասկացավ, թե վորպիսի ծանրությամբ էր պառկել իր սրտին մշտական վախն այն ուրից, յերբ դատարանում մերկացրել էր այդ արյունարբու շարագործին։

Հենց այդտեղ էլ հնդիկի կողքին ընկած էր նրա յերկու կտոր յեղած դանակը. դուրս ներքեվի փայտը նա



Հնդիկ Ջոն փորձում է գուրս գալ քարանձավից։

ամբողջովին կտրտել, տաշել էր այդ դանակով, բայց ծանր աշխատանքն իզուր էր անցել, վորով ետև դրսից, շեմքի տակից բարձրանում էր մի քար և այդ կարծր քարի հանգեպ դանակը անգոր էր լեղել։ Բայց լեթե այստեղ քար էլ չլիներ, հնդիկի աշխատանքը միևնույն է իզուր պիտի կորչեր, փորովնետև, լեթե անգամ հաջողվեր նրան շեմափայտը կտրել, նա չէր կարող գուրս գալ, և նա իմացել

եր այդ: Ուստի թշվառը փայտը կտրել է միայն նրա համար, վորպեսզի մի վորև բան անի, վորպեսզի մի կերպ ապանի ծանր ժամանակը, մի բանով զբաղեցնի տանջված ուղեղը: Սովորաբար քարանձավի առաջին մասի ճեղքերում միշտ ճարպամտի մնացորդներ ելին լինում, վոր թողնում ելին այստեղ տուրխաները, իսկ այժմ չկար և վոչ մի հատ: Ակամա բանդարկլայն այդ բոլորը վորոնել կերել եր: Նա փորձել եր անգամ մի քանի շղիկներ բռնել և նույնպես կերել եր, թողնելով միայն վոսկորները: Թշվառը սովամահ եր չեղել:

Հնդիկ Չոլին թաղեցին քարանձավի մուտքից քիչ հեռու, այդ թաղմանը յեկավ մեծ բազմութուն նավակներով ու առյուծով մարդիկ ու աղջիկներ յեկան հարևան բոլոր ագարակներին:

Թագման հետևյալ որն առավոտյան թոմն ու Հեկը առանձնացան լուրջ խոսակցության: Մինչ այդ Հեկն արգեն իմացել եր թոմի գլխին յեկածը. պատմել ելին ծեր վալլեցին ու այրի Դուգլասը: Բայց թոմի ասելով նրանք չեյին պատմել ամենագլխավորը. և զրա համար է նա ուզում ընկերով հետ խոսել: Հեկի դեմքը մթնեց:

— Գիտեմ ինչ ես ասում, — ասաց Հեկը. — Յեղել ես «համար 2»-ում և վոչինչ չես գտել, բացի ողուց: Վոչ մի մարդ քո մասին բան չի ասել, բաց յես հասկացա, վոր այդ դու յես չեղել, և հասկացա նույնպես, վոր ձեռք փող չի ընկել, այլապես միջոց կգտնեյիր ինձ մոտ գալու և այդ նորութունը հայտնելու, թեկուզ և ուրիշների առաջ պարտավորվել ես լուր: Թոմ, սիրտս վկայում եր միշտ, վոր այդ գանձը մեր ձեռը չի ընկելու:

— Ի՞նչեր ես ասում, Հեկ: Յես յերբեք ճաշարանատիրոջը չեմ մատնել: Դու գիտես չե, վոր շաբաթ որը յերբ մենք պիկնիկ գնացինք, ճաշարանում ամեն ինչ կարգին եր: Չես հիշում, վոր գիշերը դու պետք է հսկեյիր ճաշարանի մուտքը:

— Այո: Գիտե՞ս, հիմա ինձ թվում է թե դա վաղուց վաղուց է չեղել, սրանից մի տարի առաջ: Դա հենց այն գիշերն եր, յերբ յես գնացի դեպի այրի Դուգլասի առևը, այդ հնդիկ ափագուկին հետևելով:

— Դու հետևեցիր նրան:

— Այո: Միայն թե այդ մասին վոչ մի խոսք: Յես հավատացած եմ, վոր նա բարեկամներ ունի: Չեմ ուզում, վոր նրանք ինձ նեղութուն պատճառեն: Իսկ դու ինձ կարող ես հավատալ, յեթե յես չլինեյիր նա հիմա Տեխասում եր:

Յեվ Հեկն իբրև գաղտնիք պատմեց իր բոլոր արկածները: Թոմը մինչև հիմա այդ արկածների մի մասն եր լսել ծեր վալլեցուց:

— Հասկանում ես, — վերջացրեց Հեկը, խոսակցության գլխավոր առարկային դառնալով, — նրանք, չվերբ ողին տարել են «համար 2»-ից, այնտեղից տարել են և փողը: Համենայն դեպս, մեր բանը կորած է, թոմ:

— Հեկ այդ փողերը «համար 2»-ում չեն մնացել:

— Ինչ. — Հեկը փորձող հայացք բեկեռեց ընկերով դեմքին: Թոմ, դու նորից գտել ես փողի հետքը:

— Հեկ, փողը քարանձավումն է:

Հեկի, աչքերը բոցկտացին:

— Ասածդ մե կեղ կրկնի, թոմ:

— Փողը քարանձավումն է:

— Թոմ, անկեղծ յեղիր, լմբը ես ասում, թե հանաք ես անում:

— Լուրջ, Հեկ. յես դեռ յերբեք այսքան լուրջ չեմ խոսել: Կուզես գալ ինձ հետ և ոգնել փողերը վերցնելուն:

— Իհարկե, ինչ խոսք, վոր կգամ: Այսինքն, յեթե կարող ենք մտնել այտեղ և չմոլորվել:

— Հեկ, մենք համարձակ կարող ենք մտնել այնտեղ և վոչ մի բանի յերկյուղ չունենալ:

— Շատ լավ: Բայց ինչու ես կարծում վոր փողը...

Եր — Սպասիր, Հեկ, մինչև տեղ հասնենք: Յեթե փոշը չգտնենք, յես իմ թմբուկը, և բոլորը, ինչ ունեմ, կտամ քեզ: Աստված վկա, կտամ:

— Լավ: Յերբ պետք ե գնալ, ասում ես:

— Հենց թեկուզ հիմա, յեթե համաձայն ես: Ուժդ տեղն ես կդիմանաս:

— Իսկ յերկար ճամբան յե մինչև քարանձավը: Յերեք թե չորս որ ե վոտի վրա յեմ, բայց մի յերկու վերստից ավելի չեմ գնա, Թում,— գոնե յես այդպես եմ կարծում, վոր չեմ գնա:

— Ուրիշ ով ել լիներ, բացի ինձանից, տաս-տասնումեկ վերստ ճամբա պիտի գնար, բայց յես քեզ կտանեմ ասնակարճ ճամբով, վորը ինձանից բացի, վոչ վոր չգիտե: Յես քեզ այնտեղ կտանեմ, նավակով, Հեկ, ու ինքս կթիավարեմ թե գնալիս՝ թե, գալիս, այնպես վոր դու ձեռներդ չես հողմեցնի:

— Հենց հիմա գնանք, Թում:

— Շատ լավ: Պետք ե հաց վերցնենք ու միս, հետո ծխամորճեր, դատարկ տոպրակներ ու յերեք կձիկ թեղ և ապա այդ նոր հնարած բանից, վորին լուցքի յեն ասում: Վուքան ցավում ելի, վոր դրանցից չունեյի քարանձավում յեղած ժամանակ:

Շուտով կես օրից հետո՝ տղաները, ոգտվելով տիրոջ բացակայութունից, վերցրին քառաթիակ նավակը և ճամբա ընկան: Յերբ մի քանի վերստ գնացին, Թումն ասաց.

— Տեսնում ես այն դիք թեքվածքը, վոր քարանձավից իջնում ե ցած: Նա հարթ, հավասար ե թվում. վոչ տներ, վոչ ծառեր. թփեր են մենակ ու բոլորն իրար նըման: Բայց այնտեղ, ուր քանդված—վար յեկած ե, տեսնում ես ինչ-վոր բան ե սպիտակին տալիս: Դա իմ նշանն ե: Մենք այնտեղ կարող ենք ավել դուրս գալ:

Նրանք ափ դուրս յեկան:

— Մեր կանգնած տեղից, Հեկ, կարող ես գտնել այն գուռը, վորից յես դուրս եմ յեկել: Հապա փորձիր:

Հեկը փնտռեց և վոչինչ չգտավ: Թումը հրպարտութամբ մտավ թրփերի ամենախիտ տեղը և ասաց.

— Հրես: Սա ամենագաղտնի անցքն ե այս տեղերում, բայց տես, մարդու բան չասես: Յես վաղուց պատրաստվում եմ ավագակ դառնալ, բայց հարմար տեղ չեյի գտնում սրա պես. իսկ յես գիտեմ, վոր առանց հարմար տեղի, բնի ավագակո թյուն անկարելի յե: Հիմի գտանք և այդ մասին վոչ մեկին բան չենք ասի, բացի Ձո Հարպերից և Բեն Ռոջերսից, վորով ետե հարկավոր ե ավագակախումբ կազմել. թե չե յերկուսով ինչ ավագակ: Թում Սոյերի ավագակախումբը—հիանալի յե հընչում, չե, Հեկ:

— Այո, Թում, հիանալի յե. Իսկ ում պիտի կողոպտենք:

— Ում պատահի. կառքով, ձիով, վոտով անցնողին, ինչպես ավագակներն են անում:

— Յեվ սպանել:



— Չե, ամեն անգամ չե: Ավելի լավ է քարանձավում գերի պահել նրանց, մինչև փրկար ք կտան:

— Իսկ ինչ բան է այդ վրկանքը:

— Փող, նշանակում է: Նրանց հրամայում են իրենց բարեկամներին, հավաքել վորքան կարող են, և լեթե մի տարվա ընթացքում այդ փրկանքը չեն վճարում, այն ժամանակ նրանց սպանում են: Բայց կանանց սպանել չի կարելի: Կանայք միշտ գեղեցիկ են լինում, հարուստ և սարսափելի վախկոտ: Նրանցից առնում են ժամացույց և նման բաներ, բայց նրանց հետ պետք է խոսել քաղաքավարի և զլխարկ վերցրած: Ավագակները հազվադուր քաղաքավարի մարդիկ են: Այդպես է զրված բոլոր զրքերում. Դե, կանայք, սովորաբար, սիրահարվում են ավագակների վրա: Մի լերկու շաբաթ քարանձավում նստելով՝ նրանք դադարում են լաց լինելուց և հետո արդեն իրենք չեն ուզում հեռանալ: Այդպես են գրում բոլոր զրքերում:

— Դա հիանալի բան է, Թոմ: Դա, գուցե, ավելի լավ է, քան ծովահենը:

— Իհարկե, ավելի լավ է... ամեն կողմից ել. տանը մոտ է, և առհասարակ...

— Մինչ այդ տղաները ամեն ինչ վերցրին նավակից և ձեղքի միջով մտան քարանձավը: Թոմը գնում էր առաջից: Նրանք հասան ստորիերկրյա միջանցքի գիբթ ծայրին, իրենց պարաները կապեցին ժայռի դուրս ընկած մասից ու առաջ գնացին: Մի քանի քայլ հետո՝ հասան աղբյուրի և Թոմն զգաց, թե ինչպես սառը դող անցավ ամբողջ մարմնով: Նա ցույց տվեց Հեկին կավի կտորների վրա, պատի մոտ ընկած պատրույզի մնացորդը և նկարագրեց, թե ինչպես եյին ինքն և Բեկկին հեռուում մոխի հանգչող բոցին:

Տղաները, իրենք ել այդ չնկատելով, ձայները փոխեցին շշուկի. լուռթյունն ու խավարը ճնշող ազդեցություն արին: Նրանք թեքվեցին մի ուրիշ միջանցք և լեր-

կար գնացին, մինչև վոր հասան «աստիճանի նման բանին»: Մոմերի լույսով յերևաց, վոր ալդտեղ վոչ թե անգունդ էր, այլ դիք կավե վայրեջք՝ քսան-յերեսու քայլ քարձրութամբ:

— Հիմի քեզ բան մի ցույց կտամ, Հեկ, — շնչաց Թոմը:

Յեվ նա մոժը բարձրացրեց:

— Նայիր անկույնից դենը, վորքան կարող ես հետուն: Տոնում ես, հրե այնտեղ՝ մեծ քարի վրա մրով գրածը:

— Թոմ, դա խաչ է:

— Հասկանում ես հիմա, թե վորն է «համա Զ-դը»: Պաշի տակն է, հասկացար: Հնդիկ Զոյին տեսա հենց այնտեղ, մոմը ձեռին:

Հեկը ցնց լեց և ասաց զողգոջուն ձայնով.

— Թոմ, գնանք այստեղից:

— Ինչպես. գանձը թողնենք:

— Հա, թողնենք: Ով գիտի, հնդիկ Զոյի ուրվականը թափառում է այս քարանձավում:

— Չե, Հեկ, չե: Նա, լեթե թափառում է, թափառում է յերևի այնտեղ, ուր մեռել է, քարանձավի մուտքի մոտ, այստեղից շատ վերստեր դենը:

— Չե, Թոմ, սխալվում ես: Նա ման կգա, հենց փողի մոտ, փողերը պահելու: Ուրվականները միտ այդպես են:

— Դատարկ բան է: Դատարկ բան է. արի իջնենք՝ անդուկը փնտռենք:

Առաջինը Թոմն իջավ և, իջնելու հետ միաժամանակ, կողպիտ աստիճաններ՝ վոտնատեղեր շինեց կավի թեքվածքի վրա: Հեկը հեռակեց նրան: Փոքրիկ քարանձավի մեջ, ուր մի ժայռ կար անկված, չորս միջանցք էր դուրս գալիս: Տղաները հետազոտեցին դրանցից յերեքը և վոչինչ չգտան, բացի մի վորքիկ նիշից. ժայռի մոտ յեղած մի-

Չանցրում, ուր փոփած ելին վերականգնողներ, կախված եր մի հին կաթսա, ընկած եր խոզապուխտի կաշի և թռչունի մի քանի կոծած կմախքներ. բայց փող չկար: Տղաներն ամեն ինչ խառնեցին, խառնեցին — բայց իզուր. վերջապես, թոմս ասաց.

— Նա ասաց՝ «խաչի տակ»: Այս ել խաչի տակ: Չի կարող պատահել, վոր ժայռի տակ լինի:

Նրանք նորից փնտռեցին և ապահատեցին հանգստանալու: Հեկը չկարողացավ մի բան մտածել: Վերջապես, թոմս ասաց.

— Տես հյա, Հեկ, ժայռի մի կողմը վտարի հետքեր են յերևում և կավի վրա ճարպամտի կաթիլներ, իսկ մյուս տեղը վոչինչ չկա: Ինչո՞ւ յի այդպես: Գրագ կգամ, վոր փողերը ժայռի տակ են: Հենց հիմա կավը քանդելու յեմ:

— Վատ միտք չե, թոմ, — աշխույժ վաբերեց Հեկը:

Թոմը դանակը հանեց և դեռ չ'ը կարողացել չորս մասնաչափ փոս անել, դանակը փայտի դիպավ:

— Հեկ, յո՞ւմ ես:

Հեկն ինքն արդեն յեռանդով բանդուժ եր՝ նրան ոգնելու: Շուտով դեմ առան ինչ վոր տախտակների, վորոնք ծածկում ելին ժայռի տակը ասնող անցքը: Թոմը գլուխը կախեց այդ ճեղքը և ձեռքի մոմը մեկնեց, բայց չկարողացավ ամբողջ անցքը մինչև ծայրը լուսավորել, և վորոշեց հետագոտել այն: Կուչ յեկած ու կծկված դնաց առաջ. Նեղ, կեռ ու մեռ անցքը հետզհետե խորանում եր հողի մեջ: Թոմը գնում եր առջևից, Հեկը կրնկակոխ հետևում եր նրան: Նրանք թեքվեցին աջ, հետո ձախ, անցան դարձյալ մի ծուռ տեղ և հանկաժ թոմը բացականչեց.

— Հեկ, մի տես հյա:

Դա անկասկած դանձի սնդուկ եր, իսկ նրա կողքին վառողի մի դատարկ արկղ, յերկու հրացան կաշվե պա-

տյանների մեջ, կաշվե մի գոտի և զանազան անպետք իրեր, վոր թրջվել ելին առաստաղից կաթկթող շրով:

— Վերջապես, գտանք, — ասաց Հեկը, ձեռը կոխելով խուռնացած փողերի մեջ: — Ե, թոմ, արդեն հարստացանք:

— Հեկ, յես միշտ հավատացած ելի, վոր կհարստանանք. հիմի այս փողերը մերն են, պրծավ: Բայց ել չը-



Վերջապես

կանգնենք — պետք ե արկղը դուրս հանել: Թող մի տեսնեմ՝ կարող եմ բարձրացնել:

Մտուկը տասնուհինգ ֆունտ կլիներ: Թոմը դժվարությամբ բարձրացրեց այն, բայց տանել չկարաց:

— Յե՛վ այդպես ել կարծում ելի, — ասաց նա. — Ենեց նրա տեսքն ինձ ծանոթ եր յերևում. հիշում ես, յերբ նրանք տանում ելին խարաբա տնից: Լավ եր, վոր հետս պարկեր վերցրի:

Տղաները փողը լցրին տոպրակներն ու դուրս հանեցին:

— Արի հիմա յեւ հրացաններն ու մնացած բաները հանենք, — առաջարկեց Հեկը:

— Չե, Հեկ, թող մնան: Դրանք մեզ պէտք կզան, յերբ սկսենք ավազակութիւն անել: Դրանք այդտեղ եւ կպահենք և այստեղ եւ որդիաներ կսարքենք: Սա որդիաների համար զարմանալի հարմար տեղ ե:

— Իսկ ինչ բան ե այդ որդիան:

— Չգիտեմ: Ավազակները միշտ որդիաներ են սարքում, նշանակում ե մենք ել պիտք ե սարքենք: Դե, զընանք, Հեկ, վաղուց ե արդեն այստեղ ենք: Յես սաստիկ քաղցած եմ: Այստեղ՝ նավի վրա արդեն կուտենք ու կըծխենք:

Նրանք դուրս լեկոն խիտ թփուտից, զգուշութիւնով նայեցին շրջակայքը, տեսան ափը դառարկ ե, նավակը մտան ու սկսեցին ուտել: Յերբ արևը սկսեց թեքվել դեպի հորիզոնը, նրանք բռնեցին վերադարձի ճամբան: Թո՛ւր թիավարում եր շարունակ, նավակն ափին մոտ պահելով, վորովհետև գնում ելին Նոսանքի հակառակ, ու շարունակ խոսում եր Հեկի հետ: Յերբ մթնեց՝ ափը դուրս լեկան:

— Ե, Հեկ, — ասաց Թո՛ւր, — հիմա առայժմ փողը կըպահենք այրի Դուգլասի սարայի տանիքում, իսկ առավոտը յես կզամ. կհաշվենք ու կես կանենք. հետո անվտար յես կզամ. կհաշվենք ու կես կանենք. հետո անվտարում մի ապահով տեղ կգտնենք, վոր թաղենք: Դու մնա այստեղ և փողին նայիր, իսկ յես վազելով գնամ Բեննի Տեյլորի սալակը բերեմ: Իսկուհի կվերադառնամ:

Նա չքացավ և, իսկապես, շուտով վերադարձավ սալակը հետը. տոպրակները դրեց նրա մեջ, ծածկեց ինչ վոր հին շորով, և տղաներն սկսեցին սարը բարձրանալ, սալակն իրենց յետևից քաշելով: Վալեցու տանը հասնելով կանգ առան հանգստանալու: Հենց այն բուպելին, յերբ ուզում ելին հեռանալ, տան տերը լեռնաց շեմքում:

— Ե՛յ, ո՛վ և այստեղ:

— Հեկը և Թո՛ւր Սոլերը:

— Հիանալի: Յիկեք հետս, տղաներս: Մենք ձեզ վաղուց ենք սպասում: Դե, վազեցեք: Չեր սալակը յես կբերեմ: Բաց սա այնքան ել թեթև չի: Ի՛նչ բան ե այստեղ: Աղուս ե, ինչ ե, թե հին յերկաթ:

— Հին յերկաթ:

— Յես այդպես ել կարծեցի. մեր տղաները պատրաստ են ինչքան ասես ժամանակ կորցնել հին յերկաթ հավաքելու, վորի համար միայն վեց ցնետ են տալիս ձուլագործարանում. իսկ աշխատել չեն ուզում, թեև դրանից յերկու անգամ ավելի կտանային: Բաց մարդկային բընավորութիւնն արդեն այդպես ե: Դե, շուտ, գնանք:

Բաց տղաները կուգեյին իմանալ, թե ինչու համար պիտի շտապեն:

— Այ կերթաք այրի Դուգլասի մոտ, կիմանաք:

Հեկը, սակայն, հարցրեց յերկուզով, վորովհետև նա սովոր եր անտեղի մեղադրանքների:

— Ի՛նչ կա, միտեք (պարոն) Ջոնս: Մենք վոչ մի վատ բան չենք արել:

Վալեցին քրքջաց.

— Չգիտեմ, Հեկ, չգիտեմ, տղաս: Այդ մասին վոչինչ չգիտենք: Դու հո այրի Դուգլասի հետ լավ ես:

— Այո: Համենայն դեպս նա ինձ լավ ե վերաբերվում:

— Այ, տեսնում ես. ուրեմն ել ինչո՛ւ յես վախենում: Հեկը, վոր աչքի չեր ընկնում մեծ թափանցամտությամբ, դեռ չեր կարողացել մի պատասխան մտածի, յերբ Թո՛ւրի հետ միասին նրան հրեցին տիկին Դուգլասի ընդունարանը: Միտեք Ջոնսը սալակը թողեց դուրսը ու ներս մտավ նրանց յետևից:

Ընդունարանը պաշտոն լուսավորված եր, և այնտեղ հավաքվել էին քաղաքի բոլոր անվանի մարդիկ: Այստեղ էին Տեչերները, Հարպրները, Ռոշերսները, մորաբույր Պոլլին, Սիզը, Մերին, քահանան, լրագրի հրատարակիչը



և շատ ժողովուրդ—բոլորն ել տոնական զգեստներով: Այ-  
րին տղաներին դիմավորեց այնպես սրտագին. ինչպես կա-  
բող ե դիմավորել մի տանտիկին իր հյուրերին, վոր ներ-  
կայանում են նրան այնպիսի կերպարանքով, ինչպես մեր  
հերոսները՝ կավաթաթախ և ճարպաթաթախ:

Մորաքույր Պուլին ամբողջովին կարմրեց ամոթից և,  
հոնքերը կիտելով ու թոմին նայելով, գլո խր շարժեց հան-  
զիմանանքով. բայց իրենց ավելի անհարմար զգում էյին  
իրենք տղերքը:

— Թոմը տանը չեր. — բացատրեց միտտեր Չոնսը, —  
և լես սկի փորձ ել չարի նրան գտնելու. բայց հետո հան-  
զիպեցի նրան ու Հեկին իմ դուան առաջ և շտապեցի բե-  
րել նրանց այտեղ:

— Յեվ շատ լավ արիք, — ասաց այրին: — Յեկեք հե-  
տևիցս, լերեխեր:

Նա նրանց ննջարան տարավ ու ասաց.

— Լվացվեցեք և հագնվեցեք: Այտեղ լերկու ձեռք  
կոստում կա. շապիկներ, գուլպաներ բոլորը, ինչ հար-  
կավոր ե: Սա հատկապես Հեկի համար ե... Չե, չե, Հեկ,  
ճորհակալութուն մի հայտնի. մեկը լես եմ գնել. մյուսը  
միտտեր Չոնսը. բայց լերկուսիդ վրան ել կգա: Դե հագ-  
նվեցեք, իսկ լերբ վերջացնեք— իջեք սաժ, — մենք սպա-  
սում ենք ձեզ:

XXXIII

— Թոմ, — ասաց Հեկը, — մենք կարող ենք լուսամու-  
տով փախչել, լեթե միայն պարան գտնենք. այտեղ լու-  
սամուտը գեանից բարձր չե:

— Դատարկ բան ես ասում, ի՞նչու փախչենք:

— Դիտես, լես սովոր չեմ այնպիսի հասարակու-  
թյան: Տանել չեմ կարող: Յես այտեղ չեմ գնա, Թոմ:

— Դատարկ բան ե: Ինձ համար միևնույն ե: Մա-  
զաչափ չեմ վախենում: Յես քո մասին կհոգամ:

Շեմքին յերևաց Սիդը:

— Մորաքույրը քեզ յերկար սպասում եր ճաշից հե-  
տո, վորտեղ եյիր: Մերին քեզ համար պատրաստել եր  
կիրակնորչա կոստում, բոլորը անհանգիստ էյին, թե ուր  
ես: Այդ ի՞նչ ե շորերիդ վրա— ճարպ, կավ:

— Միտտեր Սիդ, խորհուրդ եմ տալիս զբաղվել սե-  
փական գործերով և քիթդ չխոթել ուրիշի գործերի մեջ:  
Բայց այս ի՞նչ բան են սարքել. ինչո՞ւ համար:

— Հենց այնպես, այրին տոնախմբութուն ե սար-  
քել, ինչպես յերբեմն անում ե: Այդ անգամ ընթրիք ե  
տալիս ի պատիվ վալեցու և նրա վորդիների, նրա համար,  
վոր իրեն փրկել են այն հայտնի գիշերը: Բայց գիտե՞ք  
ինչ կասեմ ձեզ, լեթե միայն, ի հարկե ուզում եք:

— Հը, ի՞նչ կա:

— Այ ինչ, ծերունի միտտեր Չոնսը այտր պատրաստ-  
վում ե ինչ-վոր բանով զարմացնել բոլորին. բայց լես  
նրա գաղտնիքը լսեցի, լերբ մորաքրոջը պատմում եր

այսոր, և կարծում եմ, վոր այժմ ել վոչ-վորի համար դա  
զաղանիք չի: Բոլորը գիտեն, նույնպես այրին ինքը, թեև  
ձևացնում ե, թե բան չգիտի: Հասկանալի չե, վոր միստեր  
Ջոնսը պետք ե բերեր այսոր Հեկին, վորովհետև առանց  
Հեկի նրա գաղանիքից բան չեր ստացվի:

— Դա ինչ գաղանիք ե, Սիր:

— Այն, վոր Հեկը հետեվել ե գողերին մինչև տիկին  
Դուգլասի տունը: Միստեր Ջոնսը չերևակայում ե, թե բո-  
լորովին մեծ սյուրպրիզ ե անելու, բայց դրանից իսկապես  
բան չի դուրս գա:

Սիրը քրքջաց, ըստ յերևույթին՝ նա շատ գոհ եր,  
վոր ծերունու ծրագիրը չի հաջողվելու:

— Սիր, այդ գոհ յես բոլորին պատմել:

— Միևնույն չի, թե ով ե պատմել: Գիտենք, պրծավ  
գնաց:

— Սիր, ամբողջ քաղաքում միայն մի մարդ կա,  
վոր բնդունակ ե այդ տեսակ ստորության և այդ դու յես:  
Հեկի տեղը դու լինելիք, կշտապելիք ծլկվել և վոչ մեկին  
չեյիր պատմի ավազակների մասին: Դու բնդունակ ես միայն  
ստորության և տանել չես կարողանում, յերբ քեզ մոտ  
գտվում են վորևե մեկին իր լավ վարմունքի համար:  
Կերտր, Իսկ շնորհակալութուն պետք չե, ինչպես ասաց  
միսիս Դուգլասը: — Յեվ թո՛ւմ յեղբոր ականջից բռնած՝  
վոտով խփելով դուրս արավ սենյակից: — Հիմի կորի՛ր:  
Իսկ յեթե մորաքրոջը գանգառվել ես, տես, եզուց ավե-  
լին կուտես:

Մի քանի րոպե անց՝ այրու հյուրերն արգեն սեղան  
նստած ընթրում ելին: Մեծերը գլխավոր սեղանի շուր-  
ջը, իսկ յերեսաները — փոքր սեղանի մոտ, ըստ այն ժա-  
մանակվա և տեղի սովորության: Վերջին տեսակ կերակը-  
րի վրա՝ միստեր Ջոնսը մի կարճ ճառ ասաց: Նա շնոր-  
հակալութուն հայտնեց տիկնոջը իրեն և վորդիներին  
ցույց տված պատվի համար, բայց միևնույն ժամանակ

բացատրեց, վոր այդ ծառայութունը պատկանում ե վոչ  
թե իրենց, այլ մի յերրորդ անձնավորության, վորի հա-  
մետութունը և այն, և այն:

Միստեր Ջոնսը անչափ հմտությամբ նախապատրաս-  
տեց ունկնդիրներին՝ Հեկի՝ այդ գործին մասնակցելու  
զաղանիքը բանալու, բայց նրա պատմության հետաքրք-  
րականութունը խախտվել եր կանխավ արված մերկացում-  
ներով, և զարմանքն արտահայտվեց վոչ այնպես աղմկա-  
լից, ինչպես դա կարող եր տեղ ունենալ այլ հանգամանք-  
ներում: Այնուամենայնիվ, միսիս Դուգլասը ձևացրց թե  
շատ զարմացած ե, ու այնպես գովասանքներ տվեց Հե-  
կին և այնպես շնորհակալութուն հայտնեց, վոր Հեկը  
գրեթե մոռացավ իր վիճակի անհարմարութուններն ու  
նոր զգեստը, վոր սաստիկ նեղում եր նրան:

Միսիս Դուգլասը հայտարարեց, թե ինքը վորոշել ե  
Հեկին առնել իր մոտ և կրթութուն տալ, իսկ այնու-  
հետև ոգնել նրան՝ մի վորևե համեստ գործ սկսելու:  
Այստեղ հերթը յեկավ թո՛մին:

— Հեկը դրա կարիք չունի, — առարկեց նա: — Հեկն  
ինքը հարուստ մարդ ե:

Յեթե այստեղ հավաքված հասարակութունը չլիներ  
այնքան բարեկիրթ, նա, ի հարկե, միահամուռ ծիծաղով-  
կընդուներ այդ բանը, բայց լությունն ել փոքր ինչ  
անհարմար յեղավ, և թո՛մն շտապեց խախտել այն:

— Հեկն իր սեփական փողն ունի: Դուք կարող եք  
ինձ չհավատալ, բայց նա մի կույտ փող ունի: Մի ծիծա-  
ղեք, խնդրեմ. անմիջապես ցույց կտամ, մի րոպե սպասե-  
ցեք:

Թո՛մը դուրս վազեց սենյակից: Բոլորը տարակուսան-  
քով ու հետաքրքրությամբ նայում ելին միմյանց և հար-  
ցական՝ Հեկին, բայց Հեկը լուռ եր, սպանվածի պես:

— Սիր, ինչ ե պատահել թո՛մին, — հարցրեց մորա-

քույր Պոլլին:—Նա... չե, այդ տղան միշտ անսպասելի բաներ ե անում: Յեա կյանքս...

Մորաքույր խոսքը չվերջացրեց, վորովհետև ներս մտավ Թոմը՝ յերկու պարկի ծանրության տակ կոացած: Նա սեղանին թափեց մի կուլտ վոսկի ու բացականչեց հանդիսավոր.

— Ահա: Ասում եյի, չե: Սրա կեսը պատկանում է Հեկին, կեսը՝ ինձ:

Այդքան վոսկին տեսնելով՝ մարդկանց շունչը բռնվեց կարծես: Մի րոպեյի չափ վոչ մեկը չկարողացավ մի խոսք ասել, այնուհետև, բոլորը բացատրութիւն պահանջեցին: Թոմը սիրով համաձայնվեց բացատրութիւն տալ: Նրա պատմութիւնը յերկար եր, բայց այրող հետաքրքրությամբ լի:

Յերբ նա վերջացրեց՝ միտեր Չոնան ասաց.

— Կարծում եյի հասարակության համար փոքրիկ սյուրպրիզ եմ պատրաստել, բայց սրա համեմատությամբ իմ սյուրպրիզը վոչինչ է. խոստովանում եմ:

Փողը հաշվեցին: Դուրս յեկավ տասնյերկու հազար դոլլարից ավելի: Ներկաներից և վոչ մեկը իր աչքով միանգամից այդպիսի մեծ գումար չեր տեսել:

### XXXIV

Թոմի և Հեկի աշուղութիւնը մի այնպիսի խուլ քաղաքում, ինչպիսին է Պիտերսբորն, հասկանալի չե, անգին տպավորութիւն գործեց: Մի այդպիսի գումար և այն ել վոսկով—դա ուղղակի անհավասար յեր թվում: Դրա մասին խոսում, դատում ելին հիացմունքով, և քաղաքացիներից մի քանիսը համարյա թե խելքները թոցրին այդ անսովոր հուզմունքից: Պիտերսբորնում և շրջակա գյուղերում ման յեկան, պտրտցին բոլոր տները, ուր «վոգիներ» ելին ապրում. շատակի ամեն մի տախտակը վերցնում, հիմքի տակ քանդում՝ թաղցրած գանձ ելին վորոնում, ու վոչ թե տղաներն, այլ հասակավոր մարդիկ, այն ել լուրջ խելքը գլխին մարդիկ և վոչ թե յերագողներ: Թոմին ու Հեկին փայփայում ելին և հետեւում ելին նըրանց, վորտեղ ել յերևալին. Տղաները չելին հիշում, վոր առաջներում յերբեիցե վորեե մեկը նշանակութիւն տար իրենց խոսքերին. այժմ նրանց յուրաքանչյուր խոսքը կրկնում ելին, ինչպես արժեքավոր մի բան. նրանց ամեն մի վարմունքի մեջ տեսնում ելին ինչ վոր առանձնահատուկ մի բան՝ կարծես թե նրանք կորցրել ելին սովորական բաներ անելու և ասելու ընդունակութիւնը՝ բացի դրանից, նրանց նախկին կյանքից հիշում ելին խոսքեր ու փաստեր, վոր զարմացնում եր ինքնատպությամբ: Տեղական լրագիրը տպեց տղաների կենսագրութիւնը:

Այրի Դուգլասը բանկը զրեց Հեկի փողերը, իսկ

դատավոր Տեչերը, մորաքույր Պոլլիի խնդրանքով, նույնն արավ Թոմի համար:

Դատավոր Տեչերը սկսեց մեծապես հարգել Թոմին: Նա ասում էր, վոր սովորական, հասարակ տղան չերբեք չեր կարող իր աղջկանը քարանձավից դուրս բերել: Իսկ չերբե Բեկկին, իբրև զաղտնիք, հորը պատմեց, թե ինչպես Թոմը զպրոցում ծեծ կերավ իր փոխարեն, դատավորն զգացվեց նկատելի կերպով, և յերբ խնդրեց նրան, վոր հայրը խիստ չվերաբերվի Թոմին այդ սոփ համար, վոր ասել էր նա իրեն՝ Բեկկին փորձանքից փրկելու նպատակով և մեղքն իր վրան առնելու համար, դատավորը հիացմունքով հայտարարեց, թե դա մի բարձր, ազնիվ և մեծահոգի սուտ է, մի սուտ, վոր պատիվ է բերում ասողին: Բեկկին չեր տեսել հորն այդպես վեհապանձ, ինչպես այդ բոլորին, յերբ նա ասում էր այդ, արագ յերթևեկելով: Բեկկին անմիջապես դուրս գնաց և բոլորը պատմեց Թոմին:

Դատավոր Տեչերը հույս ուներ յերբեկեցե Թոմին տեսնել մեծ փաստաբան կամ մեծ զորավոր: Նա ասում էր, թե կաշխատի, վոր Թոմին ընդունեն Ազգային զինվորական ձեմարանը, իսկ այնուհետև նա կանցնի լավագույն իրավագիտական դպրոցի դասընթացը և, այդպեսով, կընտրվի այդ յերկու ասպարեզներից մեկը:

Իր հարստութունը և այլի Դուգլասի հովանավորութունը՝ Հեկկին մացրին, ավելի շուտ ներս քաշեցին հասարակութան մեջ: Այրու սպասուհիները լվանում էին նրբան և շորերը մաքրում, մազերը սանրում եյին ու հարդարում, գիշերը պառկեցնում էին մաքուր, մաքուր անկողնու մեջ. ստիպում էին ճաշը ուտել դանակով ու պատառաքաղով, անձեռնոցիկ բանեցնել, գիրք կարդալ, յեկեղեցի գնալ, խոսել այնպիսի նուրբ ձեվերով, վոր խոսքերը մնում էին կոկորդում: Ուր էլ դառնում էր, ձեռն ու վոտը կաշկանդված էր զգում և ճամբան փակ:

Յերեք շաբաթ Հեկկն արիությամբ տարավ բոլոր դժվարութունները, բայց հետո, մի գեղեցիկ որ, չքացավ: Յերկու որ հուզված միսիս Դուգլասը վորոնեց նրան ամեն տեղ: Հասարակութունը տարակուսանքի մեջ էր: Հեկկին վորոնեցին սարերում ու հովիտներում, փնտրեցին անգամ գետում՝ նրա մարմինը գտնելու: Վերջապես, յերրորդ որվա առավոտյան Թոմ Սոյերը գնաց նրան վորոնելու հին սպանդանոցի յետևը գտնվող սարայներում, և դրանց մեկի մեջ գտավ փախտականին: Հեկկը քնած էր. նա հենց նոր նախաճաշել էր ինչ-վոր տեղից թոցրած թերմածքով և, ծխամորճը բաշխուց հետո, հանգստանում էր: Նա անլվա չեր, մազերը չսանրած և հին որերի ցնցոտիների մեջ, յերբ նա դեռ ազատ էր ու յերջանիկ: Թոմն արթնացրեց նրան, պատմեց, թե վորքան վիշտ է պատճառել բոլորին, և համոզեց վերադառնալ տուն: Հեկկի դեմքը կորցրել էր իր նախկին հանգիստ արտահայտութունը և դարձել տխուր:

— Այդ մասին մի խոսի, Թոմ, — ասաց նա: Փորձեցի բան չի դուրս գալիս, Թոմ: Յես այդպես բաների սովոր չեմ: Այլին բարի յե և շատ սիրալիր է, բայց տանել չեմ կարող նրանց բոլոր բաները: Նա որինակ, բարկում է ինձ վեր կենալ ամեն առավոտ միևնույն ժամին, դախում է լվացվել. գլուխս պոկեցին՝ այնքան սանրեցին. թույլ չեյին տալիս ցախատանը քնեմ — բարեհաճիր պառկել մաճակալի վրա: Իսկ այդ անիծյալ հազուստները՝ Շունչս կտրում էր մեջը, կարծես ող չեր թողնում և այնպես է, վոր — գրողը՝ տանի — այնպես գեղեցիկ է, վոր չի կարելի վոչ գետին նստել, վոչ պառկել, վոչ թավալ տալ: Կարծես տարիներով թավալ չեմ տվել: Այլին ուտում է գանգակով, պառկում է գանգակով, վեր է կենում գանգակով, — ամեն ինչ այնպես սարսափելի կանոնավոր է, վոր ուղղակի տանել չեմ կարող:

— Այլ բոլոր տներում էլ այդպես է, Հեկ:

— Թոմ, ինձ համար բոլորը մեկ է: Տանել չեմ կարող: Դա ուղղակի մահ է— ձեռով վռտով կապված լինել աչդպես: Յես կմեռնեմ. թիքան արդեն կուլ չի գնում: Չուկ բռնել ես ուզում — խնդրիր, լողանալ — նույնպես խնդրիր. կարծեմ շուտով թույլ չեն տա առանց խնդրելու մեռնել: Ինձ ստիպում են քաղաքավարի արտահայտվել՝ այնպես, վոր խոսելու ցանկությունս կորել է. յես ել յերբեմն բարձրանում եմ տանիքը մի լավ հայտնելու,



Հեկը հորից յերջանիկ է:

վոր սիրտս թեթևացնեմ,— թե չե կպատուվեմ: Այլին չի թողնում ծխեմ, չի թողնում վոչ բարձր խոսեմ, վոչ հորանջեմ, վոչ ճլմկոտամ, վոչ ել քորվեմ մարդու առաջ: Ուզելի չուզեյի պիտի փախչելի, Թոմ, անհրաժեշտ եր: Բացի դրանից՝ շուտով պետք է դպրոցը բացվի. մեկ ել տեսար վերցրեցին — դպրոց ուղարկեցին. իսկ յես

դրան արդեն չեմ դիմանա: Գիտես ինչ, Թոմ, ինչպես յերեվում է՝ հարստութունն ինձ սազական բան չի: Դանեղութուն և անախորժութուն է պատճառում միայն: Իսկ այս ցնցոտիները ինձ սազում են, և սրանցից ել չեմ ուզում բաժանվել: Ինձ յերբեք այդ տեսակ դժբախտութուն չեք պատահել, ինչպես այդ անխիճյալ փողը: Թոմ, խնդրում եմ, իմ բաժինն ել վերցրու քեզ և ոգտագործիր, ինչպես քոնը, իսկ ինձ մեկ-մեկ տասական պենս տուր, այդ ել շուտ-շուտ չտաս, վորովհետև ինձ դուր է գալիս միայն են, ինչ դժվար է ձեռք բերվում: Իսկ դրա համար դու գնա և միսիս Դուգլասին խնդրիր իմ փոխարեն.

— Հերիք է, Հեկ, գիտես վոր չեմ կարող. ազնիվ բան չե: Յեվ յեթե դու մի քիչ ել աշխատես — կընտելանաս:

— Կընտելանամ: Մի՞թե կարելի չե ընտելանալ տաքացրած քուրաչի վրա նստելուն... Չե, Թոմ, չեմ ուզում լինել վոչ հարուստ, վոչ ել ապրել այդ զզվելի դուքված լիզված տներում, Յես սիրում եմ անտառը, գետը, սիրում եմ գիշերել տակառներում — այ ինչ է ինձ սազական: Հիմա, յերբ մենք ունենք և՛ հրացան, և՛ քարանձավ և ամեն ինչ՝ ավազակություն անելու համար — ինչու համար այս փողերը մեջտեղ ընկան ու ամեն ինչ փչացրին:

Թոմն շտապեց հարմար առիթից ոգտվել:

— Ախր, Հեկ, հարստութունը չի խանգարի ինձ ավազակ դառնալու:

— Հը՞. դու այդ ճիշտ ես ասում, Թոմ:

— Հավատա, ճիշտ: Միայն թե քեզ չի կարելի ավազակախմբի մեջ ընդունել, Հեկ, յեթե մարդավարի տեսք ու հագուստ չունենաս:

Հեկի ուրառութունը թունավորվեց:

— Չի կարելի ընդունել ինձ: Ինչպես թե չի կարելի: Հապա դու չեյիր, վոր ընդունեցիր ինձ ծովահենների խումբը:

— Իս ուրիշ բան եր: Ավագակը ծովահենից ավելի ազնիվ ե. ուրեմն իրեն ավելի լավ պիտի պահի:

— Բայց լսիր, Թոմ. դու միշտ ինձ բարեկամ ես չեղել. ինձ դուրս չես անի, չե՞, Թոմ: Դու այդ չես անի: ասան:

— Հեկ, լես, իհարկե, կուզեցի. վոր իմ ընկերը լինես, բայց ի՞նչ կատեն մարդիկ. «Թոմ: Թոմ Սոյերի ավագակախումբը: Բոլորն ինչ-վոր սրիկաներ են»: Յեվ նրանք կակնարկեն քեզ: Յեվ այս բանը հենց քեզ հաճելի չի լինի, ինձ համար նու խոսեա:

Հեկը մի բուպե լոցեց հողեկան պալքարով լցված, վերջապես ասաց.

— Լավ, Թոմ: Յեթե խոսաանում ես ինձ քո ավագակախմբի մեջ առնել, լես մի ամսով կվերսդառնամ այլի Դուգլասի մոտ և կաշխատեմ ընտելանալ: Միայն թե ինձ վերցրու:

— Լավ, Հեկ. դե հիմա գնանք. լես աիկին Դուգլասին կինդրեմ, վոր շատ չնեղի քեզ:

— Ճիշտ, կինդրես Թոմ: Այ այդ լավ ե: Յեթե գլխավոր բանում չնեղի, լես թաքուն կծխեմ, թաքուն կըհախոյեմ և մի կերպ կդիմանամ: Իսկ դու լե՞րբ ես խումբ հավաքելու և ավագակախումբ սկսելու:

— Ո՛, շուտով: Մենք, գուցե, հենց այսօր լերեկոյան տղաներին հավաքենք և ձեռնադրության կարգը կատարենք:

— Ի՞նչ կատարենք:

— Ձեռնադրություն:

— Դա ի՞նչ բան ե:

— Դա նշանակում ե, վոր մենք բոլորս լերդվում ենք պաշտպանել իրար և չմասնել ընկերներին, լեթե անգամ մեզ կտոր-կտոր անեն, և սպանենք նրան, ով կրվիրավորի վորևե մեկին մեր խմբից, կսպանենք վո՛չ միայն իրեն, այլ և նրա ընտանիքի բոլոր անդամներին:

— Այդ շատ լավ ե, Թոմ:

— Ե՛լ լավ չլինի: Իսկ լերդումը պիտի լինի կես գիշերին, ամենախուլ տեղում. ավելի լավ ե մի տան մեջ՝ ուր ուրվականներ են ապրում:

— Կես գիշերին:


— Այո: Յեվ կերդվենք վորևե մեկի գերեզմանի վրա ու արյունով կստորադրենք:

— Այ այդպես: Դա ավելի հետաքրքիր ե, քան ծովահեն լինելը: Այդպես ել կանենք. Թոմ, լես կմնամ միսիս Դուգլասի մոտ, մինչև վոր հոգիս դուրս գա, և յեթե դառնամ իսկական ավագակ, և բոլոր սկսեն խոսել իմ մասին, նա ինքը կհպարտանա, վոր ինձ մարդ դարձրեց:

### ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Դուք կարծում եք Թոմ Սոյերի բոլոր արկածները վերջացան: Ո՛, վոչ: Նա դեռ շատ զավեշտական ու հետաքրքրական պատմություններ ունեցավ: Յեվ վոչ միայն նա, այլ և նրա մտերիմ բարեկամ Հեկլերի Ֆիննը: Բոլոր այդ պատմությունները շարադրված են «Հեկլերի Ֆիննի արկածները» գրքում, վորը դուք անպայման պետք ե կարդաք:





« Ազգային գրադարան



NL0392051



F

20/62

20/62  
20/62  
20/62

1931